

Հարգելի՛ ընթերցող,

**Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ)** նախագիծ հանդիսացող **Արցախի Էլեկտրոնային Գրադարանի** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:



Уважаемый читатель!

На сайте **Электронной библиотеки Арцаха**, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха (ОМУСА)**, размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

**The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA)** presents its project - **Artsakh E-Library** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

### Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: <http://artsakhlib.am/>

E-mail: [info@artsakhlib.am](mailto:info@artsakhlib.am)

Facebook: <https://www.facebook.com/www.artsakhlib.am/>

ВКонтакте: <https://vk.com/artsakhelibrary>

Twitter: <https://twitter.com/ArtsakhELibrary>

ՄԻՔԱՅԵԼ ԲԵԳԼԱՐՅԱՆ

**ՂԱՐԱԲԱՂԸ  
ՂԱՏՄՈՒԹՅԱՆ  
ՉՈՒԳԱՅԵՆՈՆԵՐՈՒՄ**

ՄԻՋԱՅԵԼ ԲԵԳԼԱՐՅԱՆ

# ՂԱՐԱԲԱՂԸ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԶՈՒԳԱՀԵՌՆԵՐՈՒՄ

Ղարաբաղս ասք ու լեզենդ,  
Ղարաբաղս բալլադ ու բերդ,  
Ղարաբաղս երգ ու նվագ,  
Ղարաբաղս վերք ու կրակ,  
Ղարաբաղս հերիաք ու ասք,  
Ղարաբաղս հայոց մեծ ազգ,  
Ղարաբաղս... կյանք ու վիպ,  
Նրա նման այս աշխարհում  
Չկա, չկա...

Ս. Սարուխանյան

Արցախցի եմ ես,  
Դարերով փակված լեզվիս կապերը  
ես արձակում եմ:  
Ու շղթաներս դարձնում եմ տառեր.  
Գրում անունդ, իմ մայր Հայաստան:  
Արցախցի եմ ես,  
Կողս ջրեկվող անկետ աղամանդ,  
Կողս ուրան է աշխարհով լցված:

Ա. Թովմասյան



պատմել, թե Արցախ աշխարհը ինչ մուրճի ու վնդամի արանքում է հայտնվել Խորհրդային Ադրբեջանի տիրապետության 70 տարիներին եւ հետեւաբար՝ ինչու է պետք զենք վերցնել:

Երբ ես գրում եմ՝ «Բանակցել՝ հիշելով անցյալը» կամ «Բանակցությունների ճանապարհը տատակոտ է», ես ձեռք բերում եմ անուճից ու զուրկ եմ հինգերորդ մեր դեկավար այրերին, որ չկրկնեն անցյալի սխալները, որ դուրս առնեն ամիժյալ անցյալից, երբ 1919թ. Ղարաբաղի հայության 7-րդ համագումարի կողմից առաջադրված 16 սբատգամավորները խաբվեցին եւ իրենց ստորագրությունները դրեցին այն համաձայնության տակ, որով Ղարաբաղը «ժամանակավորապես» տրվեց Ադրբեջանին:

Վ յոջում սույն գրքի լրաբաղի համար իմ կողմը եմ համարում մեծն պատմավիպաբաններ Բախիճուն ու Սերո Խանգաղյանին եւ երախտիքի խոսք հղում արցախահան թեմայով գրքեր, հողվածներ ու քանաստեղծությունների ժողովածուներ հրատարակած գրողներ Վլադիմիր Խոջաբեկյանին, Հրանտ Աբրահամյանին, Շահն Մկրտչյանին, Բակուր Կարապետյանին, Արկաղի Թովմասյանին, Ջորի Բալայանին, Վարդան Հակոբյանին, Գուրգեն Գաբրիելյանին, Մարտին Հովհաննիսյանին, Սուրբաա Խանյանին, Յաշա Բաբայանին, Վարդգես Բաղդյանին, Գազիկ Բեգլարյանին, Գայա Առտանյանին, Յաշա Բաբայանին, Էռնեստ Եսայանին, Նվարդ Ավագյանին, Արշավիր Դանիելյանին, Ռազմիկ Պետրոսյանին, «Ղարաբաղյան հար» գրքի հեղինակներ Վլադիմիր Թովմասյանին, Վասիկ Արաջանյանին, Յուրի Ներսիսյանին, բազմահատոր գրքի հեղինակ Վահան Հարությունյանին եւ Արցախյան շարժման տարեդարձին նվիրված «հասարակական-քաղաքական լրատվության հիմնադրամի» հրատարակած մատենաշարի հեղինակներին:

Սեր նախնիները միշտ ասում էին, եւ այսօր էլ մենք ենք կրկնում, որ մեր պատմությունը բավականին աղքատ է լավ մարդկանցով եւ հարուստ՝ դավաճաններով: Հենց այդ սակավ, քայքայ լավ ու հերոսական մարդկանց նվիրելով մեր խոսքը, Ղարաբաղի շրջանակներում, մշենք նրանց մի քանի կարկառուն ներկայացուցիչների, որոնց կյանքն ու գործը, որ եղել է դարեր առաջ, գուգահեռաբար վառ օրինակ է ներկա եւ ապագա սերունդների համար: Ի միջիայլոց, այստեղ արժե վերհիշել մեծ վարպետի՝ Ա. Իսահակյանի հետ Ղարաբաղի շուրջ տեղի ունեցած մի մասնավոր գրույց: Այն հարցին, թե ինչու քիչ եմ Ղարաբաղի տաղանդավոր գրողները, հետեւել է վարպետի պատասխանը. «Գրողները քիչ եմ, քայքայ գորավարները՝ շատ»:

Չվերադառնալով պատմության խորխորատները, որոնցում նկատելի են մեր շատ «մարգարիտներ», ասել է թե՛ հերոսական վառ դեմքեր ու պատկերներ, քավակունանանք մեր մի քանի նվիրյալներին ներկայացնելով: Այդ մարդիկ կամ հասարակ շինականներ, վաճառականներ, այլ երկրի հպատակներ են», կամ էլ իշխաններ, մելիքներ եւ մույնյակ կեանքներ, որոնց համար հայրենիքը, նրա հողն ու ջուրը ամեն ինչ էր, իսկ իրենց ամձը գուցե հավելյալ:

Ղարաբաղը պահպանելուն, հայի ոգին հպարտ պահելուն, այն ժամանակվա հանրճղիանուր հայկական պետության մի ծայրամասում պետության գոյապահպանմանն էին ուղղված ձեռներեց ու շրջահայաց դարաբաղցի շատ գործիչների ջանքերը: Աշխարհագրական առումով ամնապատ այս տարածաշրջանը կյանքի ու մահվան բարձրացնելու եւ ընկնելու, իրարամերձ իրադարձությունների բառերաբեմ էր:

Սի քանի տարի առաջ, ԽՍՀՄ պայմաններում, հեշտ էր գնահատել այդ անցյալը՝ մի գլուխ մեղադրելով հայ «անխտհեմներին», «ըմբոստներին», «ազգայնամոլներին», ինչպես այժմ՝ «ծայրահեղականներին» ու «անջատողականներին»: Այսօր մեր եզրահանգումների աղբյուրն այլ է, մեր նյութը՝ ուրիշ, այժմեական: Բայց բոլոր դեպքերում էլ անհատները, հերոսները գործել են երբեմն անկախ ժամանակի շահերից, եւ նրանց կյանքի ձեռագիրը միայն հայրենասիրությունն էր: Այնուհանդերձ, ովքե՞ր են այդ հայրենասերները, որ խոք հետքեր են թողել մեր պատմության ոսկե էջերում:

Հայ ժողովրդի թե բարեկամները եւ թե բշնամիները դեռեւս չեն յուրացրել Արցախ-Ղարաբաղի հինավուրց պատմությունը, որի համար էլ նրանց շատ թե քիչ հետաքրքրում է միայն այս նորօրյա պայքարը: Սակայն մեր պատմամատյաններում պահպանվում են բազմաթիվ վաստեր ու տեղեկություններ Արցախի հիմնավուրց այրերի ազատագրական պայքարումները, ընդմիջումները եւ համախ էլ տեղի ունեցած ճակատամարտերի մասին:

Անավասիկ, Արցախի տիրակալ Վաչեան, որը Պարսից շահի ճնշմամբ հրաժարվել է իր գահից, պարսկոտի մորից ու կնոջից (առաջինը շահի քույրն էր, իսկ երկրորդը՝ շահի քեռու դուստրը), հավատարիմ մնացել իր հավատին եւ Արցախի ազատության պայքարին: Կամ՝ Վաչագան թագավորն ու նրա եղբայր Հազկերտի որդին, որ, շարունակելով իրենց նախորդների պայքարը, ազատություն բերե-



քի վրա պիտի դնեն...»: [3] Բայց Շահը առավոտը չտեսավ՝ նա սպանված էր: Հետագայում բռնվելով, սենեկապետ հայը ծանր հատուցեց: Նա խոշտանգվեց, մաս-մաս կտրտվեց և թոչունների ու գազանների կերակուր դարձավ: Նրա հայարտությունը եւ ազգասիրությունը մահվանից առաջ արտահայտվեց Մուհամեդին անարգելու եւ Քրիստոսին երկրպագելու մեջ: Որոշակի տեղեկություններով տարեգրությունը մեզ հուշում է, որ այդ սենեկապետ Սաֆար-Ալին Ղարաբաղի Մոս գյուղից էր, որը երեխա ժամանակ գերված էր, մահմեդականություն ընդունած, իր տիրոջ պահանջով ներքինի դարձած, բայց արյամբ քրիստոնեությունը չմոռացած:

Ղարաբաղի պատմության կշեռքի նժարներից մեկում ծանրակշիռ է Գիզակի մելիքների շրջանի մի օղակը հանդիսացող Մելիք Աբասը, որը շխարվեց Իբրահիմ խանի կողմից, չնայած վերջինս ուզում էր իր աղջիկների գեղեցկությամբ հրապուրել Մելիքին, ընդունել տալ մահմեդականություն: Հայարտ ու այլադավանությունից հրաժարված Մելիքը գոհ գնաց Իբրահիմի որդայաթին: Նա սպանվեց Յոր գյուղում, գիշերը, իր մահճում, թաղվեց Տողում: Բայց ստոր խանը Աբասի ժառանգներին ցուցանելու համար, թե նրանց հայրը իբր մահվանից առաջ մահմեդականություն է ընդունել, գեների ուժով վերաբաղեց թուրքական գերեզմանատեղում: Օ՛, ինչպիսի՜ ապիկարություն, իսկական թուրքի ցանց եւ տհաս հեռատեսություն:

Հայ ժողովուրդը հայրենասեր իր առաջնեկ որդուն միշտ էլ իրավամբ համարել է Իսրայել Օրուն, որի սրտացավության մի մեծ բաժինն էլ կազմել է Ղարաբաղը:

Լինելով Սյունիքի զավակ, Գանձասարում՝ Եսայի Հասան Ջալալյանի արժանատիին, նրա հետ Ռուսաստան մեկնելիս, որի նպատակը ռուս-ղարաբաղյան կապերի ստեղծումն էր, եւ որքան հնարավոր էր՝ ռուսական զորքերի արագ մուտքը Ղարաբաղ:

Հանձին Օրու, հայ ժողովուրդը կորցրել է ազգային-ազատագրական պայքարի ջանքերից մեկին, որի ջանքերը սկիզբ են դրել հայերի միջազգային ճանաչմանը:

Հակառակ ժամանակակից որոշ պատմաբանների այն թյուր կարծիքի (Ռաֆայել Իշխանյան եւ այլք), թե «Օրին մի աննշան անձնավորություն է եղել, մի արկածախնդիր, նույնիսկ չեղած մարդ», ասենք, որ նրա ջանքերով են ամրապնդվել հայ-վրացական (Արշիլի եւ այլոց հետ), հայ-ադրբեջանական (Ղուբայի խանի հետ) կապերը, որոնք եւ հետագայում նպաստել են համատեղ ուժերով, ռուսների դաշնությամբ, Ղարաբաղն ազատագրել օտար բռնակալներից: Հայաստանի եւ մասնավորապես Ղարաբաղի, որպես Ռուսաստանի հարավին ավելի մոտ տարածք, ազատագրելու գործում հանրահայտ են Ի. Օրու գործընկեր Մինաս վարդապետի ծառայությունները: Հենց նա է Պարսկաստանում Ռուսաստանի դեսպան Վոլինսկու, գեներալներ Ցիցիանովի, Գուրովիչի, վրացական թագավոր Վախրանգ 6-րդի օժանդակությամբ ռուսական արքունիքի աչքի շոյանք դարձրել Ղարաբաղը: Իրավ է, որ ասել են, թե «Մինաս Վարդապետը հայի ականջն է ցարի արքունիքում»: Նկատենք, որ Մինասը (Մինաս Տիգրանյանը) արցախյան Հակոբավանքից է, կոչումով արքեպիսկոպոս:

Մեր նվիրյալների առաջին շարքերում էր քայլում Ռուսաստանի հայոց արքեպիսկոպոս Հովսեփը: Նրան էլ Օրու Մինասի եւ մյուսների նման մեղ-հայկական շահերով չպետք է պատկերացնել: Նրա բազմաթիվ մասնակները վրաց Հերակլին, որը շատ էր մտահոգված Պարսկաստանի կողմից Թիֆլիսի ավերումով, ուրիշ ժողովուրդներին հարգելու վառ օրինակ է: Ռուսական զորքերի մուտքը Վրաստան, այսա՜ Ղարաբաղ եւ ավելի ուշ՝ Հայաստան ձեր-գործին սիրտ ու հոգի տվեց, կենդանացրեց նրա հույսերը հայրենիքի ազատության վերաբերյալ:

Չնայած իր ուժից ընկնելուն, Հովսեփը ռուսական կառավարության խնդրանքով մասնակցեց դեպի Անդրկովկաս կատարած ռուսական արշավանքին: Նա սրատարաստ էր տանել ամեն տեսակ գոհողություններ հանուն հայրենիքի, թեկուզ մի օր առաջ նրան ազատ տեսնելու համար: Նրա կնարները ռուսական մի շարք վիճակորսականների հետ (Չուբով...) մեծ հույս տվեցին հայերին: Հենց նրա միջամտող ջանքերով ռուսները հեշտ ու անարյուն ճանապարհով գրավեցին Գերբեքը, Գեղարսի, Շահախին, Կորդոնը, Սալյանը, Գանձակը եւ նույնիսկ հարկադրաբար կապտակված Շուշին:

Ղարաբաղի մելիքությունների մայրամուտի եւ ռուսական բանակի Ղարաբաղյան գործելակերպի ժամանակաշրջանը եւս վեր է հանել քաջ տղամարդկանց անուններ: Նրանցից էր կուսակառուցի Մելիք-Վանի Աթաբեկյանը: Ռուսական կովկասյան զբոսների գլխավոր հրամանատարի քաղաքական գծով տեղակալ, գեներալ-լեյտենանտ Պոտտոյի «Ազատագրական պատերազմը Ղարաբաղում» աշխատության ամեն մի էջ նվիրված է Մելիք-Վանուն եւ նրա նման քաջերին: Արհեստավոր Թունիի գավակը՝ Մելիք-Վանին, Ղարաբաղի ազատագրման համար մղված ճակատամարտերի մասնակիցն էր 1805-1813թթ.: Նրա արյունը եւ էր գալիս, երբ լսում էր գեների շտապյուն: Ծնողներից անտեղյակ դարձավ հեծելազորային յուզբաշի: Նա ծոտ կապերով կապվեց գեներալ Կարյազինոյի հետ այն ժամանակ, երբ պետք է գրավել Շուշին: Հենց Վանի Յուզբաշու հեծելախումբը վճռեց ելքը: Նա իր հոր եւ համազյուղացիների միջոցներով մի քանի անգամ կերակրեց ռուսական բանակը: Այնուհետեւ Վանու ռազմական հետքերը եւ ռուսներն են Ալվանդուզի (Հորադիզից այն կողմ) 1812թ. Աբաս Միրզայի դեմ Երասխի ավին մղված ճակատամարտում: Նա Ռուսաստանի կողմից պարզեցված վեց մեղայններով եւ ստացավ մշտական թոշակ: Հետագայում դարձավ Ջրաբերդի Մելիք, որը տեղեց 42 տարի եւ մահացավ խոր ծերության մեջ:

Իր մելիքությունը խաղաղ եպիսկոպոս համար ժողովուրդը նրան «խաղաղ մելիք» անունով հռչակեց: Նրա մահից հետո իր՝ Աթաբեկյանների սերունդը ավելի նշանավորվեց Ղարաբաղում: Մելիք Վանիի ջանքերով է, որ զավեց Աբաս-Միրզայի բարկությունը՝ տեսակցություն ունենալով նրա հետ: Հերոսը տեղի տվեց, հետո պատժվեց գեներալ Մադարովի կողմից, բայց քիչ հետո արդարացվեց երկերեսապատման մեծ խաղի մեջ, որ խաղացել է Աբաս Միրզայի հետ՝ իբր ռուսների դեմ:

Միջանկյալ խոսենք մի այլ հերոսի՝ աղա Մահմուդ-Կազարի քիկնապահ, Աբաս Միրզայի հավատարմությունը շահած հայ երիտասարդ Էսթրաբեկի մասին, որին պարսիկները Բուսխատու էին կոչում: Նա քրիստոնյա ռուսների շահերը բարձր դասելով պարսիկների շահերից՝ «ղավաճանեց» իր տիրոջը եւ Աբաս-Միրզայի գաղտնի-թղթերը հանձնեց գեներալ Մադարովին: Եվ թե ինչ նշա-

ճակրություն ունեցավ հայ-ռուսական ուժերի համար՝ հասկանալի է: Դա նպաստեց Մադաթովի հարթամակին Գյանջայի ճակատամարտում:

Ղարաբաղի եւ Ռուսաստանի շահերին սատար կանգնելու գործում մեծ էր ղարաբաղցի կամավորների դերը, որոնք առանձին գնդեր էին կազմում: Այդպես եղավ երկրորդ ռուս-պարսկական եւ ռուս-թուրքական պատերազմներում 1826-1828թթ.:

Ղարաբաղի հերոսական անցյալի սահմանագծերում վեր են հանում նաեւ կանանց, առավել եւս՝ միանձուռիների անուններ, որոնցից հատկանշական է պաշտելի Գոհարը: Մերո խանգաղյանի գրչով կերտված այդ չքնաղ տիրուհին Մելիք Բայանդուրի աղջիկն է՝ Մխիթար Սպարապետի սիրուհին, որ սպանեց իր հայրազատ եղբորը՝ Մխիթարին դավաճանարար սպանելու համար:

Նա Ղարաբաղի շատ իրադարձությունների հերոսուհին է, որի ոտնահետքերը կարելի է տեսնել ամենուր: Գոհարի մեջ նույն էր նահատակ սիրեցյալի հիշատակը: Ասում են՝ նա «կենարար աղբյուրի պես լողացնում էր տառապած ազգին հայոց...»: [4]

Այդ նա էր, որ Շամխոր գետի մոտ ջախջախված՝ Մուստաֆա փաշային դուրս բաշեց ժայռաճեղքից, ասելով՝ նորի՞ց ողջ մնացիր, Մուստաֆա:

Գոհարի «Թուր կեճակին» շողողաց թուրք Ահմեդի դեմ՝ Գանձակի ճակատամարտում: Եվ գուր չէ, որ ռուս կայսրուհի Աննա Իվանովնան, տեսնելով գորական օրհորդին եւ լսելով նրանից ռազմական «զվարճախոսություններ», բացականչեց.

- Չորապե՞տ էիր, կնյագինյա, Գոհար, թուրքիկ իմ... [5]

Անընդհատ լինելով ձիու թամբի վրա, զորապետ աղջիկը այն տարիներին Ղարաբաղի շատ անցքերի վկան էր, դավաճանների եւ վախկոտների սարսափը: Նրա սուրը շողաց այն 200 վանականների դեմ, որոնք խուսափում էին ազատագրական կռիվներից: «Ապստա՞մը եք, ավերակի բվեճներ, զլանո՞ւմ եք, հա՞, կռտարել հայրենիքի կամը...»: [6]

Նա ամբաստանում էր թուրք նրանց, ովքեր փութաջանորեն չէին մասնակցում անդար պայքարին՝ լինեն ռազմիկներ թե իշխաններ:

Ազատամիտ Ղարաբաղի պատմությունը չի մոռացել Վաղանդայի մելիք Հյունեիճի կնոջը՝ Աննային, որը կազմակերպեց թուրքերի կոտորածը, նրա աղջիկ Գայանեին, որ սրով խառնեց ատելի թուրք փեսացու Մուլեյման Բեկի սիրտը, իսկ հետո կուսանոց գնաց:

«Նրանք՝ մայր ու աղջիկ, դարձան ժողովրդական ավանդության մեջ պահպանված քաջագործության հիշատակ»: [7]

Մեր երկրամասի հերոսական պատմության մեջ ոսկե տառերով են գրված 18-26 թթ. հուլիսի 26-ի Շուշիի բերդի 47-օրյա հերոսական պաշտպաններ Սաֆար եւ Ռուստոմ Թարխանյան եղբայրների, Բարութչի Պողոսի, սուրիանդակ Հարություն Ալբունյանի ու ամբողջ Ղարաբաղում անուն հանած հերոս կին խաթունու անունները: Այդ կնոջ մասին առասպելներ են պատմում: «Ասում են, թե հենց նույն օրը, երբ Արաս Միրզայի զորքերը պաշարում են Շուշիի բերդը, այդ աղքատ կինը իր անունու հետ մի պարկ ցորեն էր տարել ջրաղացը՝ աղալու: Ջրաղացը գտնվում էր Գարգար գետի ափին, Հյունոտ գյուղի մոտ: Այդ անդնդախոր ձորը, այն նեղ

ճանապարհ-արահետը, որ քարափների կրծքի վրայով սարսափելի զահավեժներից բարձրանում էր դեպի բերդը, տեսնողները միայն կարող են երեւակայել, թե որքան քաջություն, պրտի ամբողջություն էր պետք մի կնոջ, որ նա կարողացավ այդ ճանապարհով գնալու ժամանակ ոչ միայն իր անձն ազատել պարսիկ սարվազների ձեռքից, այլեւ կոտորել նրանցից շատերին, խել ոմանց հրացանները, սրերը, այնուհետեւ, մի կողմից պատերազմելով սարվազների հետ, մյուս կողմից՝ այլուրի պարկը իր հետեւից քարշ տալով, բարձրանալ դեպի բերդը: Նա ազատում է իր զավակների ասլոուստի պաշարը»: Հին ղարաբաղցիների շուրթերից չէր իջնում խաթունու անունը, ոմանք երգ էին հյուսել նրա մասին: [8]

x x x

Ղարաբաղցիների հերոսական տարեգրությունը մի առանձին ուժով դրսևորվեց 1918-20թթ. խորհրդային իշխանության մուտքի եւ Անդրկովկասի հարցերին անգլո-թուրքական վերաբերմունքի պայմաններում ծագած ղարաբաղյան, գանգեղուրյան եւ նախիջևանյան պրոբլեմների առումով:

Թուրքական, անգլիական եւ մյուս գոռքաների վերջնագրերն ու պահանջները անակնկալի չբերեցին ղարաբաղցի կտրիճներիին: 1918թ. սեպտեմբերի 22-ին թուրքական ջոկատը Ջահիդ Բեյի, իսկ մուսավաթականը՝ Իսմայիլ Ջիադիսանովի հրամանատարությամբ Ասկերանով Շուշիի վրա արշավելը, որը ճանապարհին ավերում էր շրջակա Գահրավ, Վարազաբուն, Փրջսմաչ, Նախիջևանիկ, Զյարուկ, Նրամոթք, Խանաբաղ, Քարազուլիս, Միրզալու գյուղերը, ոտքի հանեց Արցախի ողջ հայությանը՝ փրկելու հայրենիքը: Թուրքերի եւ տեղական թաթար խուճամների դեմ Շուշի քաղաքի հայերն անհողողող կանգնեցին: Թեպետ Շուշին ընկավ, բայց երկրամասը անտիկ կանգնեց: Նրանք Մարտակերտում եւ Վարանդայի Մամնա գյուղի մոտ գլխովին ջախջախեցին բշնամուն: Աշխարհագրորայինները կոչում էին անձնվեր խիզախությամբ, նրանց օգնում էին կանայք, ծերունիները եւ դեռահասները: Այսօր ծերերը գովասանքով են խոսում այն ժամանակվա խիզախ կոլխուզաշենցիների, մամնացիների, քերթեցիների, քարահուճեցիների, ծովատեղյիների, սսեցիների, ճարտարցիների, հստորտեցիների, մուշկապատցիների մասին, որոնք 1918թ. հոկտեմբերին ջախջախեցին թուրքական Բլազիմ Բեյի ջոկատները: Այդ մարտերը, որ գլխավորում էին Դիզակի հրամանատար Արտեմ Լալայանը եւ Ալանիկը՝ Ալան Մուրադխանյանը՝ կենդանի կռից, բույլ չովեցին, որ թուրքերն Ամարասի ձորակով հասնեն Կարյազինո եւ Դիզակ:

Մամնայի ճակատամարտում գոհվածների արյան գնով կանգնեցվեց բշնամին եւ հետ շարտվեց: Հայտնի են ԼՂ քարուհուճեցի եղբայրներ Սմբատ եւ Հարություն Դահրամանյանները, որոնք կողք-կողքի գոհվեցին, բայց ոչ մի քայլ հետ չկանգնեցին: Այս տողերը գրողի այն սուրբ քեռիների շիրմաքարի վրա այսօր էլ ձկարող եր ընթերցել «ճենք՝ մեր ազգի ազատությանը գոհվեցինը» բառերը:

Ղարաբաղի ազատության համար կռիվներ ընթացան 1920թ. մարտ ամսում, երբ իր հերոսական դիմանկարը ցուցաբերեց Դայի Ղսգարի ջոկատը: Խանքենդիի եւ Դիզակի ճակատամարտերում հերոսության վառ օրինակներ են դրսևորել Ջ. Մեսրոբի, Ալեքսան դալու, Սասունցի Մանուկի, Հովակ Ստեփանյանի ջոկատները:



Մի՞թե դարաբաղյցիների հիշողությունից կընջվեն Շուշիի հրդեհից հետո Հայաստանի առաջին համրապետության կառավարության կարգադրությամբ 1920թ. ապրիլի 14-ին Ջանգեզուրի կողմից Վարանդա մտած Դրոշի եւ Ղափանի կողմից Դիզակ մտած Նժդեհի զինվորները, որոնք ազատագրեցին Արցախը եւ միացրին Հայաստանին, որը սակայն արտաքին անբարենպաստ հանգամանքների պատճառով խաբարվեց:

## ՈՐՈՎԱՅԹՆԵՐ ԵՎ ԴԱՎԱՃԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ղարաբաղի մեյիքների ձգտումները, իրենց հայրենիքում անկախ հայկական իշխանություն հիմնելու վերաբերությամբ, նոր մտածելակերպ չէին: Սակայն հակառակորդ ուժերը այստեղ առկա էին, որը որակվում է որպես դավաճանություն: Այսպես, դեռ 1701թ. Ղարաբաղը հատուկ կոնդակով մեզ հայտնի Իսրայել Օրում, Հնդկաստանի Մինաս վարդապետին եւ էլի ոմանց գործուղեցին ռուսական կայսր Պետրոս Առաջինի մոտ: Նրանք կայսրին ներկայացան ռուսական Մոնթենսկ քաղաքում: Այդ դեսպանության նպատակը այն էր, որ համոզեն կայսրին՝ հայերին ընդունել իր պաշտպանության ներքո: Չխորհալով այդ շրջանի մանրամասնությունների մեջ, որը մեր թեմայի սահմաններից դուրս է, նշենք, որ Պետրոս Առաջինը Արեւելքում իր ունենալիք չափադիտական նպատակները գուցորդել էր ցանկանում հայերի, վրացիների ռուսահպատակությամբ: Նրա արձվալին աչքերը իսկույն կանխադիտեցին այն մեծ շահերը, որ նա կարող էր քաղել: Այդ նպատակով կազմեց մի դեսպանություն, որի լիազորը կարգվեցավ մույն Իսրայել Օրին եւ 1707թ. ճանապարհեց դեպի Պարսկաստան՝ Եահ-Սուլթան-Հյուսեինի մոտ:

Բայց չնայած այդ դեսպանությունը ծածկված էր Հոմի պապի անմեղ անուճով, որն Արեւելքում որեւէ քաղաքական շահեր ունենալ չէր կարող, այնուամենայնիվ, մինչեւ Պարսից մայրաքաղաքը հասնելը Շամախու կառավարիչ Մուսաբեկյան Հյուսեին խանը, որը ազուրեցի էր եւ ազգով հայ, իմաց տվեց շահին, որ Օրին աշխատում է հայոց թագավորություն հիմնել, պարսիկների իշխանությունը ոչնչացնել եւ այլն: Այդ տեղեկություններն առանալուց հետո շահը այն աստիճան վրդովվեցավ, որ մինչեւ անգամ չէր կամենում ընդունել պապի պատրվակյալ դեսպանությանը: Օրին հմուտ դիվանագետի հատուկ ճարակությամբ կարողացավ փարատել շահի տարակուսանքները եւ Կարսի համոզմունքներով ընդունելություն գտավ:

Բայց Մուսաբեկյանների դավաճանությունը Հյուսեին անվանված հայ խանով չապառկեց: Նրա եղբայրը՝ Մեհտի Ղուլի խանը, մույն ժամանակ Երեւանում պարսից փոխարքա էր: Հենց հայությունը ուրացած այդ հայն էր, որ մեծ տուգանքի ենթարկեց Էջմիածնի վանքը, երբ կասկածեց, որ աստվածատուր կաթողիկոսը, որ այն ժամանակ գաղտնի բանակցություններ ուներ վրաց իշխանների

հետ (Արչիլի եւ մյուսների), կամենում է նրանց հեծն Հայաստանը ազատել պարսից լծից: Առհասարակ, մահմեդականություն ընդունած Մուսաբեկյան եղբայրներից հայերը շատ տուժեցին: Սակայն այդ տարիներին անվանի շատ հայեր՝ Անտոնը, Տեր Պետրոսը, Չելեբի Քոյսվան, Սիմօն Պոպուլը, Հայոց շատ մեյիքներ, այդ թվում՝ Ղարաբաղի մեյիքները, Եսայի եւ Ներսես կաթողիկոսները՝ հայրենիքը ազատագրելու առաքելությամբ էին գրառված:

Դավաճանության շատ օրինակներով է լեցուն Ղարաբաղի պատմությունը: Դրանց հեղինակները եղել են եւ առանձին մեյիքներ, եւ մեյիքության ձգտած որոշ այրեր կամ էլ հենց բժնող մարդիկ: Միայն Դիզակի մեյիքության տոհմում խմորված բազմաթիվ դավաճանական դեպքերը՝ դրանց վառ ապացույցն են:

Մեյիք-Ավան խանի, որին կոչեց Նադիրը, ժառանգորդների դավաճանական գոեերը Ղարաբաղի պատմության չափացած վեբքերն են, որոնք այսօր էլ զգալ են ապա իրենց: Մի՞թե հայերի մեղքով չէ, որ Մեյիք-Եսային սպանվեցավ Շուշիի Իբրահիմ խանի կողմից: Կամ ո՞ւմ, երբ ոչ դավաճանի վրա է ժանրանում Մեյիք-Ավանի այրի կնոջ՝ Գուհար խանուհի կողմից ստիպողաբար հայրենիքը բողոնելը եւ զավակների հետ Ատորախան գաղթելը, ապա նոր կառուցված Ղզլար քաղաքը մեկնելը: Նրանց ժառանգներից հետագայում առաջ եկան իշխան Մուսաբայրյաններ, Մելլունովներ, Հայրապետյաններ, որոնք մի ժամանակ Աստրախանում, Պետերբուրգում եւ Մոսկվայում ռուսաց նշանավոր պաշտոնների մեջ մտան եւ ծաղկեցրին ոչ հայրենիքի հողը:

Մինչեւ այսօր էլ ջուլվանջիքի սարիջալու քանիտական ցեղից առաջ եկած, հետագայում շահի դրանը ջառջու պաշտոն ստանձնած Փանահի Ղարաբաղի խան դառնալու մանրամասները տարբեր կերպ են մեկնաբանում: Բայց ինչ ձեւով էլ դրանք մեկնաբանվեն, փաստն այն է, որ նա խան դարձավ ոչ միայն խորամանկության ու ճարակության շնորհիվ, այլեւ հայերի անմիջական օգնությամբ: Փաստ է, որ Նադիրի իշխանության տարիներին Փանահը հալածված էր, իսկ ցեղը՝ ցրված, եւ որ միայն Ջրաբերդի հզոր Մեյիքի միամիտ հովանավորությամբ նա ջերմացավ. անրապնդվեց, հովվի, անապատների պարզամիտ որդին հենց Մեյիքի ջանքերով ոտքի կանգնեց: Բայց դա նրան չէր բավականացնում, ձգտում էր հեռանալ ցամաք եւ անջուր տափաստաններից, չպոկվելով հասնել մասն լեռնային անտառապատ քարձրավանդակներին, այսինքն՝ Ղարաբաղի լեռները:

Իհարկե, Ղարաբաղի այն ժամանակվա մեյիքներ Բեգլարյան Յուսուֆը, Մեյիք Իսրայելյանը, Հասան Ջալալյան Մեյիք Ալավերդին ոչնչացրին Փանահի կառուցումները Գարգառի մոտ, բայց հանձին Մեյիք Եսահնալար 2-րդի, Գարգառի վերին մասի այն քարձրադիր տեղանքը, որը հետագայում կոչվեց Շուշի, հանձնվեց Փանահին: Հատկանշական է, որ Բեգլարի-առաջին լստը որեւէ Մեյիք Եսահնալարը, որ իր եւ անբողջ Ղարաբաղի մեյիքությունների գերեզմանը դարձավ: 1752թ., բերդը կառուցելուց հետո այստեղ տեղափոխեցին հերեւան Շոշ ավանի բնակիչներին, եւ իբրդը կոչվեցավ Շոշ կամ Շուշի, քանի որ նրանք էին կառուցել բերդը եւ ոչ խաշնարած ցեղի մարդիկ, որոնց հաստությունը չէր հերիքի այդ անը:

Մեյիք Եսահնալար 2-րդի մեծ դավաճանությունը պնարգանքի էր գանվում իր

ցեղակիցների եւ հարեւան խաների կողմից: Հանրահայտ է Գանձակի Ջավադ խանի անեծքը Մելիքին. «Նզովյալ լինի Մելիք Շահնազարը, որ կյանք տվեց այդ սառած օձին (Փանահին) իր կրծքի վրա ջերմացնելով նրան»: Եվ, իրավամբ, եթե չլիներ Շուշիի բերդը, չէր լինի եւ ջուանշիրցիների խանությունը: Հենց Մելիք Շահնազարը Ղարաբաղի կրծքի վրա սկսեց զարգացնել մի նեմզավոր, օձաբարո մահմեդական խանություն: Դավաճանների շարքը լրացվեց նորանոր հայ մեծամեծերով, որոնցից էին Խանչեհի Մելիք Միրզախանը, Ամարասի կաթողիկոս Իսրայելը եւ ուրիշներ:

Շահնազարի այս համախոհ աջակիցները հայերի արդարացի դատաստանին արժանացան, իսկ Շահնազար 2-րդը, որը մահացավ խոր ծերության հասակում, խիստ ցավում ու զգում էր իր մեղքերի համար եւ ուզում էր Ամարասի վանքի վերանորոգման համար կտակած իր մեծ չափով ոսկիների միջոցով թեթևացնել հանցանքները: Ասում են՝ իր մեղքության օրոք վանքերի, տնտեսական շինությունների եւ ջրանցքների կառուցման վրա Մելիք Շահնազար 2-րդը ծախսել է 80 հազար արծաթե ռուբլիներ: Բայց արծաթներն ու ոսկիները յեթեուրյուն չբերին ժողովրդին, իսկ նրա զգումը չթեթևացավ, նրան դրոշմվեց «Ղարաբաղի անառայ որդի» անունը: Հասկանալի է դավաճան Միրզախանի վերջը: Խանչեհի եւ Վարանդայի՝ մեկ կողմից եւ Դիզակի՝ մյուս կողմից մի բանի տարվա պատերազմի վերջում Մելիք Միրզախանը գերի ընկավ: Մելիք Եսային, որ գերեվարողն էր, սուրբ բռնելով նրա՝ գլխի վրա՝ նրան դիմեց հետեւյալ խոսքերով. «Դու, Միրզա խան, շատ սման ես այն դաժանահին, որին կոչում էին Մերուսան: Նա ուրացավ մեր կրոնը, նա պարսից ձեռքում գործիք եղավ եւ սկսեց մեր հայրենիքը ավերակ դարձնել: Նրան, որպես վարձատրություն իր կատարած չարագործությունների, խոստացել էին Հայաստանի թագը: Մի ճակատամարտի ժամանակ նա եւս թեզ նման գերի ընկավ հայերի ձեռքը: Այդ միջոցին հայոց գորավարներից մեկը, որին կոչում էին Սմբատ Բագրատունի, կրակի մեջ շիկացած շամփուրին պսակի ձեւ տվեց եւ դնելով նրա գազաթի վրա, ասաց. «Դու ցանկանում էիր հայոց թագավոր լինել, հասնա՞ես, իբրեւ ասպետ եւ թագադիր, պսակում եմ քեզ...»: Բայց դու գոնե Մերուսանի չափ փառասիրություն չունեիր, դու միայն մի ցած դավաճան էիր, որ առայսօր չնչին փառքի համար թուրք խանի եւ Մելիք Շահնազար չարագործի արքանյակը դարձար: Բեզ հետ պետք է վարվել՝ ինչպես մի կատաղած շան հետ, որին սպանում են, որպեսզի մյուս արարածները նրան կծռռելուց չվարակվեն»: (9)

Վերջին խոսքերից հետո նա իջեցրեց սուրը եւ ոչնչացրեց Ղարաբաղյի Մերուսանին:

Բայց Մելիք Եսային թանկ վճարեց դրա համար, քանի որ Իբրահիմ խանը եւ Մելիք Շահնազար 2-րդը եղբմնավանդության ճանապարհով իրենց հետ կոպող Եսայուն գլխատեցին:

Միրզա խանի վարքագիծը դրոշմվեց նրա տղա Մելիք Ալավերդու վրա: Տնարդության, դավաճանությունների եւ ստոր վարմունքի բացառիկ օրինակներից է Ջրաբերդի Մելիք Մեծլումին սպանելու փորձը Իբրահիմ խանին կույր գործիք դարձած երկու անձնավորությունների՝ Ալավերդի Յուզբաշու որդի Միրայել բեկի եւ նրա որդի Հակոբ Յուզբաշու կողմից: Հյուր գնալով Մելիքի տունը, որը

գտնվում էր Թարթառ գետի մոտ Ղազախ կոչված տեղում (այժմյա Մարաղան), նրանք գաղտնի խոսում էին լույսը հանգցնելու եւ գործի անցնելու մասին: Մելիքի ծառան, որ լսում էր գրույցը, հայտնեց, եւ երկուսին էլ բռնեցին:

Մեր պատմության մեջ սովոր է այն տխուր երեւույթների թիվը, երբ հայրենիքի տագնապալի եւ օրհասական ժամանակներում, մի խոսքով, ամեն մի քախտավոր կամ զժբախտ թուպեի ծագել են կրոնական կամ եկեղեցական վեճեր, որը եւ ժողովրդին շեղել է իր կենսական խնդրից: Իհարկե, բացառված չեն բարեմորոգիչ եւ հայրենաճվեր կաթողիկոսներն ու կրոնական այլ մեծադիրները, որոնք նպաստում կին հայրենիքի ամրապնդմանը: Բայց ինչպես մեծն Րաֆֆին էր ասում. «Չի կարելի հերքել, որ կաթողիկոսների մեջ կային եւ օրինավոր մարդիկ, ինչպես Եսային ու Ներսեսը, որոնք մելիքների հետ միացած՝ գործում էին հայրենիքի փրկության համար: Բայց մի օրինավորի շինածը մյուս անպիտանները ոչնչացնում էին ...»: [10]

Այսպես, Փանահ խանի մահվան տարում (1763թ.) մահացավ Երիցմանկանց կաթողիկոս Ներսեսը (Րաֆիֆու գովածը), եւ նրա տեղը Գանձակի հայերը Իսրայել եպիսկոպոսին առաջ քաշեցին՝ որպես նույն վանքի կաթողիկոս, իսկ Ջրաբերդը Գանձասարի կաթողիկոս օձեց Հովհաննեսին: Երկու կաթողիկոսները հակամարտ վիճակում էին:

Մելիքների դիմումը մայր արքոն Էջմիածին ավելի խառնեց գործը: Երկուսն էլ հաստատվեցին կաթողիկոսներ, որը եւ հակասություններ ստեղծեց: Իսրայել կաթողիկոսը, զգալով Ղարաբաղի կաթողիկոսության ապօրինի տարանջատումը, համարձակություն չունեցավ նստել Երիցմանկանց վանքում: Նա առիթ էր որոնում վրեժխնդրի լինել Հովհաննեսին, որին եւ սպանել տվեց: Բայց նա սպանել տվեց ոչ միայն Հովհաննես կաթողիկոսին, այլեւ սպանեց այն մեծ գործը, որ Ղարաբաղի մելիքները ստեղծել էին Փանահին փոխարինած Իբրահիմ խանի դեմ:

Այո, սպանվեց ոռոսական իշխան Գրիգորի Պոստոմկինին Իբրահիմ խանի դեմ իրահրելու, վերջինիս իշխանությունից հեռացնելու եւ առանց խանի, Ղարաբաղում հայոց անկախ իշխանություն ստեղծելու որոշման նախաձեռնող Հովհաննես կաթողիկոսը:

Բայց դավաճանը դրանով չբավականացավ. կապվելով Իբրահիմ խանի հաճոյակատար Մելիք Շահնազարի, Խնձրիստանի Մելիք Ալավերդու եւ Գյուլաթաղի Ռոստոմ Բեկի հետ, Գանձասարի կաթողիկոսության արքոն ակնկալող Իսրայել Իբրահիմի խնդրանքով իր մոտ Գանձակ բերված եւ ոռոսական ցարին հասցեագրված գաղտնի նամակը խլեց բերողից եւ հետ ուղարկեց Իբրահիմին: Դա հիմք ծառայեց, որ խանը անգուշավոր երեք մելիքներին՝ Ջրաբերդի Մեծլումին, Դիզակի Բախտամին եւ Գյուլիստանի Աբովին իրավիքի ու բանտարկի: Մեծլումը եւ Աբովը հնարքով փախան բանտից, իսկ Բախտամը արտոլվեց Պարսկաստան: Սա 1785թ. անցքերի ժամանակաշրջանն էր, երբ հինգ մելիքներից մնացին երկուսը՝ Գյուլիստանի եւ Ջրաբերդի, իսկ մյուս երեքը դարձան խանի կախյալներ:

Իսկ ի՞նչ անում տալ Ղարաբաղի Դիզակ գավառի Տող գյուղի Գտիչ վանքը նորոգած եւ այնտեղ քրիստոնեական միաբանություն հաստատած Ղուկաս

վարդապետի տղա Մելիք Ավանի ժառանգների այն միամտությամբ, որ օրը ցերեկով հնարավորություն տվեցին Շուշվա Իբրահիմ խանին՝ հալածանքների ենթարկելով հայերի մի մասին՝ ընդունել տալ մահմեդականություն, մի բան, որ մեր նախնիները կյանքի բանկ գնով, 4-րդ եւ 5-րդ դարերում, չարեցին: Այստեղից էլ ներկայիս Տոլ գյուղի թուրքերի արմատները:

Այս պատմական անցքերը շատ պարզորոշ նկարագրող մեծ պատմավիպասան Բախիին իր «Խաճախի մեկընթացներ» պատմաշարում այս աղիքով ներկայացնում է մի դրվագ այն մասին, որ «հիշյալ մահմեդականների գլխավոր ներկայացուցիչը իր երկու որդիներին հանձնեց Սարգիս եպիսկոպոս Ջալալյանցին, որպեսզի վերջինս հայկական ոգով կրթել տար, հետո քրիստոնեություն ընդունեին եւ շարունակեին Մելիք Ավանյանների ժառանգությունը իբրեւ հայեր: Բայց բարեեռոյի եպիսկոպոսը, փոխանակ պատանիներին կրթելու, սկսեց նրանց ծառայեցնել որպէս տան սպասավորներ: Նրա խտհանդուս մահուկները յորպեան եւ գողացան եպիսկոպոսի թեյի գդալները: Եպիսկոպոսը տխուրգլուխ ելաւ իր տնից»: [11]

Իհարկեւ, սա Դիգակի Ավան (Եգան) Լորիս-Մելիքյանների թողավորյան արդյունք չէր միայն, այլ ուժի հարց, որ դավաճանության հետ համատեղ չէ, բայց ինչեւիցե, տեղավորյուն է, հանցավոր տեղավորյուն:

Եթե այն ժամանակ ամեն ինչ հասկացող, բվացյալ, կեղծ ու պատիր մահմեդական դարձած հայ ազնվականը, զոջալով իր սխալը, ուզում էր իր գավակների միջոցով ուղղել իրեն, բայց Սարգիս Ջալալյան եպիսկոպոսը ընթացք տվեց սխալը շարունակելուն՝ մինչեւ վերջերս, երբ Տոլի մի մասը թուրքացված էր: Այստեղ ի՞նչ ասել հարգարժան վիպասանին, որ դեռ նմանին էլ լուսաստանի է անվանում:

Այսօր էլ նման «լուսահողմներ» կան մեր մեջ, որոնք ինտերմեդիոնալիստներ են հորջորջվում:

Հենց այս ինտերմեդիոնալիզմով ջերմացածներով պետք է բացատրել Ղարաբաղի թրքացվածությունը, որը մի արձեւ բռն դարձավ մեզ համար, որի տակ էլ հենց մենք կքած ենք:

Նմանօրինակ փաստերը՝ Ղարաբաղի պատմության ուղեկիցն են եղել միշտ: Մի՞թե խորհրդային վարչահրամայական համակարգի պայմաններում օտարաժողովուրդներ չէր պատճառը, որ Ղարաբաղում 5-10 տոկոս ծվարած թուրք ազգերիների բռնակը մեր Եւրոպայի մասիորդին հասցված էր կրկնապատկից: Ղարաբաղի նորագոյն պատմությունը, թերեւս, կանդրադառնա-դրա մեղավորների վերհանմանն ու մերկայացմանը:

Այժմ դեռ ասկված ենք եւ չենք բացում փակագծերը:

Բայց վայ նրան, ով պատմաբանների «բակարդը» կընկնի եւ, իր բողած հետքերով Մելիք-Շահնազարի, Սիրյա խանի-Եւրայելի, Ռուստամի եւ մյուս դավաճանների գնահատականին: Կարծախանա: Թող արժանանա, ով արժանի է դրան՝ հավերժ անարգանքի սյունին գամվելով:

Բայց ստացա՞վ Իսրայելը խանի խոստացածը: Այո, ստացավ, բայց նստեց ոչ թե Գանձասարում, այլ Ամարասում, որտեղ նա առաջուց նստել էր եւ Փանահի ժամանակ ու սպանել տվել Ավան Գերագեյիցի փոխարինած նոր գերագահ

Աստվածապովին: Այս եռակի դավաճանը շատ լավ գիտեր, որ խանի կամքը կատարելով, որպիսի սարսափելի վտանգի պետք է ենթարկեր հայ մեկընթացին: Նա հասկանում էր, որ իր մատնություններով պիտի սպաներ հայրենիքի ազատության գործը, բայց իր փառքը եւ Գանձասարի կաթողիկոսական արքող ավելի բարձր էր դասում, քան ազգային գործը: Նրա մատնությամբ բանտ մետված երկու մեկընթացը, որոնք ճշմարիտ հայրենասերներ էին, պատվի ու զգացմունքի տեր տղամարդիկ, որոնց գորությունից սարսափում էր Իբրահիմ խանը, փախան բանտից, թողեցին հայրենի եզերքը եւ ռուս գեներալ Բուռնաշովի օգնությամբ անցան Թիֆլիս: Ի վերջո, Իբրահիմ խանը նրանց փոխարինեց հաճոյակատար նոր մեկընթացով եւ դարձավ Ղարաբաղի տերը:

Այն պահին, երբ Շուշվա խաների դեմ պայքարը հաջողություն չունեցավ՝ արտաքին եւ ներքին ռուսների պաշտպանությունը խաներին, դավաճանություններ, ներհակություններ մեկընթացի մեջ եւ այլն), եղավ մի ժամանակ, որ գոնե Ղարաբաղի հայերը կարող էին ընդունել փախած Իբրահիմին փոխարինած նրա եղբորորդի Մամեդ բեկի առաջարկությունը եւ վերջ տալ Ղարաբաղի խանությանը: Դա Աղա-Մամեդ-խան շահ Կաջարի սպանությունից անմիջապես հետո էր (1797թ.): Մելիք Ռուստամը, որը այն ժամանակ մեկը էր Ջրաբերդի կողմերում (իսկ մնացած մեկընթացները համարյա չկային), մերժեց Ղարաբաղի իշխանությունը կիսելու Մամեդ բեկի առաջարկը եւ ընդհակառակը, Իբրահիմ խանի կողմից Շուշի ուղարկված որդի Մեհտի խանին սրտանց ընդունեց, տարավ հոր պալատը, իսկ Մամեդ բեկին կալանեց:

Նկատենք, որ այդ նույն Ռուստամ բեկն է (դավաճան Իսրայել կաթողիկոսի փեսան), որ նույն Իսրայելի հոր՝ Ապրես աղայի ձեռքով Գանձակում սպանեց Մելիք-Մեծղումին, այժմ էլ օգնեց Իբրահիմին ու կրկին հաստատեց Ղարաբաղի բռնակալների իշխանությունը մի այնպիսի ճգնաժամի ժամանակ, երբ հարձար ոչնչացնել խանությունը: Այս դավաճանը իր արժանի հատուցուսն ստացավ էր ոչնչացնել խանությունը: Այս դավաճանը իր արժանի հատուցուսն ստացավ էր ոչնչացնել խանությունը: Այս դավաճանը իր արժանի հատուցուսն ստացավ էր ոչնչացնել խանությունը: Այս դավաճանը իր արժանի հատուցուսն ստացավ էր ոչնչացնել խանությունը: Այս դավաճանը իր արժանի հատուցուսն ստացավ էր ոչնչացնել խանությունը:

Նկատենք, որ, թերեւս, դա Ղարաբաղի ամենատարբեր դավաճանն էր: Այդ գծում դավաճանից ի՞նչ կարելի էր սպասել, երբ իր ամուսնուհույան մեղաւորից չբոլորած Փանահի կնամուտությունը հագեցնելու համար, իր կնոջը՝ Վարդ-Խաթունին հանձնեց նրան:

Ջարմանալ կարելի է, որ եթե այն ժամանակվա մոլորված ու սխալ գործած, չղավաճանած Ղարաբաղցի ուղղել էր ուզում իր սխալը (ինչպէս Տոլի թուրքացածները), այժմվա սխալականները ավելի են խորացնում իրենց սխալները եւ չեն մտածում դրանք շտկելու մասին:

Այն ժամանակներում ասում էին, թե «մի եղբոր շինածը մյուս եղբայրը բանդում էր...»:

Դրա տխուր օրինակը մենք համարյա վերհանցիքը, դա մի կողմից Գանձասարի փառապան Վարդիկոս Հովհաննեսն էր, մյուս կողմից՝ նրա հարազատ

10794  
08 11 18

եղբայր Հասան Ջալալյան Մելիք Բեկի որդի Ալլահ Ղուլի հորջորջված բեկը, որը Շահնասար գյուղից նույն օրը, երբ Գրիգոր անունով մեկը, մուրացկանի կերպով, ռուս բազուկուն գրած նամակն էր տանում Գանձակ, որ այնտեղից հասցվի Պետրոգրադ, ուղեւորվեց Շուշի՝ Իբրահիմ խանի մոտ, հայտնեց նրան, թե հայոց մելիքները, Գանձասարի Հովհաննես կաթողիկոսի հետ միացած, մի նոր թուղթ են գրել ռուսական կայսրուհուն (1785թ.). նրանք հրավիրում են ռուսներին, որ գան, տիրեն նրա երկիրը: Մի խոսքով, դավաճանը մանրամասնաբար տեղեկություններ տվեց այն բոլոր պատրաստությունների մասին, որ մինչև այսօր կատարել էին մելիքները եւ Հովհաննես կաթողիկոսը:

Դավաճաններն իրենց գործը շարունակեցին Հովհաննես կաթողիկոսի հաջորդ Սարգիս կաթողիկոսի նկատմամբ, որը մեծ գումարով ազատվել էր Իբրահիմ խանի ճանկերից: Եվ երբ Սարգիսն ուզում էր փախչել արդեն թալանված վանքից, դավաճանների թիվը այնքան մեծ էր, որ նա խորամանկությամբ մի հերթական հավաքի ժամանակ իր շուրջը գտնվող մատնիչներին բռնել է տալիս ու բախտարկում: Բայց գտնվում են էլի լրտեսներ, որոնցից ի սպառ ազատվեց Սարգիս կաթողիկոսը (1791թ.) ու գնաց Գանձակ: Այնուհետև Գանձասարը մնաց ավերակ, գուրկ հոգեւոր միաբանությունից, իսկ առաջուց թաքցրած հարստությունները ծածուկ հետ բերելու փորձերը Սարգիս եղբայրների կողմից խաթարվեցին. նրանք բռնվեցին եւ Շուշիում կտոր-կտոր արվեցին: Սա էլ դավաճանության մյուս երեսն էր:

Այնուհետև, մինչ Դարաբաղը Ռուսաստանին անցնելը եւ այդ վանքն այլ նպատակով օգտագործելը (1850թ.), Արցախ աշխարհում գործեցին երկու վանքեր՝ Ամարասիւնը եւ Երիցմանկանցը: Այս ամենից հետեւում է, որ նախանձախնդրությունները, անձնական գերագնահատումները, մեկը մյուսի մեջ միշտ չարն ու վատը տեսնելու սովորությունը այն ժամանակվա հայ ջոջերի մեջ այնքան էր խորացել, որ 1790-ական թվականներին, ի վերջո, մնացած երկու մելիքների մեջ էլ (Ջրաբերդի եւ Գյուլիստանի) հավատարմությունը խանդեց, եւ մի պատեհ առիթով (ճաշելիս մելիք Աբովը Սեփումին մեղադրեց պատի օրը խախտելու մեջ) խռովեցին, եւ Աբովը իր տոհմով քոչեց Բոլնիս (1791թ.):

Արցախ աշխարհում դավաճանության հին դրսեւորումներից էր նաեւ Ամնայն Հայոց կաթողիկոս Միմեոն Երեւանցու բռնած դիրքը հնդկահայ ազատագրական գործիչ Հովսեփ Էմինի նկատմամբ, որը 1760-ական թվականներին ձգտում էր կազմակերպել ազատագրական ջոկատներ Արցախում, Արեւմտահայաստանում, ստանալ Ռուսաստանի եւ Վրաստանի օգնությունը հայ ժողովրդի ազատագրության համար: Հենց նա՝ այդ կաթողիկոսը, Վրաստանի թագավոր Հերակլ 2-րդի սիրտը կասկածանք պցեց եւ հետ բերել տվեց նրա զորքը Գյանջալի մոտերքից, բանադրանքի սպառնալիքով պահանջեց Արցախի առաջնորդներից՝ հեռու մնալ Հովսեփ Էմինի աջակցելուց: Էմինը, շատ բան կորցրած, վշտաբեկ ու գլխկոր վերադարձավ Հնդկաստան:

Ի դեպ, հայ ժողովուրդը Միմեոն Երեւանցի կաթողիկոսի ուրիշ դավաճանությունների էլ է հանդիպել: Այսպես օրինակ, երբ 1772թ. Մադրաս քաղաքում հնդկահայ մեծահարուստ Շահամիր Շահամիրյանի ստեղծած հայկական տպարանում լույս է տեսնում Մովսես Բաղրամյանի «Նոր տետրակ, որ կոչի հորդո-

րակ» գիրքը, Միմեոն Երեւանցի կաթողիկոսը կարգադրում է հավաքել եւ այրել այդ գիրքը, փակել տպարանը եւ հեռացնել Մովսես Բաղրամյանին: Նա նույն ձեւով է դիմավորում նաեւ հնդկահայ մեծահարուստ Շահամիր Շահամիրյանի «Ռոբզայթ փառաց» հայրենասիրական գիրքը:

Մենք, իհարկե, սեւով չենք պարուրում Միմեոն Երեւանցու ամբողջ գործունեությունը՝ իմանալով հանդերձ, որ բարենորոգչական շատ գործերի հեղինակ էր, որ Էջմիածնում տպարան էր բացել, ստեղծել բոլոր գործարան եւ այլն:

Ասում ենք՝ հայոց պատմությունը հարուստ է դավաճանություններով: Դա փաստ է, բայց ինչո՞ւ այդ հարցին պատասխանողները քիչ են, իսկ պատասխանները՝ երբեմն միակողմանի:

Սակայն դավաճանությունը որակելու, նրան արժանի գնահատական տալու հարցում մեր մախմիրները, մեր խոշոր մտածողները ծուլ չէին: Մեծ Լոռեցու խորհմաստ բնորոշումը, թե՛ «Չարն էլ է միշտ ապրում անմեռ, անեծք նրա չար գործին...», մարդու կամ ազգի հանդեպ բշտամանք գործած «ես»-ի ավարտուն գնահատականն է:

Հոգեբանները հաճախ դավաճանության պատճառը որոնում են թուլության եւ վախի ստվերում, երբեմն էլ այդ «ընդունակությունը» վերագրում տվյալ անձի հոգեբանական մոմենտներին, նրա հատուկ բնույթին, իսկ սոցիոլոգները այն օրակում են որպես շահամոլության եւ անձնական հարստացման դիմագիծ, պատամարանները՝ պատմական ստեղծված իրավիճակից տվյալ անձի դուրս գալու ելքի որոնում կամ տվյալ ժամանակաշրջանի ծնունդ:

Մեր՝ վերը փաստարկած դավաճանական մղումները, որ արտահայտվել են Դարաբաղում կամ նրա հետ առնչված անձերի մեջ, բոլոր այդ կողմերն էլ ընդգրկում է: Հաճախ մենք վերանում ենք այդ պատճառներից եւ մի գլուխ մեր ազգի հատկաճիչները դատափետում, մեր չարն ու վատը ազգի յուրահատկության արդյունք համարում:

Ուրիշ ազգերի եւ ժողովուրդների պատմությանը տեղյակ ամեն ոք կհամզի նրան, որ չարն ու բարին, դավաճանությունն ու նվիրվածությունը ազգային չի համարի եւ կեննի համամարդկային հոգեբանության օրենքներից:

Ռուս պատմաբաններ Սոլովյովի, Տատիշչեւի, Տարլեի, Կարպինսկու, Պոկրովսկու եւ մի շարք գրողների մեծուարներում ու վեպերում ռուս եւ ուկրաինացի բազում հեղուների գրվածքներին կողքին սարկազմի հասնող տողեր կան այն դավաճանների հասցեյին, որոնք դավաճանել են ռուսական գեներլ փառավորներ Ալ. Նեսկուն, Մուլոդովին, Կուտուզովին, Նախիմովին, Ուլյակովին եւ ռուսական երկիրը ընդարձակողներ Իվան 4-րդին ու Պյոտր 1-ինին:

Մի՞թե հնարավոր բան էր, որ հայ իշխանը կամ թագավորը սպաներ իր 12 եղբայրներին՝ գահական ընչաքաղցության ճանապարհին, որպիսին արել է մոնղոլ իսան Բերգիթեկը: Նա չիմզիեվումներից առաջինը չէր, որ իշխանության էր հասնում արյունոտ ճանապարհով: Չէ որ այդպես էր վարվել նրա հայր Ջանիթեկը, նրա պապը եւ պապի հայրը: Սրանք այլազգի դավաճանների սակավ օրինակներից են, մի բան, որ գուցե եւ հայերի մեջ իրենց մասշտաբներով անբերական է: Չէ՞ որ հայ թագավորները կամ հեղուները դավաճանաբար սպանվել են իմնականում օտարների ձեռքով (Արտավազդ 2-րդ Պապ, Գալիկ եւ այլք): Հի-

չենք Թուրքիայի սուլթան Սելիմ Յավուզին (Ահեղին), որ իր գահը 1512 թ. ստացավ հորը, երեք եղբայրներին և տասը ազգականներին սպանելու ճանապարհով: Ասենք, որ թուրքիո 36 սուլթաններից 14-ը սպանված են յուրայինների կողմից:

Մեր դրկից վրաց ժողովրդի պատմության սեւ էջերից մեկում պատմվում է, թե ինչպես հայ-վրացական մեծ դաշինքի նախաձեռնող Վախթանգ թագավորը դեմ է առել հայրենակից դավադիրների աղետալից դեպքերին. այն ժամանակ, երբ նա, խաբված լինելով Պետրոս Մեծի խոստումներից, հայ եւ վրաց գորքի հետ, տխուր ու սրտաբեկ, հույսը կորցրած, Շամախուց վերադարձավ Թիֆլիս: Հենց այդ ժամանակ վրաց Հերակլ 1-ինի որդի Կոստանդին 1-ինը, որն իր հոր ու եղբոր՝ Դավիթ 3-րդի նման մահմեդականություն ընդունելով, ստացել էր պարսից շահի Կախեթիայի իշխանությունը, այդ չարագործը դիմեց լեզգիների գլխավոր Ալի-սուլթանին, խոստացավ նրա բանակի յուրաքանչյուր զինվորին 3 բունամ վարձ տալ եթե նրանք օգնեն իրեն՝ Թիֆլիսին տիրելու եւ Վախթանգին սպանելու գործում: Լեզգիները կատարեցին նրա խնդիրը, բայց Վախթանգը փախավ ու չսպանվեց: Կոստանդինը, որը Պարսկաստանից ստացել էր Սահմադ-Ղուլի խան օտարոտի անունը, չկարողացավ վճարել իր խոստացած վարձատրությունը, թույլ տվեց, որ լեզգիները դրա փոխարեն կողոպտեն Թիֆլիսը, եւ ամբողջ քաղաքը ավարտության գոհ դարձավ: Այստեղ ակամայից հիշում ենք Վասպուրականի Գագիկ Արծրունուն, որը խաբվելով Յուսուֆ Ամիրայի կողմից, դավաճանեց Սմբատ 1-ինին (907թ.), չնայած Գագիկը հետագայում հասկացավ իր կորստաբեր արարքը: Բայց ուշ էր: Նա արդեն խաչել էր տվել Սմբատ թագավորին: Վրաց թագավորներից ոմանք, ինչպիսին էր Հերակլը, նույնպես վարեց հակադարձաբաղյան քաղաքականություն. փոխանակ կատարելու Ղարաբաղի մելիքներին օգնելու վերաբերյալ Եկատերինա 2-րդի հանձնարարականները, միացավ Իբրահիմ խանին եւ իր մոտ օգնության խնդրանքով ներկայացրած Գյուլիստանի եւ Ջրաբերդի մելիքներ Սեջլունին ու Արով 2-րդին ուզում էր բունավորել եւ սպանել: Դրացի դավաճանը շատ շուտ մոռացավ Թիֆլիսը լեզգիների միջոցով ավերելու՝ Իբրահիմ խանի կատարածը: Ի պատասխան Հերակլի այդ մթին եւ ստոր գործերի, Սելիք Սեջլունը ապապրել է Հերակլին՝ «զնայեց եւ հայտնեցեք ձեր իշխանին, որ մելիք Սեջլունը չի մոռանա նրա հյուրասիրությունը»: Վրաց իշխանի նենգավորությունը սաստիկ վիրավորեց Ղարաբաղի Սելիքի զգայուն սիրտը: Վրեժխնդրությունը առկա դարձավ, նրա «սարքած ճաշը» մի քանի տարուց հետո Թիֆլիսի կործանման պատճառ դարձավ: Հերակլը չմտածեց, որ Իբրահիմ խանը իր համար հուսո ճրագ չի կարող լինել: Իբրահիմի անհավատարմության փաստը շուտ հաստատվեց: 1795թ., երբ Աղա Մամեդ շահ Կաջարը հյո ճրակ դարձրեց Թիֆլիսը, Հերակլը իր կողքին Իբրահիմ չտեսավ եւ մի ջորեպանի միջոցով մարախտոյալ փախավ: Բայց այդ նույն Հերակլը չխրատվեց դրանից եւ նորից միացավ Իբրահիմին՝ 1796թ.: Դրանից առաջ ոչ պակաս դավաճանություն արեց Հերակլի հայր Թեյմուրազը, որն Ավետարանոց բերդում բռնված Փանահին, Շահնագարին եւ Սիրգայսանին առավ իր հովանավորության տակ եւ մեծ կաշառքով ազատեց գերությունից:

Ի դեպ, այժմյա վրաց դեկավորներից էլ ոմանք եղբայրություն խաղալով հա-

կանայրական գործեր են կատարում եւ շողոքոթաբար արդարանում: Նրանք են փակել ճանապարհները, մեծ մաքսեր են վերցնում անցնող ապրանքների դիմաց, բախնում են անցորդներին, հնարավորություն տալիս թուրքերին՝ պայթեցնելու գազախողովակները եւ այլն:

Այս տեսակետից չափազանց մեծ են Գամսախորդիայի հարուցած վնասները, որն ապերախտ գտնվեց նույնիսկ հայերի մատուցած ծառայությունների հանդեպ:

Դեռ վաղուց է հայտնի, որ շահամուլ պետությունների շահամուլ ծգտումները հին եւ նոր ժամանակների պատմության ստվար էջեր են կազմում, որից մենք հարկավ եւ անհարկի դասեր չենք քաղում:

Իրոք, հին եւ նոր պատմության ժամանակներում հայոց երկիրը եւ ինքը՝ հայը, գնդակի եւ մուրճի արանքում է հայտնվել, եւ այսօր էլ այդպես է: Հունաց արշավանքներ, պարսկական եւ արաբական տիրապետություն: Սեջլուկյան եւ բուրքական ասպատակություններ, ռուսական «մեղմ» զավթումներ, էլ չենք խոսում դրանց նախորդած կամ հաջորդած Ջալալեդդինի, Ջաղաթայի, Արփ-Ասլանի, Լեոկ-Թեմուրի, ժամյուկների, մոնղոլ-ավարառուների կողմից հայ հողը այրումաշաղախ անելու եւ նրա հետեւանքների մասին:

Մեր բախտը չբերեց նաեւ մեծ պետության՝ Ռուսաստանի վրա հենվելուց, որից մեծ հույսեր էինք սպասում: Շահամուլությունը մնում էր շահամուլություն, որը եւ որպես նրա քաղաքականության հիմքում: Այնպես, ինչո՞վ բացատրել այն, որ 18-րդ դարի վերջին Ղարաբաղի ազատագրության պտուղները ռուսական զենքերալ իր երկրի ցուցումով նվիրեց Իբրահիմ խանին՝ ճանաչելով նրա խանությունը, որի դիմաց ստացավ առատ նվերներ: Իսկ բոլշեիկները՝ 11-րդ բանակի հրամանատար Գեկե՞րը: Չէ՞ որ նա էլ Ղարաբաղը հանձնեց Ադրբեջանին, նոր իբրահիմներ Նարիմանովին, Կարսեւին եւ Հյուսեյնովին՝ ի շահ բեմալականներին:

Այժմ էլ նույն քաղաքական խաղն է. ռուս գործիչներից ոմանք իրենց թուրքամետությամբ կրկնում են անցյալը: Մտաբերենք վերջին 5 տարիները: Քաղաքական ու ռազմական ի՞նչ փոթորիկներ ասես, որ չեն անցել Ղարաբաղի գլխով: Անցյալում հեշտ էր, համեմատաբար, այն ժամանակներում հեռու երկրների ու թույլ Թուրքիայի հետ գործ ունենալը, իսկ այժմ՝ մի ամբողջ ռուսական կայսրության, որ իՍՀՄ էր ներկայացնում իր թուրքական ցեղի 21 ինքնավար եւ միութենական հանրապետություններով, տմարդի ՊԱԿ-ի եւ հզոր բանակի առկայությամբ: Բայց երկրամասը դիմացավ այդ արիավիրներին, վարչա-հրամայականի արշավանքին, ամբողջ ԽՍՀՄ-ում դեռ չծնված ու չեղած Հատուկ կառավարման կոմիտեին, Կազմկոմիտեին, նորաստեղծ Գերագույն խորհրդին եւ նրա համագործակցություններին, քաղքյուրոյի մեկը մյուսից թուրքամետ եւ հապշտապ որոշումներին: Ի վերջո, դեմ առանք շրջափակումների, արտաքին աշխարհից կտրվելուն, նույնիսկ սեփական ազգից կտրվելուն: Բայց ո՞ր է թե դրանով վերջանար:

Արտակարգ դրության եւ պարետային ժամի ճիրաններին գոհեցինք մեր հայրենավոր մարդկանց, ծաղրածանակի ենթարկվեցինք մեր հարազատ օղանավակայանում, թալանվեցինք ներս բերվող եւ դուրս տարվող ապրանքները: Մոսկվայի Բուտիյան բանտում խոշտանգվել է մեր համերկրացին՝ ազատագրական

շարժումը գլխավորողներից Արկադի Մանուչարովը, իսկ Բաբվի, Սարատովի, Նովոչերկասկի, Պյատիգորսկի բանտերում՝ Հայաստանի Հանրապետության ԳԽ պատգամավոր Համլետ Գրիգորյանը, Արկադի Ղուկասյանը, Ռուդիկ Ազատյանը, Ռազմիկ Պետրոսյանը, Ավետ Գրիգորյանը, Ռաֆիկ Գարրիեյանը, Արկադիա Թովմասյանը, Ռոնես Աղաջանյանը: Շուշիի հինավուրց բանտի մենախսյուն էին Սամվել Բաբայանը, ասկերամցի Բաշիրը, Նորազյուղի միլիցիայի տեղամասի լիակատար Ղարիբ Հարությունյանը, մայր Ծախրազյանը, Մարտունու ավտոտեսուչ Արթուր Բալասյանը: Շուշիի, Ծախրուլաղի, Ֆիզուլու բանտերում գազանային հաշվեհարդար էին տեսնում կոլտնտեսությունների նախագահների, քրիզադավարների, ֆերմաների վարիչների, գյուղական ու քաղաքային խորհուրդների նախագահների, բանվորների ու կոլտնտեսականների, նորաստեղծ երկրապահ ջոկատների թվացյալ անդամների, գեղջուկիների հետ: Ազերի օժոնականները ներբանակային ռուս զինվորների օգնությամբ բանտ նետեցին հետագայում Մարտակերտի պաշտպանության հրամանատար Նորայր Դանիելյանին, իսկ Գյանջայի բանտում կոտանքների ենթարկվեցին Ծախունյանի շրջանի ղեկավարները, շրջկոմի առաջին բարտուղար Վաղիմիր Աղաջանյանը: Հետապնդվում էր Ստեփանակերտի տպարանի տնօրեն Յուրի Ներսիսյանը և այլոք: Ռուսական բանակի ներքին զորքերը շրջափակեցին Մարտունու և Ասկերանի շրջկոմների շենքերը, իսկ Հաղորտինը վերստին վերցրին իրենց հսկողության տակ: Այդ բանտ նետվածներից մայր Ծախրազյանի կալանքը ավարտվեց մահով, իսկ շատերն ազատվեցին մեծ փրկագնով կամ փոխանակվեցին թուրքերով:

Բայց զարմանալիս այն է, որ դեռ երկրաշարժի պատճառած արյան շիթերը չչորացած, երբ Կուրայի Հանրապետության վարչապետ Ֆիդել Կաստրոն իր արյունն է հանձնել երկրաշարժից տուժած մարդկանց, Մ. Ս. Գորբաչովը՝ մեր այն ժամանակվա երկրի տերը, 1988թ. դեկտեմբերի վերջերին հրաման արձակեց՝ ձերբակալել «Լարաբաղ» կոմիտեի բոլոր ղեկավարներին: Մակայն երկրի առաջադեմ մարդկանց՝ Անրոյեյ Սախարովի, նրա կին Ելենա Բոննեթի, Գալինա Ստարավոյտովայի, բանաստեղծ Միխայիլ Դուդինի և գրող-հրապարակախոս Անդրեյ Նույկինի պահանջով ազատ արձակվեցին Լարաբաղ կոմիտեի անդամները:

Բանտարկվածներից յուրաքանչյուրը մեղադրվում էր յուրովի, տարբեր շարժառիթներով, ասենք, Արկադի Ղուկասյանը, որ այն ժամանակ «Լուրերդային Լարաբաղ» թերթի խմբագրի տեղակալն էր՝ սարկազմիկ կերպով պարետին քննադատելու (ուղիղ եթերով պարետին ձեռն առնելու), «Բացկը վերջապես ձեր աչքերը» և «Լայնաբայլ ֆենոմենները» հոդվածների համար: Ա. Ղուկասյանը իր հոդվածներից մեկում գրել էր. «Լաչաղները աստիճանաբար նեղացնում են Լարաբաղի շուրջ սարքած օղակը: Վանդալները ավերում են Նախիջևանի ասիմանները, կազմակերպում հայերի եղեռն Սուժգայիթում, Բաբվում, իսկ երկիրը լուռսմունջ դիտում է այդ ամենը: Որտե՞ղ է ձեր խիղճը, բարձրագույն իշխանությունները»: Եվ պատահական չէ, որ նրա գրչակից ընկերները իրենց հրապարակային ելույթներում պահանջում էին ազատ արձակել Ա. Ղուկասյանին:

Ինչպես անցյալում, նույնիսկ խոր անցյալում, այլախոհության ընտելացումը

կտրեց հայի մեջքը, այսօր էլ, օտարահաճ-օտարահարճ, բոլորասեր լինելով գրկվում ենք այն բանի գիտակցումից, որ մյուսները շահում են միայն մեր անհեռատես կուրությունից:

Այն մի փոքր գուգահեռը, որ գոյություն ունի հին ու նոր ժամանակների միջև, մեզ ուսուցանում է, որ Պարսկաստանից ու Տաճկաստանից խաբված հայը առաջին խաբվեց արեւմտականների և ռուսների կողմից: Չուր չէ, որ որոշակի և մեծ դիրքի տեղ մի մարդ, որ մեր լուրջ բռնամիտներից էր, մեզ անվանում էր «բռնամիտներից և բարեկամներից խաբված հայ ժողովուրդ»: Բայց մեզ համար առավել վիրավորականը Ռուսական օրիենտացիային պատկանելուց կրած՝ հարվածներն են, որ առաջ է բերել 1.5 միլիոն հայերի գոհը Թուրքահայաստանում, նրա կողմից 1920 թվին մեր օրինավոր կառավարության տապալումը, հարյուր հազարավոր հայերի աքսորը, նույնիսկ հազարավոր հայրենադարձների տանջամահությունը Սիբիրի խալ անկյուններում: Եվ այս ամենը՝ «օրինյալ սեպից» սկսած մինչև թվացյալ բուլչեիկների ժամանակաշրջանը, մինչև Սուժգայիթի և Բաբվի եղեռնը:

Իսկ ա՞յժմ, Արցախյան ազատագրական պատերազմի սահմաններում: Արդյոք հետգործողական այս ժամանակաշրջանում Ռուսաստանի Դաշնության կառավարությունը կանգնե՞ց մեր կողքին, պաշտպանե՞ց մեր անկախության շահերը, մեր իրավունքները: Իհարկե, ոչ, դեռ ավելին, ՌԴ նախագահը նույնիսկ չպատասխանեց մեր պահտգամավորների աղաչանք-դիմումներին, որով նրանք խնդրում էին նրան միջամտել դադարեցնելու հայերի նոր ցեղասպանությունը Ադրբեջանում:

ՌԴ-ն հակադարաբաղյան քաղաքականությունը մի առանձին ուժով դրսևորեց 1996թ. նոյեմբերի 24-ի ԼՂՀ նախագահի ընտրությունների առթիվ: Կարելի է ասել, որ այդ ընտրությունների վերաբերյալ ՌԴ ԱԳՆ-ն բռնեց այնպիսի դիրք, որը ոչնչով չտարբերվեց Ադրբեջանի և Թուրքիայի դիրքից: 1996թ. նոյեմբերի 26-ի ՌԴ արտաքին գործերի նախարարության պրինսիպալ կրասենյակից հնչեց հակահայկական դիմում ԼՂՀ նախագահի ընտրությունները անօրեն համարելու վերաբերյալ այդ այն դեպքում, երբ այդ ընտրություններին ներկայացած միջազգային մի շարք հեղինակավոր լրագրողների և դիտորդների հետ միասին ներկա էին ռուսական մամուլի, լրատվության և հասարակական կազմակերպությունների տասնյակ ներկայացուցիչներ, որոնք շատ դրական են արտահայտվել ԼՂՀ նախագահական ընտրությունները լեգիտիմ և նորմալ ճանաչելու վերաբերյալ և դեռ այսպեսից հետո Ադրբեջանի վայ քաղաքական գործիչները բերան են քացում՝ ասելու, թե «Ռուսաստանը հայերին գրկած պահում է»: Նրանք չգիտեն, որ ցանկացած մեծ երկրի համար, ով ուզում է դա լինի, գլխավորը շահն է, որի մասին շատ պերճախոս կերպով է արտահայտվել Մեծ Բրիտանիայի նախկին վարչապետներից մեկը՝ Պալմերտոնը: Նա ասել է. «Չկան հավերժական բարեկամներ և չկան հավերժական բռնամիտներ, այլ կան հավերժական շահեր»:

Ուրեմն Ռուսաստանը իր շահն է հետապնդում Անդրկովկասում՝ լինի դա հայի, ադրբեջանցու, թե վրացու նկատմամբ: Հիմա հաճախ ենք խոսում ճկուն, խուսանավող քաղաքականության մասին, բայց, ըստ իս, ինչքան էլ ճկուն գործեն

մեր քաղաքագետները, միեւնույն է, խաչմերուկում ապրող այս փուլը ազգը միայն գոյատևելու ձգտումով պետք է բավարարվի՝ սուվերենության գործընթացով: Գուցե թե սա համարվի ճգնափոփոթություն, պայքարից հեռու վանվելու խորհուրդ: Օ՛, ոչ, դա էլ ճկունություն է, որ գալիս է անցյալի խրատներից եւ մեր ստացած բազում ապտակներից: Պայքարելը պայքարել, դա անհրաժեշտ է, ազգի հիշողությունը դա է պահանջում: Այս բանին մեզ մղում է նաև աշխարհագրական միջավայրը, տարածաշրջանի հյուսվածքը, կրոնամիտիկական շրջապատը, որ արտաքին աշխարհի հետ առույգ շփվելու քիչ հնարավորություններ ունենք:

## ՉՈՒԳԱՀԵՌՆԵՐ ՀԻՆ ԵՎ ՆՈՐ ՕՐԵՐԻ

**Չուգահեռները մեզ շատ բան են ուսուցանում, ինչ պարագայում էլ այն դեմքում լինենք: Ահա դրանցից մի բանհար:**

### Չուգահեռ առաջին

1919-21 թվականներին Թուրքիայի նոր հանրապետության հիմնադիր-նախագահ Բեմալ Աթաթյուրքը հասկացրեց Լեճիմին, թե հայերը արեստուսկան են, ինտերվենցիայի աջակից, իսկ իրենք՝ կարմիր հեղափոխականներ, որի համար պետք է իրենց գիջվի թուրքահայերի տերիտորիան, եւ այդպիսով «ուղղվեն ռուս ցարերի սխալները»: Եվ իբր այդ ամենի փոխարեն նա՝ Աթաթյուրքը, Լեճիմին էր պիշում Ադրբեջանը, որը երբեք նրանք չի եղել, բայց որի անդրեցությունը շատ մեծ էր այդ խառնակ ժամանակներում:

բյան պետական եւ կուսակցական մարմինների վարած քացահայտ հակահայկական քաղաքականությունը, կենտրոնական մամուլի, հեռուստատեսության եւ լրատվության մյուս աղբյուրների հակահայկական հաղորդումների միջոցով Հայաստանում եւ մասնավոր Արցախում կազմակերպվող արյունալի պրոպագանդային գիւնդերը»: [27] Անցյալում ստեղծված հայրենակցական միությունները, սերտ համագործակցած ամերիկյան օգնության եւ հայկական օգնության կոմիտեների հետ, սովյալներին հաջ էին բաժանում, իսկ փախստականներին տեղավորում անհրաժեշտ կացարաններում: Ու երբ բրիտանական զորքերը դուրս բերվեցին Ղարաբաղից, եւ հաստատվեց բիրտ ու դաժան աղբրեջանական մենիշխանություն, կտրվեց այդ ամենը դարաբաղցու համար, քանզի անդարձ գնացին այդ օգնության կոմիտեները, եւ Ղարաբաղի հայությունը մնաց անօգնական: Այլ էր բանը «Արցախ» հայրենակցական միության պայմաններում: «Արցախ» հայրենակցականը իր հինգ կազմակերպություններով («Դիզակ»-ի՝ ղեկավարներ Միքայել Մուրադյան եւ Էդիկ Բաբայան, «Վարանդա»-ի՝ Հրանտ Աբրահամյան, «Ջրաբերդ»-ի՝ Սեդրակ Նանգուլյան, Սլավիկ Կահրամանյան եւ Վլադիմիր Դավթյան, «Խաչեն»-ի՝ Ժորա Օհանջանյան, «Շահումյան-Գետաշեն»-ի՝ Դերենիկ Պետրոսյան, Բենիկ Սիսյան, Վասիլ Նալբանդյան, Իսակ Կարախանյան, Գագիկ Աբանեսյան, Սարմեն Պողոսյան եւ «Ջարին տակ» համայնքի՝ Միշա Պետրոսյան, «Բերդաձոր»-ի՝ Լ. Հայրապետյան) մեծ ավանդ է ունեցել Արցախյան գոյապայքարի հաջող ավարտման գործում:

Արցախի ժողովուրդը երբեք չի մոռանա հայաստանաբնակ արցախցիների ներդրումը ընդհանուր պայքարին: Անմոռաց կմնան նրա այն այրերը, որոնք կազմակերպել ու ղեկավարել են այդ ողջ գործունեությունը: «Ամեն ինչ Արցախին» կոչի հեղինակներ եւ «Արցախ» հայրենակցականի առաջնորդներ Ալեքսանդր Մանասյանի, Դավիթ Դանիելյանի, Վաչե Սարուխանյանի, Շահեն Մկրտչյանի, Միքայել Թավադյանի, Սերգեյ Սեդրակյանի, Բակուր Կարապետյանի, Իգոր Մուրադյանի, Իրինա Աբամյանի, Սլավիկ Մուքանյանի, Աբրերտ Հովհաննիսյանի, Լարիսա Ալավերդյանի եւ մյուս գործիչների արածը մեծ գնահատական է արժանացել Ղարաբաղում:

Հենց «Արցախ» հայրենակցականի ռազմական եւ տնտեսական մեծ օգնությունը պետք է բացատրել Արցախի լուրջ հաղթանակները 90-ականի սկզբներին: Չէ՞ որ մեր վիճակի ամեն մի վատացում, ցեղասպանության ամեն մի վտանգ «Արցախ» հայրենակցականի կողմից ցավով է ընդունվել եւ լուրջ ազդանշան հանդիսացել: Նրա ձայնը ահավոր 1991-92-ին լսվում էր աշխարհի բոլոր ծայրերում: Նրա կոչերն այնքան էին սրտաշարժ ու տագնապալից, որ որ աշխարհի եւ հատկապես ԽՍՀՄ շատ գիտնականներ կանգնեցին՝ հային պաշտպանելու եւ ակտիվորեն լծվեցին նրա մեծ ու արդարացի պայքարին:

Բայց այն, ինչ կատարել է Մեծ Բրիտանիայի Լոյդերի պալատի փոխխոսնակ, բարոնուդի Դերոլայն Բորսը մեր հայրենակցի Ջորիի հետ Արցախի համար, անգնահատելի է եւ դարաբաղցիների, եւ գալիք սերունդների համար: Զորսի չորս ու կես տասնյակից ավելի առաքինություններն Արցախ, որ ամեն անգամ ուղեկցվում էին ծանրոցներով ու մանկական նվերներով, սննդով ու դեղորայքով, բժշկական սարքերով ու հագուստով, մեզ հարազատ լինելու մեջ ոչ մի կասկա-

ծանրի տեղ չի տալիս եւ մեկ անգամ եւս արագացրել է, որ լավ մարդու համար որիչի ցավ չկա:

Նա մեր նորոյա Նանսենն է՝ նորվեգացի Նանսենը, որ նույնն է արել հայի համար 1915-28թթ.: Հասյա մեր Սվյոտոքը, մեր միս ու արյունից սերված հայությունը, որ օգնեց ինչով կարող էր, ինչպես կարող էր: Նրանց մեջ հայեր կան, որոնց հասցեները արցախցին չգիտի եւ միայն անուղղակի իր շնորհակալությունն է հայտնում, ինչպես այն քաղաքացի (ԼՂՀ) ամերիկացուն, որի անունն անգամ չի հիշատակվել «Սորիթային Ղարաբաղ» թերթում, բայց ակնարկվել է նրա օգնության մասին:

Իսկ մի՞թե անմոռաց չի ԽՍՀՄ եւ ՌՍՖՍՀ ժողպատգամավորներ Վ. Շեյնիսի, Ա. Շաբադի, Վ. Սմիռնովի եւ նմանների մասնակցությունը «կրակի գոտուն» Շահումյան եւ 1991թ. օրհասական այն օրերին ԽՍՀՄ ԿԿ գլխավոր քարտուղար Մ.Ս. Գորբաչովին, ԽՍՀՄ զինված ուժերի նախարարին, ՊԱԿ-ի նախագահին, ՆԳ՝ նախարարին, Աղյբեջանում տեղակայված ԽՍՀՄ 4-րդ բանակի 23-րդ դիվիզիայի զինվորներին՝ հասցեագրված հեռագրերն ու դիմումները, որով հայ ժողովրդի տառապանքին ընկերակցում էին եւ կոչ անում նույնիսկ ՄԱԿ-ին ու միջազգային կազմակերպություններին՝ փրկել մարդկանց աշխարհի այս ծայրում: Ահա այդ դիմումներից մեկը, որ Վլադիմիր Սմիռնովը դիմել է Աղբրեջանում տեղակայված 4-րդ բանակի 23-րդ դիվիզիայի զինվորներին. [28]

«Դիմում 4-րդ բանակի 23-րդ դիվիզիայի զինվորներին.  
Ձիմվորներ եւ հրամանատարներ: Ձեզ է դիմում գեղապետ Սմիռնովը: Այն, ինչ կատարվում է Աղբրեջանի այս մասում, սարսափելի է: Եվ հակասում է առողջ բանականությանը: Դա հասկանալ չեն կարող այն գյուղերի բնակիչները, որոնց դուք պաշարել եք: Ձեռն կարող հասկանալ Հայրենական մեծ պատերազմին մասնակցած ծերունիները: Այս բարի ու աշխատավոր ժողովուրդը, որ խորհրդային բանակի կողմից դուրս է քշվում հարազատ տներից, այն ոճրագործությունները, որ կատարվում են ձեր զենքերով, արդարացին չի կարելի: Տեղական բնակչությունը մեծ հարգանքով է վերաբերվում խորհրդային բանակին, բայց պաշտպանվելով, նրանք հարկադրված են կյակել ձեզ վրա:

Յուրաքանչյուր մարդ ասերելու, ազատության եւ երջանկության իրափունք ունի: Ձեզ ստում են, թե նրանք բոլորը գրոհալիներ են:

Այստեղ գյուղացիներ են ասարում իրենց ընտանիքներով, որոնց դուրս է քշել խորհրդային բանակը: Հայաստանից այստեղ են եկել ազգակիցներ, որպեսզի պաշտպանեն իրենց հայրերին ու մայրերին...

Ձիմվորներ եւ հրամանատարներ: Դուք չեք կարող եւ չպետք է դեմ լինեք ձեր ժողովրդին:

Ես որպես սպա եւ ԽՍՀՄ ժողպատգամավոր, ձեզ մաղթում եմ երջանկություն եւ խիղճ: Դադարեցրե՛ք մասնակցությունը այս հանցավոր պատերազմին:

ԽՍՀՄ ժողովրդական պատգամավոր՝ Վլադիմիր Սմիռնով:  
04.08.91թ.

Գ. Վերիշեն, Շահումյանի շրջան:  
Այդ դժնդակ օրերին պակաս հուզիչ ու հուսադրող չէր նաեւ լեհինգրադցի հուգեորականների նամակը:

Ահա այն. «Ինձում հայ ժողովրդին, Լեհինգրադի քրիստոնյաներից:

«Մենք Լեհինգրադի ազատ քրիստոնյաներս, մեր հիացմունքն ենք հայտնում ձեր քաջության առթիվ և համերաշխ ենք ձեր պայքարին: Չեր ցավը մեր ցավն է: Բազմաչարչար հայ ժողովուրդը դարեր շարունակ խաչի տառապանքով ապացուցել է հավատարմությունը Քրիստոսին և նրա սուրբ եկեղեցուն ու անադարս պահել իր սրբությունը:

Մենք խոնարհ գլուխ ենք խոնարհում արյունով տաքացած հայկական հողի առջև: Քրիստոնյա եղբայրներ: Այսօրվա վեճը թող դատի այն միակը, ով ունկնդիր է թափված արյանը: Մեր գործն է՝ պայքարել ոչ թե միս ու արյան դեմ, այլ Առաքյալի խոսքերով ասած «իշխանությունների դեմ, ղեկավարման դեմ, սույն դարի հավատով կոսմոկրատների դեմ, չարության դեմ երկնային «ուզիների»: Մենք հավատում ենք, որ տոկունության, մեծահոգության, բարեհաճության և գրասիրության ձեր ոգին հաղթանակ կտանի չարության, դաժանության, հետամնացության, քիմիանդրության որդիների հանդեպ: Մենք հավատում ենք մեր դեմոկրատական կառավարությանը և նրանից սպասում ենք ձեր հարցի արդարացի լուծում»:

Քրիստոնյա բանաստեղծ Տյուտչեղ գրել է. «Հին մեխած վերքերը սպիներ են բռնության և վիրավորանքի», ու փրկություն էր սպասվում «Քրիստոսի մաքուր շուքառի մեջ»: Դա է ձեր, և մեր հավատն է:

Եվ թող պահպանեն ձեր հայրենիքը սուրբ առաքյալներ Ֆադեյն ու Վարժիլով-մենեղ, հայ սրբոց տաճարը և Վլադիմիրի աստվածամայրը»: [29]

Մամակի տակ ստորագրել են Սմոլենսկ եկեղեցու Պրեոբրաժենսկու տաճարի Շովալարվյան եկեղեցու, Ալեքսանդրոնեսկայա լավրայի ծխականները: Լեհինգրադցիները մինչև վերջ հարազատ մնացին իրենց խոսքին, որոնք արտահայտում էին մտինգներով ու ցույցերով:

## ՎԵՐԱԾՆՎԱԾ ՀԵՐՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

*Մեկ տասնամյակ առաջ Ավարայր է եղել այստեղ և Ավարայրին միայն մեկ Վարդան չի եղել, սակայն: Հարյուրավոր արցախցի քաջազուն այրեր Վարդան դարձած ծառայել են ըմբոստ և Վարդանի պես խոյսցել մեր ոգու թոփքը սանձող դարավոր ռոփսի դեմ»:*

(Սիրվարդ Խաչատրյան)

1988թ. փետրվարի 22-ին թուրք խուժանի (15 հազարանոց) երեսալը Ասկերա-նում և միայն մի քանի հայերի կողմից նրանց կանգնեցնելը (Յուրա Իշխանյան և այլք, որ իր փառավոր նկարագրությունն է գտել Բակուր Կարապետյանի «Կղզիացող երկիր» գրքում, Հաբերք գյուղում կանանց կողմից 44 ոուս զինվորների գերեվարումը (իրենց բանտարկված տղաներին ազատել տալու նպատակով), քաջավանցի մի քանի երիտասարդների դիմադրությունը օժժ-ին և ԽՍՀՄ ՆԳՆ զինվորներին, Քարին տակի հերոսամարտը, Շուշիի ազատագրումը և

հույսի ճանապարհի քայլունը Լաչինով, փոքրիկ Շահումյանի շրջանի քառանյա դիմադրությունը և այնուհետև՝ վրիժառուների ծավալած ազատագրական պայքարը, բշնամուն Ղարաբաղի սահմաններից հեռացնելը, Լաչինի, Ջերաբաղի, Արդանի, Ֆիզուլու, Կուբարյուի, Ջերախլի և Չանգեղանի կրակակետերը վերացնելը և մեր տարածքի անվտանգությունը ապահովելը մեր նորօրյա ուժերի հերոսացման իսկական արտահայտությունն է:

Դա անցյալում մեր նախնիների հերոսությունների սովորական կրկնություն չէ, այլ նոր պայմաններում, նոր ուժերի հարաբերություններում մեր զավակների կրկնապատկված հերոսությունը: Այո, երեք խոշոր ճակատամարտերի վկան՝ Քարին տակը, հպարտորեն կանգնեց աշխարհի սոջե՛լ՝ ի պատասխան բշնամու դավերի ու իւրողավաճեցների: Քարինտակցիները տեր կանգնեցին իրենց ճակատագրին, և 1992թ. հունվարի 26-ին թուրք-ռուսական հրոսակախմբերի ջախջախումը դարձավ հերոսության քաջառիկ դրսևորում հայոց պատմության մեջ:

Բայց հավուր պատշաճին պետք է հատուցել այդ հերոսամարտերի ժամանակ ցուցաբերված այն հսկայական օգնությունը, որ կատարել է «Արցախ» հայրենակցական միության կառույցի մեջ մտնող «Քարին տակ» իսմայելը Միշա Պետրոսյանի գլխավորությամբ: Այդ համայնքը մեծ քանակությամբ գեներ ու զինամիջոցներ տեղափոխեց Քարին տակ՝ Շուշիի անընդհատ հարձակումներից պաշտպանվելու համար: Այս գյուղը սնունդի մնաց և ինչպես պատմաբան Հրանտ Արյանհամյանն է ասում. «Արցախի այդ Վաթերդոյի պաշտպանության և քարինտակցիների հերոսական պայքարի մասին դեռ կգրվի...»: [30]

Իսկ ինչպե՞ս չհպարտանալ հին հերոսական Դիլակի մեկիության նորօրյա հերոսներով, որոնցից հատկանշական են Էդիլյու գյուղի (Ուխտաձոր) պաշտպանությունը կազմակերպող Կիդանի զինվորները: Չարժանալ կարելի է, թե ինչպես է ամբողջ գյուղը տարիներ շարունակ դիմակայել «քրի տակ» գտնվող և մինչև ատամները զինված բշնամուն, նրա կրկնվող հրետակոծություններին, օդում ռմբակոծություններին: Ի դեպ, Էդիլյուն մենակ չի եղել, նրան օգնել են հարևան գյուղերը:

Մի տեսակ էր պետք, թե ինչպես էին Էդիլյուի բնակիչների ներկայացուցիչները ճանապարհում մոտ երկու տարի իրենց գյուղի պաշտպանությանը մասնակցած, Ալիբանաստանում կռված, պաշտպանության ժամանակ գյուղի մոտերքում բշնամու տանկերը ոչնչացրած Կիդանի զինվոր Սեյրան Դանիելյանին դեպի տուն՝ Հայաստան, որն անցնում է նրա մանուկավայր, ԼՂ Մարտունու շրջանի Քարսիտունց գյուղով (ուրախ կերուխում, ողջագուրանքներ, նվեր-ընծաներ, բարի-բարի խոսքեր նրա ծառայության հասցեին և այլն):

Այդ գյուղը՝ Էդիլյուն, լավ դիմացավ, և ինչպես գրող Նվարդ Ավագյանը կասեր, «այդ գյուղը ոչ-որ չլողեց»: Գյուղի մարդիկ կարծես թե ամբողջովին յուրացրել են բանաստեղծ Համո Սահյանի հայրենասիրական կոչը՝ [31]

*Գիտե՛իր ուժք բշնամու,  
Եվ ինչ խոսք, մերն էլ գիտե՛իր,  
Ամենուր մեզ նայող մահի,  
Կոկորդից բռնել գիտե՛իր,*

**Գեղեցիկ ապրելու համար  
Գեղեցիկ մեանել գիտեմք:**

Այստեղ ակտիվ էր գործում հատկապես Մանվելի ջոկատը: Ընթերցողը գուցե թե հարցնի՝ իսկ ո՞վ է Սանվելը, Էդիլյու (Ռվաստաձոր) գյուղի պաշտպանը, որտեղի՞ց հայտնվեց:

Նրա կենսագրությունը եւ սովորական հայի կենսագրություն է եւ մյուս կողմից էլ՝ անսովոր: Սովորական է, որ նա ծնվել է Հայաստանի Էջմիածնի շրջանի Արշալույս գյուղում, բայց անսովոր՝ որ նա բուհն ավարտելով, չի բավարարվել եւ ռազմական ճանապարհով է ընթացել՝ ավարտելով նաեւ ռազմական ակադեմիայի դասընթացները: 1988-89թթ. իր ընկեր Համլետ Նահատակյանի հետ միասին կազմել է պաշտպանական ջոկատ եւ գործուղվել ԼՂՀ Հաղորդի շրջանի Էդիլյու գյուղի պաշտպանական շրջանը, որն ուղղակի թուրքի երախն է: Հսկայամարմին ու առնական այդ տղամարդը մարտական գործողությունների ընթացքում բուրքերի կողմից բռնվել ու գերվել է, որի կողքերը կտրատել են Ֆիզուլու բանտում, եւ տարվել է նույն քաղաքի գինվորական հոսպիտալը: Իր ճարտարության շնորհիվ Մանվել Գրիգորյանը վախել է հիվանդանոցից ու վերադարձել Էդիլյուի իր ջոկատի մոտ: Այնտեղ այդ ջոկատով անտառներում խրամուղիներ, թունելներ եւ պաշտպանական այլ հարմարանքներ է պատրաստել:

Հատկանշականն այն է, որ Մ. Գրիգորյանի ջոկատն ազատագրել է Արցախի 70-ից ավելի բնակավայրեր: Վերջերս Գորիսի շրջանի գինվորական բրիգադի հրամանատարն էր, իսկ այժմ՝ Հայաստանի Երկրապահ կամավորական միության նախագահը: Իր քաջագործությունների համար պարգևատրվել է Հայաստանի եւ Արցախի Մարտական խաչի 1-ին աստիճանի շքանշաններով եւ այլ մեդալներով, վերջերս էլ՝ արժանացել «Ազգային հերոս» ոսկե մեդալի:

Հապա ի՞նչ ասենք եւ ինչ գրենք Արցախի պետական համալսարանի այն գոհված 70 ուսանողների մասին, որոնք իրենց կյանքը դրեցին հայրենիքի գոհասեղանին, եւ որ այժմ նույն կրթօջախի միջանցքում կախված նրանց խրոխտ ու կրակված մարտական հայացքները համալսարան մտնող յուրաքանչյուր հյուրի, ուսանողի ու դասախոսի ընդունում ու հպարտ հայացքով ուղեկցում են: Բանվի խոսքը վերաբերվեց գոհված ուսանողներին, սիրտը սեղմվում է նաեւ Արցախի սահմաններից դուրս գտնվող բոսնիցի եւ ասայիրանտուրաների այն ուսանողների համար, որոնք ուսումը կիսատ են թողել ԱԳՀ տարբեր երկրներում կամ Երեւանում, վերադարձել հող հայրենին պաշտպանելու եւ գոհվել:

Այս առումով մեծ վիշտ է պատճառվել Արցախի բազում ծնողներին, որոնցից ամենամեծ չէ Ճարտար գյուղի թոշակառու ուսուցիչներ Ռուբեն Հայրապետյանի եւ Արիփի Բաղդասարյանի ընտանիքը, որոնց որդին՝ Սերգեյը, թողել էր Մոսկվայում ասայիրանտուրան, վերադարձել հարսպատ գյուղի պաշտպանների շարքը եւ գոհվել մարտերից մեկում: Նույն Մարտում շրջանի Հացի գյուղի ձերբորոյն ապրող ուսուցիչներ Միշա եւ Ժենյա Սարգսյանների ճակատագիրը նույնպես դաժան գտնվեց, նրանք էլ գոհասեղանին դրեցին իրենց միակ որդու սիրատուն տղայի՝ Դավիթի կյանքը, որը Երեւանի պետական համալսարանի ռադիո-ֆիզիկայի բաժնի 4-րդ կուրսի ուսանող էր: Ի դեպ, այս նվիրյալ տղան, նրա մայր Նա-

թելան, որ հիմա ֆիզիկայի ուսուցչուհի է Նոյշենի գարոցում եւ բույր Լիլիթը, որն Արցախի պետական լսարանի մագիստրատուրայի ուսանողուհի է, իրենց ժամանակին միջնակարգը ավարտել են (Աշան գյուղում) մեղալներով:

Սրտածնվել է, երբ մտաբերում ես 1994թ. մայիսի 24-ը, որ երբ գոհվել էր հացեցի այդ գինվոր-ուսանողը, ԼՂՀ կրթության նախարարության բարեսիրտ դեկավարները հարմար գտան, որ նախարարությունում վարույց պահված վերջին ոսկե մեդալը արժանացնեն Դավիթին, որը դեռ չէր ստացել, եւ հետմահու հանձնեցին մեղալատիրոջ հորը՝ Էդիկ Սարգսյանին:

Կանգնեն դարեր, եւ Զարին տակը կննա հերոսության դրոշ հայության համար: Դա մի նորոյա խաճախորի ճակատամարտ էր՝ հաղթանակի ելքով: Լեզունը կննա այդ ճակատամարտը, իսկ մասնակիցները՝ լեզունդի հերոսներ: Այնտեղ գոհվածների, որոնց թվում՝ հրամանատար Վաղարշակ Առուշանյանի եւ Նարինե Վեդեկուհու արյունը, հաղթանակի ճանապարհ բացեց դեպի Շուշի, Լաչին:

Սա նոր ժամանակում հայ ժողովրդի հերոսությունների սկիզբն էր, որտեղ խուժանք բողբեց 100-ից ավելի դիակներ: Ազերի թուրքերը հանձնաժողովներ են կազմում՝ ճակատամարտի տխուր հետեւանքները պարզելու համար: Բայց ինչ էլ լինի, հաղթանակը հաղթանակ է՝ հայերի համար արշալույս, իսկ թուրքերի համար՝ մայրամուտի սկիզբ:

x x x

Հանրահայտ է, որ հայրենիքը իր զավակներով Լ ամուր: Հայ երիտասարդների եւ Արցախի առնական շատ մարդկանց «ուրաք», որ ավերիներն ու ՆԳՆ զինվորները կատարեցին 1991-ին, որ խեղդվի դիմադրությունը Բերդաձորում ու Տոփուզում, Ալյուրա-Նոյշենում ու Աշանում, Մաճկալաշենում ու Էդիլյուում, Խրամուրքում ու Ղազանչիում, Ասկերանում ու Նախիջևանիկում: Ստեփանակերտից խիզախ մարտիկները լռեցրին թշնամու կրակակետերը Խոջալու, Ջանիսասան, Կրկման տեղամասերում եւ փրկեցին իրենց հայրենակիցներին, Ջանիսասան, Կրկման տեղամասերում եւ փրկեցին իրենց հայրենակիցներին, իսկ Հաղորդը, Մարտունին, Ճարտարը, Սոսն ու Մաճկալաշենը, Կարմիր շուկայի հատվածը ոչ միայն երկար կանգուն մնացին իրենց դիրքերում, այլև գրավեցին կարևոր կրակակետ-բարձունքները, ազերական գյուղերը մաքրեցին օժոնից:

Անիվ գոհելը չսասանեցին ինքնապաշտպանների շարքերը, նրանք դարձան իրենց ընկերների արյան գինը հասոցողներ: Դիպուկ է գրել հողվածապիր Վալերի Հարությունյանը. «Մեր հերոս ինքնապաշտպանները հայրենի հողի վրա կանգնել են՝ ինչպես խաչարքերը, ամուր՝ ինչպես հավատը, անմախ՝ ինչպես պատիվը»:

Այո, կգա ժամը, երբ թուրք հերոսների անունները կգրվեն մեր հիշողության մեջ, եւ հայոց հողը միշտ երիտասարդ կննա: Կգա օրը, որ մեր հարգանքի տուրքը մատուցենք փոքրիկ Մաճնա գյուղի այն տասնյակ քաջերին, որոնք տուրքված իրենց նախնիների ուժերով եւ հիշելով 1918թ. հոկտեմբերի հաղթանակը թուրքերի դեմ իրենց գյուղի տակ, գտնվեցին մարտերի թեժ կետերում: Ի դեպ,

այդ այն գյուղն է, որ ծնել է շարժման քաղաքական գործիչ Վաչագան Գրիգորյանին՝ ԼՂՀ Ազգային խորհրդի նախագահին:

Այո, Արցախում բնաժողով է մեր նախնիների ունի, որն ուժ է տալիս ներկա սերնդին՝ գնալ հայրերի նստավայրեր: Հայր է, արդյոք, Լարաբազը այս գոյամարտում ծնե՞ց իր նախորդների նմանակները, ունեցա՞վ իր նորոքյա կարիճները, քաղաքական լուրջ գործիչները, թե՞ հենց այնպես, մոգական գավազանով են ձեռք բերվել այսօրվա հաղթանակները:

Իհարկե՞ ոչ, դա հրաշքների արդյունք չէ, այլ պարտադրված պատերազմին որդեգրվածների ու նվիրական անունների քաջագործությունների՝ արդյունք:

Այդ անունների հնչեղությունն է, որ տիրական ու բարձր է դարձնում Արցախի եւ նրա ժողովրդի ապրած տարիները, նրանց մասին գրվելիք պատմությունը, նրանցով է կարծրանում մեր ժամանակը եւ պտնում իր հերոսներին:

Այո, մեր ժողովրդի պայքարի տարեկրոնները հարուստ է իր որդիների կատարած անձնագրի հերոսությունների վառ օրինակով, նրանք արժանանում են սերունդների բարի հիշողությանը: Ըստ-չատերը իրենց կյանքն ավարտեցին մարտիրոսական մահով, իսկ ողջերն էլ շարունակում են նրանց պատգամներն ի կատար ածել:

Ազգի հիշողության մեջ շատ երկար կմնան արժանահավատ փոսթի մեր հերոսները: Մեր սիրելի հրամանատարներ Ավոն Մոնրե Մելքոնյանը, Սամվել Հարությունյանը, Աշոտ Ղուլյանը (Բեկոր), Արմեն Սեփուրյանը, Սոս Գառաբաբայանը, Նեյստն Հարությունյանը, Զահեն Մեղոյանը, Վազիթի Գալստյանը, Նորայի Դանիելյանը եւ էլի շատերը հավիտենականության դրոշմ դրեցին Արցախ աշխարհի կենսագրության վրա, իսկ նրանց նահատակված զինվորների հիշատակը ամուր տեղ գրավեց ազգի հոգում:

Մեր հերոս վավակները 1992թ. սկսած, ինքնաշեն եւ թշնամուց խլված զենքերով դիմակայել են Ադրբեջանի զինված ագրեսիային: Ինքնապաշտպանական ջոկատներից անցնելով Արցախի բանակի կայացման փուլը, նրանք տարբեր ռազմաճակատներում մարտնչել են ռուսական եւ թուրքական զենքով զինված մուսուլմանական «փնտերմացիոնալ» բանակների դեմ:

Ու հաղթել են... մարտնչելով, վիրավորվելով, նահատակվելով: Հաղթել է այն ժողովուրդ-բանակը, որ չի ուզում մեռնել, Կոմանդուից մինչեւ Դավիթբեկյան, Մովսես Հակոբյանից մինչեւ Մերժ Սարգսյան, Նեյստն Սողոմոնյանից մինչեւ Իվանյան, Նորիկ Դանիելյանից մինչեւ Հարոյան, Օհանյան, Սամվել Բարսեյան, Բակր Սահակյան:

Ու առասպելական նահատակներ է ունեցել այդ ժողովուրդ-բանակը՝ Նորայի, Լեոնիդ, Բեկոր (Աշոտ Ղուլյան), Վլադիմիր, Զահեն Մեղոյան եւ լեգենդավոր Մոնրե: Այդ ամենահավեր պատերազմն իր ուներին տարավ ժողովուրդ-բանակը: Ապրող, կռվող, նահատակվող բայց եւ հառնող բանակ է մեր ժողովուրդ-բանակը: «Այս բանակի հերոսները առանց նրկմտելու, Արցախյան գոյամարտում իրենց վագրով գնացին դեպի մարտական գեները ու փարվանս թիրեռների նման այրվեցին իրենց սոմանտիկ ցանկություններին ցանկող պատերազմի բոցերում»: [32]

Հարաբաղում վերամնված հերոսության վառվռուն օրինակները բազում են


ու թագնապատիկ: Դրանցից հատկանշական են «երկարե նմույզների հեծյալներ» (տանկիստների), սակրավորների, հմուտ ձուլերով ինքնաշեն զենքեր պատրաստող վարպետների, զենքեր ներկողների, թշնամուն առճակատ գնացող զինվորների, հետախույզների, ռազմաճակատների տարբեր պաշտպանական շրջանների առանձին հրամանատարների առերեսույր քաջագործությունները, ունեցից շատերը հետմահու, իսկ ոմանք էլ ողջ մնալով, պարգևատրվել են «Մարտական խաչ» շքանշաններով (փուլք չէ՛ առաջին քն երկրորդ կարգի) կամ արժանացել գերազույն պարգևի՝ Ազգային հերոսի կոչման: Գարգեւատրությունները դեռ կշարունակվեն, որովհետեւ Արցախյան պատերազմը ազատամարտ էր ոչ միայն լինելու էր, այլեւ հայեցի ազգային դիմագծով ապրելու համար: Ազատամարտի այդ ճանապարհով անցա՞լ, Լարաբաբայան ապրող ամեն մի հայ, ու ամեն մեկն էլ այստեղ յարույի հերոս է, որ պահեց այս հողի շնչառությունը:

Միայն 1-2 օրինակով եւ Լարաբազ-Արցախի առանձին զինվորների քաջագործությունների միջոցով ցույց տանք որոշ սխրանքներ, որոնք առկա են այս գոյամարտում: Տանկերի, զրահամեքենաների «հեծյալներ» Լեոնիկ Ավանեսյանի, Գեղամ Կարապետյանի, Կարեն Հարությունյանի, Վալերիկ Պետրոսյանի (մահ-կալաշնիցիներ), Թեոս Առստամյանի եւ Արթուր Սարգսյանի (քերթեցիներ), Այմեն Բարաջանյանի (քարահունջեցի), Արագամ Ծատրյանի (կոխոզաշենցի), Հայկազ Հակոբջանյանի (ճարտարցի), Ռոբերտ Հարությունյանի եւ Արարատ Գրիգորյանի (տանցի), Գագիկ Խաչատրյանի, Լեոն Համբարձումյանի, Արտիկ Ավագյանի (հերհերցիներ), Լավրենտ Ծոռնակյանի եւ Գեղամ Հովհաննիսյանի (եմիշճանցիներ), Կարո Հարությունյանի (սպիտակաշենցի), Վրեժ Հարությունյանի, Նաիրիկ Մուսայեյանի, Արմեն Ազամյանի, Արկաղի Արագանույանի (բաղաճարդցիներ), սակրավորներ Անդրեյ Ալավերդյանի (հրամանատար), Ծիրակ Արդյանի, Նորայի Գալստյանի, Սեյրան Ազիլյանի (մարտունեցիներ), շատ-շատերի քաջագործություններով են պայմանավորված մարտունու պաշտպանական շրջանի հաղթանակները:

Հերհերցի Զահեն Ալեքսանյանի սխրանքները, որ թշնամու դասակը կոտորել են 8 ինքնաձիք է առգրավել, մույն գյուղաբնակ Վոլոդյա Համբարձումյանի 4 տարվա սխրանքները ողջ հայամյն են ենթաշրջանին: Վոլոդյա Համբարձումյանին, այդ կամավոր զինվորագրվածին ու հետագայում ջոկի եւ ապա՝ վաշտի հրամանատար դարձած քաջակրող տղամարդուն Ամարասի ձորակում անվանում էին հերոսամարտերի հերոս, Ամարասի խիզախ:

Ամարասի հովտի, Ֆիզուլու, Աղղամի, Մարտակերտի շրջանների մի շարք բնակավայրերի ազատագրմանը մասնակցած հրամանատար Վոլոդյանի խիզախումները սահման չէին ճանաչում: Պատմում են, որ մա մարտերից մեկում մի կողմ է գցել ինքնաձիքը եւ շորս զինված թուլերի հետեւից 2 կմ վազելով բռնել նրանց, առգրավել նրանցից մեկի ինքնաձիքը եւ բոլոր շորսին էլ առաջն արած բեթել մեր դիրքերը:

Լեգենդար Ավոն, որ ակամատես էր այդ դեպքին, Վո-



լողյալի այդ հանդուգն քայլից շատ է վարձուցել եւ նրա արարքը անվանել «խենթի քայլ»: Նա մի բուրք հետախույզ զինվորի էլ՝ Լաջար բնակավայրի ազատագրման ժամանակ է բռնել ու գերել: Ասում են՝ այդ հետախույզ բուրքը մի քաջ գրույցի ժամանակ ասել է. բե նրանք դրոշակը ձեռքին հազազվի սարը բարձրացած, այդ հայ հրամանատարին (Վոլոդյային) հեռադիտակով տեսել են ու որոշել, որ պետք է բռնել: Նրա հաշվի մեջ են նաեւ իշնամուց գերված շատ զինք ու հանդերձանք, այդ թվում՝ չորս հրամար: Բայց, ավա՜ղ, այդ խիզախ հրամանատարը, որ 37 տարեկան էր դեռ ու չորս երեխաների հայր, պատահական մի դիպվածով, 1996թ. մարտի 16-ին գոհվեց՝ սուգ պատճառներով բազմամղած ընտանիքին ու շրջապատողի մարդկանց: Հայրենիքը չմոռացավ նրան եւ արժանին հատուցեց՝ պարգևատրելով «Մարտական խաչ» շքանշանով:

Ճարտարցի հրամանատար Հովիկ Ջիվանյանի նախածնունդյանը Գիլուլու շրջանի Ներքին Դիվանյար, Լաջար, Յաղավանդ և այլ բնակավայրերի բնակավայրերը ոչնչացնելը եւ այլ տարածքներ առկրավելը, նույն ճարտարցի Հովիկ Հարությունյանի սխրանքները Գեորգյան-Կուրուպատկին-Աղբուրուն ուղղությաններում, որ մարտի թե՛ն արսիին «չի հասցրել» կամ «չնկատելուն է տվել» գոհված եղբորը եւ վրեժի ատելությունը առաջ սլացել ու հենց այդտեղ էլ թշնամու դարանակալ գնդակից գոհվել, ցնցող էր մեծ բնակավայր Գյուլնե Ճարտարի բնակչության համար, որը նույն օրը հողին հանձնեց 8 հերոս ազատամարտիկներին:



Բազում գոհերի հուզարկավորմանը մասնակցած անհատն ակնատեսն եղա սահմանեցուցիչ շատ փաստերի, որոնցից հատկանշականն այն էր, թե ինչպես Գ. Ճարտարի հին ակունքի բակում հավարված ժողովրդի առաջ՝ ագ. միտինգում հրամանատար Լահրում Լահրամանյանը դեռ սգի խոսքը չվերջացրած՝ ուշագնաց եղավ:

Երբ սգո բաժնորը ուղղություն վերցրեց դեպի գյուղի աջ մասում տեղագրված գերեզմանատունը, գլխիկոր մարդկանց մեջ նկատեցի Ճարտարի ծորակում վաղուց հայտնի մի մարդու՝ Սուրեն Գարրիեյանին, որը շատ տարիներ այդ գյուղի մեծ կողմնատեսության կուսկսգմակերպիչն է եղել, իսկ հետագայում՝ դպրոցի զինդեղը եւ պատմության ուսուցիչը: Նրա եես սգո բովանդակությամբ մի բանի խոսք փոխանակելուց հասկացա, որ այդ ուր գոհված ազատամարտիկներից երկուսը նրանն են՝ փեսան եւ թոռը, երկուսն էլ՝ Վաչե եւ Գոհար Հարությունյան անունիներինը, որոնց որպես բարեկամի ցավակցելու համար էի ներկայացել այդ գյուղը:

Սգո հավաքում Գյուլնե Ճարտարի միջնակարգ դպրոցի նախկին տնօրեն տիկին Արմիկ Պողոսյանի, պատմության թոշակառու ուսուցիչ Ներսես Հովհաննիսյանի (որն այդ գյուղում շատ տարիներ հեղինակավոր կուսակցական աշխատող էր եւ ուսուցիչ), բանաստեղծ Գրիշա Մանուչարյանի ելույթները թեւ սիրա մաշող էին, քայց եւ հուսադրող էին, վրեժի կոչող:

Ի դեպ, Ճարտարի գումարտակի հրամանատար, անվեհեր մարտիկ Հովիկ հերոսի հիշատակին է իր գրիչը նվիրել Ատեփանակերտի թիվ 1 դպրոցի տնօրեն

Ռոմեյա Դադայանը: Նրա «Ազդականը» 13» վերտառությամբ ակնարկը, որ 1995թ. հրատարակվել է առանձին գրքույկով, ձոն է ճարտարցի փառապանմ հրամանատար, Սոնրն Սեքոնյանի զինվոր Հովիկ Հարությունյանի հիշատակին: [33]

Պատկերավոր է նկարագրել ակնարկի հեղինակը՝ ասելով, թե «Մարտական խաչ» առաջին աստիճանի շքանշանակիր Հովիկի անմար հողին սավառնում է Ճարտարի բարձունքներում եւ հսկում շրջապատը: Սեջերներն հերոսի արտաբերած քառատողը.

*Այս, հողի տակ ես լինեմ անգամ,  
Լսեմ՝ Սիփանս բուրքին եք տվել,  
Սիրասուն մորս արեղ վկա՝  
Ես ձեզ կանիծեմ՝ անել ու քահել:*

Ի դեպ, Հովիկ Հարությունյանի անունն է կրում Գյուլնե Ճարտարի միջնակարգ դպրոցը:

x x x

Ճարտարի զինվորները անկատար շոդիեցին գումարտակի հրամանատարի պատվիրանը:

Հուշը դեպքեր են գրանցվել հրամանատար Հովիկ Ջիվանյանի (ճարտարցի) եւ ստեփանակերտցի Կարեն Առաքեցյանի մարտական հաշիվներում: Հովիկը բուրքի տանկի վրա է բարձրացել եւ մի երկաթի կտոր ցցել տանկի մեջ: Միամիտ բուրքերը կարծելով, թե նոնակ է, դուրս են եկել տանկից, փախել: Հետո նրանք քաջ զինվորի գնդակների բաժին են դարձել:

1992թ. հունիսյան կռիվները կատարի էին նաեւ Խաչենի ձորակում:

Հրամանատար Կարեն Առաքեցյանի գումարտակը քաջարար կռվում էր բշնամու դեմ: Նրա զինվորները միայն մի բան գիտեին՝ բշնամին պետք է ետ չարտվի, որովհետեւ քիկունքում իրենց մարկերը, քույրերն ու երեխաներն էին, Արցախն ու ողջ հայրայունը: Տղաները չափեցին մարտը: Կարենը կարողանում է հրամանատարից դառնալ քաջարի զինվոր ու անասելի սխրանքներով ոգի հարդարել մարտի ընթացքին: Մարտի թե՛ն արսիին Կարեն Առաքեցյանը նկատեց, որ բշնամու տանկը սլանում է դեպի իրենց դիրքերը: Պահը հուսահատ



էր: Կարենը մի ուսուցումով հայտնվեց տանկի կողքին: Թշնամու լեզվով հրամայեց՝ կանգնել: Թորքերը յուրայինի տեղ դնելով, դուրս եկան տանկից ու արժանացան Կարենի ինքնաձիթի համազարկին: Այդպես են պատմում նրա մարտական ընկերները քաջարի նահատակի մասին:

Ի դեպ, Կարեն Առաքելյան-հրամանատարը հերոսի կոչում է ստացել պատերազմի հենց առաջին շրջանում: Բոլորի տան պատերին փակցված էր այն օրացույցը, որի շրջանագծերով երիզված էին նրա եւ նրա հերոս ընկերների նկարները:

Նրանք 15-ն էին: ԼՂՀ Գերագույն խորհրդի նախագահության 1993թ. օգոստոսի 10-ի հրամանագրով «Մարտական խաչ» 1-ին աստիճանի շքանշանով հետմահու պարգևատրվել են Մոնրե Չառլզի Սելբոնյանը, Յուրա Վաղարշակի Պողոսյանը, Աշոտ Հմայակի Ղուլյանը, Արմեն Սուրենի Սելբոնյանը, Արմեն Լեոնոյի Գասպարյանը, Վարդան Ռուբենի Ստեփանյանը, Յուրա Գառնիկի Հովհաննիսյանը, Սերգեյ Վիենի Թովմասյանը, Սոս Շահենի Գասպարյանը, Սամվել Վլադիմիրի Հարությունյանը, Կամո Գեորգիի Դանիելյանը, Արարատ Եգորի Ղազարյանը, Կարեն Արամայիսի Առաքելյանը, Արայիկ Էդուարդի Հարությունյանը, Վլադիկ Մնացականի Խաչատրյանը:

Հովիկի եւ Կարենի հերոսությունների կրկնօրինակները կարելի է տեսնել Մարտունու շրջանի Կոլխոզաշենցի Անուշավան Գրիգորյանի որդի Արթուր Գրիգորյանի մարտական գործողություններում: [34]

Նա 1993թ. Մարտակերտի շրջանի Հակոբ Կամարի գյուղի մոտ բշնամու տանկի հետեւից վազելով՝ կրակեց տանկի վրա, եւ տանկը կողքին ընկավ ու անձնակազմը գերի հանձնվեց: Կամ 1993թ. փետրվարին Ֆիզուլու շրջանի Ղաջար գյուղի մոտ մի տանկ, որ փակել էր մեր զինվորների ճանապարհը, Արթուր Գրիգորյանը՝ վաշտի հրամանատարը, խիզախելով մոտեցավ տանկին, բարձրացավ, կանգնեց նրա վրա, բացեց մոտոցը եւ նռնակը նետեց նրա մեջ: Նա իր ընկերներով բազմիցս բնուրյուն է բռնել բեժ մարտերում: Հետեւում մնացին Քյոսալարի, Ջանհասանի, Կրկժանի, Մալիբեկլուի, ապա՝ Շուշի-Լաչի-նի դժվարին ազատամարտերը: Այդ քաջ հրամանատարը քանի՜-քանի անգամ է վիրավորվել ու դեռ չապաքինված, մարտի նետվել:


Բայց ավա՞ղ, նա 1994թ. փետրվարի 10-ին գոհվեց Օմարի լեռնանցքը ազատագրելուց անմիջապես հետո, երբ իր վաշտը պատրաստվում էր հանգիստ առնել:

Արթուրի պես խիզախ ու համարձակ հրամանատար էր նաեւ նրա համագյուղացի Բենիկ Արտաշի Սահակյանը, որը Սամվել Կարապետյան հրամանատարի աջ բեւեւ էր կենտրոնական պաշտպանական բանակում: Երբ գնդի հրամանատարը նեղվում էր որեւէ տեղ, դիմում էր Բենոյին՝ առ էլ գտնում էր ելքը: Այդպես պատահեց «Պուշկեն յալ» կոչվող բարձունքի ազատագրման ժամանակ, երբ ոչ միայն գրավվեց բարձունքը, այլեւ առգրավվեցին բշնամու գեմիթային բնօրհաններն ու վինամբերը: Նրա հաշվում գրանցվել է բշնամու երկու S-72 տի-



պի տանկի եւ 14-ից ավելի ավտոմեքենաների շարքից հանելու փաստը: Սակայն հերոսը երկար չապրեց, 1993թ. հոկտեմբերի 10-ին Ջերբալի շրջանի կրակակետերից մեկի վերացման ժամանակ զոհվեց: Հերոս-հրամանատարներ Արթուր Գրիգորյանը եւ Բենիկ Սահակյանը, որպես կոլխոզաշենցի գեներալ-գնդապետ Միխայիլ Պարսեղովի համագյուղացի ժառանգորդներ, քաղված են նրա արձանի շուրջը՝ ի փառս հարազատ գյուղի ապրողների:

Ահա մի քանի օրինակ եւս. 1992 թվականին էր, սեպտեմբեր ամսին: Մանկալաշենցի գումարտակի քաջ զինվորներից մի ջոկատ գումարտակի հրամանատար, լեզենդար Արմեն Սելբոնյանի հրամանատարությամբ օգնության էր գնացել Մարտակերտի պաշտպանական բանակին: Մարտերը գնում էին Սեհմանա գյուղի ուղղությամբ: Մարտի բեժ պահին պարզվեց, որ վերջանում է փամփուշտը: Դրությունը անհուսալի էր: Փամփուշտի պահեստը գտնվում էր մի քանի կիլոմետր հեռավորության վրա, եւ պետք էր տառաջհորեն մի քանի րոպեում հասցնել զինվորներին: Ջոկատի տղաներից Գնել Ղուլյանը, որը դեռ աշակերտ եղած ժամանակից մարաթոնյան վազքի լավ համբավ ուներ եւ մույնիսկ մասնակցել էր մարզային ու հանրապետական շատ մրցույթների, արագ վազեց՝ անընդհատ փոխելով ուղղությունն ու դիրքը, երբեմն-երբեմն գլուխակոնձիով բշնամու գնդակների տարափի տակ, հասցրեց փամփուշտը: Այսօր այդ քաջակորով զինվորը՝ Ջերբի վաշտի նախկին հրամանատարը, դժվար է քայլում. նրա ոտքի մեկը հեռացված է մարմնից, իսկ մյուս ոտքը մեծ վերքով է, նրան հաճախ է գամում անկողնուն եւ երբեմն էլ նորանոր վիրահատությունների պատճառ դառնում: Ստեփանակերտում շատերը գիտեն, իսկ իմ այս ասելուց հետո թող ողջ հայությունը ճանաչի նրանց՝ Ավշարյան եղբայրներին՝ Սլավիկին, Ռոմային, Մխիթարին ու Գագիկին: Վերջինս պարգևատրվել է «Մարտական խաչով»: Նրանք՝ այդ չորս եղբայրները, սկզբում կամավորական ջոկատում էին, հետո՝ արցախյան կամավոր բանակի Ն պաշտպանական շրջանի տանկային գումարտակի մեջ: Մխիթարը տանկային գումարտակի հրամանատար էր, իսկ հետո՝ գնդի: Եղբայրների համերաշխությունը եւ փոխադարձ սերն արտահայտվել է նաեւ նրանում, որ իրենցից սերված տղաների անունները կոչել են փոխադարձ անուններով: Գագիկը Մխիթար է կոչել իր նորածնին, իսկ Մխիթարը՝ Գագիկ: Եղբայրներից Գագիկը իր տանկով առաջինը հարբեց Շուշիի գրավման ուղին պատմական այն օրը՝ 1992-ի մայիսի 8-ին, բայց տանկը խփվեց, եւ նրա ընկերներ Շահենն ու Աշոտը գոհվեցին, իսկ ինքը հրաշքով փրկվեց:



x x x

Մարտունու եւ Հաղորտի պաշտպանական շրջանների հրամանատարներ Հայկ Մարգարյանի, Մավր Օհանյանի, Մերուժան Մոսիյանի, Հովիկ Հարությունյանի, Արկաղյա Ջաբարյանի, Սահակ Պողոսյանի, Առուշան Բաղասյանի, Նելսոն Հարությունյանի (Մարտունի), Արմեն Աբրահամյանի, Էրիկ Աբրահա-

մյանի, Ռոբերտ Համբարձումյանի, Վիգեն Գրիգորյանի (Հաղորոք) զինվորական կենսագրությունը իրական հրաշքների և սխրանքների համար կանկամ չի բող-նում:

Ահա նրանցից մեկի՝ Սևակ Օհանյանի ռազմական կարճ կենսագրությունը, անցել է Պարաբաղյան պատերազմի բոլոր փուլերով՝ 1990-91-ին՝ կամավոր ջո-կատի հրամանատար Մարտունիում, 1992-96թթ.՝ գորամասի հրամանատարի տեղակալ, 1996-97թթ.՝ թիվ 32904 գորամասավորման հետախուզության պետ, 1996թ. դեկտեմբեր, 1997թ. փետրվարին՝ 38802 գորամասի հրամանատարի պաշ-տոնակատար, 1997թ. փետրվարի 1-ից՝ թիվ 49971 գորամասի հրամանատար, կոչումով գնդապետ, պարգևատրված է «Մարտական խաչ» 1-ին աստիճանի շքանշանով:

x x x

Իսկ ինչ ասենք եւ ինչպես խոսենք «բաց եղբայրներ Վարդան եւ Վազգեն Գրիգորյանների մասին, որոնցից մեկը՝ Վազգենը, որ կռվել է հարսզատ Պա-զանչի գյուղի համար, թուրքերի ձեռքը չընկնելու համար, իր մոտ պահված երկու գնդակներից մեկով սպանել է հավատարիմ շանը, իսկ մյուսով՝ իրեն: Տղաների հայրը՝ դազանչեցի իրավարան Մուսա Գրիգորյանը, որ ապրում է Մտեփանա-կերտում, այդ տարիներին գրկվել էր կնոջից եւ հիվանդ ուղեբեռից: Նրա հույսը որ-դիներն էին, որոնք, սակայն գոհվեցին՝ արժանանալով «Փառքի» շքանշանների:

Այստեղ ճշմարիտ է բանաստեղծ Գուրգեն Գաբրիելյանը, որ Վազգենի հան-դուզն քայլը որակել է հերոսություն ու փայլուն սխրանք.

*Եվ առաջինն էր ամբողջ Արցախում,  
Վերջին գնդակը իր համար պահել,  
Որ շնվածի ռոտին արնախում  
Նրա մարմինը կենդանի, ցահել...  
Նա առաջինն էր, որ գերազանցեց  
Թուրքի գնդակից սեփականը իր...  
Որ ուրիշներին տվեց սուրբ դասեր՝  
Հերոսության ու փայլուն սխրանքի: [35]*

x x x

Կտոնագին ցավ ապրելով ասենք ու գրենք Մայրադալի այն 10 նրեխաների հայր Արշավիր Սարգսյանի մասին, որ երբ հայրենի գյուղը վառվում էր, նրա աչ-քի առաջ կտրեցին որդու գլուխը: Նրա երկու որդիները գոհվեցին գոյաճարտուն: Պատմում են (բայց թող, իրոք, պատմություն դառնա), թե երբ 4-րդ տղայի հայրը՝ Արշավիրը, ուզում էր խնդրել, որ ազատեն վերջին տղային՝ գինվորական ծառա-յությունից, որ պահի իրենց, տղան կտրականապես հրաժարվում է հոր առաջար-կից: Յոթ տարի տնավեր, բնավեր հավքի պես Արշավիր Սարգսյանը չնայած Նոր Մարտադալում տնատեր է, բայց հույս է փայլալույս, որ կվերակենդանանա

իրենց մահվին գյուղն ու կվերադառնա այնտեղ,- այսպես է գրում լրագրողը «Ա-լատ Արցախ»-ում:

x x x

Մեր ազատագրական պատերազմում տարած հաղթանակների ճանապար-հին գոհողությունների գնով նվաճված ամեն մի տարածք ունեցել է իր հերոսան-քին, իր կտրիճներին: Նրանցից դեռ այսօր էլ փառ են Մաճկալաշենի գումարտա-կի այն փառապանծ տանկի անձնակազմի սխրանքները,

որ մխրճվել էին ուզում Քելբաջարի շրջան եւ ՀՍՄ-Դ-ի (հետևակի մարտական մեքենաների) անձնակազմը, որ պայքարում էր Մարտակերտի մոտ՝ Պուշկեմ յալի գրավ-ման համար: Հիրավի, շատերն են լսել այդ բարձունքի մա-սին, որի համար մեր բանակը շատ գոհեր ու վիրավորներ է ափել: Տանկի այդ հերոս տղաներ Գագիկ Արմոյի Խա-չատրյանը, Արտիկ Ռազմիկի Ավագյանը եւ Լեւոն Համոյի Համբարձումյանը, բարձրագույն գյուղատնտեսական կր-թությանը, Լրեքն էլ ծառայել էին խորհրդային բանակի շարքերում եւ ունեին զինվորական փորձ, Վարաբաղյան բանակի կազմավորման օրերին լրացրին գորավար Ավո-յի տանկիստների շարքերն ու մասնակցեցին Գետրգա-վանի, Յերգիի, Կուրապատկիցոյի մարտերին: 1993թ. մարտի 27-ին Արցախի ինքնապաշտպանության բանակի հարվածող գործմասի շարքերում իրենց ան-բաժան տանկով կանգնեցին Մարտակերտի շրջանին հարող լեռնաբարձունքնե-րից մեկի՝ Քելբաջար տանող Չարեքտար գյուղի մատույցներում: Քելբաջարը փրկելու համար, Ավոյի վկայությամբ, մղվում էին կատաղի մարտեր: Թշնամին դարանակալ շատ ուժեր էր կուտակել դարավանդներում ու դարավոսերում, լեռների ճեղքերում ու թիկունքում: Բայց համարձակ Ավոյի կամքը վճռողական էր, աներեր, որոշել է՝ պետք է գրավի նշված տարածքը՝ Քելբաջարը: Եվ նվաճեց, թայց՝ գոհերի գնով: Հարձակումը ձեռնարկ-վեց երեք ուղղությամբ, որոնցից մեկը՝ Նարեշտարի, մյու-սը՝ Աղդարանի եւ երրորդը՝ Չարեքտարի: Ավոն հետիոտն ազատամարտիկներին առաջ էր տանում լեռնաձորակերպով ու դարավանջերով: Տանկը ուղղություն պիտի վերցներ դե-պի Չարեքտարը: Առաջադրանքը դժվարին էր, քանի որ թշնամուց աննկատ անցնել չէր լինի: Թշնամին նկատեց ղողղյունով առաջ անցնող «երկարյա նժույգին» եւ խփեց:



Տանկը վառվեց: Մերոնք տեսան ու հայտնեցին Ավոյին: Ավոն հեռակալով հրա-ճայեց Սարիթեկին՝ Դյւթրոմից բերել ճուպանը, միացնել այրվող տանկին եւ նրա-նում գտնվող ու դեռ ողջ մնացած տղաներին փրկել՝ հանելով բերված տանկի մի-ջից: Սարիթեկը չկարողացավ փոքսող հասնել տանկին եւ միացնել ճուպանը, ա-վա՛ղ. այդքանը պիտի կատարվեր թշնամու գնդակների տարափի տակ: Տղանե-





ըղ գոհվեցին: Չոհվեցին՝ փառքի էջ դաջելով ազգի հերոսական պատմության մեջ:

Պատմական էրսկուրս անելով ասենք, որ մեր հերոս տանկիստները, հիրավի, հայոց պատմության դասերից, որ բեկուզ իրենց ուսումնառության տարիներին դժբախտաբար նախասիրության կարգով էին անցնում դպրոցում, գիտեին, որ Արցախից եւ Ռուսից դեպի Սյունիք, Արարատ անցնող առեւտրական ճանապարհների վրա ընկած այն տարածքը, որ հնում Արցախի 12 գավառներից մեկն էր եւ կոչվում էր Ծար կամ Վայկունիք, հայկական է, բայց Ծահ Աբասի կողմից 17-րդ դարի սկզբին Լաչին-Քաշաթաղի պես բնակեցվել էր քրդերով, իսկ հայերին բռնել էին Պարսկաստան: Նրանք՝ մեր այդ բուռի շրջանավարտ տղաները, գիտեին, որ իրենց այն տանկով, որի ծածկանունը «Ճուտիկ-2» էր (Ծարտարինը՝ «Ճուտիկ-1») եւ ուղղությամբ էր վերցրել դեպի Քելքաջար (հին պատմական Դաղիվանքի շրջակայքն է), գնում են Ավոյի հրամանով՝ ազատագրելու եւ հային վերադարձնելու Չարարյանների տոհմից սերված Դոփյանների հիմնավորը Վերին Խաչենը: Ահա այս է հերոսականը, որ բռնեին է բաժին ընկնում: Նրանք արժանացան խիզախության մեդալների: Փառք նրանց՝ նահատակված տանկիստներին:



Իսկ ի՞նչ ջանքեր թափեցին նույն Մաճկալաշենի գումարտակի ՀՄՄ -Ղ-ի անձնակազմի տղաներ Թաղեուս Իսմայիլի Առատամյանը, Հայկ Մայիլի Հակոբյանը եւ Ռոբերտ Վալերիի Հարությունյանը. դա նույնպես ապշեցուցիչ է: Նրանց երեքի ռազմական կենսագրությունը, շատ քիչ տարբերությամբ, նման է իրար: Բազում ճակատամարտերի են մասնակցել, շատ բնակավայրեր ազատագրել թշնամուց, եւ երեքն էլ մկրտություն ստացել Արմեն Մեյրումյան հրամանատարի զինյալ խմբում: Ռոբերտը մասնակցել է նույնիսկ Շահումյանում ծավալված մարտերին: Նա եղել է բազմապարֆիլ զինվորական՝ շարքային հետախույզ, սակրավոր, ապա՝ ՀՄՄ-Ղ-ի հրամանատար, մասնակցել 19 մարտերի:

Թաղեուսը՝ Թոռը (այդպես էին նրան կոչում գումարտակի տղաները) Քերթ գյուղի առաջին ֆիդային էր արցախյան իրադարձությունների ընթացքում: Դեռես 1990 թվականից նա մասնակցում էր Ամարասի ձորակում գործող առաջին զինյալ խմբի հակահարձակական գործողություններին՝ Արամ Ավետիսյանի եւ Արմեն Մեյրումյանի ջոկատում: Նա եղել է ՀՄՄ-Ղ-ի մեխանիկ-վարորդը: Նույն հետեւակի մարտական մեքենայի նշանառու Հայկի ռազմական ոտնահետքերը, կարելի է ասել՝ ամենուր էին, եւ, թերեւս, նա ամենատանջվածներից էր այդ ճանապարհին: Սոս գյուղացի այդ անվեհեր տղան քանի՞ անգամ է վիրավորվել, քանի՞ անգամ է մոտակա Մարտունու կամ Ստեփանակերտի եւ հեռավոր Երեւանի հոսպիտալներում բուժվել, բայց ամեն անգամ էլ, դեռ չապաքինված՝ ռազմադաշտ վերադարձել: Ա-



սում են՝ այդ խիզախ հրամանատարը, երբ Երեւանի հոսպիտալից դուրս էր եկել, այցելել է իր հոր ընկերոջը Երեւանում, նրանից փող վերցրել եւ, չգիտես որտեղից, գնել փամփուռներ իրենց զորամասի համար ու տեղափոխել իր գունդը: Թե դա նվիրվածության ինչ անկյան տակ կարելի է դնել՝ դժվար է ասել: Ռոբերտը, Թաղեուսը եւ Հայկը 1993թ. մարտի 19-ին իրենց ՀՄՄ-Ղ-ով գործավար Ավոյի գնդի հատուկ հարվածող գումարտակի կազմում մասնակցում էին Մարտակերտից թշնամուն վտարելու համար ձեռնարկված լայնամասշտաբ ռազմավարությանը: Մական մարտի 21-ը Ռոբերտի եւ Թաղեուսի (նրան երբեմն կրճատ Թեուս էին անվանում) համար վերջին մարտը եղավ: «Պուշկեն յալ» կոչվող բար-

ձուները գրոհելու ժամանակ թշնամին խոշոր տրամաչափի գեներալ սկսեց կասեցնել մեր տեխնիկայի առաջխաղացումը: Հետեւանքում՝ խփվեց մեր ՀՄՄ-Ղ-ն, որի մեջ էին Ռոբերտն ու Թաղեուսը, իսկ Հայկը ծանր վիրավորվեց: Բայց ավա՜ղ, տարիներ անց, երբ Հայկ Հակոբյանը արդեն դարձել էր գնդի հրամանատարի տեղակալ, մի պատահական դիպվածով՝ ականի պայթյունից գոհվեց: Չոհվեց բարձրագույն կրթությամբ ինժեներ Մայիլի եւ տնտեսագետ Ռազմելայի զավակ Հայկը: Բուռի շրջանավարտ այդ նորարարի իրավաբանի պատանեկությունը, որ բարուրված էր ջանասեր ուսումնասիրությամբ եւ օրինակելի վարքով, իր արտահայտությունը գտավ միջնակարգ կրթությունն ստանալու վերաբերյալ այն ոսկե մեդալի մեջ, որ նա ստացել էր 1990 թ.՝ մեր Շարժման դժոխակ օրերին: Խելացի, կշռադատված, խոսքի չափն իմացող այդ պատանին, որ ապրեց ընդամենը 27 տարի, վաղ մտավ մեր հերոսական պայքարի տարեգրության մեջ: Արցախ աշխարհը նրան չի մոռանա, քանզի նա դյուցազնական ու հերոսական պայքարով անմահացավ՝ իր սրբացած հողին նվիրված: Կարճ, բայց քաջի կյանքով անցած հերոսը դեռ իր կենդանության ժամանակ պարգևատրվել է «Մարտական խաչ» շքանշանով (1994թ.) ու մարշալ Բաղդամյանի անվանական մեդալով (1997թ.) հերոսական ոգի ուներ եւ անցել է փառավոր ուղի: Ամարասի հովտի մարդիկ, Մարտակերտի շատ գյուղերի բնակչությունը, Մարտունի ավանը Հայկով հպարտանալու շատ բան ունեն:

Նա արագ առաջ գնաց ռազմական ճանապարհով եւ 26 տարեկանում հասավ մայրի զինվորական աստիճանին՝ իր արժանի տեղը գրավելով Ն գորամասի հրամանակում: Ուրախության եւ հիացմունքի ի՞նչ զգացում են արտահայտել Հայկի մարտական ընկերներն ու համագյուղացիները. նրա ծննդյան 25-ամյակին նվիրված հանդիսությունում: Իսկ երբ 2000թ. մարտի 13-ին դպրոցի բակում հետմահու նշվում էր Հայկ Հակոբյանի 27-ամյա հոբելյանը, ելույթ ունեցած ուսուցիչները, զինվոր ընկերները եւ ԼՂ գոհված ազատամարտիկների մայրերի կոմիտեի նախագահ, բազմաթիվ գրքերի հեղինակ



տիկին Գայլա Առստամյանը նշեցին նրա՝ ռուսական զինվորական ակադեմիայի դասընթացներն ավարտած դուցեպանի մեծ ծառայությունները, գովերգեցին նրա բազմաթիվ ծառայությունները ըստ արժանվույն, իսկ հերոսի մոր քնքույշ խոսքերը բովանդակում էին շնորհակալական ջերմ պատկերներ դպրոցի ուսուցչական կոլեկտիվին ու Մոսի ողջ հասարակությանը, որ մեկ ու կես տարի առաջ միջնակարգ դպրոցը իր տղա Հայկի անուհով կոչեցին եւ նրա մեծադիր քարն դիմանկարը դրոշմեցին դպրոցական շենքի արեւելյան պատին: Հատկանշական է նաեւ այն, որ մեր հերոսը հրամանատարի փայլուն ռազմական ուղուն բազմիցս է անդրադարձել Արցախի հեռուտատեսությունը իր «Գոյամարտ» ծրագրով:

Ես, որ մոտ եմ ապրում մեր այդ «ներկաբե մծույզի» հեծյալների ծննդավայր Հերիեր, Մոս եւ Քերք գյուղերին, իմ վիշտն ու սուգն եմ արտահայտել նրանց գոհվելու առթիվ եւ համբերություն մաղթել նրանց ծնողներին ու մերձավորներին: Մեզ մնում է սպասել մարտակերտյիների արժանի պատասխանին, եւ հույսով ենք, որ ապագայում կլինի նրանց՝ այդ գոհված տանկիստների հուշանամալիների կառուցումը ճակատամարտերի վայրերում:

Ճակատամարտերի շատ հատվածներում նշանավոր հետագիծ են բողել նաեւ նույն Մահկալաշենի գունասրտակի տանկիստներ Գարիկ Օհանջանյանը եւ Արարատ Գրիգորյանը: Հենց նրանց եւ նրանց մամուլներին են սագական այս բառերը, որ գրել է բուլղար բանաստեղծ Խրիստո Բուտեղ՝



*Ով մարտի դաշտում իր կյանքը գոհեց սուրբ ազատության, Նա մահ չգիտի, ողբում են նրան երկիր ու երկինք, Ողբում են նրան ողջ բնությունը եւ գագանանգամ, Եվ նրա պատվին փառքի երգեր են հորինում*

մարդիկ:

x x x

Մեր ժողովրդի բազկի ուժին գունարվել են նաեւ շատ այլ ուժեր, որ գալիս էին հեռու-հեռուներից: Նրանք նույնիսկ մեր ցեղից ու ազգից չէին, իսկ նրանց գտնվելու վայրը հեռավոր Ռուսաստանի Արեւելքն էր: Սրխավենդի ազատագրման ժամանակ դրոշմված էին մեր ռուս կրոնակից բարեկամ պատանիների շատ ոտնահետքերը: Իմ հարազատ Մարտունու շրջանի պաշտպանության անձնագոհ մարտիկներից էր ռուս Դիման, որի կենսագրությունից մի կտոր է միայն բերվում այստեղ. հեղինակ-հուշարարը Հայաստանի Հանրապետության Զանաքեռավանի բնակիչ, նույն Մարտունու պաշտպաններից Արթուր Մանուչարյանն է, որը վերջերս ինձ պատմեց, որ «Դիման» (Դմիտրի Մոնտրիշինը) Ռուսաստանի քաղաքացի էր, ծովային հետեւակի սպա, ավագ լեյտենանտ: Եկել է կամավոր հեռավոր Վլադիվոստոկից, 1992թ. օգոստոսին: Դիման հայկական իր ջոկատով, որը մտնում էր Մարտունու պաշտպանական այն գունարտակի մեջ, որի հրամանատարն էր քաջ ու անմահ Մերուժան Մոսիյանը, Մարտունու դիմաց գտնվող Կարոպատկինո բնակավայրի ուղղությամբ, հետախուզության պնաց եւ «Արծիվ-3» մեր հենակետի դիմացն ականապատեց: Նրան մերոնք չհավատացին, ստուգեցին եւ համոզվեցին Դիմանի նվիրվածության մեջ: Դիման իր ջոկատով մասնակցեց Մուղանյու գյուղի ապստամբությանը: Նա 1992թ. սեպտեմբերի 4-ին մասնակցել է նաեւ Գյուլափուր գյուղի հենակետի ոչնչացմանը եւ գրավմանը: Դրանից հետո ակտիվ մասնակցություն է ցուցաբերում Վարտարի գնդի վարած մարտերին, հատկապես՝ Ուրյան սարի համար մղված մարտերին եւ գրավմանը: Դիման չորս հոգով հետախուզության է գնում բուրջական Դիվանլար գյուղը, կոտորում 22 բուրջ գինվորների, քայքայեց հետդարձի ճանապարհին գերի բռնվում բուրջերի կողմից: Նրանց չորսին էլ բուրջերն սպանում են եւ միայն Ավոյի ակտիվ ջանքերով 10 օրից հետո փոխանակում դիակենթը:

Դիմանի հայրը, որը ռազմական կոչումով ծովային հետեւակի առաջին կարգի կապիտան էր, այսինքն՝ զնդապետ, լսելով տղայի գոհվելու մասին, գալիս եւ որդուն քաղում է մի հայտնի ու տեսանելի վայրում: Շուշիում: Նա ուղղակի ասում է. «Եթե իմ տղան գոհվել է այս հողի համար, այս հողում էլ պետք է բաղվի»:

Դիման մեր շատ սղանների է սովորեցրել հետախուզել, ինչպես, օրինակ, Մասիս Սուլեյմանյանին, Կառն Շահրամանյանին (Մարտունուց): Ի դեպ, այս սրտամորյան հեռավոր հեղինակ Արթուրն էլ է եղել Մարտունու պաշտպանական շրջանում, որը մեծ հիպոստոսով է խոսում մարտունեցի իր զինվորական ընկերներ Վլադիմիր Բեգլարյանի, Էռնեստ Եսայանի, նրա տղայի ու կնոջ, որ կապային աշխատողներ են եղել, Մավոյի, Պրեբեդիկի, Ռաֆիկի, Արջուկ-Միկի, Նարեկի եւ էլի ոմանց մասին: Դիմանի անվանը ծանոթ մարտունեցիներին բողջիվա, քե այդ Դիման այն գերի ընկած ռուս մեխանիկ Դիման է, որը նույնպես արժանավոր գործեր է կատարել:

Այստեղ ավելորդ չեմ համարում բեմայից մի փոքր շեղվելով ասել, որ երբ մի տխուր առաքելությամբ 1999թ. դեկտեմբերի 1-4-ը գտնվում էի Հայկական Հանրապետության Նախրիի շրջանի Զանաքեռավանում (փախստական եղբորս՝ Բորիսի մահվան պատճառով), Արթուրը՝ ԼՂՀ Մարտունու շրջանի տարածքում ծառայած եւ շատ հաղթանակների մասնակցած նույն Արթուր վիճվորը ասաց, որ իրենց ավանից 80 հոգի մասնակցել են Արցախի համար մղված մարտերին, եւ, բարեբախտաբար, մեկ հոգի է միայն գոհվել՝ Յուսպոն Խեչոյանը: Այստեղ, այս բնակավայրում ես տեսա մարդկանց այնքա՞ն սրտաշարժ վերաբերմունքը Բարվից եւ Արթրեջանի՝ այլ տարածքներից մագապուրծ եղած 46 փախստական ընկալիքների մկատմամբ, որ գուցե թե չկան ուրիշ տեղերում: Այդ նոր ավանը, որ հիմնադրվել է ընդամենը 1959 թվականին, այժմ ունի 1000-ից ավելի բնակիչներ: Անես թե այդ մարդիկ ծնվել են միայն բարության, անձանորին, բուլլին ու անկաբողջն սատար կանգնելու համար: Այդ ավանի սրտացավ ու շոքահալաց մարդկանց մասին Բարվից մագապուրծ եղած Նիկոլայ Մանուչարյանը այնպիսի


տպավորություններով է կիսվում գրուցակցի հետ, որ լսողի սիրան է շարժում: Մարդիկ այստեղ ընկերոջ, հարեւանի ու բարեկամի ուրախությունը բազմապատկել կարող են. իսկ պատահաբաններն ու տխրությունները թե որ լինում են՝ մարդկայնորեն կիսել: Եվ այս առումով, որքան արտաճմլիկ են նրանց սովորույթները՝ տխուր արձարողությունները կազմակերպելու հարցում. ձեռք կձեռնեն ամեն-ամեն ինչին. կսկիծով կողրան, արցունքներ կբամեն հանգուցյալի հանդեպ, կարտահայտվեն արտի խորոց: Այդ նորաստեղծ ավանք իր բարեմասնություններով հայոց ավանդական մշակույթի մեջ հասցրել է իր լուսան ներդրել:

x x x

Այժմ մերձավոր եւ ոչ շատ հեռավոր վրաստանցի Մանուելի մապին է խոսքս, որ որպես գրող իրեն անվանակոչել է Մանուել Ջավախյան: Այդ սղան Վրաստանի Ջավախքի գավառի Բողղանովկայի շրջանի Դուլախս գյուղի ծնունդ է: Նա մեր ցույցերի ձայնին ունկնդիր էկել է Արցախ, կովել շատ տեղերում, հատկապես՝ Բերդաձորում: 1994-ից «Շուշի» թերթի աշխատող էր, իսկ 1997 թվականից՝ Շուշիի մամկապատանեկան կենտրոնի փոխտնօրեն:

x x x

Մենք գոված ազատամարտիկներ ունենք, որոնց խիզախությունները արյան կամշով են գալիս եւ հնում, շատ հնում գոված նախնիների անմահությունն են հիշեցնում: Ահավասիկ, Լոբաչյաներ Օլեգ եւ Ջոնը, որոնք շարունակելով իրենց պապի՝ Հայրենական պատերազմի բոցով անցած Գրիշայի քեռիներ Սմբատի եւ Հարությունի բաջագործությունները 1918թ. հոկտեմբերին Մամնայի ճակատամարտում եւ նրանց այնտեղ անմահանալը, իրենք էլ Արցախյան պատերազմի ճակատամարտերում (Ասկերանի եւ Մարտակերտի) քաջարար ընկան՝ փառքի հետագիծ թողնելով Բեզարյանների տոհմին:



Նրանցից Ջոնը գովեց զինադադարի օրերին՝ մայիսի 14-ին եւ հետմահու արժանացավ «Մարտական յաջ» 2-րդ աստիճանի շքանշանի: Ի դեպ, ավագ եղբայրը՝ Հովհաննեսը (Հովիկը), այն համարձակներից է, որոնք գերեվարեցին (Ստեփանակերտում) Աղր-բեջանի գլխավոր դատախազի օգնականին եւ փոխանակեցին Բարվի եւ Շուշիի քանտրում գտնված մեր անվանի մարդկանց հետ եւ Հովիկը Շուշիի ազատագրման 10-րդ տարեդարձի օրը պարգևատրվեց մեդալով, նույնը եւ՝ կրտսեր եղբայրը՝ Օլգար: Այս պատերազմում, որ վերապրեցինք, պապերի եւ հայրերի արյան կանչի արահետներով են գնացել նաեւ քարահուկների (ԼՂՀ) Համբետ, Մավ-



րիկ եւ Գարիկ Լալայան եղբայրները: Նրանք նորովի շարունակեցին Հայրենական մեծ պատերազմում գոված իրենց հորեղբայրներ Արմենի, Անդրանիկի եւ այդ պատերազմում ստացած ծանր վերքերից վաղաժամ մահացած հոր՝ Սուկրատի հայրենամուկեր գործը, իսկ ահա եւ տոհմի 3-րդ սերնդի գավակներ Վիտալին, Գնեղը, Գեմնային եւ Նորայրն էլ իրենց պապերի ու ծնողների սխրանքը շարունակողները եղան, որ փառքով ծառայեցին արցախյան բանակում եւ համատեղության կարգով ավարտեցին բուհը: Բայց ավանդ, որ այդ տոհմամաշին պատկանող Վալերիկ Լալայանը գովեց մեր գոյամարտում՝ չտեսնելով իր բազմազավակ ընտանիքի գեղեցիկ ապագան, որի հիմքերը ամուր էր դրել նա՝ քարձրագույն կրթությանը իմենները, իր կնոջ, ուսուցչուհի Սուսաննայի եւ Հայրենական պատերազմի մասնակցի հոր՝ Վարդանի հետ:

x x x

Վարդաղի փաշուն հաղթանակների անդաստանում իրենց փառքով պապեցին գնդի հրամանատարներ Սամվել Կարապետյանը, Արթուր Աղարեկյանը (Հաղթորի հերոսը), Շիկարարի արժիվը՝ Վաչագան Իշխանյանը, Մարտակերտի գորավարներից Վլադիմիր Խաչատրյանը, Ասկերանի հովաի պաշտպան-հրամանատար Վիտալի Բալասանյանը, Մարտունիում Ավոյի հուսո ճրագ Մովսես Հակոբյանը: Նրանց եւ նրանց զինվորների ռումահետքերի աշխարհագրությունը շատ է ընդարձակ եւ անընդգրկելի: Այդ խիզախների գործողությունները գրքերի եւ ձայնագրանակների նյութ են դարձել՝ ի տես Վարդաղի բնակչության, իսկ այն, ինչ կատարել է տարբեր գործասերում հետքեր թողած, անվախ հրամանատար Արշավիր Ղարամյանը (Արշո)՝ մերք Մանկալաշենում, մերք Ասկերանում ու Աղզամում, վեր է նույնիսկ պատերազմ տեսած մարդու պատկերացումներից: Եվ գուր չէ, որ մերոնք նրան պատահական գերությունից ազատելու համար, փոխանակելու ժամանակ այնքան «առատաձեռն» եղան թուրքերի հանդեպ՝ մի քանի տասնյակ գերված ազերիների փոխանակելով նրա հետ: Բանա հա՞յրը, Սուրիկը, որին իրենց համագյուղացիները եւ ենթաշրջանում ճանաչողները Սուրիկ ասար են կանչում: Նրա կատարածը Ամարասի ձորակում այն ծանր օրերին՝ 1992թ. հունիսի 28-29-ին, երբ հովտի ժողովուրդը հուսահատ տնդափոխվում էր Մամնա-Ստեփանակերտ գծով: Մի տեսնելի՞ք, թե նա ինչ դիմագիծ էր դրսեորել այդ ժամանակ: Մուրիկ Ղարամյանը վիրավորներ էր տեղափոխում ռազմաճակատից (Մանկալաշեն-Խաղաղից), մի ՌԻԱՋ մակնիշի հնամաշ ավտոմեքենայով եւ ճանապարհին պատահած մարդկանց սաստում տեղահան լինելու համար: Հերոս մարդ է, բայց, կարծեմ՝ այդպես էլ քիչ գնահատված: Ի դեպ, Սուրիկ Ղարամյան հայրն էլ է իր տղայի ճակատագիրն ունեցել՝ գերի ընկնելով թուրքերին, բայց փախել է նրանցից: Հերոսական էին նաեւ նրա համագյուղացի ակնադրյուրյիները (ղարադաղյիները) եւ հարեւան գյուղերի հասականց շատ մարտիկ, որոնք մի «Բելոռուս» տրակտորով հաց եւ այլ սննդամթերք, հա-

գուտ ու վիճամբերը էին տեղափոխում ռազմաճակատ (Սիշու Պետրոսյան եւ ուրիշներ): Այդ մեր պատերազմում անգնահատելի են ԼՂՀ բանակի կրեւտանու պետ Շորա Գասպարյանի ծառայությունները: «Պատերազմի աստված» այդ հրամանատարը դարձավ հուտ ճրագ ու ապավեն բանակի հաղթանակները կռելու եւ խաղաղ բնակչությանը կործանումից փրկելու գործում: Այժմ մեծ դիրքի մարդ է, ԼՂՀ պաշտպանության նախարարի տեղակալ, գլխավորական կոչումով գեներալ-մայոր:

x x x

Ճարտարի ազատամարտիկների գոհված հրամանատար, «Մարտակնք խաչ»-ի ասպետ Յուրի Բաբաջանյանի (Յուկա) եւ նրա զինվորների ծառայությունների մեծ գնահատականը հանդիսացավ 'Լուսե Կալեբ գյուղի դայրոցի մոտ նրանց պատվին կառուցված հուշաղբյուրը, որը հուշում է անցողիներին. «Հագեցրու ծառակի եւ բարի հիշիր անմահ նահատակներին»:



Նման հուշաղբյուրներ 'Արաբաղում եւ Հայաստանում շատ ու շատ են, որոնցից են նաեւ Մարտունու շրջանի Ջերթ, Կարմիր շուկա, Մաճկալաշեն, Հեթեթ եւ այլ գյուղերի հուշաղբյուրները: Յանկալի է, որ նմանները ամենուր կառուցվեն, որ նրանցից ծորող ջրերը միշտ հիշեցնեն ապրողներին նահատակների բարի ու ազատատենջ գործերը:

Արցախյան գոյամարտի հայրենասեր հրամանատարի կենսագրության արձատները հեռու են ձգվում: Պետական ավտոտնակայանի գծով բոլոր այս շրջանավարտը, որ ապրում էր 'Գուշանբեում, լսելով Սպիտակի երկրաշարժի մասին, կամավոր եկավ՝ իր օգնությունը ցուցաբերելով ազգին: Այնուհետեւ վերադարձավ Ճարտարի 'Լուսե Կալեբ գյուղ եւ լծվեց մեր արդար պայքարին: Ֆիդայիների ուղնյակի մեջ նա սկսեց իր գյուղի պաշտպանության գործը՝ կապվելով լեգենդար Ավոյի հետ: Նա գերեզմանից բուրբի տանկը, որի համար ՀՀ այն ժամանակվա նախարար Վազգեն Սահակյանը հարցրեց նրան, թե ինչ կցանկանար ստանալ դրա դիմաց: Հերոսը չխոսեց, բայց նրա փոխարեն Ավոն պատասխանեց՝ մի գուշգ կոշիկ: Ի դեպ, գերված տանկի վրա նրա լուսանկարն էր կապրած: Յուրան Ամարատում, 'Էլեւստիոնում Մարտակերտում եւ այլուր բուրբին հալածողներից էր: Բայց ավա՛ղ, 1994 թ. փետրվարի 4-ին գոհվեց՝ շտեմնելով փայփայած հաղթանակի պտուղները:

x x x

Փետրի արժանի գործերով իրենց սրերը պատյան դրեցին հրամանատարներ Վարդանը (գորխցի) եւ Մանվելը (էջմլուսիցի): Երբ մի գիպվածով մենք խոսում էինք Հաղրուրի շրջանի Շոյիլու բնակավայրի պաշտպանության մասին, նշեցինք Մանվել Գրիգորյան գեներալի մասին: Ուստի, հարկ են համարում երկու խոսք Անվիրել քաջակորով Վարդան Ավետիսյանին: Վարդանը որդեգրված է 'Արա-

բաղի զինուժին եւ շատ տարիներ նրա դիրքերում կանգնած հրամանատար է: Նրան կարելի է տեսնել մեր բանակի քաղաքական աշխատանքում, մեր Գնդի հրամանատարի տեղակալի եւ մերը էլ հրամանատարի պատվարներ պաշտոններում: Վարդան բանաստեղծ-գլխավորականի հերոսական ներկայի նկատմամբ հեռուստատեսությունը անցած չի վրացել եւ մի ամբողջ նկարահանում է նվիրել նրան: Գեղապետ Վարդան Ավետիսյանի զինվորական ոտնահետքերը դրոշմված էին Մարտունիում եւ Հաղրուրում, Ասկերանում եւ Մարտակերտում եւ, վերջապես, քաղաքամայր Մտեփանակերտին մոտ Խոջաբուրի զինվորական ուսումնական դպրոցի պետի պաշտոնում: Եվ հավուր պատշաճին է, որ վերջերս Շուշիի ազատագրման եւ հաղթանակի օրվա առթիվ ԼՂՀ նախագահի 2001թ. մայիսի 7-ի հրամանով պարգևատրվեց, այս անգամ արդեն՝ «Ղ» գնդի հրամանատարի պաշտոնում:


'Արաբաղում նվիրված զինվոր-հրամանատարի համբավ ունեթ Կարո Անդրանիկի Բարախանը: Այդ երիտասարդ հրամանատարը իր կարիճներով «ժրշեջի» դեր ուներ ռազմաճակատի բոլոր հատվածներում: Նա արագ հանգցնում էր լրջնամու բոլոր կրակակետերը: Հենց նա՝ վերջակետ դրեց մի խռովահույզ ջոկատի գործունեությանը, որ գործում էր 'Արաբաղի մերսում Քիրսի շրջակայքում: Նվիրյալ շատ գործերի հեղինակ հրամանատարը այն առաջիններից էր, որ Արցախ աշխարհի մի անկյունում՝ Մամնա իր հայրական գյուղում ձեւավորեց ֆիդայական առաջին ջոկատներից մեկը: Այդ ջոկատի կենսագրությունը այնքան էր վառ ու կենսունակ, որ նրա հիմքի վրա կազմակերպվեց հետագա առնական ու մարտունակ բանակը, որի ռազմական կենսագրությունը անընդգրկուն է եւ փառքով յի:

Մարդկային տոկոսության, աներեր կամքի ու սխրանքի փայլուն օրինակ էր ճարտունարևակ Ռաջ (Սարիբեկ) Գեորգիի Մարտիությանի կատարածը, նա կազմակերպում էր պատասխան քայլեր՝ ազերիների մեքենաները ջարդելու եւ վրիժառու այլ գործողություններ: Ետնվել էր ուս հսկիչների կողմից, ձեքքակալվել ու բանա նետվել Աղղամում: Ամիսներ շարունակ ԽՍՀՄ դատախազության բնիչների բոլոր փորձերը՝ Սարիբեկից քացարություն կորզել Մարտունու շրջանի Ի-ին քարտուղար Վաչագան Գրիգորյանին ամբաստանության մեջ մեղադրելու առումով, իզուր անցան: Մեր տղան, մեր հուղ ու ցրի արժանի գավակը, երկար քաշքշուկից հեռու, Գունեցկի մարզային դատարանի կողմից վերջապես ազատ արձակվեց ու հետագայում դարձավ՝ նվիրյալ կզմող, Մոնթելի աջակիցը, նրա հետախուզության պետը:




Անավասիկ, զինվոր քաջերի մի օրինակ նա, որ սրաշարժ է, խելիսանցի զինվոր Սպարտակ Լեհրոյի Մամնայանը եւ մաճկալաշենցի Արայիկ Պետրոսյանը Ֆիդայու ուղղությամբ կալոդ տանկի տանկիստներից էին: Երբ տանկը լրջնամու կողմից յսփվեց ու կողեկվեց, կրակը նրանց եւս համակեց: Բայց վառված տանկից վառվելով դուրս պրծնելով, վագելով մի երկար տարածություն, հասան մերոնց ու փրկվեցին: Իսկ մյուս զինվորի համար-

ձակ քայլը, որ եղավ Գեորգյանի կոչված ճակատագրում, մեծ կամքի արտահայտություն է: Թաղավարացի զինվոր Արսեն Խաչատրյանը, որի ձեռքը մնացել էր շրջված ՍՄ-Դ-ի տակ, ու նրկար ժամանակ հանել չէր կարողանում, հասարակություն ունեցավ դանակով կտրել իր իսկ ձեռքը, որ փախչի ու ազատվի հետապնդող թշնամուց: Դա 1993թ. հունվարի 4-ին էր, որտեղ էլ հենց գտնվեցին գրահամերթնայի հրամանատար Արամ Պետրոսյանը եւ մեխանիկ Վալերիկը: Ի դեպ, Արամ հրամանատարի մասին լեգենդներ են պատմում Կարմիր շուկայի ձորակի մարդիկ:



Իր հողին ու ցրին, իր հարազատ օջախին նվիրված լինելով մեծ գոյք է կատարել նորօրյա Բրեստի՝ Մանկալաշենի գավակ Ռոբերտ Վասիլի Գրիգորյանը: Որք մեծացած այն տղան, 1990թ. սեպտեմբերի 9-ին աճարայան դեպքերին ակտիվ մասնակցություն ունենալու համար իր 8 ընկերների հետ՝ ձեռքակալվել էր, 5 տարի ժամկետով դատապարտվել Բաքվում, իսկ հետո ազատվել Հայաստանի կառավարության միջամտությամբ: Բայց Ռոբերտը, որ Երեւանի վերադարձել էր արդեն, ձեռքերը ծալած չմտեց: Հայրենիքի կանչին ունկնդիր, նա նորից մարտադաշտ գնաց՝ որպես տանկիստ կռվող, բայց ափսոսաբար, դա եղավ նրա վերջին մարտը: Այո՛, Ղարաբաղի գոյամարտի պատմությունը կերտող ապագա պատմաբանը խորին ակնածանքի խոսք կնվիրի, կամ գուցե եւ կզրի Բերդաձորի ուսուցիչ Առնո Սկրաշյանի

մասին՝ հայրենի օջախի պաշտպանության գործը ղեկավարելու եւ թշնամու բանտային բոլոր կտուսերներին դիմապրավելու, տոկոսություն, խիզախություն եւ ուժեղ կամք ցուցաբերելու համար: Բայց ափսոս, որ մահացավ թուրքական բանտում: Անհողորդ կամք եւ արծվային հենառենություն ունեցող դարաբաղու մասին լրիվ պատկերացում կազմելու համար գոնե բավական է լսել նրա բանտային ընկերներ Էմիլ Բալայանի (սշանցի վաստակավոր ուսուցիչ) եւ Յուրա Դանիելյանի (մեծթաղարացի) պատմածները, որ մեկնաբանվել են «Ազատ Արցախում»: [36]



Ներկայացնում են Յուրա Դանիելյանի պատմածը, որ տպագրվել է «Ազատ Արցախի» 1995թ. օգոստոսի 19-ի համարում:  
 - Լատվիան անկախացավ, - ասում է Առնոն ընկերոջը՝ Յուրային: - Հեռագիր ուղարկեցինք եւ տակը գրեցինք՝ ԲԻԽ-ի կողմից (Բերդաձորի ինքնապաշտպանության խորհուրդ):  
 - Գիտե՞ս, Յուրա մենք որոշել ենք ստեղծել երիտասարդ, անկախ հանրապետություն: «Վիշապի քարը» կլինի մեր զինանշանը:  
 - Շուտով Ղարաբաղը կհռչակվի անկախ հանրապետություն եւ լատիշներին կողջունի որպես պետություն:  
 Յուրայի այն հարցին, թե քանի տարեկան է, Առնոն պատասխանեց.

- Հապար:  
 - Չէ, լորջ եմ ասում, Յուրա, 40: Դա ինձ համար սահման կլինի:  
 - Չեմ վախենում, - շարունակում է Առնոն, - բայց պիտոսում եմ, որ անկախությունը չեմ տեսնելու: Ես՝ գուցե ոչ, բայց դուք կտեսնեք, եւ մեզ չնոռանաք: Եվ նման շատ էպիգրոֆներ...  
 Ասում են՝ Առնոյի սխրամքներն սկսվում են դեռ ուսանողական տարիներից, երբ Գորիսում ուսանողների ցույցի առջեւից խրոխտ ընթանում էր՝ դրոշք ձեռքին, որի համար բանտարկվել է...

Ի դեպ, 2-րդ բանտախցի ընկերներ Յուրան եւ Էմիլը Շարժման տարիներին մեծ գոյքներ են հեղինակել: Մեծ թաղարցի Յուրան, որպես ինքնային վարիչ, ակտիվ պաշտպանություն էր կազմակերպել Տոդի ձորակում, եւ այդ ենթաշրջանի ջոկատի պետ Վիգեն Գրիգորյանից գեներ էր պահանջում: Բանտում գտնվելու ժամանակ մի անգամ Յուրայի խուցն է ներխուժում մի թուրք, որ գողության համար հալածվում էր նրա կողմից: Գազազած թուրքը անգլյորեն ձեռնում է Յուրային: Նման ճակատավոր ունեին նաեւ բանտում գտնվող նրա ընկերները՝ Լեւոն Գասարյանը եւ Սլավիկ Հայրապետյանը:

Այս տողերն արտաբերում են խորին հոգոցով, քանզի Առնոն իմ ուսանողական ընկերոջ տղան է, Էմիլը՝ մեր շրջանի փառապան ուսուցիչը, որի հայրը Կոնի է իմ լավ ընկերը, իսկ Յուրան՝ եղբորս որդու աները, որը բանտից ազատվելուց անմիջապես հետո անցել է մեր գյուղով՝ հյուրընկալվելով իմ տանը:

x x x

Մարտունու շրջանի Հերիեր գյուղից մեկ գոյամարտում գոհված 27 ազատամարտիկներից 9-ը բռնագաղթածներ են (Մարիկ, Ռուդիկ, Կամո, Կոլյա, Ռոմա, Վոլոդյա, Իզոր, Արամ, Լավրենտ), որոնցով միայն կարելի է հպարտանալ եւ մոծ վառել շիրիմներին:

Նույնը եւ հայր ու որդիներ, քերթեցի փախստականներ Մառլեստ եւ Ալիկ Մայիլյանները, Սերժ եւ Սամվել Ավանեսյանները, տանկիստ Գարիկ Իլյայի Արախանյանը, որ անհայտ կորել է: Զարահունջեցի Արթուր Բաղդասարյանը, սոսեցիներ Ժորիկ Գարբիելյանը, Ժիրայր Խաչատրյանը, Մայիլ Բալայանը եւ Էլի շատերը՝ Ղարաբաղ աշխարհի տարբեր բնակավայրերից, որ մույնպես գոհվել են հող- հայրենիի համար՝ անճոռայ են:

Իսկ այն, ինչ կատարել է Բարվից մագապուրծ եղած եւ Մարտունիում բնակություն հաստատած Սիշա Գասարյանի տղան՝ Էմիլ Գասարյանը, որպես սակրավոր, մի բանի խոսքով անհնար է նկարագրել: Էմիլի քաջագործություններին Մարտունու «Ամարաս» թերթը հատուկ էջ է հատկացրել: Մարտական ընկերները պրոֆեսոր էին կոչում նրան՝ ռազմական լայնատես գիտելիքների տեր լինելու համար:


«Մոմգայիթի պատասխանը ո՛վ պիտի տա՝ եթե ոչ ես եւ իմ նմանները: Ես պիտի վրեժ լուծեմ բոլորի համար»



խոսքը շուրթերին, վրեժի ցասումով լցված՝ էմիլը, որ ծառայում էր Մարտունու շրջնի ԿԿԿ-ին, 1992 թ. սեպտեմբերի 11-ից ԼՂՀ ՊԲ 2-րդ պաշտպանական շրջանում էր՝ որպես սակրավորական վաշտի սակրավոր: Նա մասնակցել է Արաբաշուխի, Ղարադաղվի, Կուրուպատկիսոյի, Ավդալի համար մղված մարտերին: Որպես հնուտ սակրավոր, նրա դրամ SU-587 և SU-62 ակաճների վրա պայթել է ազնիվների 10 տանկ, 7 ՔՄԳ և 9 այլ գրահատիկներ: «Իսուն յալ» տեղամասում էմիլի դրամ ակաճների վրա պայթեցին 32 ակայրներ: «Պրոֆեսորը գերազանց կատարեց իր գործը, տղայք»,-ասաց Ալոն այդ առիթով:

«Ասում են՝ սակրավորը կյանքում մեկ անգամ է սխալվում: Սխալ էր քե պարզապես ճակատագիր՝ 1992 թ. սեպտեմբերի 26-ին, սակայն, Ավդալի ազատագրման ժամանակ վերջին՝ 10-րդ ականը դնելիս նա գոհվեց ընկերոջ՝ Կարոյի հետ», -այսպես է եզրափակել լուսագրող Կարինե Դանիելյանը «Տոկա, քանի դեռ զնդան ես, հարվածիր, երբ մուրճ կգառնաս» թղթակցությունը:

Թերեւս, Արցախի ազատագրության պայքարի ճանապարհին ալեյի շատ գոհեր տված ծնողներից են նաև մարտունարմակ փախստական Հրանտիկ և Ռոզա Դադաջյան ամուսինները, գոհվել են նրանց երեք տղաները՝ Արրուրը, Յուրիկը և Արմենը: Նրանց հայրենանվեր կենսագրություններն էլ շատ բան են ա-



սում մեզ: Ղարաբաղ աշխարհում անհամար են նաև այն հրամանատարները, որոնք նույնպես փախստական հայեր են: Նրանցից արժե հիշատակել ռազմական գործի գիտակ, սպա, Մարտունու, հետագայում՝ Բելոդաշենի զնդերում ծառայած Լեոնիդ Հայրապետյանին: Նրա անձնուրաց աշխատանքը բարձր է գնահատվել Ավդի, Հարոյանի, գեներալ Իվանյանի կողմից: Լեոնիդ Գուրգենովիչը երկար ծառայեց՝ 1989-ից մինչև 1998թ. և միայն 1998թ. վերջերից աշխատում է որպես Մարտունու շրջանի քաղաքապետության պետ: Ջինվորական կոչումով մայր է:

Կամ մեկ ուրիշ փախստական հրամանատար, որ մագալուրժ էր եղել Բարվից ու բնակություն հաստատել ժնդրավայրում՝ Բարդաջյում: Մայր է դիվ Սաշատրյանն է, որ անցել է մեր պատերազմների բովոլ, ղեկավարել հրետանային դիվիզիոնը, վերջերս էլ Լեմինգրադում ստացել բարձրագույն ռազմական կրթություն:

Իսկ Գրոզնի քաղաքի նախկին բնակիչ, փախստական Սեյրան Գրիգորյանի

մարտական ծառայությունները առավել ցցուն են հող-հայրենիի համար: Տուն-տեղից գրված, կնոջ երկարատև հիվանդ ու ստառայալ վիճակը տանելով հանդերձ, կնոջն ու երեք երեխաներին Մարտունու շրջանի Քեթր և Հաղորտի գյուղերում իր հոր ու աներոջ խնամքին բողած այս առնական ու զեղեցկադեմ տղամարդը հինգ տարի անընդմեջ ծառայեց հայրենի գյուղի վաշտում: Նրա ռազմական խոր գիտելիքների և բարոյաքաղաքական հասուն կեցվածքի համար կարող էր անգամ դառնալ գումարտակի հրամանատար, բայց գերադասեց շարքային ազատամարտիկի ծառայությունը: Եվ Սեյրանը ծառայեց անմնացորդ ու այժմ էլ դեռ դժվարությամբ շարունակում է տանել ընտանիքի դառնացած ու կնճռոտված վիճակը: Նրանց, այդ բռնագաղթած հայրենակիցներին ոչ որ հարկադրաբար գեների տակ չի դրել, պաշտպանության ջոկատներում չի ընդգրկել իմանալով, որ ՍԱԿ-ը արգելում է նմաններին կոնֆլիկտի մեջ ընդգրկելը: Նրանք ինքնարժեք, ինքնակամ զինվորագրվել և պաշտպան են կանգնել հայրենիքին:

x x x

Սեր Ծարժման պատմության մեջ եղել են դեպքեր, երբ հեռավոր երկրներից մեր շատ տղաներ հայրենիքի կանչով եկել ու պաշտպանել են իրենց նախկին բնակատեղին, ինչպես անվախ այր Անտիո Բաղդասարյանը, հեռավոր Ռուբինայից, որ հետո վերստին վերադարձել է Ղարաբաղ:

x x x

Ես՝ ուսուցիչ ծերունիս, ուրախությամբ լսվեցի, երբ վերջերս տեսա իմ նախկին աշակերտ Ասիսյան Գեորգյանին՝ փոխգնդապետի ուսադիրներով, որը նույնպես փախստական է Գրոզնուց և այժմ ծառայում է Հայաստանի սահմանների պաշտպանության ուղեկալներից մեկում՝ որպես պետ:

x x x

Սեր Ծարժման գլխամասից մինչև գեների կանոնավոր ձեռքբերումը, առանձին մարդիկ, ասացիկը, ծածուկ գեներ Լին ներկրում և գաղտնի ճանապարհով գինում յուրախիմներին, որը մեծ համարձակություն է, որ բաժին ընկավ դարաբաղցուն:

Ազատագրական մեր պայքարում մեծ է Սիսիանի, Հրազդանի, Չարենցաձանի դերը՝ որոշ գործարաններում պատրաստված գեները Ղարաբաղ ներկրելու առումով:

x x x

Սեր այս պատերազմը, որ տնեց շատ տարիներ, ցուցաբերեց նաև ընկերաբարության, ընկերոջը մարտի ժամանակ պաշտպանելու վառ օրինակներ: Դա էր Երևանցի Լ բորթ ճակատամարտերում, նույնիսկ՝ ընկերոջ համար անձնագրի ուսում դեպքերի կրկնությամբ:

Եվ ահա նման դեպքերից մեկը, որ տեղի է ունեցել Սահակալաչենի գումարտակի զինվորների շրջանում: Ֆիզուլու շրջանի Յաղավանդ մեծ բնակավայրի գրավման ժամանակ ակտիվ գործող Ջաբահունջի ջոկի դեռ չամուսնացած պատանի զինվորներ Ալեքսան և Արայիկ Լալայանները, Արայիկ Դանիելյանը, Վլադիկ և Կիմ Ղահրամանյանները, Վրեժ Բաղդասարյանը, Սիեր Առատամյանը, Անդրանիկ Աղաջանյանը, Ալիք Սուլեյմանյանը և մյուսները առաջարկել են բազմազան կինվորներին՝ հապաղել և առաջ չգնալ, այլ՝ մնալ, որ միայն վառեն գյուղի որոշ օբյեկտներ, այլապես կտնվեն՝ որք թողնելով զավակներին: Կոմիտեի և մնացողների բախտից ոչ մի զոհ չեղավ, ամեն ինչ այդ պահին հաջող ավարտվեց: Երեկոյան նրանք, խնջույքի սեղանի շուրջ նստած, արդեն շնորհավորում էին իրար՝ գյուղը գրավելու և ողջ մնալու կապակցությամբ: Սակայն տղաների ուրախությունը ծթագնեց այն թոքը, թե ջոկի հետեից եկող տանկը ու ՍՄ-ն ականների վրա պայթել են, որից սպանվել է տանկիստ Արթուր Սարգսյանը՝ քերթեցի-հայաստանաբնակը, վիրավորվել են ՍՄ-ի վարորդ Արմեն Բաբաջանյանը և Արագած Դատրյանը: Իսկ Հերիերի վաշտի զինվորներից մի խումբ, որ գտնվում էին տանկի վրա, ծանր վիրավորվել են:

x x x

Նմանօրինակ քայլ են կատարել և ստեփանակերտցի եղբայրներ Մխիթար ու Գագիկ Ավարյանները: Մենք նրանց չորս եղբայրների մասին մի առիթով ճշել ենք, բայց այն, ինչ տեղի է ունեցել եղբայրների միջև՝ Շուշին գրավելու նախօրեին, նույնիսկ զավեշտական երանգ ունի: Նրանցից Մխիթարը երեք զավակների հայր է, իսկ Գագիկը՝ մեկ: Վերջինս վիճեց երբոր հետ՝ պահանջելով, որ բազմազան Մխիթարը չգնա Շուշիի գրոհին: Բայց Մխիթարը անդրդվեցի էր: Եղբայրներն ստիպված փնձակ են գցում, Գագիկը «հաղթում է» ու մետվում մարտի: Նրա տանկը, սակայն, խփվում է, և զոհվում են նրա ընկերները, բայց ինքը հրաշքով փրկվում է: Գագիկը, սակայն, անտեղյակ էր, որ եղբայր Մխիթարն արդեն մատել է երկրորդ տանկը և արշավել Շուշիի վրա: Այժմ Գագիկի այդ խփված տանկը գտնվում է ճանապարհի առանձին տեղամասի վրա՝ ի ցույց բոլորի:

x x x

Արժանատի շատակ է կարծիրավանցի, ուսուցչի տղա Իգոր Հասրաբյանի ռազմական կենսագրությունը, որը ներկայացրել է հոգվածագիր Արսեն Գեորգյանը «Սարտիկ» թերթի 1997թ. 37-րդ համարում: Իգորի ջոկատը վեճը հայրայթելու համար դիմում է ամեն միջոցի: Ջոկատը ճարտարի կոլտնտեսության քերթահավաքը անվտանգ անցկացնելու համար նվեր ստացած մեկ մեքենա խաղողը վաճառում է շուկայում և այդ փողով ռուսներից գեներ գնում: Իգորը իր ընկեր Նարեկի միջոցով փող է խնդրում Նարեկի մնողներ՝ գրող Կոմիտաս Դանիելյանից և դասախոս Լենա Գրիգորյանից ու այդ փողով վեճը գնում: Բայց, որ շատ զարմանալի է, նա կրկին ու կրկին վեճը գնելու նպատակով վաճառում է իր՝ դեռ չհագած հարավսլավական կոստյումը՝ պատճառաբանելով, թե փոքր է: Այդ ա-

մենը համահունչ է Սոս Գյուղացի, վաղանշուկ մայր Հայկ Մայիկ Հակոբյանի արարքին, որի մասին նմանօրինակ ակնարկ կա այս գրքի էջերից մեկում:

Իսկ այս եերոս կարծիրավանցու վերջին քայլը, որ կատարվել է Ասկերանի շրջանի Սառնաղբյուրի, Փրջամալի, Արանգամի մոտակա բարձունքն իր 17 ընկերներով պաշտպանելիս, որի ելքը կովի դաշտում թշնամու ձեռքը ջրկնեկու համար վերջին գնդակով իրեն սպանելու և իր խնդրանքով մարտի դաշտից հետ նահանջող ընկերներին ասելն է, թե՛ «հայտնեցեք ծնողներինս, որ ինձ թուրքը չի սպանել», խիստ նման է Լարարադի պաշտպանության ժամանակ նման կարգով ինքնասպան եղած Վազգեն Գրիգորյանի և Իգորի արյունակից, նույն կարծիրավանցի Հովսեփ Հարությունյանի ձեռնարկած քայլին, որ գրպանում պայթեցրել է հոգեպահուստ վերջին նռնակը, սպանվել ինքը և մահվան գիրկն ուղարկել թշնամու մի բանի ասկյարների:

x x x

Ամերեր կամքի, տոկունության, հայրենի եզերքին նվիրված լինելու մի վառ դրսեւորում է նաև զրախտիկցի երիտասարդ ֆիդայի Լյովա Վլադիմիրի Սկրոյանի արարքը, որը կովի պահին հարկադրական գերության պայմաններում արիամարին է թշնամուն, դիմակայել նրա գործադրած բոլոր կատանքներին: Չի ենթարկվել գերի տարվելուն և գերադասել է իր հողում մեռնելը: Այդ ամենը Լյովայի տորքանգեղյան ֆիզիկական ուժի արդյունք է, որ թշնամին չկարողացավ ուժ կիրառելով, քաշել-տանել մեր պաշտեցի երիտասարդին և քավանկանացավ նրա վրա զնդակ արձակելով: Դա ակամայից մեկ հիշեցնում է Հայրենական մեծ պատերազմի ժամանակ Բրեստի պաշտպաններից մեկին՝ զինվոր-հրամանատար Ֆոմինին, որը նույնպես գերի չի խանձնվել:

x x x

Մխաված չեմ լինի, եթե խոսեմ նաև քաղաքական որոշ գործիչների անվախ ու աներեր քայլերի մասին: Մեր մախկին մարգիտորդի մախազահի տեղակալ



Շմավոն Պետրոսյանի, Սարտունու շրջկոմի մախկին 2-րդ քարտուղար, տվյալ պահին՝ Կուրդպատկիճուրի գինու գործարանի տնօրեն Սուրեն Դանիելյանի, գրող-երգահան Գրիգոր Ուլուրաբյանի, մախկին մարգիտորդաթվար Վիգեն Հայրապետյանի և Ստեփանակերտի ավտոմիավորման պարկի տնօրեն Բորիս Դադամյանի համարձակ քայլերի՝ մասին, որ ԽՍՀՄ վարչախրամայական կարգերի պայմաններում, դեռ ժողովրդավարություն, բացախություն, երապարակայնություն խաղալու տարիներին, ՊԱԿ-ի գոյության պայմաններում, մեր Շարժման արշավույսին լույս են վառել Դարաբադում և





հանդգնել առաջինը խոսել, առաջինը բացել շրջանային եւ մարզային խորհուրդների նստաշրջանները եւ՝ հրապարակային միտինգները 1988թ. փետրվարին: Եվ զուր չէ, որ ԼՂՀ նախագահի 1998թ. փետրվարի 19-ի թիվ 19 հրամանով, որը նվիրված էր Արցախի ազատագրական շարժման 10-րդ տարեդարձին, նրանց նշանակվեց անհատական կենսաբոշակ ԼՂՀ-ում գործող նվազագույն աշխատավարձի քսանապատիկի չափով՝ ցմահ: Արժանի են: [38]



Քաղաքական, հասարակական ու պետական այս հինգ գործիչների մասին գրքեր կարելի է գրել, քանզի նրանք լոկ այսրուպեական համարձակներ չեն, այլ՝ հարատեւող եւ այժմ էլ դեռ գործող անհատներ, որոնք հասարակական մեծ ճանաչում եւ հեղուկություն ունեն: Ընավոն Պետրոսյանի ջանքերի արդյունք պետք է համարել Ազգային խորհրդի ձեւավորման գործընթացը:

x x x



Ղարաբաղը իր հարգանքի տո՛րքը պետք է տա Ասկերանի շրջանի ակտիվի նիստի մասնակիցներին, որոնք Ղարաբաղում միակն էին, որ «ո՛չ» ասացին Բարձից ժամանած էմիսարների այն պահանջին, թե՛ «հեռու մնան Ադրբեջանից անջատվելու գաղափարից»: Ի տարբերություն ԼՂԻՄ մյուս շրջանների, նրանք չցրվեցին եւ անահողողող կանգնեցին իրենց քաղաքական ընտրության վրա: Հատկանշական է նաեւ, որ Արցախը Հայաստանի հետ միավորելու մասին հռչակագիրը, ուր իրենց ստորագրությունը պիտի դնեին ավելի քան 80 հազար արցախցիներ կամ ԼՂՀ բոլոր չափահաս քաղաքացիները, մշակվել եւ ընդունվել է Ասկերանի շրջանի ակտիվիստների՝ Նորագյուղում կայացած գաղտնի հավաքում, Ծարժման նահապետ Իգոր Մուրադյանի մասնակցությամբ:

Բայց թե ինչու հենց Ասկերանը մեզ բերեց Արցախյան ազգային-ազատագրական պայքարի զեփյուռը, կամ թե ինչու հենց այդ շրջանը առաջինը կանգնեց ազերիների դեմ-հանդիման Ծարժման առաջին օրերին, թվում է՝ հասկանալի է, այն պարզ պատճառով, որ Ասկերանի շրջանը այն օրերին ղեկավարում էր շրջկոմի 1-ին քարտուղար Վաչագան Գրիգորյանը՝ շրջանի աշխատավորների հարկված ու սիրված առաջնորդը, որն առաջնորդում էր նաեւ ազատագրական շարժումը:

Զանի որ ակնարկեցինք Ասկերանի շրջանի մարդկանց ու նրա ղեկավար այրերի հանդուգն քայլերի մասին, ակամայից հիշեցի մի Էպիգոդ, որի հերոսը այդ շրջանի Բալուջա գյուղի միջնակարգ դպրոցի նախկին ուսուցիչ-տնօրեն Ալեքսանդր Հակոբյանն է, որին վաղուց էի ճանաչում թերթերում ու ամսագրերում հրապարակած՝ մասնագիտական, գիտական եւ հայրենասիրական բնույթի

տասնյակ հոդվածներից: Գլխեի, որ նրա գիտական հոդվածներից մեկը ռուսերեն լեզվով նույնիսկ հրապարակվել է Գ.Գ.Հ-ի Դրեզդեն քաղաքի հանդեսներից մեկում՝ ուր նա մեկնել էր ԽՍՀՄ-Գ.Գ.Հ ընկերության հրավերով: Ալեքսանդրի հետ անձնապես ծանոթացել էի դեռ 60-ական թվականների վերջին՝ հենց իր փայփայած Բալուջայի դպրոցում, ուր մեկնել էի՝ մասնակցելու Ղարաբաղի դպրոցների տնօրենների արտագնա խորհրդակցությանը: Դպրոցական այդ նորակառույց ու վեհաշուր շենքի՝ այն ժամանակներում դեռ նոր ձեւավորվող առարկայական-ուսումնական կաթինետներից առանձնապես աչք էր շոյում ուսուցիչ Ալեքսանդր Հակոբյանի ձեւավորած-կահավորած կաթինետը, որտեղ էլ ես գրույցի մեջ մտա նրա հետ: Ինչքան հաճելի էր խոսել այդ բազմագիտակ ու գրույցասեր մարդու հետ, որից հասարակական-քաղաքական անավշտոն գործիչի հոտ էր փչում: Եվ ես այն ժամանակ ներքին ուրախությունս ու տպավորություններս արտահայտեցի այդ դպրոցի ուսմասվար Քրիստափոր Հայրիյանին եւ նրա կին Աղավնիկ Աղաջանյանին, որն իմ ուսանողական ընկերս էր Շուշիի ինստիտուտից:

Այնուհետեւ Ալեքսանդրի՝ այդ հմուտ մանկավարժի հետ ավելի ջերմ հարաբերություններ հաստատեցի 70-ական թվականներին, երբ ԼՂՀ ուսուցիչների կատարելագործման ինստիտուտի կողմից կազմակերպված՝ դպրոցների տնօրենների դաընթացներին էի մասնակցում Ստեփանակերտում: Հետո առիթ եղավ, որ 3-րդ անգամ նրա հետ հանդիպեմ Ղարաբաղյան շրջանի աշխատողների երեխաների համար կազմակերպված ամառային ճամբարում: Այդ ճամբարի տնօրենը հենց նա էր՝ վաղեմի ծանոթս՝ Ալեքսանդր Հակոբյանը: Ես այնտեղ լսեցի նրա հաճելի երգերը քամանչայի նվագի ուղեկցությամբ:

Հարգելի ընթերցող, բայց իմ խնդիրը բոլորովին էլ այս բնածին մանկավարժի դիմագիծը կերտելը չէ եւ ոչ էլ նրան գովերգել-մեծարելը, որ առանց ինձ էլ ձոնված ու մեծարված է շատ գրիչներով: Այն բոլորովին այլ է: Եվ ահա չուշացավ նաեւ մեր նոր՝ այս անգամ արդեն մեր հրապարակային հանդիպումը Ստեփանակերտի ներկայիս Ազատության հրապարակում՝ Արցախյան շարժման առաջին օրերին, մայրաքաղաքի բազմամարդ միտինգներից մեկում: Հիշում եմ նրա կրակոտ ու համարձակ ելույթներից մեկը, որից հառնում ու թեւածում են այս մտքերը. «Տերեւի համար պիտի պայթի բողբոջը, ծաղիկ դառնալու համար՝ կոկոնը, սերմը պիտի պայթի», որ արտում հասկը շատանա, ազատ ու անկախ ապրելու համար համբերության քաժակը, ժողովրդի ցասո՛ւմը պիտի պայթի: Եվ ահա այսօր մեզ այստեղ է բերել հենց այդ ցասումը, այդ պայքարումը»:

Եվ երբ նա իջավ «քնական ամբիոնից», որ Լեւնինի արձանի մոտի ճանապարհի եզրի նիստատաշ քարն էր՝ իր բարձր դիրքով ու «պատվանդանով», հուզումնալից ու մի բան գտածի պես դուրս եկավ հրապարակի բազմության միջից եւ ուղղություն վերցրեց դեպի հյուրանոցի շենքի առջեւի բազմահարկ սանդուղքների վրա կանգնած ընկերներ Իվան Աբայանի (Ավետարանոցի միջնակարգ դպրոցի տնօրեն, ԽՍՀՄ վաստակավոր մանկավարժ, Արցախյան շարժման կազմակերպիչ), Քաղաքայի դպրոցի տնօրեն Արմեն Ավանեսյանի, մարտունեցի բանաստեղծ-երգահան Գրիգոր Ուլուբաբյանի եւ տողերիս հեղինակի մոտ, ուր մինչ նրա ելույթը միասին վերլուծում էինք ստեղծված իրադրությունն ու ելքը: Եվ ես էլ հենց այստեղ խնդրեցի Ալեքսանդրին, որ ինձ թելադրի քիչ առաջ մի-



տիճակավորների առաջ իր արտահայտած թեավոր բառերը, որը եւ բառացիորեն գրառեցի ծոցատետրումս, որ մտապահեմ ու մտքարաւիվեմ ուլաձս պահի՞ ճիշտ նրա նման, ճիշտ նրա պես («Տերեւի համար պիտի պայթի...»):

Ի դեպ, երբ ես խոսք բացեցի այս Շարժման բարդ ու դժվարին ընթացքի բնույթը արյունալի վերջավորության մասին, նույն մեր ընկեր Գրիգոր Ուլուքաբաբունը ասաց, որ արյուն պիտի հեղվի, որ առանց գոհերի ազատություն չի լինում: Մանավանդ՝ որ մենք ասիացի ենք, վրա բերեց Ա. Հակոբյանը՝ ավելի հաստատելու Գրիգորի միտքը: Եվ մեր շրջապատը, որ լսում էր մեզ, հավանեց այդ մտքերն ու ընդունեց ի գիտություն: Հետո... հետո շատ տարիներ անց միայն իմացա, որ մեր վաղեմի ընկեր, հնուտ մանկավարժ Ալեքսանդր Հակոբյանը առաջիններից մեկն է եղել, որ լծվել է մեր պայքարի կառքին ու կրել շատ վրկանքներ եւ սրտի արատից իր մահկանացուն կնքել 1996 թվականին:

Նրա նախկին աշակերտ, գրող-հրապարակախոս Դավիթ Միրայեյանին «Իսկ գարունն արդեն այգիղ է խուժել» վերտառությամբ ռեքվիեմնաման հողվածի հրապարակումից իմացանք, թե ինչպես է մեր այդ աննկուն տղամարդը դիմակայել սափնուլյան պատժիչ ջոկատներին ու ազերի օժոնակաւաններին, որ վստում էին իր գյուղի շուրջը եւ դաժան դատաստան տեսնում Շարժման ակտիվ մասնակիցների հետ: Գրողը մեզ տեղեկացնում է, թե ինչպես էր «ընկեր Հակոբյանը» շարունակում աներկյուղ ու ըմբոստ մնալ, երբ բռնաճիւղ Բոսալար, Զամիլու, Զանհասան կրակակետերից գնդակոծում էր Բալուջա գյուղը եւ օր-օրի ավելացնում անմեղ գոհերի ու ավերված տների թիվը... Որ նա առաջիններից մեկը նախաձեռնեց կանանց, ծերերի ու երեխաների ժամանակավոր տեղափոխումն խնդիրը անվտանգ գոտի, թե ինչպես ինքը չլքեց գյուղը եւ շատերի մեծ կրակի տակ հայտնվեց, որ հրետակոծվեց նրա կառուցած տունը, իսկ նրան, արկի լեկորներից վիրավոր, հայտնաբերեցին միայն հաջորդ օրը: Բայց նա չվհատվեց, նույնիսկ այն ժամանակ, երբ Երեւան-Ստեփանակերտ ինքնարիտի ահա՛վոր աղետի պատճառով մահացավ իր յոթամյա թոռնիկը, որ գալիս էր տատիկին, պապիկին տեսության:

Ասում են՝ գաղափարը, այն էլ՝ ազատության գլուղափարը, դատի ենթակա չէ, իսկ երբ խոսքը վերաբերում է ազգի ֆիզիկական գոյությանը, միշտ էլ գերակշիռ են արյան ներքին, թաթում գսպանակները: Ու զիլ է հնչում արյան կանջը: Ասելով՝ մեր ուսուցչապետ Ալեքսանդր Տիգրանի Հակոբյանի հայրենասիրության դասերը արյան կանջով փոխանցվել են նրա Սամվել եւ Կարեն որդիներին, որոնք ինչպիսիորեն մասնակցել են թուրքի շրջակա կրակակետերի վերացմանը, Ասկերանի, Մարտակերտի, Հաղորթի շրջանների գերեզմարված գյուղերի ազատագրման մարտերին եւ իրենց մարտական ընկերների հետ հասել մինչեւ Հորադիզ: Այսօրվել գումարտակի հրամանատար էր, աչքի էր ընկնում իր համարձակ ու աներեր կամբով, վայելում գինվորների հարգանքն ու վստահությունը: Իսկ այժմ, իսկ ներկա խաղաղ պայմաններում: Նա՛ այդ քաջակորով, ոչ հեռու անցյալի գինվոր-հրամանատարը, Ասկերանի դժվարահաս շրջանը ղեկավարեց մի քանի տարի՝ լինելով նրա վարչակազմի առաջին ղեմը, իսկ այժմ ձեռններեցություն շրթայի մի օղակն է պահում իր ձեռքում:

Ընդհանրացնենք Ասկերանը Շարժման մեկնակետ դառնալու վերաբերյալ

թեման գրող Կոմիտաս Դանիելյանի բառերով.

«Ի տարբերություն մյուս շրջանների, այստեղ Շարժման գլուխ էին կանգնած էինմակաւանում ղեկավար աշխատողները, որոնք լավ էին ճանաչում շրջանը... Նրանք լայն հեղինակություն էին վայելում»:

x x x

Բացառված չէ, որ կգա նաեւ մեր գրողների, լրագրողների, հեռուստատեսության եւ ռադիոյի աշխատողների գործադրած ուժերի գնահատման ժամանակը, մեր այդ քարոզիչների գովքն անելու օրը: Հիշենք եւ մտաբերենք, որ եթե հազար հինգ հարյուրից ավելի տարիներ առաջ Ավարայրում մեր հայերի քարոզիչը Ղեւտնդ Երեցն էր ու պատմիչ Եղիշեն, մեր նոր Ավարայրում հարյուրավոր են այդ քարոզիչները: Իսկ Պարզեւ արքեպիսկոպոսը, Ղարաբաղի հայոց թեմի առաջնորդ սրբազանի օրհնությունն ու աղոթքը Շուշիի գրավման հոգեւոր սնունդը եղավ մեր գինվորների համար: Ընդունված է ասել, որ «երբ որոտում են թնդանոթները, մուսաները լուծ են», բայց Ղարաբաղում կարծես փոխվեց այդ «կարգը» եւ դեռ ավելին, թնդանոթների որոտների տակ նկարահանվեց ամեն-ամեն ինչ, ինչը կատարեց նույնիսկ մեր տեղանքին անսովոր բուլղարուհի Յվետանա Պասկալեան, որի էկրանավորած տեսաերիզները դուրս են եկել Ղարաբաղի սահմաններից: Այժմ նա Երեւանում գործող «Ասպեկտ» կենտրոնի ղեկավարն է: Իսկ մի՞թե պակաս գնահատելի է մեր հայրենակից, Մարտունի (ԼԼՀ) քաղաքում ծնված եւ այժմ ՌԴ Միմվոյ քաղաքում ապրող Արթուր Արտոյի Ալեքսանյան ձեռնարկումը, որ 1993 թվականին Մոսկվայի հրատարակչությամբ լույս է ընծայել 90 տարի առաջ ռուս գեներալ-լեյտենանտ, Անդրկովկասի ռազմական օկրուգի հրամանատարի քաղաքական գծով տեղակալ Վասիլի Պոտոտոյի «Ղարաբաղի առաջին կամավորները» գիրքը, (39) որով հայ ընթերցողը հնարավորություն ունեցավ ծանոթանալու ռուս-հայկական ռազմական համագործակցության մի հատվածի հետ, որի բատերաբեմը եղել է Ղարաբաղը 1805-1813 եւ 1826-28թթ. ռուս-պարսկական պատերազմների տարիներին, որը եւ դարձավ Ղարաբաղի ու Հայաստանի ազատագրության եւ կրոնակից Ռուսաստանի հետ նրանց միացման ժամանակաշրջան: Նա այդ գիրքը հրատարակել է իր միջոցներով եւ նվիրել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակմանը (1991թ. սեպտեմբերի 2-ին): Գիրքն այդ այս օրերին հույժ կարեւոր դեր կատարեց Ղարաբաղում մեր նախնիների օրինակը տարածելու եւ նրանց օրինակով այս սերունդին դաստիարակելու գործում: Նրա հովանավորության արդյունք պետք է համարել մարտիներից գրող Սեյրան Քամալյանի «Ավոն իմ աչքերով» քաղաքատիրած գրքի հրատարակումը: Ա. Ալեքսանյանի միջոցներով են հարավարակվել նաեւ «Карабах на пути к вечности» եւ «Елссոյ» գրքերը: Առ այսօր էլ նա չի դադարում իր բարեգործական առաքելությունը հայրենիքի ու Մփյուռքի ամուր կապի առիթով: Այդ փաստերի փայլուն վկայության առիթավատչյան են Ալեքսանյանի միջոցներով 1995թ. առայսօր Ռուսաստանի հարավում հրատարակվող «Община - амаи» պատմա-մշակութային պարբերականները, որոնցից մի քանիսը պարբերաբար հրատարակվում են հայազգի 15 գիտնականների խմբագրությամբ:

Այդ պարբերակները ներկայացնում են Ռուսաստանի ողջ հարավի հայու-  
բյանը, նրա կյանքն ու կենցաղը, անցյալի ու ներկայի պատմությունը: Հատկանշա-  
կանն այն է, որ բոլոր այդ պարբերակներին տիտուլյուրների վրա գրոշմված  
են՝ «Издано на средства Артура Артоевича, г. Минеральных вод» շնորհակալա-  
կան բառերը: Բայց Արթուր Արտոեւիչի՝ այդ ազնիվ ու շիտակ զարաբալցու քա-  
ղաքացիական առարելությունը դրանով չի սպառվել: Հայտնի են նաև նրա քա-  
րեգործությունները Արցախին:

Այսօր մեր հայրենակիցը եղաբար է այդ ամենի համար, բայց նրա հետ ունե-  
ցած իմ անձնական գրույցից պարզ դարձավ, որ նա անձնական վիրավորանք  
ունի, որ շատ օգնություն հասցեատիրոջը չի գտել, իսկ իր բարեգործական առա-  
քելությունն էլ ըստ արժանվույն չի գնահատվել:

x x x

Շրջանցելով մեր այս քաղաքական մեջքերումները կրկին անդրադառնանք  
դարաբաղյան ճակատամարտերին ու ասենք, որ ողջ հայությունը գմայլված է  
հատկապես Արևադի Տեր-Թադեոսյանի (Կոմանդոսի), իրար հաջորդած պաշտ-  
պանության քանակի շտաբի պետեր Գրգորյանի և Ջիմնեիչի կազմակերպչական  
տաղանդով: Իհարկե, մեծ պատիվ է Կոմանդոսի համար, որ մինչև երկուս հրա-  
տարակված հայոց պատմության դասագրքերում միայն նրա անունն է սրբագր-  
ված որպես ամառիկ Շուշին ազատագրողի և հային վերադարձնողի: Հիրավի,  
շատ կգրվի և կասվի Ղարաբաղի ազատագրական բանակի կայացման հիմ-  
նախնդիրներից Քրիստափոր Իվանյանի մասին, բեկուզ ռազմական հուշերի ձե-  
տով: Կասվի, որ այդ տարիքանց գեներալ-լեյտենանտը խոջալուի ռազմական  
վարժարանի հիմքը դրեց և իր ռազմական տաղանդով ու գործիմացությամբ վա-  
րակեց շատ երիտասարդ հյուսնամատարների: Կասվի, որ նա համարձակությամբ  
ու խիզախությամբ ներարկեց մեր գինվորներին Ֆիզուլիի, Ջարրախի և այլ տա-  
րածքներ ազատագրելու ժամանակ: Ասում են՝ վարկած կա խոջալու բնակատե-  
ղին նրա ազգանվամբ՝ Իվանովկա անունով կոչել: Արժանի է:

Մեր Շարժման պատմության առաջին էջերից մեկում կգրվեն նաև «Կոռուկ»  
կազմակերպության հիմնադիրների անունները: Կգրվի, որ Ստեփանակերտի  
մանկավարժական ինստիտուտի դասախոս Համլետ Գրիգորյանի և տեղական  
արտադրության կոմբինատի տնօրեն Արկադի Մանուչարովի ջանքերով 1988թ.  
մարտի 5-ին «Կոռուկը» ճանաչվեց Ստեփանակերտի քաղաքի կողմից:  
Բայց «Կոռուկը» տխուր ճակատագիր ունեցավ: Այդ հասարակական կազմա-  
կերպությունը վերեցների կողմից խոյահարվեց, իսկ նրա «տիրոջը»՝ Մանուչարո-  
վյանի խոյոյը: Տխուր ճակատագիր ունեցավ նաև «Կոռուկ» անվան հեղինակ,  
քանդակագործ Արմեն Հակոբյանը, որ սպանվեց քաղաքամայրում՝ խորհրդային  
գինվորի կրակոցից:

«Կոռուկ»-ին փոխարինած Ստեփանակերտի հիմնարկ-ձեռնարկություննե-  
րի տնօրենների խորհուրդը այդ ժամանակներում մեծ հեղինակություն էր մարվի  
ազատագրական պայքարի արշալույսին, որը հաջորդաբար ղեկավարում էին

Բորիս Առուշանյանը, Արմո Ճատրյանը և Էռնեստ Հայրապետյանը:

Ահա վերջապես Ղարաբաղյան շարժումը խրամող մի ուժ ես՝ Ղարաբաղի  
Ազգային խորհուրդը՝ Վաչագան Գրիգորյանի ղեկավարությամբ, որն այս գրքում  
արժանի գնահատականի է արժանացած՝ ի հեճուկս այն օրերի նրա բշնամիճե-  
րի ու դավադիրների, իսկ այսօր էլ՝ նրան չհասկացողների և չգնահատողների:

x x x

Իմանալ է պետք, որ ամեն մի ազգային-ազատագրական շարժում ունենում է  
ծպտյալ հերոսներ, որոնց հեղինակները բեն կործր չեն ծեծում, ամպագողառ  
հայտարարություններ չեն անում, բայց անում են այն, ինչը միայն մի անուն ու-  
նի՝ նվիրվածություն, անասհման նվիրվածություն հող հայրենիին: Այդպիսի մի  
անհատ, մի նվիրյալ մարդ էր մեր նախկին մարզկոմի ընդհանուր բաժնի սեկտորի  
վարիչ Սամվել Հայրիյանը: Նաև այդ համեստ տղամարդը, որն իր գործըն-  
կերների շուրջին էր արժանի, մեր երկրամասի քաղաքական վայրուվերումներ-  
րի ժամանակ կարողանում էր մեր տղաների կազմած հեռագրերն ու հաղորդում-  
ները Մոսկվա հասցնել, իսկ ՍՄԿԿ 28-րդ համագումարի Ղարաբաղի հայ պաա-  
զամավորների վաստաբոլբոլը, որ Բարվի համար անընդունելի էին, անձամբ  
հասցնել Կենտկոմ՝ 7 օր դեգերելով Մոսկվայում, մինչև որ հարմար պահ է ընտ-  
րել ու կատարել այդ մեծ գործը: Հենց նա էր, որ ԼՂՀ-ում գտնվող Մոսկվայի դրա-  
ծո գործիչների կեղծ թվերը Ղարաբաղի ցուցարարների բանակի վերաբերյալ ճշ-  
տությամբ էր ներկայացնում Կեմերոնի՝ խափանելով նրանց շինծու ձեռնարկում-  
ները: Սամվելի կատարածը մեզ հիշեցնում է 18-րդ դարի կեսերին դարաբաղցի  
մեր ծաղոյալ տորիանդակներին (Գրիգոր և այլք), որոնք Ղարաբաղի կաթողի-  
կոսի և առաջադեմ մեյլիքների նամակներն էին տանում Պետերբուրգ՝ ռուսական  
ցարերին: Եվ այստեղ հերոսականը այն է, որ այս ամենը մեր երիտասարդ գոր-  
ծիչը կատարել է Ստեփանակերտում վիստող, օդանավակայանը իսկող օժոնի եր  
ՆԳ գինվորականության խիստ հսկողության պայմաններում: Ղարաբաղում չի  
մտուցվի նաև բուցիկներ տպագրող Էդիկ Խաչատրյանը: Հա, ասեմ, որ բու-  
ցիկների մասին այս ակնարկս համկարծ ինձ տարավ հետ՝ 1960-ական թվական-  
ները, երբ Մարտունու շրջանի Սխտոյաչեն գյուղի նախկին աշակերտներիցս  
մեկը՝ Արամայիս Վահանի Խաչատրյանը, որը 1967 թվականին սովորում էր Ե-  
րևանի անասնաբուժական-անասնաբուժական ինստիտուտում, անվանի քա-  
նաստեղծ Հովհաննես Շիրազի «Ղարաբաղի ողոր» տարածելու պահին ՊԱԿ-ի  
կողմից ձերբակալվել ու քանտ է ճետվել: Բայց տղայի քախտը բերել է, քանզի  
այն ժամանակներում Հայաստանի Հանրապետության ՊԱԿ-ի նախագահը Ա-  
րամայիսի համալսարանի Աշոտ Դադայանն էր, որը և ազատեց նրան կալան-  
քից ու վերականգնեց բուհ-ում: Հետագայում Արամայիսը դարձավ Ստեփանա-  
կերտի գյուղտնխնիկումի առաջատար ուսուցիչներից մեկը՝ անասնաբուժության  
գծով: Բայց եղան մարդիկ, որ այդ հողի վրա շատ տուժեցին, ինչպես օրինակ,  
Ստեփանակերտի բժշկական ուսումնարանի գիրեկտոր, բժիշկ Էդուարդ Ղա-  
րամանյանը, որի ուսանողներից էլ մի քանիսը մասնակցել էին այդ «պայքարո-  
րյանը»:

ժողովրդի խիզախումները Ադրբեջանի Կազմկոմիտեի կառավարման տարիներին ակնհայտ էին Ղարաբաղի բոլոր շրջաններում: «Սոցիալիզմի Ղարաբաղ»-ի «տապալակ» բոլորակցությունը իր ընթացիկներին, որպես գույժ, հաղորդում է, որ Մարտակերտի շրջանի Կիչանը եւ Ղազանչին, Հաղորթի, Ասկերանի եւ Ծուշիի շրջանների ծայրամասային գյուղերը վտանգի տակ են: Հենց այդ օրերին Հաղորթի շրջանի Տողի ենթաշրջանի Դրախտիկի [40] գյուղի բնակչությունը, ինչպես որ ողջ արցախահայությունը, տատապանքի օրեր էր ապրում: Եվ ահա գյուղի «պատերազմի եւ աշխատանքի» մի խումբ վետերաններ Թադեոս Տոնյանի գլխավորությամբ վրդովված գնացել են «Սոցիալիզմի Ղարաբաղ»-ի խմբագրություն եւ պատմել, որ «իրենց հարեւան ադրբեջանաբնակ Մալաթյարին գյուղից օր ու գիշեր գնդակների կրակ է թափվում գյուղի վրա: Ռախելի»<sup>9</sup> է նրանց այդքան գեները, ո՞ր է այն ուժը, որ, ի կատարումն էՄԱՀՄ արեգիդեմո Մ.Ս. Գորբաչովի հրամանագրի, բռնի նրանց ձեռքը: Այդ ուժը, - շարունակում են պատմել նրանք, - որքան հասկանում ենք, պետք է լինի պարետությունը, ներքին գործերը, բայց չի երեւում»: Այդ կապակցությամբ ոչինչ չարեց Հաղորթի արտակարգ դրության պարետությունը, հատկապես քաղցածմի պետի տեղակալ Ալեքսանդր Բեյրուսովը: Նրա խոստումը գործի չվերածվեց: Այդժամ էր, որ շատ գյուղերի դեկավար գործիչներ ստանձնել էին իրենց հայրենի եզերքի պաշտպանության գործը եւ կոչով դիմել ու արտահայտել իրենց նպատակները՝ իրենց ժողովրդին: Թեւավոր խոսք է դարձել Ղազանչիի դպրոցի տնօրեն, հինգ երեխաների հայր, իր հող ու ջրի համար կյանքը մատաղամ Պավել Ասմատրյանի խոսքերը՝ «Եթե անգամ աշխարհակործան փոթորիկները փորձեն մոտենալ Ղազանչի գյուղին, ապա մի հրաշքով ես կփոխակերպվեմ հզոր ու կախարդական մի ուժի, որն անսասան կպահի գյուղն իմ հայրենի»: Նրա զավակներից երկուսը այժմ որպես սպաներ ծառայում են Արցախի բանակում: [41]

Ասում են՝ հայրենասիրությունը կեցվածք չէ եւ ոչ էլ մոլայիկ հագուստ: Հայրենասիրությունը ոգու որոշակի վիճակ է, որ չի հանդուրժում անտարբերություն, ցուցամոլություն... Պետք է գիտակցված գնալ մահվանն ընդառաջ: Հենց այդպիսի գիտակցված նվիրվածությամբ մահվանն ընդառաջ գնաց Վիզեն-Վրեժը՝ Հաղորթի շրջանի Տողի ենթաշրջանի շտաբի պետը, որն իր ջոկատի «Վրեժ» անունը իր համար դարձրեց մականուն: Տողեցի ուսուցիչ-արժիվը սերված է մի բանի տասնյակ տարիներ հայրենի գյուղի միջնակարգ դպրոցի տնօրեն աշխատած Արեւ Թամրազյան մանկավարժ մորից, որը ծնունդով Մարտունու շրջանի Թաղավարդ գյուղի աղջիկ էր: Հենց այդ նույն



Թամրազյան ուսուցչուհու եղբայր Գորգենը վերջերս իր հայրենակիցների սեղաններին դրեց «Թաղավարդ» վերտառությամբ իր հայրենի գյուղի պատմությունը: Վիզեն Գրիգորյանը շատ անգամ է խոյս տվել թշնամու ծուղակից: Անգամ «Պրավդա» թերթի լրագրողների հետ բուրբերի մոտ լինելու ժամանակ է պատահել, որը, սակայն, ռուս լրագրողների միջամտությամբ ու խորամանկ քայլերով փրկվել է: Նա ԼԷՀ Գերագույն խորհրդի (առաջին գումարման) պատգամավոր էր: Պարզեատրվել է «Մարտական խաչով»: «Արյան գնով ազատագրել Ֆիզուլին» բառերը շուրթերին՝, Վիզենը գոհվեց 1993թ. ապրիլի 5-ին: Նրան բաղնջին հայրենի Տող գյուղում՝ Հայրենական մեծ պատերազմում զոհվածների կոթողի մոտ: Նրա հուղարկավորմանը ներկայացել էին «Թեւան» բարեգործական միության նախագահ Իգոր Մարադյանը, ԼԷՀ արտաքին գործերի առաջին նախարար Լեոն Զահնազարյանը եւ Մոնթե Սելբոնյան-Ավոն:

Մոնթե բարձր գնահատելով Վիզենի մարտական ծառայությունները, ասել է. «Վիզենը, որին «Վրեժ» մականունն ենք տվել, իմ առաջին թեւն էր Տողում, այսօր ես թեւարալի եմ: Նա լավ շտաբի պետ էր, իր ջոկատով նրան կարելի էր տեսնել մերք Մարտունիում, մերք Կարմիր շուկայում, մերք Մարտակերտում: Նրա մարտական առաքելությունները միշտ էլ հաղթանակով էին պսակվում: Ես ծնկաչոք խոնարհվում եմ Վիզեն-«Վրեժ» զերեզմանի առջեւ»: [42] Մեր այդ հերոսը իր քաջագործությունների դիմաց Արցախի ինքնապաշտպանության ուժերի հրամանատար Արկադի Տեր-Թադեոսյանից նվեր էր ստացել «Մակարով» մակնիշի ատրճանակ: Թերեւս, Վիզենը հայրենասիրության որակն ստացել է իր պատմության ուսուցիչ հայր Սամվել Գրիգորյանից:

Չարմանալին այն է, որ շտաբի պետ Վիզեն Գրիգորյանն իր հետ ռազմաճակատ էր տանում իր 13-ամյա երկվորյակ որդիներ Արշակին ու Վարդանին, որոնք հոր գոհվելուց հետո դեռ մեկ տարի, մինչեւ վիճադադարը, կովել են՝ վրեժ առնելով թշնամուց: Վարդան եւ Արշակ: Մի՞թե ամեն ինչ չի ասված այդ անուններով, չէ՞ որ նրանք «գորավար» ու «թագավոր» են հիշեցնում մեզ, որ հայր ուսուցիչը կոչվել է նրանց: Այժմ այդ տղաներն իրենց ծննդավայր Տողում են, իրենց հող-հայրենիքում, իրենց հոր «շիրիմի պահպանը»: Եւ ուսուցչուհի մոր՝ Գրետայի եւ ուսանողուհի քույր Ալեմուշայի հուսո ճրագը: Նրանք հեռակա կարգով ավարտել են բուհը:

Վիզեն-Վրեժի պես քաջի մահով մարտադաշտում ընկած նաև նրա պապունց շենի՝ Թաղավարդի գումարտակի հրամանատարի օգնական Բորիս Ֆիզուսյանը եւ հետախուզության ջոկատի պետ Սլավիկ Թամրազյանը, սպա Զահեն Զահրամանյանը: Նրանք երեքն էլ հետմահու կարգեատրված են «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանով: Դեռ մինչեւ Ղարաբաղյան շարժումը, Զահեն Զահրամանյանը ուներ խորհրդային բանակի զինվորական կոչում՝ ավագ լեյտենանտ: Մեր Զարժման առաջին իսկ օրերից նա անդամագրված էր նրան, ստեղծել էր կամավորական ջոկատներ, ֆիդայական խմբեր: Մի խումբ ընկերներով գաղտնի գործունեություն էր ծա-



վաղում՝ կարծես նախապատրաստվելով սպառվելիք մեծ գոյապայքարին: Հաճախակի էր լինում Երեւանում, կապեր հաստատում այնտեղ գործող «Նարաբաղ» կոմիտեի հետ: Շատ տարիներ լինելով Կարմիր շուկայի խորհրդակցության կուսակցության քարտուղարը, որի մեջ ընդգրկված էր նաև իր հայրենի Թաղավարդ գյուղը, Շահենը օգտվում էր հայրենակիցների հարգանքից: Եվ դա նրան մղում էր առավել լուրջ գործունեության՝ իր գյուղի երիտասարդներին Շարժմանը ներգրավելու տեսանկյունով:



Լինելով Կարմիր շուկայի գումարտակի շտաբի պետ, միշտ գեներ ձեռքին էր. միշտ առաջին գծում: Երբ Խաղաղաստից բռնամիտ գեղակոծում էր Կարմիր շուկայի ձորակը, մա իր ջոկատով որոշեց գրավել սարը եւ հանգցնել բռնամու կրակակետը: Զեռնածուխ եղավ այդ օպերացիային եւ մույն օրն ազատագրեց Ղաջարը եւ Խաղաղաստի բարձունքը: Շահենը մասնակցել է Քեղրաջարի, Մարտակերտի, Աղդամի առանձին մարտական գործողություններին: Առանձնապես ակտիվ է եղել նրա մասնակցությունը Ֆիզուլու ազատագրմանը: Այս Շահրամանյանը միշտ առաջին գծում էր եւ երբեք շտաբում հանգիստ չէր մատնում: Երբ մի օր հրամանատարի հետ զննում է դիրքերն ստուգելու, պարզվում է, որ բռնամիտ նկատել է նրանց: Խիզախ սպան առանց իրեն կորցնելու ավտոմատի կրակահերթով անհավասար մարտի մեջ է մտնում: Խրամատում մեռակ ինքն էր՝ գումարտակի հրամանատար Առաջան Բաղասյանը: Այդ պահին բռնամիտ մեռում է մռանկը, որը եւ պայքում է ողիտ Շահենի կողքին: Նա ծանր վիրավորվում է՝ ապրելով հազիվ 2-3 օր: Կարծում է քաջակրթով շտաբի պետի կյանքի թելը՝ սուգ պատճառելով ուսուցչոնի կնոջը, գտնաձայլ ուսուցիչ հորը, իր երկու վտրոններին ու շրջապատի մարդկանց: Ավա՞ղ, գնաց քաջարի գինվորը... գնաց՝ վաղաժամ գերեզման իջած մորը՝ միտուրային ավետելու իր եւ ընկերների հայրենասիրության ճանապարհով ձեռք թևած հաղթանակի լուրը:

Բորիս Ջիվանյանի ցոկատը 1992թ. թուրքական Ղաջար բնակավայրի ազատագրման մասնակցած ջոկատներից էր: Նա մասնակցեց այդ կրակակետը հանգցնելու մարտին, որտեղից հրետակով լուծվում էին Կարմիր շուկայի ենթաշրջանի գյուղերը: Նրա գինվորներից մեկը՝ Դավիթ Բարամյանը, ցած գցեց բռնամու ուղղաթիռը: Այժմ Բուրաստան, Թաղավարդ գյուղերի չորս տասնյակից ավելի զոհերի պանթեոնում պառկած այդ հերոս տղաները յոթը գոհերի անունից, սպարտական ոճով, անցնողներին եւ իրենց այցելողներին ավետում են՝ «Անցորդ, լուր տուր ողջ Արցախին, որ մենք այստեղ պառկած ենք՝ սրբորեն կատարելով մեր պարտքը»:

Կարծում ենք, նրանց նմանների համար այն տարիներին ոգեշունչ էր «Հայրենիքի համար մեռնելու» կոչը, որ բեռնածու էր ողջ Արցախում: «Բայց կա՞ր»

դոյ մի կյանք ավելի փառաբանված, քան այն, որ ժառանգում է գինվորը հայրենիքի համար մեռնելով» (Մուրացյան): [43]

x x x

Արդեն ընդունված կարգ է, որ Արցախ-Նարաբաղի վերաբերյալ գիրք գրողը անպայման հիշի եւ գրի լեզբնդար Մոնթե Մեյրոնյանի (Ավոյի մասին): Հենց եւ էլ չորջանցելով այդ, մի քանի խոսք են ուզում նվիրել շատերի սրտերին մուտ, մեր աչքի լույս ու ապավեն ազգային հերոսին: Ասենք, որ շատ գրիչներ են նրան գրեթե շատ կողմերից է ձեռնվել Մոնթեի ուժն ու խելքը, գինվոր-փիլիսոփայի հնարքն ու փառքը: Բայց այն, ինչ եւ պետի ասեն ու գրեն, ինչ արտի ինքնաբերական արտահայտությունն է: Մոնթե-Ավոյի վերաբերմամբ իմ մեջ հաճախ հարց է ծագում, նրան ո՞րն էր հետ համեմատես, որ հարմար լինի:



Զգիտես հարմար կկա՞ր Աղայանի Տորք Անգեղը, թե՛ մահտեսի Գրիգորը եւ Մարկոս Թաշճյանը, որ Ջեյրուհի հերոսներն էին, թե՛ Աղբյուր Սեյրոբը, Հրայրը, Գ. Չառչը, սեբաստացի Մուրադը, Մեպուհը, Անդրանիկը, որանք Մասունի, Գեղազուկանի, Մուրախի եւ Աղանայի կորիճներն էին: Դիշտ է, նրանք էլ հայագրի հերոսներ են, ազգի պարծանքը, բայց նրանք մի մարի էին, մի գծի վրա, ասենք՝ հայի համար եւ ոչ ուրիշի: Բայց նա՞ Մոնթեին՝ բոլոր ճնշվածների համար: Նրա ազատագրական պայքարի աշխարհագրությունը տարածքային եւ ազգային առումով լայն էր ու քաղաքականա՞ռ: Նա ավելի վաղ արբնացավ բոլոր ճնշվածների պայքարի համար եւ գրեմազանթություն չորեք ազատության համար պայքարողների միջե՛ր՝ սկսած Հյուսիսային Աֆրիկայից, միջին եւ Սերժավոր Արեւելքից, Աֆղանստանից մինչեւ իր մայր երկիրը՝ Հայաստան եւ նրա գողտրիկ անկյունը կազմող Բարսաղը:

Ոչ, այդպիսի դեպքում ընդունված է ասել՝ Վահագնի մնունը: Այո, ուզվի աստվածը ծնեց Ավոյին եւ ծիծեռնակի րետով 1992թ. իջեցրեց Արցախում, սկզբում Շահումյանում, հետո՝ Մարտունիում:

Այսօր, ինչ տարվա հեռավորությունից մտովի գրուցում են թե՛ հետ, Ավո, եւ հարցնում, ինչո՞ւմ եւ մեր կարճատե գրույցը Բարսաղունց (Մարտունու շրջան) գյուղի մերձնատրակտորային պարկում, մի խումբ մարդկանց ներկայությամբ, որ 1992թ. ապրիլին էր՝ Լ.Ղ.Պ.Մ. Մարտունու նոր լիակոր Հ. Հարոյանի եւ ազրոարդի Մարտունու բաժնի պետ Գ. Նասիրյանի հետ եկել էր մեր գյուղի կոլտնտեսությունից տրակտորների շարժիչներ տանելու, որպեսզի վերադնեք ավտոմեքենաների վրա: Եվ մինչ մասնագետները հսկում էին երկու տրակտորների շարժիչները, մեկը գրուցյի մեջ մտանք, ձեռք սեղմեցինք: Առաջինը եւ ձեռք մեկնեցի, քանզի ավագը, տարիքով մեծը, պետք է ձեռք մեկնի, որ նրան հետեւի երիտասարդը: Ի դեպ, այդպես է կարգը նաև տղամարդու եւ կնոջ տեսակցության

ժամանակ, երբ առաջինը ձեռքը մեկնողը կինը պետք է լինի: Մենք այն ժամանակ չգրկախառնվեցինք մուշկապատյի այն կնոջ պես. որ 1993թ. գարնան մի օր գինակից ու լավագույն հրամանատար Աբրիկ Հայրապետյանի (Աբրիկ) տանը գրկել է ձեզ ու ասել. «Մատաղ ընիմ բեզ, Ավո, կըլիսավո շառ տամ, Ավո»: Այդպես էլ պետք էր, որ կինը վարվեր, քանզի Ձեր փառքն ու անունը գեների էր հասել: Այո, մենք գրույցի բռնվեցինք: Ես հարցրի Ձեր որպիսությունը՝ «ինչպե՞ս եք, այ անտեսանելի մարդ» ասելով: Ընդգծեցի, որ «լսել ենք ձեր հերոսությունների մասին»: Դուք ասացիր. «Դեռ պետք է անտեսանելի լինել, շատ ալ երեւալը պետք չէ: Իսկն ասած, ես հերոսություններ դեռ չեմ արել, տեսներ կատացվի»:

Այնուհետև, Դուք ինձանից իմացար, որ ես ուսուցիչ եմ, պատմության ուսուցիչ, ու քննադատվեցիք մեր շրջապատի գյուղերով, նրանց պատմությամբ: Ես ձեզ համառոտակի ներկայացրի դրանց հնամենի պատմությունը:

Դուք հետաքրքրվեցիք մեր շրջապատի գյուղերով, նրանց պատմությամբ: Ես ձեզ համառոտակի ներկայացրի դրանց հնամենի պատմությունը:

Ի միջայլոց, երբ երկարեց մեր գրույցը, մեր ընկերներից Համլետը Ձեզ առաջարկեց նստել մի տեղ: Դուք շնորհակալություն հայտնեցիք, բայց եւ ասացիք. «Ջինվորին ալ չի բռնի նստելը»՝ դրանով փակելով մեր քաղաքավարության մեստի դուռը: Ես ձեզ նկարագրեցի Ամարասի ձորակի հին պատմությունը, Բվարկեցի 4-5-րդ դարերի նրա քանակալարերը՝ Զարահունջը, Բրիտիսը, Բոզիչը, Բարավենը եւ Արամձակը (դրանք այսօրվա Զարահունջի, Կոլտոզաշեն-Մամնայի, Ծովատեղ-Խերիսանի, Քերթի եւ Մոս-Մանկալաշենի տեղանքներում գտնված գյուղերն էին): Սկսեցի պատմել Ամարասի վանքի, նրա լույս աշխարհ գալու, ում կողմից կառուցված լինելու եւ այնտեղի հին դպրոցի մասին, որ ստեղծել էր Մ. Մաշտոցը: Դուք ծիծաղելով ունկնդրեցիք իմ պատմածը՝ ասելով. «Ես ալ եղունք մի փոքր գիղնամ»: Իսկն ասած, դեռ չավարտած մեր այդ քաղցր գրույցը, լսեցինք լիագոր Հարոյանի կոշտ ձայնը. «Ամեն ինչ ավարտված է, դե գնացի՞նք», եւ կոլտնտեսության նախագահ Թ. Ալավերդյանի կողմից ճաշելու մասին հրավերը ի կատար չաժվեց: Բայց պատահեց զավեշտականը, չիմանալով, որ մեր հյուրերը կլսեն, մերոնցից մեկը, կարծեմ Շուրան, ոչ շատ լսելի ձայնով արտաբերեց՝ «Տարան է՛, մեր կուճի գյուղի մոտորները տարան»: Սակայն, ի գարմանս մեզ՝ Դուք, սիրելի Ավո, լսելով այդ, բացականչեցիք. «Հաղթանակից հետո երկուսին դեղ դասը կատանար եւ դեռ ուրիշ բաներ ար»: Բայց ավա՛ղ, Ավոն ողջ չէ, չկան եւ խոստացած մոտորներն էլ եւ ուրիշ բաներն էլ ու դեռ ավելին՝ չկան նաեւ Զարահունջի քոկի կողմից գրավված, Յաղավանդից բաժին ստացած 200 հեկտար հողերը, որ չպիտես որ յաղու բաժին էին դարձել: Սեր տարածքում Ավոն 2-րդ անգամ էլ եղավ, այդ անգամ՝ հարեւան Քերթ գյուղում՝ Քերթի վաշտի զինվորների հետ գրույց ունենալու առումով: Դա 1993թ. ապրիլի 18-ին էր: Նախապես Ավոն տեղյակ էր 1993թ. ապրիլի 16-ին Ներքին Դիվանդարում տեղի ունեցած սոսկումնալի դեպքին, երբ Մանկալաշենի գումարտակի 7 զինվորները գոհվել էին քչանուն նոճականետից, բայց չպիտեր, որ գոհվածներից մեկը հենց այդ գյուղի տղաներից էր՝ Մանվել Պետրոսյանը: Գյուղում լսելով այդ մասին, նա պահանջեց, որ իրեն ուղեկցեն գոհվածի տունը: Եղավ Մանվելեցն տանը, ցավակցեց ու հուսադրեց ծնողներին եւ կնոջը ու ձեռքի բեթեւ հայտնով շույեց գոհվածի ուրբերին:

Մոնթեի կարճատեւ կյանքը, համարձակվում եմ բաժանել 3 մասի՝ ընտա-

նիքի բերումով քափառական մանկություն, որ 12 տարեկանում հասավ Ֆրանսիա, վաղ գիտակցական կյանք, խորունկ խելքի ու գիտության դրսևույված պատանեկություն եւ անավարտ նվիրված հայրենասիրություն:

Ասում ենք՝ խելքի, ուսման եւ գիտության պատանեկություն ու վարմամբ թե ինչպիսի՞ տաղանդ էր պետք մարդուն, որ կարողանար երեք տարում ավարտել Կալիֆորնիայի Բերկլիի համալսարանը եւ 20 տարեկանում ստանար հին ասիական պատմության եւ հնագիտության գծով վկայական, դեռ ուսանող եղած տարիներին ռեֆերատներ գրել ու դոկտորականի գիտական թեզ հայցել Օքսֆորդի համալսարանում, որին նա հասավ: Ասում ենք՝ նվիրված հայրենասեր էր, բայց եւ չենք վարձանում, որ դա նրա մոտ վաղուց էր սկսված, ինչպես կասեն՝ մոր կաթի հետ, որ 22 տարեկանում հասցրել էր դառնալ ԱՄԱԼԱ-ի եւ ՀԱԳՀԲ-ի (Հայաստանի ազատագրության հայ գաղտնի բանակ) անդամ: Եվ պատահական է, արդոք, որ Մոնթեի եղբայր Մարգարը նրա կյանքի վերաբերյալ ասել է, թե՛ «Մոնթե չիտակ նետեց իր կյանքի գնդակը»:

Մոնթեն գնահատվել է շատերի կողմից, բայց այն, ինչ ասել է նրա կին Սեդան, վեր է ամեն գնահատումից: «Մոնթե ամենից առաջ իր ժողովրդին է, որի իրավունքները նա պաշտպանել է ամենուր, որտեղ փորձել են ոտնահարել: Հենց դրա համար էր նա եկել Արցախ: Եթե մի օր մեկ այլ տեղ գնալու հարկ լիներ, նա կգնար առանց երկմտանքի: Ու գնացել է»:

Բայց որպեսզի միայն հարազատ եղբոր կամ կնոջ գնահատականով չավարտենք գովքն այդ հերոսի, բերեմ նաեւ նրա հերոսական կյանքի այլ գնահատումներ, որ ասված են մեր պետական, քաղաքական, զինվորական գործիչների ու մամուլի աշխատողների կողմից՝ նրա գոհվելու առթիվ, 1993թ. հունիսի 12-ին:

- Ազգն է կորցրել ամենավերջինը, որի նմանը կարող էր ծնվել 50 կամ 100 տարին մեկ անգամ (ԼՂՀ ՊՊԿ նախագահ Ռոբերտ Քոչարյան):
- Ես իմ կյանքում չեմ հանդիպել որեւէ մեկին, որն այնքան նվիրված լինի գաղափարին (Սերժ Սարգսյան՝ ՀՀ պաշտպանության նախարար):
- Ավոն, գոնե ինձ հանդիպած մարդկանցից ամենամարդն էր՝ իր բյուրեղյա մաքրության, հոգու պարզության ու անաղաղության, հայրենասիրության (Վարդգես Բաղդյան՝ հեռուստալրագրող):
- Մոնթեի ղեկավարած մարտերը համարյա միշտ էլ պսակվել են հաջողությամբ (Սեյրան Օհանյան՝ ԼՂՀ ՊԲ շտաբի պետ):
- Մոնթեի պես սղեքը շատ են գոհվել, բայց չպիտի մոռանալ, որ նա ուրիշ տեղից, հեռու երկրից էր եւ կռվում էր Արցախի ազատագրության համար (Քերոլայն Քոքս):
- Ավոն վերին աստիճանի ազնիվ մարդ էր եւ նվիրված հայ ժողովրդի ազատագրման վեհ գործին (Մովսես Հակոբյան):
- Ավոյի կորուստը ես համարում եմ ոչ միայն զինվորի կամ փիլիսոփայի կորուստ, նա յուրաքանչյուր մարդ էր (Ջորջ Բալայան՝ գրող), (մեջբերումները՝ Վարդգես Բաղդյանի «Ֆենոմեն» գրքից): [44]

Բայց ասիա թե ինչ է իր օրագրում գրատել Մանկալաշենի գումարտակի հրամանատարի քաղաքական գծով տեղակալ, զինվոր-բանաստեղծ Կոմիտաս Հա-

1. Կոմիտաս Գանիբեկյան. «Արգալիսը չառնձած նմույս», Երևան, 2001 թ., էջ 45:

կորյանը Ավոյի մասին.

«Ավո: Նա ոչ լեզենդ էր, ոչ էլ առասպել: Նա մարդ էր, հողմն: Ես ունեմ քաղցր մի հիշողություն, որը վերապրելուց փառավորվում է հոգիս: 1992-ի նոյեմբերի 8-ն էր: Այդ օրը ինձ բախտ վիճակվեց նրա հետ նետվել մարտի, եւ այդ մարտը դաս կդառնա ինձ համար, որի ամբողջ տեսարանը կնքված է իմ հիշողության էկրանին: Մնարտադաշտում նա ոգի էր, առյուծ: Ծարտաբի գունապուտակը գրավեց Ուրյան սարը, մենք էլ բարձրացանք Խազազ... թշնամու կրակը ընդհատել էր հրամանատար Արմենի կյանքը անտառում... «Դուք ինձ այն զինվոր պիտի ըլլաք».- հաճախ էր ասում՝ երեւի ինքն էլ չքմբռնելով, որ իր նման զինվոր լինելու համար հարկավոր է առաջին հերթին իր նման մարդ լինել»: [45]

Բանաստեղծի ասածը ճշմարտություն է՝ նրանից շատ բան սովորեցին զինվորները եւ դարձան նրա սիրած կովողները: Այստեղից էլ, պատահական չէ Ավոյի կնոջ Սեդայի ասածը, երբ եկել էր «տանելու Ավոյին»:

«Սա չի նշանակեր Ավոյին ինչպես պիտի տանինք, իր հոգին միշտ հոս պիտի մնա, չի նշանակեր, որ տղաները, իր սիրած կովողները չեն կրնա իր գործը շարունակել»:

Ավոն գաղափարա-քաղաքական մեծ հասունություն ուներ, լավ էր գտնադրում պետությունների հարաբերությունները եւ նրանց վերաբերմունքը Արցախյան շարժմանը: Նա, ճիշտ է, փառաբանում է Ռուսաստանի օգնությունը Արցախին, բայց եւ պոուշավոր էր. «Ռուսը, ռուսը պիտի թույլ տաս», - ասում էր նա որեւէ համարձակ քայլ անելիս: Ար մեծ գաղափարի մարդ էր, երեսուն էր նրանից, թե ինչու Մարտունին թողած, կովում էր Բելքաջար-Քարվաճառը ազատագրելու համար:

Հեռուստայրագրողի այդ հարցին նա պատասխանել է. «Բելքաջարի գրավումը, հոգեւոր, քաղաքական, թագմական, ամեն ձեւով շատ-կարեւոր է այս հաղթանակը տանել: Ամեն գյուղում հայկական եկեղեցի կա, ասիկա հայկական հողում: Եվ չսփուսանց կարեւոր է 3 հազար քառ. կմ միացնել: Արցախի պատմության համար էլ որոշիչ դեր կխաղա այս շրջանը գրավելը»: [46]

Որ Ավոն, իրոք, շատ լավ շրջապատ էր ստեղծել քաղաքացիական եւ զինվորական բնակչության մեջ, վանել նախկին վախը, հաջողությունների լավ բանալի էր հաղթանակի համար: Նրա Կոմիտաս, Սարգիս, Գեորգ, Նարնեմ, Ալիք, Մարտիրոս, Հովիկ եւ մյուսներից կազմված համաստեղությունը միշտ վառ էր պահում Մոնթեի աստղը: Բայց ավա՜ղ, այդ համաստեղությանը տխուր, սեւով երիզված օրեր բաժին ընկան. ազգը կորցրեց նրանց՝ բացառությամբ մի երկու հոգու, որոնցից Գեորգը, որ հիմա ողջ է, ապրում է Ամիրանլար գյուղում:

Իսկ այն քաղաքացիական տունը, Ֆալերանց տունը, որ հաճախ էր լինում մեր հերոսը, իր քաղաքավարության պատասխանն էր ճառագում եւ բարի հուշեր բողնում ընտանիքի անդամների վրա, որոնցից տան աղջիկ Ֆրյուան (Ֆալերի քույրը) իր հիշողություններն է հանձնել «Ամարաս» թերթին: Բայց, որ ամենից ճիշտ իր մասին արտահայտել է Մոնթե Սեյրոնյան-Ավոն՝ դա փաստ է եւ ներառում է ներքոհիշյալ տողերը. «Արցախը իմ հայրենիքիս կեն մասն է»:

Գնաց, նահատակվեց, ավաղ, Կալիֆոռնիայի Անհանգի Վիսեյիա ավանում ծնված, Ֆրանսիայում ուժ ու կորով առած, յոթ լեզուների գիտակ, բազմարիվ եր-

կրների ազգային-ազատագրական պայքարներում թրժված, Արցախյան շարժման քուրայի նյութ դարձած լեզենդար մարդը՝ Մոնթե Սեյրոնյան-Ավոն՝ ընդամենը 36 տարեկանում, թողնելով ազգային հերոսի վաստակ ու բարի հիշատակ:

Հունական դիցաբանության մեջ ասված է, որ անդրշիրիմյան աշխարհում մարդուն ընդունում, քննում ու պահպանում են 3 աստվածներ՝ Թանատոսը, Տարտարոսը եւ Հադեսը: Ավոյի առումով՝ նրա մարմինն ու հոգին ինչպիսի յստությամբ էլ որ ստուգվելու լինի, արժանի է հավիտենականության եւ ո՛չ քավարանի. այլ՝ դրախտի, երեք աստվածների գուրգուրանքին ու ափսոսանքին: Այժմ լսենք, թե մարտունաբնակ Էոնեստ Եսայամ բանաստեղծը ինչ է ասում իր «Ձուրավար Ավոն» պոեմի վերջին տողերում. [47]

*Քեզ հետ մենք այս ողջ ամենին հասանք,  
Հույս, հավատ ու սեր միշտ ամբարեղով:  
Եվ բո անունն ու ասքը դարեդար  
Թող փառաբանվեն երգերում ազգի,  
Որ շառնենք նորից նեղը մահադուռն,  
Որ շառնենք նորից կական ու կակիծ:  
Հունչ պահեն ասքիդ հուշը փառավոր,  
Համոզված,  
Որ թե նորից պետք եղավ,  
Առասպելների պարսից իջնելով  
Կհայտնվի ինքը՝ ՁՈՐԱՎԱՐ ԱՎՈՆ:*

x x x

Արցախի ազատագրական պայքարի մոմենտիկներից էր նաեւ լեզենդար Ավոյին Մարտունիում նախորդած եւ նրա ժամանակակիցներից մեկը՝ Վլադիմիր Խաչատրյանը՝ Կոմիտասը, ինչպես նրան կոչում էին մարտունեցիները: Խաչատ-



րյան-Կոմիտասը մինչ Ավոյի Մարտունի հանելը, իր վրա էր վերցրել քաղաքին հալածող բուրբ-ազերիների դեմ պայքարի ողջ պատասխանատվությունը: Դեռ

1988-89, 90 եւ 91 թվականներին նա քաղաքական քարուղչություն էր տանում ժողովրդի մեջ, կատարում Մարտունու շրջանի գաղափարական առաջնորդներ Գրիգոր Ուլուբաբյանի եւ իրար հաջորդած շրջկոմի առաջին քարտուղարներ Վաչագան Գրիգորյանի ու Օլեգ Եսայանի հանձնարարությունները: Նա չխնայեց անգամ իր եւ իր հոր ու եղբայր Վազգենի անհատական ավտոմեքենաները՝ ընդհանուրին ծառայեցնելու գործում: Նրանցով նա գեներ էր ներկրում, տեղից-տեղ տեղափոխում մարդկանց, նույնիսկ առանձին նշանակության բեռներ հասցնում հարեւան Հաղորտ: Նա վերելից ստացվող գեներ ու զինամթերք էր առաքում գյուղերին ու «տաք կետերին», ինչպես մի անգամ հանրամասնաչ Բորիս Դադանյանի Մարտունի հասցրած նոնականետների մի խմբաքանակ ներկրեց եւ զինեց տղաներին: Կոմիտարը կապեր է ունեցել Հարսիման ղեկավարներ Համբարում Գրիգորյանի եւ Ռոյես Աղաջանյանի, ընդհատակում գործող շտաբի մարդկանց հետ: Վլադիմիր Խաչատրյանը վրիժառուի դեր ուներ: Նա Մարտունիով անցնող բշմամու ավտոմեքենաների ջարդն էր կազմակերպում, ոչնչացնում, ականներով ու նոնակներով պայթեցնում իշմամու տեխնիկան, որսում կենդանի բշմամիներ: Նա կապ էր պաշտպանում Մարտունիում տեղակայված ՆԳՆ ստորաբաժանումների հայամենտ հրամանատարների հետ, կազմակերպում նրանց գեներների «անհետանալը»:

Հանձին նրա Մարտունու պաշտպանական կամավոր խորհրդի ղեկավարներն ունեին վստահելի կատարող, մի մեծ մարդ: Էր նվիրվածությամբ Կոմիտարը վարակել էր իր ողջ ընտանիքին ու հարսակատներին, տոհմակիցներին, ինչպես ասում են, կովի դաշտ էր հանել իր «ընտանեկան գունդը»:

Ավաղ, գոհվեցին նրա երկու որդիները, ավագ տղա Ռոբիլը՝ 1992թ. փետրվարի 23-ին Վերին Վեյսալի թուրքական գյուղն ազատագրելիս, իսկ փոքրը՝ Հրայրը, որի դեռ 12 տարեկանը նոր էր լրացել՝ 1992թ. դեկտեմբերի 31-ին, ինքնաշեն գեները փորձարկելիս: Ողջ չմնաց նաեւ ինքը՝ մարտունեցիների սիրելի Կոմիտարը, որը գոհվեց 1992թ. դեկտեմբերի 6-ին, թուրքական Մարզիլի բնակավայրի համար մղված մարտում: Ֆիզիկապես չկար այլևս բանակի հետախուզության հրաշալի պետը, բայց նրա հրեղեն ոգին թեւավորում էր իր մարտիկներին՝ կոչելով նոր սխրանքների: Ի դեպ, նրա փոքր տղայի մասին Մարտունիում լեզենդներ են հյուսվել: Պատմում են, թե ինչպես է վիրավորանքով մերժել իրենց տունը ներխուժած մի քանի բշմանական սպաների, որոնք ցանկացել են տղային «ընծա մագան» նվիրելով, իմանալ գեների թաքստոցը: Այդ անշափահաս զինվոր-մարտիկը Մարտունու պաշտպանության այն ժամանակվա ղեկավար, գեղապետ Հմայակ Հարոյանի հետ էր շրջում պաշտպանական կետերը՝ մերթ հրասայլի վրա, մերթ՝ ավտոմեքենայի:

Վտղոյա Խաչատրյանը Մարտունու պաշտպանության ոգին էր, մի երկրորդ Ավո, որի համար էլ բոլորը սիրում եւ անառակելիորեն կատարում էին նրա հրամանները: Այդ Կոմիտարի անունը հավերժացել է ոչ միայն հետմահու նրան «Մարտական խաչ»-ի 1-ին աստիճան շնորհելով, այլեւ Մարտունու կենտրոնական փողոցներից մեկը, որը տարածքային առումով կիսում է Մարտունին, նրա անունով կոչելով:

Այստեղ ես մի փոքր ակնարկեցի Մարտունու շրջկոմի իրար հաջորդած

քարտուղարներ Վաչագան Գրիգորյանին եւ Օլեգ Եսայանին, որոնք Մարտունու շրջանը պաշտպանողների ավանգարդում էին: Որոշ առիթներով արդեն խոսվել է Վ. Գրիգորյանի խիզախումների մասին, բայց Օլեգ Եսայանի առիթով ուզում են ասել, որ այս երիտասարդ քարտուղարը միշտ ոտքի վրա էր: Նրան կարելի էր տեսնել մերթ Ամարասի, մերթ՝ Ճարտարի, մերթ էլ Բերդաշենի պաշտպանական կետերում: Նա ամեն ինչ անում էր, որ ամուր լինի շրջանի պաշտպանությունը, օգնում էր նյութական միջոցներով, կազմակերպում, որ կոլտնտեսությունները սնունդ մատակարարեն պաշտպաններին: Հետագայում, երբ Օլեգ Եսայիչը հասավ հանրապետության կառավարության վարչապետի պաշտոնին, Շուշիի գրոհի ժամանակ զինվորական հագուստով կանգնած էր Կոմոնդոսի կողքին: Դա մայիսի 8-ի լույս գիշերն էր:

x x x

Ասում ենք՝ Մոնթե Մելքոնյան (Ավո) զորահրամանատարը լավ շրջապատ էր ստեղծել եւ ռազմական ամուր հիմքեր ուներ Մարտունիում: Նրա համար, բերես, լավ խորհուրդ ուներ վրաց բանաստեղծ Շոթա Ռուբավելու ասածն այն մասին, թե՛ «Ով սրտակից ընկեր չունի, նա հենց ինքն է իր բշմամի»: Ավոն, իրոք, լավ, սրտակից ու զինակից ընկերներ ուներ, որոնցից էր նաեւ մարտունաբնակ Կոմիտաս Ավանեսյանը: Երբ 1992թ. փետրվարի սկզբներին Ավոն եկավ Մարտունի, իրեն հատուկ բնախնդրությամբ, որի մեջ առանձնացնում էր մաքուր վարքը, ակնվորությունը եւ ճշմարտությունը, ընտրեց մարդկանց, որոնց մեջ առանձնացավ նաեւ Կոմիտասը:

Կոմիտասը իր ազնիվ ու նվիրված բնավորությամբ օգնեց Ավոյին՝ ճիշտ կողմնորոշվելու անձանոթ շրջապատում, ճանաչելու այստեղի մարդկանց: Այո, օգնեց, որ Ավոն արագ բաժանվի երկերեսամիներից ու ստորաբաղձներից եւ կարողանա հենվել վստահելի մարդկանց վրա: «Եթե չլինեք Կոմիտասը, ես կմնանվեի թեւատած արագիլի», - ասում էր Ավոն Կոմիտասի մասին: **Պատմաբան** մեր լեզենդար հերոսի ծառայողական մեքենայի մեքենավար-վարորդը, Կոմիտասը սովորական ավտովարորդ չէր միայն նրա համար, այլեւ լավ զինվոր ու մարտական ընկեր, մի հուսա ճրագ:



Նա շատ ղեկավար տալով 1993թ. հունիսի 12-ը՝ Ավոյի գոհվելու օրը: Մուգը իր մեջ ամբարած, Կոմիտասը Ավոյից հետո դեռ երեք տարի դիրքերում էր՝ այս անգամ որպես գնդի հետախուզության պետ: Նրա համար դեռ պատերազմը վերջացած չէր եւ իր մարտական ծառայությունները կատարելիս էլ հենց՝ 1996թ. գոհվեց:

Կոմիտաս զինվոր-հրամանատարի քաղաքացիական դիրքը բարձր պետք է գնահատել այն տեսանկյունից, որ նա չքնեց Ավոյի շվարում, չմեծամտացավ ու հանգիստ անկյուն չբաշխեց, չջերմացավ իր կատարած մեծ գործերով միայն, այլ մնաց շարքում: Չգտնելով միջեւ վերջ ի կատար անել իր մեծ հրամանատարից

ստացած մարտական փորձն ու իմաստությունը, Կոմիտաս հրամանատարը վրեժի էր ելել թշնամու դեմ: Ջոհանեղանին դնելով Կոմիտասի երիտասարդական կյանքը, մենք զրկվեցինք ոչ միայն սովորական մարտական զինվորից, այլև ապագա խոստումնալից մտավորականից, որը, որպես իրավաբան-մասնագետ, ռազմական ճշտապահությամբ կօգներ՝ կերտելու մեր իրավական պետությունը: Այո, իրոք, մեծություն էր Կոմիտասը, որ կարողանում էր կանխագգալ ու կանխագուշակել քաջարի Ավոյի պլանները, կռահել նրա մտադրությունները, բայց եւ հպարտանալ նրա խիզախումներով ու համարձակությամբ, կարողանալ տանել վիշտն ու կարեկցանքը, դիմանալ հրամանատարի ուրախ թե տխուր հայացքներին եւ այդ ամենին համաչափ քայլեր ձեռնարկել:

Այդպիսին էր մեր նորեկուկ սպան: Օ՞, իրոք, ինչքա՞ն ծանր է տանել մեզն գինվորի կորուստը. չէ՞ որ նա Ավոյի կենդանի հիշատակն էր, նրա հետնորդը եւ հուշակիթը, նրա հուշամատյանը, որի հիշողություններով կարելի էր կյանքը մի նոր գիրք գրել նրա մասին եւ գուցե թե այդ գիրքն էլ վերնագրվեր՝ «Ջինվոր-վարորդի հիշողությունները Ավոյի մասին»:

x x x

Հարաբարի Մարտունին հպարտ է նաեւ շատ այլ հետոններով, որոնցից է նաեւ Անդրեյ Վիլյամի Ալավերդյան սակրավորը: Մարտունի քաղաքի բոլոր հասուն մարդիկ լավ էին ճանաչում համարադաշպի Վիլյամ Ալավերդյան-հաշվապահի միմուճար այդ տղային:

Ճանաչում էին, ոչ միայն նրա համար, որ 30 տարեկան երիտասարդը Մարտունու շրջգործկոմում պաշտոններ էր վարել, եղել որպես անչափահասների եւ միջգորակոչային տարիքի պատանիների դաստիարակության գծով տեսուչ, այլև որպես խոնարհ, մարդանոտ, ընկերասեր, կենսախիճ ու միշտ ծիծաղը երեսին մի երիտասարդ, որ պատրաստ էր անմուռն կատարել դիմացինի ցանկացած պահանջ: Դա մի անսովոր քնավորություն է, որ, ցավոք, շատերի մոտ բացակայում է եւ այսօր «մոդայիկ» չէ: Ճանաչում էին, որ խորհրդային բանակում սակրավորի մեծ փորձ կուտակած այդ դասակի հրամանատարը անկուռ մարտիկ էր, որ ամուր կանգնեց Մարտունի քաղաքի եւ Ամարասի հովտի պաշտպանության դիրքերում:



Լինելով ակամապատման եւ ակամազերծման անվախ մասնագետ, նա ակամապատմում, կամ անհրաժեշտության դեպքում, ակամազերծում էր պաշտպանական շրջանները: Քաջ հրամանատարի ծառայությունների աշխարհագրությունը շատ էր ընդարձակ: Նրա նվիրվածությունը սահման չէր ճանաչում, որն արտահայտվեց նրանում, որ նույնիսկ ընկերոջը փոխարինելու է գնում վտանգավոր տեղամասը եւ գոհվում: Բայց, ավա՞ղ, 1994թ. ապրիլի 13-ը եղավ նրա մարտական ծառայության վերջին օրը: Հանգավ տան այդ մեծ ճրագը, որի ճառագած երկու փոքրիկները, որդեկորոյս ծնողներ Վիլյամն ու Լաուրան եւ վ-

տաքեկ երիտասարդ ու սքանչելի կին Իրան ծանրությամբ, բայց եւ հպարտորեն են տանում այդ խորունկ վիշտը:

x x x

Արցախում ոգեշունչ են նաեւ մեր կանանց սխրանքները: Մեր արդար պայքարի կառքին են լծված մեր մայրերը, մեր բույրերն ու աղջիկները: Նրանցից շատերը մի-մի այծեմնիկներ, գոհարներ ու գայաններ են: Արցախյան պայքարի ներկա պահը վկա եղավ գեղեցիկ սեռի շատ անվեհերների:

Ընդրգված լինելով, սկզբում հայդուկային, այնուհետեւ՝ ինքնապաշտպանության ու երկրապահ ջոկատներում, մեր աղջիկներից Լեւոն ու Ժամնան, Նուրնն ու Հասմիկը, Գայանեն, Մարգարիտը եւ այլոք ճակատային կռիվներում հրաշքներ գործեցին: Ոմանք գերության մեջ էլ անհողողոզ գտնվեցին: Դեռ այսօր էլ նրանցից Ջեմման Ն գործաճախի գումարտակներից մեկի հրամանատարն է, իսկ Նազիկը՝ 5-րդ բրիգադի հրամանատարի՝ թիկունքի գծով տեղակալը:

Ջարմանում ես՝ հոգու եւ ոգու ի՞նչ կատարելություն պետք է ունենա մի դերասան կին, որ կարողանա համատեղել ազգի համար պայքարն իր դերասանական նուրբ արվեստի հետ, որպիսին կատարում էր Ժամնա Գալստյան գինվոր քաղաքացին: Նա այժմ էլ քաղաքական գործիչ է, ԼՂՀ նախագահի խորհրդատու: Լաւրապետու ոգու մեջ անմոռաց կմնան քարինտակցի գեղջուկուհիները, որոնք գինք, սննդամթերք եւ ջուր էին հասցնում, ռազմամթերք տեղափոխում փառապանմ ճակատամարտերի զինվորներին:

Իսկ զագլիկցի Լյուբա Խաչատրյանը՝ «ժայռ»-ի անդամը, իսկ հաբերքցի «ամապոնուհինե՞րը» մի՞ թե կմոռացվեն: Նրանք կփառարանվեն պատմաբանի փառունակ գրչով՝ ի տես ապագայի:

Կին ազատամարտիկների քաջագործությունների վերաբերյալ հուզիչ պատմություններ շատ կան: Դրանցից մեկը Մարտակերտի շրջանի Ղազանչի գյուղի պաշտպանության ժամանակ Կարինե Դանիելյանի ցուցաբերած խիզախության մասին է: Նա լրագրող Էմմա Բալայանի գրչով այնպես է ներկայացված, որ նիհայնուր ես ապրում այդ աղջկա նկատմամբ եւ ցավ ու մրմուռ՝ նրա ստացած բազմաթիվ վերքերի համար (գլխից, ձեռքից, 2 ոտքից, 18 բեկոր մարմնի մեջ): Կարինեն Ղազանչի գյուղի ծայրամասում դիպուկ կրակոցով սպանելով աղբրեջանցի մի քանի զինվորների, գերեց 6 հոգու: Մեր տղաները գերիներին ասացին. «Հանգատացե՛ք, Ձեր բախտը թերել է, նա պարզապես կին չէ, նա մեր սուպեր-գրոհայինն է»:

Իսկ ահա թե ակամատեսներն ինչ են պատմում հաբերքցի կանանց ղեկավար, ժամապահ, հետախույզ Սիրանույշ Առուշանյանի մասին: Նա 1993թ. փետրվարի 20-ին մասնակցել է հայրենի Հաբերքի ազատագրմանը: Ակտիվ մասնակցություն է ցուցաբերել Չլղոսնի, Կիչանի, Մեհմանայի, Գետավանի, Հարգոների, Մաղավուլի, Ումուլբուլի, Ջարգախաչի կռիվներին: Սիրանույշը «Խալսատոյի» (Արկաղիայի) եւ Միրաժի (Ռաֆայելի) ջոկատների զինվոր էր:

Դրանից դեռ տարիներ առաջ, երբ Հաբերքում խել էն 44 զինվորների գնդն ու գրսհատեխնիկան, ոռոսական բանակն էլ շրջապատել էր գյուղը, Սիրանույշ-



շը «անտառի տղաների» եւ «գյուղի տղաների» կտրված կապը վերականգնելու համար էլը առաջը գցած, գնում է ռուսների միջով՝ պատճառաբանելով, թե հայ է տանում սարը: Նա վերականգնում է կապը: Նա հաճախ էր ասում. «Ես փոքրուց զենք եմ սիրել, ես առաջինը պետք է գնամ կռվի, որովհետեւ տարիքով մեծ եմ»: [48]

Բայց այն, ինչ վերաբերում է կանանց վաշտի հերոսներին, նրանց արած-թողածին, վեր է շատ պատկերացումներից: Կանանց վաշտը, որը գործում էր Շուշիի 5-րդ գումարտակում, մարտական ծառայություններն անցել է Լաչինի գյուղերի ազատագրման ժամանակ: Նրանք 24-ն էին, բայց շատերը զոհվեցին եւ մնացին 9 հոգի՝ Արեգա Սարգսյան, Կարինե Դանիելյան, Անահիտ Պետրոսյան, Մարգարիտա Սարգսյան, Եվզենյա Առտամյան, Վարդուհի Գետրգյան, Անահիտ Թամրազյան, Գայանե Առտամյան եւ Մարգարիտա Թառանյան: Բայց ահա առավել մեծ եւ խոսուն են կին բժիշկների եւ բազմաթիվ գթության քույրերի ծառայությունները ռազմաճակատային գծում, զինվորական ստորաբաժանումների բժշկական կետերում: Նրանցից շատ-շատերի շարքում եւ չեմ կարող չտեսնել բժշկուհի Իրինա Գրիգորյանին, որը տանը բողնելով իր տարիքով մորը՝ երկու փոքրիկ երեխաների հետ, մեկնել է ռազմաճակատային գիծ՝ Մարտակերտ-Քելբաջար: Այստեղ հատկանշականն այն է, որ Օմարի լեռնանցքի տարածքում էր կռվում նրա եղբայր, բանակի սպա Գագիկ Գրիգորյանը: Նրանք Մարտունու շրջանի Մոս գյուղից են, որոնք մեծացել են առանց հոր՝ մոր խնամքի տակ: Գագիկի մասին մենք դեռ խոսք կասենք: Իսկ կմոռացվե՞ն, արդյոք, ստեփանակերտցի բազում մայրերի խրատները խուճապահարվածներին: Նրանցից Անգին Գրիգորյանի «իմ ընտանիքը՝ ամուսինս, տղաս, սկեսուրս, այստեղից, թեկուզ ժամանակավոր՝ տեղափոխվելու միտք չունեն, մենք այս հողից ենք բուսել» բառերը որքա՞ն արտապնդող են: Մեկ ուրիշ կնոջ. «Գնում են, շատերն են գնում, բայց ես դատապարտում եմ նրանց, ովքեր տունուտեղով, ունեցվածքով են գնում: Ես ամորանք եմ ուղղում նրանց, ովքեր մոռանում են անգամ հարազատների գերեզմանները» մտքերը դասալիքներին ինչքա՞ն դատապարտող են:



«Ես համոզված եմ, որ մեր ինքնապաշտպանության ուժերը թույլ չեն տա, որ վտանգավոր լինի մեր թոռնիկների համար» գաղափարը, որ արտահայտել է ստեփանակերտցի տարեց մի կին, հուսադրող է: Չորրորդը՝ «Ես կոչ եմ անում տոկալ, դիմանալ թշնամու ճնշմանը: Համոզված եմ, որ դարաբաղցիները կդիմանան բոլոր փորձություններին եւ հաղթանակով դուրս կգան»՝ հավատամքի մեծ խոստում ունի: [49] Իսկ ահա հայաստանաբնակ մայրերից ոմանք, որոնց տղա-

ները զոհվել են պատերազմում, ինչպիսի՞ կրակոտ բառեր են նվիրում եւ հպարտության զգացումով խոսում իրենց զոհված որդիների մասին:

«Մեր զոհված զավակների մայրերը ուժեղ են եւ նվաճող չեն, հպարտ են եւ կորովի, որ աճեցրել են այդպիսի զավակներ»։ Հետեւաբար, մեր տարած հաղթանակների կեսը մայրերին է պատկանում:

«Ամեն ինչ տվեցի հաղթանակի համար՝ խոսքս՝ փետրվարյան եւ հետագա ցույցերին, երեք զավակների հայր տղայիս կյանքը, այդ հիմքի վրա անդամալույծ դարձած, Հայրենական պատերազմի վետերան ամուսնուս, որ մահացավ՝ չդիմանալով այդ մեծ վշտին, եւ փոքր տղայիս՝ վիրավոր վիճակը»,- ասում է զոհված ազատամարտիկ Սանվել Պետրոսյանի մայր Շողերը: Ի դեպ, Հայրենական պատերազմին կուլ գնացած Գուրգեն Լալայանի (որը Մարտունու շրջանի Քարահունջ գյուղից է) երեք աղջիկներն էլ Արցախյան պատերազմում նույն բախտակիցները դարձան. Շողերը զոհասեղանին դրեց Սանվելի կյանքը, Անահիտը՝ Արթուրինը, իսկ Ծաղիկը՝ Մերուժանինը: Դե հիմա լսեք, թե աղջիկների գումարտակից Ռիտա Տերտերյանը սրտի ինչ խոսքերով է արտահայտել իր հայրենասիրությունը. «Ինձ թվում է՝ եթե ես հեռանամ՝ Ղարաբաղից, Ղարաբաղը պիտի փլվի»:

Մեկ այլ պարագայում նա ասել է. «Յուրաքանչյուր մայրիկ հայոց այբուբենի հետ միասին իր երեխաներին նաեւ զենքի «այբուբեն»-ը պետք է սովորեցնի»։ [50]

Իսկ ինչպե՞ս չգնահատես կիչանցի (Մարտակերտի շրջան) ուսուցչուհի Ալիսայի վարքը, որ գյուղի ահավոր վիճակը հասցնելով «Խորհրդային Ղարաբաղ»-ի խմբագրություն, բարձրագույն հայտարարել է. «Կմեռնեմ, բայց չեմ բողնի գյուղը»։ [51]

Ասկերանի շրջանում շատերն են ճանաչում սարդարաշենցի Մարալ Արզունյանին, որը լինելով շրջկոմի բյուրոյի անդամ, դեռ Շարժման սկիզբը ներկայացնող շրջանային ակտիվի նիստում այս բառերով է դիմել Ադրբեջանի ԿԿ քարտուղար Հասան Հասանովին. «Թաղեմ ձեզ, յոթանասուն տարի մեզ ուտում եք, մեզ տանջում եք, վերջ, հերիք է, ձեզնից կշտացել ենք, ուզում ենք մեր ժողովրդի հետ ապրել, ուզում ենք միանալ մայր Հայաստանին»<sup>1</sup>:

*Ո՞ր մեղքիդ համար, քույր իմ արցախցի, պատիժ ես կրում,  
Մե՛ հագնում ընդմիշտ, առհավետ ողբում...  
Այն մեղքիդ համար, որ ժրաջան ես ու կյա՞նք ես կերտում,  
Նրա համար, որ առույգ ու խենթ կորյուննե՞ր ես միայն երկնում,  
Շենքեր կառուցող, պատնեշներ կերտող բազուկներ սնում,  
Աստղեր ավերող ուղեղներ սերում եւ աշխարհահռչակ այրե՞ր փայտիայում:  
Մի խոսքով ասեմ՝ տանջվում ես այդպես, որ հայ ես ծնված ու հայ ես ծնում՝  
Մարդկության ծագման լեզենդին գերված գոյատեւելու հիմն ես մրճնջում:<sup>1</sup>*

Մելորա ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ազգի ճակատագիրը գտնվում է մեր մայրերի փեթի մեջ:  
Գարեգին ՆԺՂԵՀ

Մեր ջրնաղ սեռի փառապանձ գործերը, որ կատարվել են Արցախյան գոյապայքարի ան դժնդակ օրերին, գերում են ամեն մի հայի՝ ինչպես միշտ, այս անգամ էլ հավասարության նշանը չփոխելով եւ դեռ ավելին, հաճախ պարտքի տակ թողնելով տղամարդկանց:

Արցախուհիների կերպարներից մեկը, որ գնալուս է լսողին, մի երիտասարդ աղջիկ է Նունն անունով, որ մեր Շարժման փոքորկալից օրերին սովորում էր Արցախի պետական համալսարանում՝ կողք-կողքի սիրեցյալ երիտասարդի, սկսնակ բանաստեղծ Կոմիտաս Հակոբյանի հետ: Ինչպես կասեր բանաստեղծը՝ «Մերը սրտում դաս են սերտում»: Սակայն մարդակուլ պատերազմը տեղահանեց երիտասարդին եւ տարավ ռազմադաշտ, Ավոյի բանակը: Իսկ սերը, այդ ռոմանտիկ սերը, նրանց մեջ շարունակվեց, որն արտահայտվեց Կոմիտասի բանաստեղծությունների անդրանիկ ժողովածուի՝ «Գոյության պատրանք»-ի մեջ: Իսկ հետո՞... Հետո, ինչպես բազում պատանիներ ու աղջիկներ գրվեցին այդ թովչանքից, այն բաժին ընկավ եւ Նունեին: Մերը, անցյալը նրա համար դարձավ վերինուշ, անընդհատ կրկնվող վերինուշ: Ամեն տարվա մայիսի 5, ամեն օգոստոսի 9, առաջինը՝ տղայի գոհված օրը, երկրորդը՝ նշված հարսանքի օրը՝ որ Նունեի ծննդյան օրն է, միշտ մեխված է նրա հիշողության մեջ: Այդպես էր պայմանը՝ հարսանքը միայն աղջկա ծննդյան օրը: Բո՞ւմանտիկ հոգով, կյանքի սիրով տարված երիտասարդները միշտ այդպես են՝ կառչել նշանավոր օրերից, զարմացնել շրջապատին՝ դրանով էլ գուցե մի բան շահելու համար: Բայց ավա՛ղ, շահը չկար, շահը բացակայեց, պատերազմը հաղթեց նրան: Շահեց միայն մեկը՝ Հայրենիքը: Բայց՝ ոչ, ո՛չ, այս ի՛նչ են ասում, շահը նդավ, նրանք էլ «շահեցին», բայց ոչ շուշափելի, ոչ իրատեսական, այլ կախարդական, գոհողական, հավերժական, որը, սակայն, կյանք է, միայն կյանք, փայփայած պատանիների համար չգոյություն, նիրվանա, որ չի մեռնում: Նունեն կտրել է իր երկար ծամը եւ նվիրումով դրել Կոմիտասի հետ, նրա դագաղի մեջ՝ հավերժ հիշատակ: Այդպես է լինում հերիաթներում: Գուցե դա համարենք Նունեից Կոմիտասի ստացած «շահը»: Օ՛, բավ լիցի, Նունեն էլ «շահեց»: «Շահել է » փաստաթուղթը, Ստեփանակերտի բաղաբաշխյան ակտերի գրանցման բաժնում ստորագրած իր եւ Կոմիտասի անունում: Վերաբերյալ փաստաթուղթը՝ նրանց այն երջանիկ օրերին, որին գումարվեց եւ նոր բնակարանի բանալին, որ երիտասարդ բանաստեղծ Կոմիտաս Հակոբյանն էր ստացել, ուր այսօր դողդոջուն ու հուշիկ քայլերով մտնում է Նունեն: Բայց այստեղ մեր նպատակը այդ երիտասարդների անձնական կյանքի նկարագրությունը չէ սուկ, այլն այդ աղջկա՝ Նունեի ինքնամոռաց նվիրումը զինվոր ճակատայինին եւ սիրած տղայի հայրենասիրությանը, սպայական կոչումը բազմապատկելուն, նրան թեւոր տալուն ու առաջ մղելուն: Երբե՞նք մտածում ես՝ նա կարող էր նախապետական քննությունների շեմին կանգնած զինվոր սիրեցյալին հորդորել բուռ վերադառնալ եւ իր վարակիչ ծիծաղի ազդեցությամբ քննություններին նախապատրաստվել: Բայց չարավ, չարեց գիտակցաբար, հայրենիքի սիրույց մղված: Ուրե՞նք՝ տվյալ պահին աղջկա մեջ երկու միտք է հասնել:

անձնականը եւ հայրենականը, մեկը մյուսից թանկ, մեկը մյուսին չփոխող: Սակայն լիջվեց սեփականը՝ անձնականը, բայց ոչ պակասը: Մտորադասվեց, որ հաղթի հայրենիքը: Այդպես էր մտածել ու գործել ուսանողուհի գրեկամագետը, ապագա դասախոսը, որ ավա՛ղ, ասպիրանտուրան ավարտեց մե՞նակ եւ ո՛չ սիրեցյալ Կոմիտասի հետ, որ նախապես պայմանավորվել էին, նախապատրաստեց եւ հրատարակեց բանաստեղծ նշանածի երկրորդ գիրքը՝ «Նվիրումը»՝ աշխո՞ղասով դասավանդում է համալսարանում: Ստացավ Կոմիտասի դիպլոմը, ստացավ «Արիության համար» նրան վերջերս արժանացրած մեդալը եւ մե՞նակ...

Այդ հրաշակերտ աղջիկը շրջապատին անսովոր մի բան էլ արեց՝ Կոմիտասից հետո իրեն միանձնուհի կոչեց եւ ուխտեց՝ «առվի տեղը չփոխել»: Շատ էր խիստ, շատ է ծանր, բայց... փա՛ստ է: [52]

Նունն խաչատրյան դասախոսը այժմ գուցե թե մտածում է բանաստեղծ անունում (գո՞նե այս անունն էլ մի անգամ տանը՝ ծնողների սիրտը շահելու համար) տուն բերելու մասին, որ, հիրավի, արձանով կարտահայտվի, որ, ավա՛ղ, պետականորեն չարվեց:

Իմ բարի ընթերցողը թող իմանա, որ բացի այդ ամենից, Նունն հարսնացուի վեհությունը խոր գգաց նաեւ նրա շրջապատը՝ Զերթ գյուղը: Կոմիտասին ու նրան ճանաչող գրողները եւ Արցախի պետական համալսարանի դասախոսները, որոնցից բանաստեղծի գոհվելու առթիվ անցկացված քրիստոնեական արարողություններին ներկա գտնված եւ մահախոսականներով հանդես եկած Վարդան Հակոբյանը (գրողների միության նախագահ), Գուրգեն Գաբրիելյանը, Հրաչյա Բեգլարյանը, Ղափիթ Միքայելյանը, դասախոս Միլվա Մինասյանը եւ մայր Հայաստանից գրող Մետաքսեն հեռվից, թերթի միջոցով, Կոմիտասի հետ կապված, բարձր գնահատեցին եւ Նունեին: Կոմիտասի ծնողները, հինգ բույրերն ու միակ եղբայրը սրբությամբ են ընդունում Նունեին:

Ասել, թե այս վեհասքանչ աղջկանը հարգում է ողջ Զերթը՝ դեռ քի՛չ է, բանգի նրա հատկանիշները բարձր գնահատող ամեն մի անուրի գոհված ազատամարտիկի ծնողներ կցանկանային, որ իրենց տղան իրենցից հետո գոնե թողներ նույնանման մի արարած, որ բալասանե՛ր իրենց խոր վերքը:

Կոմիտասի համալսարանյան, համալսարանական ընկեր Սաշիկ Հայրապետյանի ծնողներ Ռուբիկը եւ Նադյան, որոնք տղայի դիպլոմը իրենք են ստացել, այդպես էլ չեն իմացել 21 տարեկան Սաշիկի սիրածի տեղը, որպեսզի մխիթարվեն գոնե նրանով եւ միայն մխիթարվեցին իրենց տղա Գագիկի որդու՞ անունը Սաշիկ կնքելով: Ի դեպ, ես էլ որպես Կոմիտասի ո՞՞ Սաշիկի ուսուցիչ, հնարավորություն ունեցա՞մ 1998թ. հրատարակած իմ մանկավարժական գիրքը նվիրել նրանց հիշատակին: [53]

Հարգարժան ընթերցող, մեր այս պատումը վերջացնելու վրա ուզում եմ միասին վերհիշենք՝ Ղարաբաղի անցյալի պատմության էջերից մեկում նկարագրված մի հավաքյալու դեպք, որ կատարվել է Հայրենական մեծ պատերազմի առաջին օրը՝ Հաղթուրի շրջանի գյուղերից մեկում:

Պատերազմի սկզբի օրը՝ հունիսի 22-ին, հարսանիք էր, երբ մեծ կովի բոթը հասավ գյուղ (մեր սերնդի հաղորդակները երեւի կիմանան, թե որ գյուղում էր այդ հարսանիքը, քանի որ «Նորհրդային Ղարաբաղ» թերթում այդ մասին գրվել է):

Նկարագրվում է, որ ամուսնացող երիտասարդները ոչ միայն դադարեցնում են հարսանիքը, փոխում իրենց հագուստը, այլև արդիվ իր մատների ընծա մատանիները հանում ու բարձրաձայն հայտարարում է, որ նվիրում է «պաշտպանության ֆոնդին»: «Պաշտպանության ֆոնդ» անվանումը հենց նրա շուրթերից է առաջին անգամ հնչում եւ վարմանը պատճառում շրջապատին: Բայց արդիվ միայն մատանիները չհանձնեց. դեռ ամուսնության մեղրամիսը չվայելած՝ ուզվածակատ ճանապարհեց եւ երիտասարդ ամուսնուն, որն այդպես էլ չվերադարձավ: Այստեղ գուպահեղ գուցե թե հարմար չէ, բայց ուզում ենք ասել, որ հայ կանայք եւ արջիկները հայրենիքի համար օրհասական պահերին ցուցաբերել են բարձր հայրենասիրություն:

*Զգո՛ւյշ քայլեցեք, մարդիկ,  
Զգո՛ւյշ նայեք.  
Նրանք փնտրում են գարնան ծաղիկներ  
Դո՛ւք էլ փնտրեցեք  
Ու նվիրեցեք  
Կույս արջիկներին  
Նրանց փոխարեն:*

### Արկաղի ԹՈՎԱՄԱՅԱՆ

x x x

Մեր ազատագրական պայքարի մեջ, թերեւս, մեծ են հայաստանաբնակ խիզախների ծառայությունները: Նրանք շատ են շատ: Նրանք ըստ շրջանների, քաղաքների եւ նույնիսկ գյուղերի, կազմում էին ջոկատներ ու մասնակցում հող-հայրենի պաշտպանությանը: Նրանցից մեկի՝ Արթիկի շրջանի Մանրաշ գյուղի ջոկատի մասին, որի անդամները շուրջ 200 էին եւ այսօր էլ դեռ այդ հիմքի վրա վարձու ջոկատ է գործում գումարտակի կազմով ու պաշտպանում Զարվաճառի հայկական դիրքերը, լեզենդներ են հյուսվել: «Մանրաշի» ջոկատի (հրամանատար՝ Հովհաննես Դավթյան) ուսման հետքերը Ոսկեարիցի հասան մինչեւ Կուբաբու եւ այստեղ, դեռ-դիմաց, Ապարանի ջոկատի հետ միասին կանգնեցին բշնամու դեմ: Այդ ջոկատի պաշտպաններ Ռուզմիկ Պետրոսյանի, Բատյայի, Սուրիկի, Նելսոնի, Հովիկի, Արծրունու եւ շատերի անունները խիզախություն էին ներշնչում ջոկատի անդամներին:

Դեռ այժմ էլ «Հայդուկ» ջոկի մասին մեծ հիացմունքով են շարունակում խոսել ԼՂ Մարտունու շրջանում: Ջոկատը Հրայրի գլխավորությամբ պաշտպանական մեծ գործեր կատարելով Երասխավանում եւ Մաղարակում, 30 հոգով տեղափոխվեց Մարտունու շրջան եւ մասնակցեց Ավդու-Գյուլավիլուի, Ուրյան սարի եւ Ալիբալիի պաշտպանական մարտերին: Չեն մոռացվի այդ երկրպագի ջոկատի անդամներ Անդրանիկի, Համազասպի, Գագիկի, Խաչիկի, Պետրոսի, Արախանի մեկ տարվա կռիվները մեր տարածաշրջանում: Հովիկը՝ այդ ջոկատի հրամանատարը, ուր ամիս իր տնեցիներին չէր տեսել եւ երբ մի անգամ գնում է տուն, հայրը նրան ասում է. «Տղաս, գնա նկարվիր քո այդ համազգեստով, գոնե

նկարդ մեզ հետ լինի»: [54]

Իրենց խիզախություններով համրահայտ են «Նկլուր Դունան», «Թաթուլ Կրպեյան», «Լեզենդար Չաուշ» եւ այլ ջոկատները:

Վիշտը սրտում հրացան էր վերցրել նաեւ գյումրեցիներ՝ հայրենի հողը ոստիկց պաշտպանելու համար: Ջենրի տակ էին խրոխտ թախնցից, անվեներ կոտայքցից, սասունիկցից, էջմիածնցից՝ իր զանգերի կոչով, արծիվ կտրած սյունիքցից, հպարտ շիրակցից, վախը բացառող եղեգնաձորցից, անհողողոդ տաուշեցից, վայրեցից, արովյանցից ու քանաքեռցից:

Կգա օգնական այդ ուժերի փառաբանման ժամանակը, որոնք եղբայրական օգնությունը չեն խնայել Ղարաբաղի համար եւ անկարելին կարելի են դարձրել ու իրենց սուրբ արյունով ապացուցել-հավերժացրել հայրենասիրությունը: Հիշենք նրանցից Արարոյի ջոկատի գոհվածներին Մարտայում. Վարդան Դուշմանին, որը Շուշիի ազատագրումից հետո շանպայնի շիշը ձեռքին այցելել է հայկական հիմ գերեզմանոցը եւ մեկական կաթիլ ժողով հայերի գերեզմաններին՝ ասելով. «Հանգստացե՛ք, մեր պապեր, Շուշին ազատագրված է»: Կամ մի՞թե կճոռացվի նույն Վարդանի դեռ 10-րդ դասարանում գրած ազատ շարադրությունը, որի վերնագիրն էր՝ «Երանի նրան, ով Մասիսը տուն կբերի»: Փառաբանե՛ք Վարդանի ծնողներին եւ ուսուցիչներին: Այո՛, ուսուցիչներին նույնպես, որ նման երիտասարդ քաղաքացի են դաստիարակել: Բայց մի՞թե դարաբաղցիների հիշողության մեջ անմոռաց չեն մնա Շուշիի գրավման բեմահարրակում գործած «Հրազդան-1» կողային անունը կրող օպերացիայի կազմակերպիչներ, գեներալ-գեղապետ Գուրգեն Դալիբալբայանը, որն այդ ժամանակ ՀՀ պաշտպանության նախարարության շտաբի պետն էր, Լեոնիդ Մարտիրոսյանը՝ ՀՀ օպերատիվ վարչության պետի տեղակալը, Ֆելիքս Գաղոյան գնդապետը, որը ԼՂՀ ԽՊՈՒ շտաբի պետն էր, Նվեր Չախտյանը, Ժիրայր Սեֆիլյանը, որ հարձակվող ջոկատների հրամանատարներից էր, կապի պետ Արթուր Փափազյանը:

Ի դեպ, Գ. Դալիբալբայան գեներալի մասին էր, որ Արկաղի Տեր-Թադեոսյանը՝ Կոմանդոսը, ասել է այն իհամայի բառերը. «Նա անձամբ էր գնում հետախուզության եւ որպես անձ, որպես փնվորական, իր վարքով ու պահվածքով բացառիկ դրական դեր է խաղացել Շուշիի օպերացիայի ժամանակ»:

Հիշենք բոլոր գոհվածներին: Միայն Արթիկի շրջանից գոհվել է 70 հոգի: Գլուխ խոնարհեցնեք նրանց շիրիմների առաջ: Կմոռացվե՛ն, արդյոք, բյուրեղական Մամվել Վարդանյանը եւ հառիճեցի Արամ Մանուկյանը: Կամ մի՞թե կմոռացվի քաղաքական ու պետական գործիչ Սամվել Շահմուրադյանը, որն իր կյանքը գոհաբերեց Մարտակերտի սուրբ հողին՝ Գանձասարի մոտերքում:

x x x

Ղարաբաղի պատմությունը բարի խոսքով ու ակնածանքի մղումով կնկարագրի մեյր դեռահասների ու պատանիների քաջագործությունները: Կզրվի, որ նրանք հետ չմնացին իրենց ծնողներից ու ավագ եղբայրներից, որ «ժամանակին» ջարդում էին բշնամու մեքենաները, վրիժառուի դեր կատարում՝ ակամներ դնելով կամուրջների տակ ու ճանապարհների հատվածներում, որ նրանք զենք էին տեղափոխում, հերթապահություն անում անցուղիներում, ծառայում գորա-

նոցներում եւ ուղեկալներում, սննդամթերք եւ ջուր տեղափոխում ազատամարտիկների համար եւ այլն:

Ահավասիկ, 1991 թ. դեկտեմբերի 7-ին «Լեռին Դիվանը» բուրբակաւ գյուղն ազատագրելու ժամանակ ի՞նչ թափով են կռվել 16 տարեկան Կարեն Բաղդասարյանը եւ մանկալաշենցի, 12 տարեկան Նիկողայ Հայրապետյանը, որը նվիրյալ համագյուղացի ֆիդայիների հետ պաշտպանական կետեր էր գնում, խրամուղիներում օգնում կռվողներին:

Նա մերթ մարտական մեքենաներ էր նստում, մերթ հրասայլերում էր վրձում ու կատարում մարտիկների հսնճնորարարությունները: Նիկոլին գրաշագնում էին, նույնիսկ սատում, հիշեցնում, որ հոգը չուր, հարեալայր ետ է գտնվել լրջի ոչ մի արդյունք, ՅԱ ԱՆՆՈՒՅՈՒՅԻ Էր մնում իր որոշմամբ: Ահամայնց ելչում եւ ՍԵՏ հայրենական պիտներ-դպրոցականների կատարած քաջագործությունները, որոնց նմանները «Լարարոջան պատերազմում էլ կային:

Ղարարալյան մեր պատերազմում ճայրահեղորայուններ ու անակնկալներ շատ եղան: Որոշ պատահիներ կամավոր էին մեկնում ռազմաճակատ, ինչպես եւ որոշ հասակակիցներ: Այդպես էր Մարտունու շրջանի Ջևր գյուղի բնակիչ Արկաղի Սարգսյանի ընտանիքը: Արկաղին 45-ից բարձր տարիքի էր, իսկ տղան՝ Լեռնիկը, 15 տարեկան, որ մեկնեցին հող-հայրենին պաշտպանելու: Եվ պաշտպանեցին: Լեռնիկ Սարգսյանն այժմ հայրենի գյուղի դպրոցի ֆիզկուլտուրայի ուսուցիչ է:

Ճարտարի նակատամարտերից մեկում փառաբանված է 15-ամյա Մուշեղ Անտոնյանը, որի կրակոցով ոչնչացվել է թշնամու տանկը: Այդ սխրանքը հատուկ տեղ կունենա մեր ազատագրական պայքարի տարեգրության մեջ:

Իսկ ահա պատանի Գեղամ Աղաջանյանը (Գեղամ Խաչենց), որ ընդամենը 11 տարեկան երեխա էր, գեների փոխարեն գրիչ վերցրեց եւ կռվողների գովքն արեց.



*Այդ, պաշտպանվել, պաշտպանվում եւ կռվում ենք մենք,  
Չարկում ենք բշնամուն մեր նենգ,  
Քանգի սիրում ենք Արցախը մեր անկրկնելի  
Օ՛, դու հայրողի, հիշիր աշխարհում,  
Հայի բախտն», ավա՛ղ, այդպես է եղել՝  
Կատուցել կրկին, կատուցել երգով  
Ու այդպես հաղթել մահին չարաղես:*

Այժմ Գեղամն արդեն հասուն տղա է, համալսարանի ուսանող, ԼՂՀ գրողների միության անդամ:

Միմեն Միմոնյան պատանին՝ Հայաստանի Հանրապետության Մարտունու շրջանի Լիճք գյուղից, 1992 թվականին, 15 տարեկան հասակում կամավոր մեկնում է ԼՂՀ եւ ծառայում հակատանկային գումարտակներից մեկում: Նա ճար-

տար գյուղի պաշտպանության ժամանակ վիրավորվում է, եւ տանում են հոսպիտալ: Ապաքինվելուց հետո Միմոնը նորից է մեկնում ճակատ: Նա իր երկու ընկերների հետ միասին ոչնչացնում է թշնամու տանկը եւ արժանանում դրամական պարգևի: Նորից ճակատ, բայց այս անգամ՝ ծանր հետևանքով, գոհվում է 1994 թ. մայիսի 21-ին, ինչպես ասում են,՝ ծաղիկ հաստկում՝ ծաղիկ չտեսած:

Անշավահաս ազատամարտիկների շարքերը լրացնելու էր եկել նաեւ Անդրանիկ Արշակի Համգոյանը: Այս տղան ծնունդով Բարու քաղաքից էր, ընտանիքով՝ Ստեփանակերտ էր եկել դեռ մանկահասակ ու սովորել քաղաքի մի շարք դպրոցներում: 6-8-րդ դասարաններում սովորելիս նա գյուղ էր գնում, օգնում ֆիդայիներին, կատարում ուղեկցողի դեր, մասնակցում զինամթերքի բեռնավորման քննարարության աշխատանքներին, օգնում զինամթերքով ու զենքի ճակատային գիծ հասցնելուն: 1993 թ. հուլիսի 10-ին հերթական անգամ զինամթերքը տեղափոխելիս արկի պայթյունից մահացու վիրավորվում է եւ տեղափոխվում Հաղորդի շրջանային հիվանդանոց, այսպիսով կենտրոնական զինվորական հոսպիտալ, իսկ չորս օրից հետո՝ Երեւան, որ եւ հուլիսի 18-ին, ամանց գիտակցության գալու, մահացել է: 16-ամյա Սուրեն Մանվելյանը Ասկերանի հովտից, որ ոչնչացրել էր 30 ագերի զինյալների, 1992 թ. հունիսի 28-ի Ասկերանի ճակատամարտերի հերոսներից է:

Եվ, իհրևա, այսպիսի տղաների մասին է ասված, թե հերոսները չեն մեռնում, նրանք պարզապես անցնում են անմահության սահմանը՝ շարունակելով հարստանել ապրողների հոգիներում:

x x x

Հարգարժան արցակիցի, հայ, վաղուց, շատ վաղուց իմ եւ քո առաջ կար մի ժողովուրդ՝ խեղճ ու կրակ, որ ազգում էր շար դրկիցի սպանակիքի տակ, երբեմն ծանր վիճակով, 5-7 անգամ ըմբոստացած, բայց միշտ կայեցնած վիճի եզրին: Նա՛ ավելի շատ վործ էր անում լեզու գամել ավերիների հետ, բայց եւ մտածում էր՝ սովորական հնարքով ու սահմանադրական օրենքով ազատվել նրանից: Նրա «կրան կովը» վաղուց տարել էին ու չորացրել կարսաները, երեխաներին գամել չոր հացին: Հնար չկար, վերեւները «խտանձում էին» նրան, իսկ ներքեում՝ ստորացող անխկան ջուրերը շողորորում, ստրկահաճ-ստրկահարճ դառնում, իսկ յոնակալն ավելի էր սարկացնում ու ստորացնում նրան: Դաժման օրենքների շրջանակներում ըմբոստանալը թվում էր շատ դժվար, երբեմն՝ անկարելի, երբեմն էլ՝ հրաշք: Բայց հրաշքը մի օր եկավ, հրաշքը կատարվեց դարի վերջերին: Ժողովուրդն ապստամբեց:

Նրանց գգուշացնում են, բայց նրանք հակառակում են, չեն լսում, քանտ են նետվում՝ կրկին չեն լսում:

Նրանք մի գործ պիտի կատարեն, որ ակամայից հավաար է խենթության, բայց իրակնում՝ հերոսության: Նրանք զգում, չափ ու ձեւ են անում եւ հակախում, որ ժողովուրդը կարող է հաղթել:

Նրանց տղերքում պարզ պատկերացված է ուժերի իսկական դասավորումը, զիտեն շեշտակի հարվածի տեղը եւ տեսնում են հաղթությունը: Նրանք հասա-

րակ մարդիկ են, չունեն չին ու կոչում, դիրք ու աստղեր, նույնիսկ կրթություն, բայց ստեղծագործող են: Նրանց համար այդ անիրական հաղթությունը տեսանելի է ու իրական է այդ «խենթությունը» խելացի ու իրատեսական:

Հարազատները նրանց «խելքի բերելու» փորձեր են անում, բայց չի ստացվում: Նրանք իրենց են պնդում ու հանդուգն են մնում եւ գնում են իրենց ուղիով: Սակայն երբ կատարում են անհնարին, երբ բշտամուն դուրս շարտելու ճիգեր են անում, նրանց հասկանում են, համակրում, անվանում ազգի հերոսներ: Գալիս է, սակայն, հոգեբանական կարեւոր պահը. սկսում են գործել անհատ հերոսների ներքին դրդիչները: Դա ժողովուրդն է, նույն ժողովուրդ-բանակը, որ ձեռք է բերում հերոսական գծեր՝ խիզախություն, անվախություն, արիություն եւ կատարում նույն «հրաշքը»: Այո, նրանք էլ են «հերոս» ու այստեղ անհատ հերոսները միայն կազմակերպեցին, դրդեցին, խլրտում գցեցին ու հրեցին ամբոխին, առիթ տվին, որ ժողովրդի հոգու մեջ գարթնի սխրագործությունը, ժողովուրդը վեր կենա, կատարի այն գործը, որ իր հոգու մեջ վաղուց էր բուն դրել, ու ձգտում էր երբեւէ կատարել այն: Հույսը եկավ, վախը բացառվեց, եւ ամեն ինչ հասկանալի դարձավ, ամեն ինչ ընդունելի. չէ՞ որ չի կարող լինել համակրանք դեպի մի խումբ հերոսների գործ, որ հակառակ է ժողովրդին: Հերոսները միայն ժողովրդի հերոսներն են, նրա փարոսը:

Իսկ ի՞նչ անվանենք մեր հերոսների գործը. տաղա՞նք, որ սովորաբար լինում է սովորականի մոտ, թե՞ հանճար: Չէ որ հանճարի մեջ կա ինչ-որ բոխչբային, սլացիկ հատկություն, ստեղծագործություն: Այսինքն, չկար մի բան, բայց ահա կա: Հին ժամանակներում դա գերբնական էր, հրաշք, մեզ համար՝ բնությունից եւ հասարակությունից կամ գուցե այժմ՝ երկուսից էլ:

Ասում են. «Տաղանդը գործ ունի սովորականի հետ, հանճարը՝ բացառիկի: Տաղանդը գոյացնում է, հանճարը՝ խիզախում: Այնտեղ, ուր տաղանդը կանգ է առնում իբրեւ վերջին սահման, հանճարն սկսում է» (Դերենիկ Դեմիրճյան): [55]

Այդպես է եւ կովի դաշտում, այդպես է քաջը, առաջաճարտիկը, այդպես է վերջապես հերոսը: Այդպես անցան Ալպերը եւ սատանայի կամուրջը անկրկնելի Սուվորովը եւ նրա խիզախները, այդպես կտրեց-անցավ անկարելի Սառուցյալ օվկիանոսը Չկայովը՝ օդում մնալով 58 ժամ 20 րոպե, կամ տիեզերքում ճախրեցին մոտ 200-ի հասնող տիեզերագնացները: Այդպես Նելսոն Ստեփանյանը՝ մեր ազգի կրկնակի հերոսը, ինքնաբիռից ռումբեր թափեց բշտամու գլխին, իսկ վերջում իր ինքնաբիռով մխրճվեց գերմանական վառելիքի պահեստի մեջ՝ հրկիլով այն: Այդպես են գործել Սովետական Միության դարաբաղցի 21 հերոսները: Ի վերջո, այդպես գործեցին եւ Արցախ աշխարհի հերոսները՝ «Ռսկե Արծիվ»-ի շքանշանակիր ազգային հերոսները: Նրանք եւ նրանց քաջակիրները այն հերոսներն են, որ երեսնիվայր ընկած չթողին արցախցուն, բարձրացրին նրան, ուղղեցին նրա կորացած մեջքը եւ ի կատար ածեցին միայն 2-րդ աշխարհամարտից հետո նրանց 1945, 1964, 1967, 1977 եւ 1988 թվականների ընդվզում - գոյապայքարների բաղձանքը, որին այնպե՛ս անհաղորդ մնաց «զեն ու շեն» ԽՍՀՄ-ը:

## ԱՄԱՐԱՍԻ ՀՈՎՏՈՒՄ

«Ամարաս, պատդ գրահ է ու հավատ է զանգր»  
(Բանաստեղծ-գինվոր Կոմիտաս Հակոբյան)

Ղարաբաղ երկրամասը շրջափակված է: Դրսից օգնություն չունի: Խզված են ավտոճանապարհային կապերը մայր Հայաստանի հետ, եւ այն միակ, հատուկեմտ բռնող փոքրածավալ ինքնաբիռը, որ ծառայում է դարաբաղցիներին՝ դեպի Երևան, հաճախ էր խափանվում օդանավակայանի հսկիչ օժժոն-ի եւ ԽՍՀՄ ներքին գործերի պահակակետի կողմից: Դա Հատուկ կառավարման կոմիտեից հետո 1989թ. նոյեմբերի 28-ից Ղարաբաղում կառավարող աղբրեջանական Կազմկոմիտեի կառավարման մտայլ ժամանակաշրջանն էր: Ամարասի հովտում վիստում էին ԽՍՀՄ ներքին գործերի պահապան գինվորները եւ նրանց աջակցող օժժոն-ի խմբերը:

Եվ ահա նրանցից մի ջոկատ, որ վերահսկում էր Ամարասի պատմական եկեղեցուց 2 կմ վերեւ գտնվող՝ Մաճկալաշեն հայկական գյուղին կից աղբրեջանական Վերին Դիվանլար գյուղը, «Ալինկո» հեռակապով հայտնեց Ֆիզուլի քաղաքում տեղակայված կայագրին, որ շտապ օգնության հասնեն: Թե դա ինչ օգնություն է՝ իրենք գիտեին: Բայց դա ծուղակ էր, մի առիթ, որ «թափ տան» հայերին, հավաքագրեն նրանց ու մարդկանց որս կատարեն:

Այդպես էլ եղավ:

Դեպքը, որ կատարվեց, 1990թ. սեպտեմբերի 8-ի երեկոյան էր: Իմանաբով, որ օժժոնականները լրացուցիչ ուժեր են հավաքել Ամարասում-եւ սկսել են հավաճել Ֆերմաների հայ պահակներին, բռնել ճանապարհով անցնող մարդկանց, Մաճկալաշեն գյուղի մարդիկ սուրհանդակների միջոցով հայտնեցին ձորակի Սոս, Զարահունջ, Բերք, Շարտար, Հերիեր, Կոլխուզաշեն, Կարմիր շուկա գյուղերի բնակչությանը: Դեռ չէր անցել 1-2 ժամ, երբ վերոհիշյալ գյուղերի հոծ բնակչությունը, ջղածգված ու վրեժի ատելությամբ լցված, հավաքվել էր Մաճկալաշեն գյուղում: Եկել էին շատերը, ովքեր կարող էին՝ երխտասարդներ, ծերեր եւ նույնիսկ կանայք:

Եկել էին՝ ինչով կարող էին, ինչ իրենց ձեռքն էր ընկել՝ մահակներով, եղաններով, իսկ ոմանք էլ, որ գերադասելի էր, ինքնաշեն ատրճանակներով ու իրացաններով: Շարտարից ժամանածների մոտ նույնիսկ գնդացի գտնվեց, որ տեղադրվել էր թուրքական գյուղից փոքր հեռավորության վրա գտնվող բլրի վրա: Մտք էր, եւ քիչ բան էր երեւում դիմացից, հետո էլ շատ մոտենալը վտանգավոր էր. կարող էին գերի ընկնել: Հայերը մի քանի կրակոցներով բշտամուն գզալ տվեցին մեր ներկայության մասին: Ով գիտի, գուցե դա պետք էլ չէր: Ամբոխը հավաքվել էր Մաճկալաշեն գյուղի միջով հուսող Ամարաս գետի ձախ մասում, ուղղակի ճանապարհի մեջտեղում՝ չիմանալով իր անելիքը. չգիտեին, թե ինչ է կատարվում իրենցից ներքե գտնվող եկեղեցու մոտերում: Բանից պարզվեց, որ Սոս եւ Մաճկալաշեն գյուղերի բնակիչներից կազմված մի ջոկատ, մինչեւ ամբոխի հավաքվելը, առաջ էին անցել եւ հայտնվել Ամարաս եկեղեցու շրջանում: Այդ ջոկա-

տում էին Արամ Բալայանը եւ Ալեքսանդր Սարգսյանը (ուսուցիչներ), Կարեն Գաբրիելյանը (գյուղատնտես), Ռադեմիկ Մանասյանը (միլիցիայի տեղամասա- յին լիազոր), Ռոբերտ Գրիգորյանը, Լեւոն Շատրյանը, Սարսիմ Մարտիրոսյա- նը, Ալիկ Զոչարյանը (կոլտնտեսականներ), Վլադիկ Բաղդյանը (խանութի վա- րիչ), Սոս Կյուրի կոլտնտեսության նախագահ Նախշուն Ավանեսյանը եւ էլի ո- մանք:

Հեռվից ավտոմատների ճարձատյուն եւ կրակահերթեր էր լսվում: Թե ինչ էր կատարվում, դեռ ոչ-ոք չգիտեր: Տագնապը հասել էր ամբար շրջանի կենտրոն Մարտունի՝ շրջմիլիցիայի պետին, որը եւ մեզնից առաջ էր հասել դեպքի վայրը: Առաջին իսկ կամավորական ջոկատը, չկուսիներով թշնամու դիտավորություննե- րը, ընկավ ծուղակի մեջ, շրջապատվեց բոլոր կողմերից եւ գերեզմարվեց: Թշնա- մին նրանց ուղղակի խոթեց ավտոմեքենայի մեջ, կապկպված եւ իրար վրա դարձված վիճակում տարավ Ֆիզուլի: Հենց այդտեղ էլ ուսից վիրավորվեց Շար- տարի տեղամասային լիազոր Յուրի Աղաբեկյանը եւ տարվեց Երեւան: Հակա- ոսկորդը ամբողջ գիշեր դարանակալ պտտվում էր գյուղի շուրջը՝ ձգտելով նոր որսի: Արդեն լուսանում էր: Չիմանալով եւ անտեղյակ լինելով թշնամու դավերին եւ նախորդ ջոկատի ճակատագրին, ժողովրդական գանգվածից մի երկրորդ ջո- կատ էլ հայտնվեց թշնամու օղակում: Այդ օղակի մեջ էր նաեւ Մարտունու շրջկո- մի քարտուղար Օլեգ Եսայանը, որն ամբողջ գիշերը մնացել էր մեզ մոտ: Չկալով քարտուղարի գերվելու վախն ու հետեւանքները, կազմակերպվեց նրա դուրս բե- ռումը այստեղից: Գիշերը թաքնվելով անասնապահում, ջոկատն առավոտյան միայն իմացավ 1-ին ջոկատի ճակատագրի մասին: Որոշվեց հետ դառնալ տուն, բայց դեռ մեր առջեւից ու հետեւից կրակոցներ էինք լսում: Առաջարկություն ե- դավ ավտոբուսը տանել այն ճանապարհով, որով գնացել է շրջկոմի քարտուղա- րը, որը համեմատաբար անվտանգ է, բայց ավտոավարորդ Վալերիկը չհամա- ձայնվեց՝ պատճառ բերելով բենզինի սրակար: Ստիպված մերեւան ուղղություն վերցրեց դեպի բուրքական առուք, որի միջով պիտի անցնեինք:

Այս անգամ էլ կարծելով, թե վտանգավոր ոչինչ չկա, մեր տղաները, թվով 17 հոգի, կոլտնտեսության ավտոբուսով համարձակորեն առաջ անցան եւ հասան առուք: Մեզ կանգնեցրին, սկսեցին խուզարկել եւ մեկ-մեկ ազատ արձակել: Մենք մեր ունեցած զենքերը ծածուկ բափեցինք ավտոբուսի մեջ եւ դուրս եկանք դա- տարկ ձեռքերով: Ամբողջ գիշերն այդտեղ անցկացրած ժողովուրդը, որը դիտում էր այդ տեսարանը, մեզանից 100-150 մետր հեռավորության վրա էր գտնվում: Թշնամին վերցրեց ավտոբուսը, իրենցից մեկին վարորդ կարգեց եւ Ֆիզուլու ուղ- դությամբ հետ գնաց: Նրանք մեզանից տարան մի տղայի՝ Նվեր Ալեքսանյանին, որը համարձակորեն էր խոսել ռուս մայրի հետ եւ մի քիչ էլ կուպակել: Մենք միայն հետո իմացանք, թե ինչ տանջանքների են ենթարկել Ֆիզուլու քանտ տարված մեր առաջին ջոկատի տղաներին, որոնց մեջ էր նաեւ շրջմիլիցիա Վալերի Գաբ- րիելյանը:

Բայց իռնտոդները դրանով չբավականացան: Նրանք սկսեցին գիշերները մուտք գործել կոլտնտեսությունների շերտները, գողացան անասունները, գե- րեվարեցին ու տարան մույնիսկ անասնապահներին: Օրեր անց բանտից ա- գատվեցին մի քանի հոգի՝ կոլտնտեսության կին նախագահը, միլիցիան, տեղա-

մասային լիազորը, ծեր ուսուցիչը եւ էլի ոմանք, իսկ ինը հոգու մեղադրանք ներ- կայացրին եւ տեղափոխեցին Բաքու (Արամ Բալայան, Կարեն Գաբրիելյան, Վլադիկ Բաղդյան, Լեւոն Շատրյան, Ալիկ Զոչարյան, Էդիկ Ահարոնյան, Ջորիկ Հայրությունյան, Համլետ Հարությունյան եւ Ռոբերտ Գրիգորյան): Նրանց Բաք- վում դատեցին. 5-8 տարվա ազատազրկում: Բարեբախտաբար, Հայաստանի ի- րավագահ մարմինների միջնորդությամբ հաջողվեց տղաներին տեղափոխել Թիֆլիսի բանտը ու այնտեղից՝ Հայաստան: Հետեւանքը նրանց ազատվելը ե- դավ:

Սանճարձակ ռուս հրամանատարներն այնքան էլ սկսեցին գրազվել ավտոբու- սում գտնված զենքի տերերով, հատկապես՝ ատրճանակի տիրոջով: Բանտում ծեծելով երիտասարդ Նվեր Ալեքսանյանին, նրանք տղայից կորզեցին՝ որ ատր- ճանակը դպրոցի տնօրեն Միրայել Բեգլարյանինն է: Դա արդեն կատարված դեպքից մեկ ամիս հետո էր: Եվ ահա մի օր էլ նույն Նվեր Ալեքսանյանի ուղեկցու- քյամբ ներքին գործերի բանակի երկու սպա փոքր ավտոմեքենայով մտան մեր գյուղը՝ Զարահունջ եւ պահանջեցին ինձ: Ինձ իմաց տվին այդ մասին, դուրս ե- կա դպրոցից ու մտա մոտակա անտառ: Մեկ օր անց Ստեփանակերտում էի, ա- պա մեկնեցի Երեւան եւ երկու ամիս այնտեղ պատասպարվելուց հետո, երբ որոշ չափով հանդարտվել էին բուրքերի կրքերը, ձորակի բոհուբոնդ, վերադարձա գյուղ:

Բայց ամենամամր հարվածն այն էր, որ նույն սեպ- տեմբերի 9-ի կեսօրին մոտ, բուրքական գյուղի մոտերքում գտնվեց երիտասարդ Վաչագան Ալոշայի Հայրապետյա- նի դիակը, որը եղավ այդ ձորակի առաջին, բայց ոչ վեր- ջին գոնը: Նա գոհվեց Վերին Դիվանլարի բուրքի գնդա- կից: Հետագայում Վաչագանի ծնողները վշտից բեկված, գոհված տղայի հիշատակին հուշադրյուր կառուցեցին Սոս Կյուրում: Այս ամենը՝ դեռ մեր Եսարժման առաջին փողում, բայց թե հետո ինչ իրադարձություններ են լինելու, ինչ ամպեր են անցնելու Ամարասի գլխով, հիրավի՝ ոչ որ չգիտեր: Մասկայն թշնամին մոտ էր, դեռ ամբացած Վերին Դիվանլարում՝ Ֆիզուլու շրջանի Դաջար գյուղին պատ- կանող այդ տարածքում՝ Մանկալաչենի «ոբի տակ»: Սանճանամերձ հայկական գյուղ Մանկալաչենը, նրա հարեւան Սոսը, որի այգիներն ու շերտները, քանջա- րանոցներն ու խաղողայգիները սփռված էին վեհափառ կանգնած Ամարասի հի- մնավորը եկեղեցով հանդերձ, գտնվում է այդ շրջանում, ռուսի եւ օժժ-ի «մարդու եւ գեների» դրաստեղի էր: Երուզակները հաճախ էին գյուղն ստուգում՝ զենք հայտ- նաբերելու միտումով: Բայց նրանք չլին կարող իմանալ, թե Դարաբաղում որտեղ է բարցված զենքը՝ Բերդածորում, Կոսմաբաղում, Կիչանում, Տոմիում, Մա- վատում, Խեթիսանում, թե՛ Մանկալաչենում: Մինչդեռ զենքը բարցված էր ամե- նուր, իսկ Մանկալաչենում այն խաղերի կերտատախտակների տակ էր գտնվում, բավականին աննկատ: Այդ մասին հատուկ մարդիկ գիտեին միայն:

Մանկալաչենը եւ Սոսը, որ Ամարասի հովտի արքա գյուղերն էին, վշտորեն նախապատրաստվում էին օրհասին, գալիք դիմակայումներին: Այդ Ժամանակ



Ամարասիմ հարեան Ճարտարի եւ Կարմիր շուկայի ենթաշրջաններում ձեւավորվում էին ֆիդայական ջոկատներ, ինչպես ձեւավորված էին դրանք Ամարասի ձորակի գյուղերում: Եվ ահա, «Երին Դիվանլարից եկող վտանգը վերացնելու համար, 1991թ. դեկտեմբերի 7-ին, ըստ նախնական պայմանավորվածության, Ճարտարի ջոկատի քաջորդի Կամո Սաֆարյանի գլխավորությամբ, Կարմիր շուկայի՝ Կոյա Հակոբյանի (Կոկա) եւ Մաճկալաշեն-Սոսի՝ Արամ Ավետիսյանի ու Արմեն Մեյրումյանի միացյալ հարվածի տակ մաքրվեց թուրքական գյուղը: Երբ ասում ենք՝ ըստ նախնական պայմանավորվածության, պետք է ամենից առաջ հիշել, որ Ղարաբաղի պաշտպանության ղեկավարներ Սերժ Սարգսյանը եւ Արկաղի Կարապետյանը (դաշնակ Ազո) խորհուրդ տվեցին վերցնել թուրքական այդ գյուղը, բայց իրենք օգնել չէին կարող՝ այդպիսի ուժ ղեռ չունեին: Գրուհի կազմակերպիչներ Կամո Սաֆարյանը եւ Արմեն Մեյրումյանը այս անգամ դիմում են Մարտունիում տեղակայված ՆԳՆ զորքերի իրաճանատար, փոխգնդապետ Բատուկովին՝ խնդրելով, որ այդ խնդիրը բռնելու համար մի ԲՏԲ տա իրենց: Փոխգնդապետը մի փշերով տրամադրում է մարտական մեքենան: Հատկանշականն այն է, որ գյուղը պետք է գրավվեր դեկտեմբերի 7-ին, Սպիտակի երկրաշարժի օրը, որն արժանի պատասխան պետք է լիներ այն օրերին ուրախացած թուրքերին:

Օձօնականները եւ ԽՍՀՄ ՆԳ ջոկատը, որ վատ չէին զինված, մերոնց անսպասելի եւ ուժգին հարձակումից շճաճ, թողեցին կիշլակը եւ փախան՝ բայց ոչ անդա՛հ: Դեկտեմբերի 8-ի առավոտյան դիրքեր գրավելով «Մանաս քեկի» թրայվում նրանք 600-700 հոգով հարձակում ձեռնարկեցին: Մակայն մերոնք, սակավ ուժերով, բայց դիմադրեցին: Արամը ծանր վիրավորվեց ու 20 օրից հետո մահացավ Երեւանում: Մերոնք ընդամենը 6 հոգի էին՝ Արմեն Մեյրումյան, Արամ Ավետիսյան, Վալենտին Ծատրյան, Արմեն Ծատրյան, Գեղամ Կարապետյան եւ Նելսոն Հարությունյան:



Տիպականը այս ճակատամարտում այն է, որ մեր սակավաթիվ տղաները թուրքերի մոտ այն տպավորությունն ստեղծեցին, ինչ, իբր, մերոնք շատ են: Դա կատարվեց մեծ հնարամտությամբ՝ ամեն մի ծանր հետեւն էին անցնում այդ մի քանի հոգին ու կրակում ծառերի հետեւից: Մերոնց դիմադրությունը արժանի հակահարվածի վերածվեց, եւ թշնամին ստիպված նահանջեց:

1990 թ. դեկտեմբերի 8-ի այս ճակատամարտին իր ակտիվ մասնակցությունն է բերել Ճարտարի ջոկատներից մեկը (իրաճանատարն էր փառաբանված Յուրի Բարաջանյանը՝ Յուկան)։ Նրա կազմում էին քաջ մարտիկներ Վահե Այիրաբյանը, Էդիկ Ղուկասյանը, Կամո Հարությունյանը, Լեոնիկ Աղաբեկյանը: Այդ մարտի ժամանակ Ճարտարի կամոյական ջոկատը գերել է 6 թուրք, իսկ արմենականը՝ 5:

Չճողանալով այստեղ վերհանել մարտունեցի Արտիկ Բալասանի մարտական խրոխտ կեցվածքը, որ վորթեց թուրքերին: Չարձանում եւ Արտիկի օգնական, 16-ամյա Կարեն Բաղդասարյանի քաջագործությունից: Մարտից անմիջապես հետո, նույն երեկոյան, երբ արդեն վտանգը համեմատաբար մեղմել էր, արմենականների եւ կամոյականների միջեւ պաշտպանական դիրքերը բաժանվեցին երկու հատվածի՝ Դավալսխուրը Ճարտարի հսկողության տակ, Ամարասի ձորակը՝ Մաճկալաշեն-Սոսի:

Կամո Սաֆարյանը ֆիդայիների շրջանում, ընդհանրապես՝ Ղարաբաղ աշխարհի ազատագրության գործում ճանաչված մարտիկների շարքում կարելի էր դնել: Նա մեր այն համարձակներից էր, որ զենք էր ներկրում Ղարաբաղ: Հենց այդպիսի մի օպերացիայի ժամանակ էլ ձեռքակալվեց ԽՍՀՄ ՆԳՆ զինվորների կողմից՝ 1990թ. հունվարի 28-ին, տարվեց Թիֆլիս, այնուհետեւ՝ Ռուստով ու Նովոչերեպասկ: Ի դեպ, Կամոյի այդօրվա ընկերներից է նաեւ Ղարաբաղի ներկայիս նախագահը, որի մասին ես մի առիթով տայն գրքում հիշատակել եմ: Մեր հերոսը պատմում է, որ Արկաղի Ղուկասյանը 1990թ. հունվարի 26-28 լին Թիֆլիսի բանտում կացարդ է հայտարարել: Վրացի հսկիչները նրան հողորել են, որ երիտասարդ է, մեղք է, բող հացաղող չանի, իրենք ում պետք է կասեն՝ հացաղուլի մեջ է: Իմիջայրց, նրա քանտասյցի ընկերներից էին նաեւ մեզ հայտնի Ռազմիկ Պետրոսյանը, Ռուլեն Աղաջանյանը, Վիգեն Շերինյանը, որ հետո գոհվեց եւ Ռուդիկ Ազարյանը, Կամո Սաֆարյանը դեռ 1990թ. հունվարի 6-ին՝ Բրիտանի ծննդյան օրը, Պարպե Սրբազանի կողմից կնքվել է եւ ամուսն կոչել Գարեգին: Նրա կնքահայրն էր Արթուր Ալեքսանյանը (Պուշկին մականունով), որն այժմ Հայաստանի ՊԱՆ-ի հատուկ նշանակության ստորաբաժանման իրաճանատարն է: Կամո զինվորականի ռազմական կենսագրության փայլուն էջերից է նաեւ Ամարասի ձորակում իր ջոկատի տղաներով դիվանլարցի Հարամխանի դեմ առ դեմ՝ 1990 թ. սեպտեմբերի 12-13-ի ճակատամարտը, որը հաղթական ելք ունեցավ: Նրա կատարածը հսկայական է այն օրերին (1990թ. սեպտեմբերի 9-15-ը), երբ Տիգրուս բանտում էին Սոսի կոլտնտեսության կին նախագահ Նախչուն Ավանեսյանը եւ Մարտունու միլիտեր Վալերի Գարրիեյանը:

Որպեսզի նրանք ազատվեն բանտից, անհրաժեշտ էր, որ փոխանակվեն ադրբեջանցի արստանդներով: Եվ ահա Կամո Սաֆարյանը գտավ ելքը, նա բռնեց Մարտակերտի շրջանի նախկին 2-րդ բարտուղար Ահմադ Ալիեյին եւ հանձնելով Տիգրուս շրջանից հային, ետ քերեց մերոնց: Ի դեպ, այդ գերի ազերիները մի շարք պահվել են Զարահունջ գյուղում ու հետո հանձնվել մեր մյուս հսկիչներին: Այո, մեր նորոյա հերոսը հողի մեջ թաքցրել էր «Տէր Չօր», Մակար Բարխուդարյանի «Արցախ» (1895թ.) եւ Աբրահամ Բեկնուսյանի «Գաղանիք Ղարաբաղի» (1886թ.) գրքերը, որոնք այսօր նրա սեղանի սիրված գրքերից են:

1991թ. հուլիս-օգոստոսին Ամարասի ձորակում կամավորների գումարտակ ստեղծվեց, որի մեջ հաշվվում էին շուրջ 600 երիտասարդներ: Ամարասի հովտի պաշտպանությունը համաժողովրդական գործ դարձավ, քանզի նրանում ընդգրկվեցին Մաճկալաշենը, Սոսը, Զարահունջը, Զերթը, Կոյսուղաշենը, Հերեբը, Խերխուսը, Դովատեղը, Խաչմաչը, Ղարաբուխսը, Ջրաղացները, Մարուշենը եւ էլի որոշ գյուղեր: Այդ գումարտակի մեջ էին նաեւ Կարմիր շուկայի ձորակի

գյուղերը՝ Օճխերը, Շուկան, Թաղավարդը եւ Սարգսաշենն ու Չարդանաշենը: Այդ գյուղերը պարտավորվեցին, որ բնակիչները՝ մեծ թե փոքր, 5 օրվա սննդով բավարարեն գոմարտակը: Գործի անցան կոլտնտեսությունները, որոնք միս, պանիր, բանջարեղեն էին մատակարարում ֆիդայիների համար, կանայք օր ու գիշեր հաց էին բխում բոնիֆոներում: Փոքր երեխաներն անզամ ջուր էին կրում եւ սպասարկման այլ աշխատանքներ կատարում, օգնում մեծերին՝ ինչով պետք էր: Ցավով պետք է խոսել Նարինե անունով մի աղջնակի մասին, որը վաղուց գիմվորագրվել էր գումարտակին եւ թշնամու ոմբահարումներից մեկի զոհ դարձել 1992թ. հունիսի 28-ի ահավոր օրը: Մաճկալաշենցի այդ աղջիկը քարինտակցի՝ նույն Նարինե անունով այն հերոս աղջկա կրկնօրինակն էր, որ գոհվել էր կես տարի առաջ՝ 1992թ. հունվարի 26-ին:

Նորաստեղծ գումարտակը ոտքի ելավ, դիրքավորվեց, սպառազինվեց մերսից ու դրսից, ինքնասպասարկվեց նաեւ տնային սննդով, որ բերում էին ֆիդայի տղաներն իրենց տներից: Խրամուղիներ եւ դօտ-եր պատրաստելու համար օգտագործվեցին մեծահասակների ուժերը, սահմանվեց ամեն մի գյուղի պաշտպանական տեղամասը ընդհանուր ճակատում:

Անհավատալի էր, որ այդ մեծ ուժի հրամանատարը անփորձ, բայց համարձակ եւ ուժեղ կամքի տեր երիտասարդ Արմեն Մելքոնյանն էր, սկսնակ ուսուցիչ, որ աշխատում էր Մամնա գյուղում, բայց ծնունդով մաճկալաշենցի, որն առաջ մտնում էր Արամ Ավետիսյանի ֆիդայական վեցյակի մեջ:

Վերին Դիվանլարից թորքերի դուրս մղումը ավելի խորացրեց առճակատունը հակառակորդ ուժերի միջեւ. հայերն արդեն այս ձորակում «կոխել էին օձի պոչը»: Մարտեր եղան, գոեր ունեցանք, Ամարասի հովիտը դեռ 1992թ. ապրիլից վերածվեց դաժան մարտերի թատերաբեմի: Հատկապես՝ ոչ շատ հեռու տարածությունից ոմբակոծում էին Ամարասի եւ Կարմիր շուկայի ձորակի գյուղերը, Մեծ Ճարտարը եւ հարակից գյուղերը՝ առաջ բերելով գոհեր խաղաղ բնակչությունից: Հատկանշական է 1992թ. օգոստոսի 25-ի օդային ոմբակոծությունը Մուշկապատ-Կոլխոզաշեն-Հերիեր գծի վրա, որից գոհվեց 7 հոգի, իսկ մեկ տասնյակից ավելի մարդիկ վիրավորվեցին, որ հետո բուժվեցին Երեւանում:

Ի դեպ, այդ օրը Կոլխոզաշենում նշվում էր նահատակված զինվորներ Պավլուչա Գրիգորյանի եւ Կարեն Բաբայանի սգի յոթերորդ օրը. նույն օրն իսկ օդուժի ոմբակոծության գոհ դարձան հարեւան գյուղերից ներկայացած հարազատները: Հետագայում Պավլուչայի ծնողները, ի պատիվ իրենց զավակի եւ նրա 15 ընկերների, գիրք հրատարակեցին՝ «Բալլադ գոհված զինվորի եւ մոր մասին» վերտառությամբ: Դրանից հետո էլ այդ փոքրիկ գյուղը կրկին մեծ սուգ տեսավ՝ հողին հանձնվեցին միեւնույն օրը գոհված Բորիկ Բաբայանը (դպրոցի տնօրեն), Հրաչիկ Հակոբյանը, Լեոնիկ Սկրտունյանը եւ Նելսոն Կարապետյանը, իսկ հետագայում...

Հեռահար բնդանոթի արկը հասավ նույնիսկ հեռավոր Սարգսաշեն գյուղը, որից սպանվեց Մարտունու շրջխորհրդի նախկին նախագահ, մի քանի ֆիդայի տղաների հայր Բազրատ Սիքայեղյանը, որն իր մերձավորի մոտ էր գտնվում այդ պահին: Մարտերը սաստկացան հունիսի 28-29-ին, օգոստոսի 19-ին, 26-ին, սեպտեմբերի 6-ին եւ հատկապես՝ սեպտեմբերի 19-ին:

1992թ. հունիսի 28: Ճակատամարտ Պուլուր խութում՝ Մաճկալաշեն գյուղի մերձակայքում, գյուղի արեւելյան դարպասի մոտ: Նշմարվող պարտություն, սրտամաշ լուրեր: Ոմանց փախուստը դեպի հարավ-արեւմուտք՝ քաղաքամայր Ստեփանակերտի ուղղությամբ: Շարժվում են նաեւ Սոսի բնակիչները, հարեւան Բարահունջի, Քերթի, Հերիերի, Ծովատեղի եւ Խերխասի ժողովուրդը: Ահավոր օր էր: Մարդիկ տեղահան էին լինում՝ իրենց հետ համարյա ոչինչ չտանելով: Գնում էին ինչով պատահեր՝ ոտքով, տրակտորով, ավտոմեքենայով: Գնում էին՝ անզամ հետ չնայելով, չզղջալով դժվարությամբ ստեղծած տուն ու տեղը, նույնիսկ գետնափոքերում (բլինդաժներում) բողած որդու կամ հարազատի դիակը: Այդ օրը Սոսում ոմբահարությունից գոհվել էր ութ հոգի, իսկ Մաճկալաշենում՝ երեք:

Ի՞նչ սրտաճնվել, սահմուկեցուցիչ է. երբ տեսնում ես, որ ծնողները տամում են վերմակի մեջ փաթաթած 10 տարեկան տղայի կտոր-կտոր եղած դիակը, իսկ մյուսը, որ մայրը անբաղ է թողել իր 16 տարեկան սպանված տղայի դիակը եւ ստեպ-ստեպ ինքն իրեն կրկնում է՝ տեսնես քաղեցին տղայիս:

Այդ օրը Կարմիր շուկա ավսնն էին մտել թշնամու 5 տանկերն ու թրթուրների տակ ճգնել ճարտարցի Սլավիկ Հարությունյանի մարդատար ավտոմեքենան՝ սպանելով երկու հոգու, իսկ Բարահունջ գյուղից ճամայարիված «Իկարոս» մակնիշի ավտոբուսը, որ երեխաներ էր տանում Երեւան՝ ճամբարում պահելու, բարեխախտաբար, տանկերի հոշոտման բաժին չդարձավ:

Այդ օրը, սակայն, Կոլխոզաշենը «չարժվեց» տեղից, իսկ Մամնա դարձել էր անցանկալի հյուրերի հավաքատեղի: Ահավոր էր, վիճակն, իրոք, բայց ուրախ լուրից՝ թե մերոնք հետ են շարտել թշնամուն, ամեն ինչ կարգավորվեց: Բնակիչները, որ տեղահանվել էին, նույն օրը վերադարձան հարազատ գյուղերը: Թշնամու տանկերից մեկը խփվել էր Օճխեր գյուղի տակ: Ահա այսպես է իր գրառումներից մեկում նկարագրել 1992 թ. հունիսի 28-ը Մաճկալաշենի թիվ 22 գումարտակի խեղարար, ռազմական գործողություններին ակնմատես Մեղա Ծավոնի Սողոմոնյանը.

«Հունիսի 28, 1992: Ամենադաժան եւ ամենաճանր օրերից մեկը: Թուրք ավազակները վաղ առավոտյան «գրադ» կայանից ոմբակոծեցին եւ մեծ ուժերով հարձակվեցին մեր գյուղի վրա: Գյուղի պաշտպանական դիրքը Դավալու խութն էր. մեզնից ձախ դիրքավորված էին տսեցիք՝ Մովսեսի գլխավորությամբ, Սուլու դարայի պահակակետում՝ Ղարաբուլախի տղաները, ձախում՝ Մխիթարի դասակը, իսկ աջ մասում՝ Արշոյի դասակը: Ամարասի վանքից վերել, ձախ կողմում կանգնած էին Սարուշենի տղաները՝ Կարմենի գլխավորությամբ, Գյաղա բազում, որտեղ հսկում էին մեր գյուղի հսկա քաջերը՝ դուրսագն Կաչագանի գլխավորությամբ, Պուլուր խութը, որը պահում էին Հերիերի ազատամարտիկները՝ Վոլոդյայի գլխավորությամբ, իսկ ինչպես միշտ, գետի աջ մասում՝ սարուշենցիների հարեւանությամբ, դիրքերը պահում էին քերթեցիներն ու քարահունջեցիները: Այս բոլորի հրամանատարը մեր հսկա Արմենն էր:

Պուլուր խութի (Հերիերից) աջ կողմը պահում էին Կարմիր շուկայի տղաները՝ Կոկայի գլխավորությամբ: Թուրքերը մեծ ուժերով հարձակվեցին Դավալու խութի վրա: Այստեղ մեծ քաջություն ցուցաբերեցին Ղարաբուլախի տղաները՝ ահ-





պարտվող չէր երևում:

Մովսեսը երբեմն-երբեմն կուսում էր ճակատամարտի ծանր հետևանքը յուրաքանչեքի համար եւ խորհուրդ տալիս հրամանատար Արմենին՝ հետ նահանջել ու վերադասավորել ուժերը, քանզի թուրքերը մոտ են իրենց: Նորից սաստկացավ մարտը, թուրքերը գործի դրին գնդապիւրներն ու նոնականետերը: Սկսվեց մեյրոնց րեթեակի նահանջը:

Քայց ենց այդ ծանր եւ վճռական պահին Կարմիր շուկայի կողմից կրակ տեղաց թուրքերի վրա, իսկ Ճարտարի կողմից, Մովսես Հակոբյանի գնդի տղաները վերցնելով Ռույան սարը, նույնպես կրակն ուղղեցին Դավալուի թուրքերի վրա: Խաչածե կրակ թշնամու վրա: Հայերն ուժ առան, թշնամին սակվեց եւ սկսեց նահանջել: Հենց այդ ժամանակ էլ վաշտի հրամանատարը հրամայեց իր քաջերին՝ «Համարձակներ, իմ հետեւի՛ց»: Թուրքերին ջարդ տվեցին խրամուղիներում: Հրամանատար Պետրոսյանը խրամատներից դուրս եկող հակառակորդին կոտորելիս գոհվեց դարանակալ թշնամու արձակած գնդակից: Նրա հետ գոհվեցին նաեւ նրա երեք արի ու համարձակ զինվորները՝ Սերգեյը, Անյուտան, Արմենը: Հայրենիքը բարձր գնահատեց վաշտի հրամանատար Մովսես Պետրոսյանի մարտական ծառայությունը: նրան պարգևատրելով «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանով:

Ի դեպ, Մովսեսի զոհվելը տաղտկալի է շատ իմաստով: Նախ, որ նա կրում էր իր հորեղբոր՝ իմ աշակերտական ընկեր Մովսես Պետրոսյանի անունը, որը գոհվել էր Մեծ հայրենականում, որպեսզի իրենց տոհմաձառի վրա մի նույնանուն չիվ լինել, երկրորդ՝ ամուսնացած էր, եւ երեխայի էին սպասում, որը, սակայն, ծնվեց հոր գոհվելուց հետո (տղա երեխա): Գումարտակը գոկվեց վաշտի քաջակորով հրամանատարից, որի կարիքը շատ էր զգացվում: Հիշել է պետք, որ Մովսեսի հայր Մաղաթելը 1988-ին մեր բողոքի ծայրը Մոսկվա հասցնող պատվիրակություններից մեկի կազմում էր:

Սեպտեմբերի 19-ի դաժան ճակատամարտը, սակայն, վերջինը չէր Ամարասի հովտում: Թուրքերը դաս չառան ոչ ապրիլյան, ոչ օգոստոսյան եւ ոչ էլ սեպտեմբերի 6-ին ու 19-ին կրած պարտությունից եւ հոկտեմբերի 8-ին նոր հարձակում ձեռնարկեցին ձորակով մեկ: Մերոնք այս անգամ էլ հետ չպարտեցին թշնամուն, քայց եւ Խաղաղասարը գրավելու մեր փորձերը անհաջող անցան, թեւ տղաներից մի քանիսը առանց թիկունք ունենալու հասել էին սարի գագաթն ու հետ դարձել: Հոկտեմբերի 8-ը Մաճկալաչենի գումարտակը մեծ վիշտ կրեց, գոհվեց գումարտակի խիզախ հրամանատար Արմեն Սեյրումյանը: Չկար այլեւս Ամարասի արձիվը: Արմեն Սուրենի Սեյրումյանը օրինակելի վարքի տեր եւ ուսումնաստե՞ց պատանի էր: Ծնվել է 1967 թ. օգոստոսի 20-ին, Մարտունու շրջանի Մաճկալաչեն գյուղում: Տեղի ութամյա դպրոցն ա-



վախտել է 1982թ.՝ գերազանցությամբ, իսկ 1984թ.՝ Սոսի միջնակարգ դպրոցը: Երեք տարի ծառայել է խորհրդային բանակում՝ որպես ԲՄՊ-2-ի մեխանիկ-վարորդ, որը հետագայում անհրաժեշտ եղավ Արցախյան գոյամարտում:



Արցախյան պատերազմում Արմենը ավելի շուտ վերցրեց զենքը, քան դասամատյանը դպրոցում: Փառքի առաջին տրմության դասերը նա ստացավ 1990թ. աշնանը Բերդաձորում՝ Եղմահողի պաշտպանության ժամանակ, այնուհետեւ մահասարսուտ օրեր անցկացրեց Մանաշիղում ու Էրբեջում, Բուզլուխում ու Ծախունյանում, Տողում ու Կրկ-ժանում: Նա զինվոր-կրամանատարի իր փառունակ գործընկիրնեց նաեւ Մարտակերտին: Արմենը իր ծննդավայրում (1991-ից) իրոք արձիվ էր, ինչպես անվանել են նրան: Ամարասի հովտի գյուղերի պաշտպանության հոգսը մանրացավ նրա ուսերին, Արամ Ավետիսյանի եւ մյուսների հետ սկսեց կռվել, իսկ կրթ 1992թ. փետրվարին ձեռավորվեց վաշտը, սեպտեմբերին՝ գումարտակը, դարձավ նրա աներեր հրամանատարը:

Համեստ, հավասարակշռված, ուշիմ ու արի, ուժեղ կամքի տեր այդ պատանին հուսո ճրագ դարձավ համազգայությանների եւ շրջակա գյուղերի բնակչության շրջանում: Չուր չէ, որ Ազն նրա մասին ասել է. «Քանի Մաճկալաչենում կա Արմենը, ես այնտեղ վախ չունեմ»: Քայց, ավա՛ղ, Խաղաղասարը, որ հիմա Արմենասար է կոչվում, գրավելու պահին (1993թ. հոկտեմբերի 8-ին) թշնամու «գրադ» կայանքից եկած հրթիռով սպանվեց Արմենը: Նրա մահով սուգ ապրեց գումարտակը, քանզի սպանվեց մարդկանց հույսն ու ծավալող հաղթանակի նկատմամբ: Քայց հուսահատությունը երկար չտեւեց: Ծնվեցին նոր արձիվներ՝ Սուր, Նեկտեղ եւ այլոք: Ամրապնդվեցին գումարտակի թույլ րեւերը, հուսալքությունը կարճ կյանք ունեցավ, հավատը մեծացավ, զինվորները ռիսկալներ դարձան եւ թշնամուն չպարտեցին վանքից այն կողմ, Ներքին Դիվանդար:

Ասում ենք՝ զինվորները ոյսակալներ դարձան, քանզի նրանք խոր ապրեցին սիրելի հրամանատարի գոհվելը եւ ապրիլի 16-ի (1993 թ.) այն վիշտ, որ թշնամու հրետակոծությանը գոհ գնացին գումարտակի 7 զինվորները՝ միաժամանակ: Եկավ 1993 թ. ամռան սկիզբը: Գումարտակը առաջ շարժվեց, եւ Մարտունու գնդի մյուս գումարտակների օժանդակությամբ ազատագրեցին Ներքին Դիվանդարն ու Ղաջարը, իսկ ամառվա վերջերին՝ օգոստոսի 15-ին, Ֆիզուլու շրջանի մեծ գյուղ Յաղլավանդը, հետո՝ Ֆիզուլին եւ շրջանի մյուս բնակավայրերը:

Արմեն այս մարտական գործողությունների առիթով գոյվեստի խոսք ասել Մարտունու, Մաճկալաչենի, Կարմիր շուկայի եւ Հաղրուքի գնդերի ու գումարտակների համահունչ եւ իրար փոխադարձաբար օգնելու վերաբերյալ:

Քայց ասել, խոսել Մաճկալաչենի արմենյան գումարտակի մասին՝ պատշաճը չհատուցելով Կարեն Ավետիսյանին՝ այդ ինքնու խառատագործին, զենք պատրաստողին, հիանալի տանկիստ-հրամանատարին, նշանակում է՝ ոչինչ



չասել: Կարենի ռազմական կենսագրությունը սովորական չէ: Նա վաղուց, շատ վաղուց է սկսել գործել (1990-ից): Չվախենալով ազերի օմոնականներին և Սոսկ-վայից լիագործված «խաղաղարար» զինվորականների ամենօրյա հետապնդումներից, Կարենը իրենց տան ներքնահարկում հաստոց սարքեց և սկսեց ինքնու-ձիգ հրացաններ պատրաստել: Լավ տիրապետելով խառատագործության նր-բություններին, նա «թողարկեց» 11 ինքնաձիգ, որը և մեծ ոգեւորություն առաջ բերեց ընկերների շրջանում: Տասնկը, միայն տասնկն էր նրա սիրելին, որով քա-նի-քանի մարտերի է մասնակցել: Աղղամի ալատագրման ժամանակ՝ 1993թ. հունիսի 12-ին (այն սեւ օրը, որ խմբից զորավար Ավոն) Կարենը խմբի էր ղեկ-նում 3 տանկ: Նրա հաշվին գրանցված են թշնամու տասնյակ տանկերի խոշտա-րում, ոչնչացում կամ ռազմավարի կարգով գերելու փաստեր: Ինչպես ծնունդով մահկալաշենցի լուսավոր Սերգեյ Օլոյի Գրիգորյանն է «Լ.Ղ. Հանրապետու-թյուն» թերթի 1997թ. մարտի 4-ի համարում «Երկուսը Ամարասի հեղափոխից» վերտառությամբ հողվածում, որ նվիրված էր եղբայրներ Կոմիտասին և Կարե-նին, նկարագրում՝ «Մարտի ժամանակ նրա ընկերասիրությունը առնում չէր նա-նաչում, ինչպես դա պատահեց Ռոմա Գաբրիելյանի հետ, որի տանկը մոլորվել շրջապատման մեջ էր ընկել և պիտի գերվեր հակառակորդի կողմից: Չերկյուղե-լով, թշնամու կրակի տակից Կարենը նետվում է առաջ ու տղաներին ազատում: Նրա տանկը, ինչպես ասում են, թիվ 1 ականոսի անուն էր վաստակելը»:

Բայց ավելի, ականավոր տանկիստը գոհվեց 27 տարեկանում, պատերազ-մի դադարից 28 օր առաջ՝ 1994թ. ապրիլի 14-ին: Նրա մահվանից 3 ամիս անց կի-նը՝ Նունեն, որ ծնունդով Քարահունջ գյուղից է, տղա ծնեց, և անունը դրեցին Կարեն, որ հավերժացնի հոր հիշատակը: Կարենի բազում հերոսությունները նշ-վեցին կառավարական պարգևով՝ «Մարտական խաչ» շքանշանով:

Միքելի ընթերցող, ես միտք չունեմ նկարագրել Մահկալաշենցի գյուղատեղի ուսումնական կենսագրությունը, դա իմ խնդրո առարկան չէ, եւ ոչ էլ հնարավոր է գուցակցված մի քանի խնդիրների հետ դիմել այդ քայլին և հետո էլ՝ այդ ձորա-կին շատ լուսավորներ ու գյուղներ են անդրադարձել, լուսարանել եղած-չեղածը: Զգում եմ, որ դեռ էլի կարեն, այն էլ ռազմական հուշերի տեսքով: Ռուսի, ես փոր-ձեցի միայն մի քանի դե-լքերի եւ քաջագուն զինվորների նկարագրիքը հիշեցնել, որը գոնե մի փոքր լույս կսփռի գյուղատեղի հերոսական կյանքին: Ամենից ա-ռավել ցանկացա վիճակը նկարագրել, ասել, թե Ամարասի հովտի մարտիկ ինչ լուծ կրեցին և ինչպես հաղթահարեցին այդ ծանր օրերը:

Բայց ասելիքս դեռ չավարտեցի եւ ուզում եմ, շարունակելով միտքս, ասել, որ Ղարաբաղյան գոյամարտում ամենուր գոհեր եղան, որ կային օրեր, երբ քնակա-վայրերից 4-ական, 5-ական, 6-ական, 7-ական, մույնիսկ 8-ական ու 10-ական զոհեր էին հողին հանձնում:

Ղարաբաղ աշխարհում 133 ընդամեններ երկուական և 3-ական որդիների կյանք դրեցին հայրենիքի փոխառնակին:

Ամարասի ծորակն էլ ասարեց այդ ամենը. Մահկալաշենցի երեք ընտանիքներ հող-հայրենիքի պաշտպանությանը նահատակեցին իրենց երկուական որդիներ-րին՝ Դմիտրի Ավետիսյանը, Միքայել Հարությունյանը և Անդրեյ Անտոնյանը՝ սույ պատճառներով բոլորին, քանզի այն ժամանակ մեկ համար, դարսարգյու

համար ուրիշի ցավ չկար, ցավը բոլորինս էր: Ծանր էր, արժեքից էլ ծանր, ցավը, դժվար ամոքվող, հույսի դուռը երկայր ժամանակ փակված: Մարդիկ ժամանա-կից շուտ ծերանում էին, բոշնում, մազերը ճերմակում, դեմքերը գունաթափ լի-նում: Երիտասարդ կանանց դեմքերին կնճիռներ էին մշմարվում: Ռժանը նիա-րել, չոփ էին դարձել: Վերացել էին հագուստը հանելու եւ քնելու, լվացվելու կամ լոգանք ընդունելու, սափրվելու կամ մյուս կենցաղային սովորույթները: Մարդ-կանց բառապաշարից չքվել էին «բարի լույս», «բարի օր», «բարի երեկո», «բա-րի գիշեր»՝ վաղուց ընդունված ավանդական կամ նորոյա «բարեւ» ողջույնները: Դրանց փոխարեն նրանք իրենց ուսերին ծանրացած գլուխներն էին թեթևակի շարժում միայն: Շատերը սակվել էւ կարծես թե կորցրել էին խոսելու ընդունակու-թյունը՝ խոսում էին հազիվ լսելի ձայնով, շշուկով, իսկ կանայք շատ լացելուց ցա-մաքել էին, խաչառ ձայնի տիրացել:

Իսկ դպրոցը, երեխաները, նրանց արտասուքները, որ ամեն օր հոսում էին մահացած կամ վիրավոր հարսպատների ու համապոլաղացիների մեծ կորստի համար: Իսկ նրանց սարսափը ամեն ումերի պայրյունի հետ, վախվորած ու խղ-ճահարված դեմքերը:

Խոր կակիծով ու ցավով է այդ ամենի մասին արտա-հայտվել Մահկալաշենցի նվիրյալների բույրի մեջ իր ու-րույն տեղն ունեցող Ռուդիկ Բաբրասի Անտոնյանը իր բազմաթիվ գրառումներում: Նա՝ Էջմիածնի ակումբազ-րադարանային տեխնիկումի ռեժիսորական բաժնի սովո-րող Ռուդիկը, պաշտպանական մարտերի ժամանակ օ-րագիր էր պահում, որտեղ գրում է. «... Չի ընդհատվում մայրերի, կանանց սուրը: Ամենուր լաց է, անժամանակ մահեր, որբացած երեխաներ, սգվոր հարսեր, որդեկորույս մայրեր: Այդպես ահա մեր կյանքը դարձավ արյունոտ»:



Նահատակ զինվորը այնուհետեւ շարունակում է. «Բա որբացած երեխաները, քս ալրիացած կի՞նը, քս «վայ, բալա» կանչող որդեկորույս ծնողները, ո՞վ պիտի պատասխան տա: Մեղա քեզ, տե՛ր Աստված, փրկիր քեզ ապավինած մի բուռ ժողովրդին»: [58]

Այս վերջին բառերը բաժին դարձան Տաեւ Ռուդիկին, որը գոհվեց ճ ընկերնե-րի հետ (1993թ. ապրիլի 16-ին): Մի խոսքով, սահմանամերձ այդ գյուղում դադա-րել էր նախկին մարդկայինը: Անհամեմատ ցավալի է այդ ամենը:

Բայց մարդիկ կարողացան հասկանալ իրար, կարեկից լինել, կամայ-կամայ ձայն ձեռք բերել՝ երիտասարդներին վիշտ չարտճառելու համար: Նրանք ճիգ էին բաժնում ցավակցողներին իրենց նախկին կերպը ցուցանելու համար: Ժամա-նակը, ժամանակը, հեռացող ժամանակը, ահա նա, միայն նա էր կարողանում սպեղանի դառնալ այս դժբախտ, բայց հերոսական մարդկանց վերքերին:

Մարդիկ գգում են, որ պիտի սերունդ ունենան, շատանան, բազմապատկվեն, լրացնեն պակասը, որոնք էլ վայելեն պիտի հաղթանակը: Եվ արեցին. արցունքի միջից ուրախության ցուլքեր վայելեցին, կյանքից հեռացած բալիկ-զինվորներին գրկող ու փարվող մայրերը այժմ նորապսակներին գրկելու փորձ արին ու ողջա-գուրվեցին: Հենց այսօր, այս տողերը գրելիս, որ 1999 թ. սեպտեմբերի 12-ն է,

հարսանիք է Մաճկալաշենում, հարսանիք Ամարասի արծիվ Արմեն Սեյրունյանի տանը, նահատակված Արմենի եղբոր հարսանիքը:

Փա՛ռք ամենեցուն, բոլ գունն մի փոքր ուրախանամ ծնողներ Սուրենը եւ Լատրան, որ վշտի մեծ բեռ են ունել: Խաղաղության պահը որսալով ամուսնացան փառքի շքանշանակիրներ Լեռնիկ Ազանեսյանը եւ Գեղամ Կարապետյանը՝ «երկաթե ճծույզի հեծյալները», որոնք այս ձորակում եւ նրանից դուրս հարսնում էին բշմամուն ու մտայնում մեր հաղթանակի օրը: Իրականացավ զինվոր բանաստեղծ Գազիկ Բեգլարյանի «Սենը՝ մեր վաշտով դեռ թեկեր ենք անելու» բանաստեղծական տողը:

Հեռու, շատ հեռու վայրեր հասավ այս հովտի անունը: Ազնվաբարո եւ գրասիրտ հոգացողներ հայտնվեցին, մարդիկ, որոնք օգնության ձեռք մեկնեցին: Մաճկալաշեն-մեխրյան կանուրջը գցվեց, եւ օգնական ուժերը սատար կանգնեցին դպրոցին, մանկապարտեզին ու Սոսուն գոհվածի այրուն:

Թեթևացան վշտաբեկ այտերը, ուղղվեցին կորացած մեջքերը, քայվեցին խզված ձայները, հանդարտվեցին տրոփող սրտերը, վերականգնվեցին ավանդական ողջույնները: Կյա՛նք, կյանք մտան մարդիկ: Չեղբը բռնեց մուրճը, տղոցը, բահն ու կացինը, վերականգնվեցին քանդվածն ու ավերվածը, փոխվեց բնական վայրերի տեսքը, հեռ բերվեց բուրբի տարածը եւ՝ մի բան էլ հավելումով: Կյա՛նք, կյանք մտան մարդիկ:

Փա՛ռք քեզ, ամենագոր Աստված, փառք շատ: Թող քո աջը միշտ Ամարաս ձորակի վրա լինի: Իսկ այժմ լսեցեք, թե ինչ պիտի ասեմ Ամարաս ձորակի ազատամարտիկներից մեկի՝ սպա Գարիկ Գրիգորյանի մասին: Նախ ասեմ, որ նա իմ աշակերտներից էր, իմ կրտսեր աղջկա հասակակիցն (1957թ) ու դասընկերը, Սոս գյուղացի իմ հիանալի ընկերոջ, վաղամեռիկ Լազարի եւ Մանյայի տղան: Բայց ավա՛ղ, մանուկ հասակում նա գրկվեց անասնաբույժ հորից: Գարիկ Լազարեիչը թե՛ ուսումնառությամբ, թե՛ գործելակերպով եւ թե՛ զինվորական գործունեությամբ լայն շրջանակների տեր էր: Երեսանի պոլիտեխնիկական ինստիտուտի շինարարական ֆակուլտետի շրջանավարտ, սիրիոյան Նովոկուզնեցկ քաղաքի շինարար աշխատողից մինչեւ Արցախի Մարտունու շրջանի շինարար-ինժեների պաշտոնավարությունը, այնուհետեւ՝ հասած Վանաձոր: Փառապանք այս սպան զինվորականի լավ փորձ էր ձեռք բերել Կրասնոսելսկի, Մպիտակի եւ Արցախի Մարտունու շրջանների զինկոմի պաշտոններում աշխատած տարիներին:

Բայց Գարիկի արյունը եռում էր: Արցախյան գոյամարտի օրերին նա թողեց վերջին աշխատավայրը՝ Կիրովականի զինկոմիսարիատը, հեռացավ այդ տաք անկյունից եւ մասնակցեց Արծվաշենի հերոսական պաշտպանությանը: Նրա մարտական ուղին անցել է Շահումյանով, Մարտակերտով, Շուշի-Լաչինով: 1992 թ. սկզբներից նշանակվել էր Մարտունու ինքնապաշտպանական ուժերի շտաբի պետ: Գարիկը Ամարասի ձորակի Վերին Դիվանլար թորքական գյուղը օժոնականներից ազատագրելուն մասնակցած ազատամարտիկների շարքում էր: 1993 թ. կեսերից Գարիկ Գրիգորյան փորձառու զինվորականը Վարդենիսի շրջանում էր, Օճարի լեռնանցքի ազատամարտիկ-սպայի դերում, որտեղ էլ քաջ հրամանատարը գոհվեց՝ հերոսական մարտեր մղելով: Նրա աճյունն ամփոփ-

ված է հայրենի Սոս գյուղի գերեզմանուցում, իսկ ընտանիքը շարունակում է ապրել Հայաստանում: Հատկանշական է այն փաստը, որ երբ հողին էին հանձնում անվեներ մարտիկի մարմինը, նրա 9 տարեկան որդի Էդգարը, նախապես հսկած լինելով հոր բաճկոնը, ամբոխի մեջ խորխտ ձայնով ասաց.

«Ես որ մեծանամ, հայր ջան, քո վրեժը յշմանուց կառնեմ»:

Հարգարժան ընթերցողը կարող է հարց տալ՝ իսկ ինչո՞վ բացատրել Գարիկի այդչափ տեղից-տեղ անցնելը: Կասեմ, որ աշխատանքի առումով այն ժամանակներում դա կապված էր Հայաստանի շրջանավարտներին ԼՂՄ-ում սառն ընդունելու հետ, իսկ զինվորական առումով, բերես, այն էլ, որ մեր պաշտելի սպան ցանկանում էր հավասարության նշան դնել իր հայրենիք Արցախում ծառայելու եւ որպես հայաստանաբնակի՝ Հայաստանի տարածքը պաշտպանելու առաքելության մեջ:



Որդիս կզա

- Հաղորդյուն եկավ - որդիս կզա*
- Չորքը տուն եկավ - որդիս կզա*
- Հոտից գառ բերեց - որդիս կզա*
- Կտունը չվեց - որդիս կզա*
- Պատը մար տվեց - որդիս կզա*
- Մարդը չորացավ - որդիս կզա*
- Մեջքը կորացավ - որդիս կզա*
- Յավը խորացավ - որդիս կզա*
- Մտավ անկողին - որդիս կզա*
- Դժվար է շնչում - որդիս կզա*
- Հոգին էր փչում - որդիս կզա*
- Բողբոց տարին - աչքս վկա*
- Կարդացինք քարին - «Որդիս կզա»*

Հանո ՍԱՀՅԱՆ

x x x

Վերջաբանելով Ամարասի մասին պատմումս, հաճախ միտք եմ անում՝ ի՞նչ գորոքյուն, ի՞նչ ուժ կար կուտակված այս հովտում, որ հայից բազմապատիկ շատ ազերի խուժանը անգեմ մի ժողովրդի, որի ձեռքին ինքնաշեն կամ չկատարելագործված սակավ զենքեր կային միայն, հաղթել չկարողացավ, քանիցս ձեռնարկված հարձակումներում վերստին պարտվեց ու տեղի տվեց: Այս հարցի պատասխանը պետք է որունել ոչ միայն մեր ուժի ու միասնության, որ հաճախ է սսվում, այլև ղիցարանության մեջ, աստվածարար ուժով նույնպես՝ Ամարասի

հնամենի վանքի ուժով, որ դարեր շարունակ պատը գրահ է դարձել, իսկ գանգը հավատ:

Երբեմն մտածում ես՝ այդ ինչո՞ւ Արցախի մյուս՝ Հարանո այս գավառի արեւելյան կողմում միայն կառուցվեց Ամարասի վանքը Գրիգոր Լուսավորչի եւ նրա թոռ Գրիգորիսի կողմից: Պատասխանը մեզ այստեղ էլ տպւած է չի տալիս, քանզի գիտենք, որ, հավանաբար, Լուսավորիչը կուսում էր, որ հայոց արեւը խավարեցնելու համար թշնամին ամենից շատ պիտի գրոհի արեւելքից, հետեւապես, հայերը նախ եւ առաջ պետք է ամրապահող դարձնեն հենց այդ եզրը:

Քանդելով վանքը (1378թ.) եւ նրա քարերը բոլոր զինվորների ձեռքով Արաքսը բաժնելը չօգնեց թշնամուն՝ հանգցնել այսպիսի հավատը, քանզի նրանք իրենց հոգու մեջ զգում են Մնարոպ Մաշտոցի, Գրիգոր Լուսավորչի եւ նրա թոռ Գրիգորիսի շնչառությունը:

Մերոնք միշտ պզու՞մ են, որ Ամարասից է սկսվել հայոց տառերի հոգեկրթիչ եւ հայակրթիչ արշավը Հայոց Արեւելից կողմանց բոլոր գավառներում: Եվ իբրև չէ, որ արցախցի պատմաբան Հայկ Խաչատրյանը գրել է, որ «Արցախն Արցախ պահելու համար Ամարասը եղել է ամենաբարձր դիտակետն ու ամենապայծառ փարոսը»: [59]

Եվ պահվեց այդ դիտակետը, պահվեց այդ փարոսը: Բայց ոգին՝ ոգի, հավատը՝ հավատ, որ անթերված պահել է հայը այս հովտում, նորովի արտահայտվեց Արցախյան գոյամարտի դժնդակ օրերին:

Այս ոգին միայնակ չմնաց, նրան գումարվեց ուժը, որին էլ այժմ ապավինում է հայը, եւ՝ ոչ միայն եկեղեցու հավատի զանգերին:

Ահա այս է մեր հաղթանակի աղբյուրը՝ ոգի եւ ուժ, որի տերը դարձավ հայը Ամարասում, այս կանաչ երկայունակ ափսեի մեջ, որի աջ պոռնակը Խազազի սարն է, ձախը՝ Լուսավորչի սարը: Բայց այդ տեղանունների պատմությունը այնքան է հին, որ հասնում է մինչեւ հայոց ռազմի աստված Վահագնին եւ Գրիգոր Լուսավորչին:

Ավանդությունը մեզ հուշում է, որ շատ հեռու անցյալում, երբ հայերը հերանոս-բազմաստված էին, իսկ Վահագն էլ նրանց աստվածներից մեկն էր, իր պատգամախոսին ուղարկում է Ամարաս՝ իր գովքն անելու: Ամարասի մարդիկ, սակայն, պատգամախոսի զորությունը փորձառության մեջ զննելով, նրան ոչ մի ուտելիք չեն տալիս, եւ նա ստիպված սնվում էր միայն խազազով: Չորակի հինգ գյուղերի՝ Արամժակի, Ջոչիգի, Ջարահոջի, Բրիտիսի եւ Ջարավեժի բնակչությունը աստվածային պատգամախոսի անունը կոչեցին Խազազ: Մյուս կողմից, երբ Գրիգոր Լուսավորիչը եկավ Արցախի Արեւելից կողմը՝ քրիստոնեություն տարածելու, սկզբում արցախցիք նրան չհավատացին ու ասացին. «Եթե դու կարողանաս յոթ օր տարել միայն խազազ ուտելով եւ ձայնդ չկորցնես, մենք կհավատանք քեզ էլ, քո Աստծուն էր»: [60]

Բայց Գրիգոր Լուսավորիչը չգիտեր, որ եթե մարդ միայն խազազ ուտի, ձայնը կկտրվի: Նա խազազի մի քանի փնջեր ձեռքին, բարձրացավ Ամարասի ձախակողմյան սարը: Երկրորդ օրը գլխի ընկավ, որ իր ձայնը կտրվում է խազազ ուտելուց: Մակայն հնարագետ մարդ էր Գրիգոր Լուսավորիչը: Նա համտես արավ

ձորակի մի քանի աղբյուրների ջուրը եւ գլխի ընկավ, որ դրանցից մեկն օգնում է իր ձայնը պահպանելուն: Եվ այդ աղբյուրի օգնությամբ հաղթեց, ու արցախցիները հավատացին Աստծուն: Այդ ժամանակվանից էլ սարը կոչվեց Լուսավորչի անունով:

«Հիմա դեմ-դիմաց են Խազազն ու Լուսավորիչը. մեկը հերանոս է, մյուսը՝ քրիստոնյա: Եվ ճիշտ Ամարասի Աման էլ արցախցին է, մի կողը հերանոս է, մյուսը՝ քրիստոնյա: Յուրաքանչյուր արցախցի տասն անգամ երդվելիս հինգ անգամ ասում է՝ Աստված վկա, հինգ անգամ էլ՝ արես վկա («իմ արես»):

Այնպես որ՝ ոչ հերանոս Վահագն է հաղթում արցախցուն, ոչ էլ քրիստոնյա Հիսուս Քրիստոսը: Երկուսին էլ իր հոգում տեղ է տվել լայնասիրտ արցախցին: Նա կարող է աշխարհին մերկայանալ քրիստոնյայի տեսքով, իսկ հետմախորչում պահել հերանոսի էությունը»: [61]

## ՀԱՅԱՑՔՆԵՐ ԵՎ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մեր հայեցի կեցվածքի մեջ մտնելու, մեր շղթաներից ազատվելու համար սկսված այս գոյամարտում հերոսությունները չէ, որ բաժին են ընկել մեզ, որով հայարտանում ենք: Մենք ականատես ենք՝ նրիտասարդության մի մասի (քարե-բախտարար՝ քիչ) դժգույն ու ստվերոտ կողմերին, որոնք, այսպես ասած, «փոր-մանքից հեռու բաշվելու» գիծ են բռնել: Այդ վախկոտները փախչում են նույնիսկ մեկական ստվերից՝ թողնելով ձեր ծնողներին եւ անօգնական երեխաներին: Նրանք չեն գիտակցում, որ չկա ավելի մեծ անարգանք, քան մարդուն դավաճան անվանելը: Նրանք ապուշի հայացք եւ կողմնակի դիտողի դեր են ստանձնել շատ տղաների գոհվելու փաստին: Իսկ ո՞նց է, թե հայրենիքում են, ոտքերի տակ վառվող հողում զբաղվում են թալանով, զոդությամբ...

Այդ մարդիկ, հիրավի, ծանոթ չեն եւ չեն կարողացել 1918-21թթ. Չանգեզուրի հերոսամարտը կողո, Խուստուփյան Արծիվ Գարեգին Նժդեհի այն բառերը, թե՛ «Ազգությունը հայը ազգի աղբն է, թերմացքը, տականքը, նրա ներքին թշնամին՝ լծված արտաքին թշնամու ռազմակարգին»:

Իսկ ովքեր ճողորակ են հայրենիքից, դուրսնելով են կառուցում իրենց կյանքը օտար ափերում: Նմանները չեն խորհում, որ գալու է հայրենիքին հաշվետվություն առնելու ժամանակը, չգիտեն, որ ժամանակը մեզ, վերջիվերջո, կանցկացնի գետը, եւ մեր վշտերի բեռը կմնա մյուս ափին, ու իրենք էլ որպես այդ վշտի մի մասը կմնան այն կողմը, մեզանից դուրս:

Հարաբարդի պատմությունը ոչ իրատես ղեկավարների իրարամերձ հակասությունների վկան է եղել: Դրանից շատ է տուժել Արցախը, անգամ գաղթի պատճառ դարձել: Նմանակը արեւ էր մեր Շաժման էն գլխից եւ այժմ էլ շարունակվում է մեր ջոջերի միջեւ: Այդպիսի մենք տեսել ենք Հատուկ կառավարման կոմիտեի եւ Կազմկոմիտեի դժնդակ օրերին, երբ հակոտնյա ուժերը առկա էին մեր շարքերում: Իսկ այժմ, Շարժումից տասը տարի անց ինչի՞ վկան ենք. կասենք՝ շատ տխուր փաստերի, որ հաղթած ժողովրդի հովիվներին հատուկ չէ: Ես հեռու եմ դրանք փաստարկելուց, քանզի ամեն ինչ չէ, որ պարզ է, իսկ հակոտնյա

կողմերի դիրքերը՝ չբացահայտված:

Ասկեր, որ մեզ Շարժման մտքային ու եռանդն չբացահայտված է հակառակ շատ ե-  
րանքների անհավանականորեն միջին «Լարաբաղի հիմնահարցի» շուրջ առկա էր:  
Նրանքից ոմանք ռազմական նախադեպ կոչերի հեղինակներ էին (պաշտպան-  
վելու առումով, հատկապես սովետախորհրդային ողբերգության օրերին), ոմանք  
հաշտվելու, իսկ ոմանք էլ՝ հուսահատության գիրկը նետվելու: Եվ հենց այդ դե-  
կավար այրերի, Շարժման ղեկավարների որոշ տարակարծություններ հիմք են  
տվել, որ մտավորականների մեջ առաջ գան տարբեր հոսանքներ ու գնահա-  
տումներ:

Այսպես, մեր որոշ մտավորականների (գրողներ, պատմաբաններ) մեջ ստա-  
հող այն պատկերացումն էր բազմաթիվ, թե Արցախի պատերազմության գոր-  
ծում մեր սակավ նվաճումները, հիմնահարցի լուծման անկարողության պատ-  
ճառները, իբր, այն է, որ «ճացման» տարիներին գործած կուսակցական եւ պե-  
տական մարմինների մի շարք աշխատողներ, որոնք ժամանակին խաղում էին  
«կենդանության» թիմում, մտնում են Շարժման մեջ եւ նրանում ղեկավար դիրք  
գրավում, ընդհանուր պայքարին մոտենում «կոմունիստական մտածելակեր-  
պով», Շարժումը խթանում ոչ թե դեպի դեմոկրատական ուղի, այլ ընդհակա-  
ռակն, որ «Կռունկը» չկարողացավ բարձրանալ, կանգնել արցախահայության  
դեմոկրատական շարժման գլուխ:

Այդ մտավորականներից ոմանք նույնիսկ Լարաբաղի նորաստեղծ Ազգային  
խորհրդի գործունեությունն են գրվանի տակ առնում եւ նրան համայնում «անգոր-  
ծունյա» մի օրգան: Սակայն այդ նույն մտավորականները (նրանց անունները  
առայած տալ անհրաժեշտ չէ՝ նրանց հետ գործ կունենան գալիք ողջախոհ մար-  
դիկ՝ պատմաբանները) տարբեր շարժառիթներով գովեցրում են վարչաիրաճա-  
յական համակարգի առանձին դարաբաղյան գործիչներին, մեջբերումներ անում  
ԽՍՀՄ Գերագույն խորհրդում նրանց խրոխտ ելույթներից (Հ. Պողոսյանի եւ ու-  
րիշների): Ինչպե՞ս հասկանալ նրանց:

Կամ, 1989 թվականի օգոստոսի 16-ին Լեռնային Լարաբաղի բնակչության  
լիակոր ներկայացուցիչների համագումարի կողմից ընտրված Ազգային խորհր-  
դի առաջադրած խնդիրները նրանք համարում են «հույժ կարեւոր եւ միշտ ժա-  
մանակին առաջ քաշված խնդիրներ»: Հակասելով իրենք իրենց, նրանք Ազգա-  
յին խորհրդի ստեղծումը համարում են «միանգամայն դեմոկրատական»: Իսկ ե-  
թե դա այդպես է, հապա ինչի՞ են պետք դատարկ լուտանքները, սեւ ակնոցները:

Սակայն իրերի եւ իրադարձությունների գործնական ընթացքը այլ բան է  
պատկերում իրատեսներին եւ բոլորովին էլ նման պարոն մտավորականների  
մտահղացումների օգտին չի խոսում: Նման պարոններին առաջադրենք մի բա-  
նի հարցեր: Նախ, մտածեք, որ եթե «Կռունկը» կամ Ազգային խորհուրդը լեցում  
էր «կոմունիստական մտածելակերպի» ղեկավարներով՝ Բորիս Դադամյան,  
Վաչագան Գրիգորյան, Արկաղի Մանուչարով, Զ. Մովսիսյան, Հենրիխ Պողո-  
սյան, Վահան Գաբրիելյան եւ ուրիշներ, ապա ինչո՞ւ էին նույն վարչաիրաճա-  
յական Կենտկոմի առանձին աշխատողներ (Գիրենկու եւ ուրիշներ), Գերագույն  
խորհրդի պարատների նախագահներ (Լուկյանով, Դաշիգով), բանակի հրամա-  
նատարներ (Յազով, Գրոմով եւ այլք), ՊԱԿ-ը, Աղրբեջանի ԿԿ բյուրոն եւ այլ

մարմիններ հետապնդում Լարաբաղի վարչաիրաճայական ղեկավարներին՝ գե-  
րեվարում Բորիս Դադամյանին, կուսակցությունից հանում Վաչագան Գրիգո-  
րյանին, նոր հանցանշաններ որոնում կամ արխիվից «բարձրացնում» ԼԴԽՄ  
պարտադրի նախկին նախագահ Հենրիխ Պողոսյանի վերաբերյալ նյութերը, որ-  
պեսզի քննչական գործ հարուցեն նրան, գերեվարելու փորձ կատարում Մար-  
տակերտի շրջկոմի առաջին քարտուղար Վահան Գաբրիելյանի հանդեպ, գերե-  
վարում Շահումյանի շրջկոմի առաջին քարտուղար Վլադիմիր Աղաջանյանին եւ  
նրա պաշտոնակից ընկերներին, աշխատանքից ազատում եւ սկսում հետապն-  
դել Հաղորդի շրջկոմի առաջին քարտուղար Գ. Բաղդասարյանին, բանտ նետում Ար-  
կաղի Մանուչարովին: Կամ մի՞թե մեր Շարժումը հետ «խթանողները», որոնցից  
մեր պարոնները ի նկատի ունեն Վաչագան Գրիգորյանին, Սեմյոն Բաբայանին  
եւ ուրիշներին, կարող էին վտանգելով իրենց կյանքը, երկարատեւ հացադուլի մեջ  
գտնվել, որոնցից առաջինը հետո հատուցեց մահով:

Ի դեպ, հացադուլի՝ այդ «անձնագրի ճանապարհի» մասին: Լարաբաղի հիմ-  
նահարցին արդարացի ու ճշմարտացի լուծում տալու նպատակով հայրերիների  
պայքարի մի աստիճան էլ հանդիսացավ 1990թ. սեպտեմբերի 9-ից մինչեւ սեպ-  
տեմբերի 29-ը Մոսկվայի «Մոսկվա» հյուրանոցում բաղաբաղական հացադուլ հայ-  
տարարած մեր մեծ այրեր, անվանի գրող եւ հրապարակախոս, ԽՍՀՄ ժողովր-  
դական պատգամավոր Զորի Բաբայանի, ԽՍՀՄ ժողովրդական պատգամավոր, սոցիա-  
լիստական աշխատանքի կրկնակի հերոս, աշխարհի առաջին ակադեմիաների  
խակական եւ պատվավոր անդամ, ՀՍՍՀ ԳԱ ակադեմիայի պրեզիդենտ, ակադե-  
միկոս Վիկտոր Համբարձումյանի, ԽՍՀՄ ժողովրդական պատգամավոր, ԽՍՀՄ  
ժողովրդական արտիստ Սոս Բաբայանի, ԼՂ Ազգային խորհրդի նախագահ,  
ԽՍՀՄ ժողովրդական պատգամավոր Վաչագան Գրիգորյանի եւ ԼԴԽՄ-ի՝ լու-  
ծարքի ենթարկված մարդկային գործկոմի նախագահ Սեմյոն Բաբայանի  
քաղաքական քողորհի ընդվզումը, որն իր վրա սեւեռեց ողջ աշխարհի առաջադեմ  
մարդկության ձայնն ու համակ ուշադրությունը:

Ընդդեմ պետական մասշտաբով իրականացվող կեղծիքի ու անբարոյակա-  
նության, հայ ժողովրդի եւ հատկապես արցախահայության իրավունքների ու  
արժանապատվության ոտնահարման եւ ի պաշտպանություն մեր հայ հացադու-  
լավորների, միացան նաեւ տաջիկ ժողովրդի մտավորական, պատմաբան Ռուս-  
տան Շուքուրովը եւ ուրբեկ ժողովրդի գավակ Սուրաբ Շարաֆուդինովը: Հացա-  
դուլավորներին քիկումը կանգնեցին աշխարհի տարբեր երկրների բուհերի, միու-  
թյունների եւ այլ հաստատությունների գործիչներ, մի շարք հանրապետություն-  
ների ԳԱ նախագահություններ:

Սակայն այդ ամենի նկատմամբ հայաստանյայց Գորբաչովը մնում էր անհաղորդ  
եւ անողորմելի: Նրա հետ միաժամանակ, ինչպես կենտրոնական մասնույթ, այն-  
պես էլ կենտրոնական հեռուստատեսությունը, ԽՍՀՄ Գերագույն խորհուրդը  
անողորմելի մնացին. չէ՞ որ նրանք հստակ առաջադրանք էին ստանում վերելից՝  
Աղրբեջանը հայ «գրոհայիններին» հարձակումներից փրկելու առթիվ:

Բայց հայ հացադուլավորներին աշխարհում շատերը հասկացան՝ թե ինչ են  
պահանջում նրանք, հասկացան, որ նրանց պահանջը ծայրահեղականների

պահանջ չէ, որ նրանք միայն մի բան են ցանկանում՝ «որպեսզի իրագործվի ԽՍՀՄ Գերագույն խորհրդի այն որոշումը, որն ընդունվել է տասն ամիս առաջ»:

Գրող Սիխալի Դուդինի գլխավորությամբ Չորի Բալայանի կյանքը փրկելու համար ստեղծված կոմիտեն պրեզիդենտական խորհրդի անդամներին հրամեռագրով պաշտպանում էր հացադուլավորների պահանջները եւ դատապարտում Վինվորական բռնապետության ոտնձգությունները՝ Ղարաբաղի բնակչության հանդեպ:

Ուշագրավ է հացադուլի առիվ Ռուսաստանի խորհրդարանի կողմից 1990թ. սեպտեմբերի 21-ին ԽՍՀՄ պրեզիդենտ Մ. Գորբաչովին ուղղված դիմումի թվանդակությունը, որի տակ ստորագրել են խորհրդարանի 30 անդամներ: Դիմումում ճանաչված պահանջները ասված է. «... Անհանգստություն հայտնելով խորհրդարանի անդամների առողջական վիճակի համար, որոնք ստիպված են այդ ծայրահեղ միջոցին դիմել հանուն օրինական իշխանության վերականգնման ԼՂԽՄ-ում, դիմում ենք Ձեզ՝ պահանջելով ապահովել ԼՂԽՄ բնակչության իրական անվտանգությունը, ենարավոր ամեն ինչ անել, որ վրկվի ժողովրդական պատգամավորների կյանքը, խստիվ կիրառել ԽՍՀՄ սահմանադրությունը, պաշտպանել բաղադրարկների իրավունքներն ու ազատությունները, ինչպես այդ մասին Դուք ասում էիք երկրի պրեզիդենտի Ձեր երդման մեջ»:

ԽՍՀՄ Գերագույն խորհրդին համանման բողոքներ ներկայացրին նաև մի խումբ ռուս մարդիկ՝ Բուդայցկին, Գելմանը, Գոմչարովը, Գրանինը, Ժիգուլինը, Ջախարովը եւ ուրիշներ, որ իրենց պահանջը հրապարակեցին «Լիտերատուրնայա գազետայի» 1990թ. սեպտեմբերի 26-ի էջերում:

Հացադուլավորները շատ օրեր պայքարեցին եւ միայն Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինի խնդրանքով «սուրը դրին պատյան»՝ դադարեցնելով հացադուլը: Վազգեն Առաջինը՝ ալեհեր Հայրապետը, ոչ միայն խնդրեց, այլև հորդորեց, որ՝ «Եթե Դուք հարկ չհամարեք ամսալ մեր ձայնին, ապա ես նույնպես պատրաստ եմ հացադուլ հայտարարել եւ մնալ ձեր կողքին այնքան ժամանակ, որքան կպահանջվի... Ես եկել եմ կրկին իմ հարգանքը մատուցելու Ձեզ՝ Ձեր այդ իսկապես հերոսական արարքի համար: Մեր ողջ ժողովուրդը շատ բարձր է գնահատում Ձեր քաղցը, եւ այստեղ, եւ արտերկրում: Ձեր արարքը, առանց չափազանցության, կարելի է ասել՝ աշխարհի խիղճը ցնցեց: Հացադուլներ, անշուշտ, եղած են, բայց որ հացադուլ անի ակադեմիկոս, աշխարհահռչակ մի գիտնական՝ այդպիսի բան չի պատահել: Այնպես որ, ողջ աշխարհը ցնցվեց: Եվ մենք չահեցիմք բարոյապես, ազգային իմաստով էլ չահեցիմք: Եվ կարծում ենք, որ ինչ-որ չափով պիտի օգնի, որպեսզի մոտենանք արդարության դռներին, հուսով մոտենանք»:

Իմիջայրոց, այդ օրերին ԼՂ «խորհրդային Ղարաբաղ» բերքի խմբագրի տեղակալ լրագրող, ԼՂՀ այժմյա նախագահ Արկադի Ղուկասյանը հեռախոսաբար ուղև է ունեցել հացադուլավորներից Սեմյոն Բաբայանի եւ Վաչագան Գրիգորյանի հետ, որի համառոտ բովանդակությունը ոչ մի կասկած չի բողել նրանց տոկոսության, դիմացկունության եւ ընտրած ուղուց չշեղվելու վերաբերյալ: Ահա այն.

«Արկադի Ղուկասյան.

- Մենք բոլորս շատ ենք անհանգստացած Ձեր առողջության համար: Հարյուրավոր ընթերցողներ են դիմում եւ խնդրում Ձեզ՝ դադարեցնել հացադուլը: Սեմյոն Բաբայան.

- Հարողեցեք արցախյաններին՝ բող չանհանգստանան: Մեզ մոտ ամեն ինչ կարգին է: Մենք իրավունք չունենք թեքվել մեր ընտրած ուղուց: Թող դրանք չքնդունվեն որպես գեղեցիկ բաներ: Մեզանից յուրաքանչյուրը սրտաբաստ է գոհվել հանուն Արցախի: Ինչպե՞ս հիմա կցանկանալի գրկել եւ համբուրել արցախյաններին՝ իրենց աղաճաբղկության եւ նվիրվածության, մեծ հոգու համար: Ծշմարտությունը մեր կողմն է եւ այն անպայման կհատրանակի: Մեր մասին մի՛ անհանգստացեք, մենք գիտենք, թե ինչի ենք գնում:

Վաչագան Գրիգորյան.

- Հարողեցեք մեր հայրենակիցներին մեր մեծ շնորհակալությունը օգնության եւ պաշտպանության համար: Ամեն մի հեռախոսային գրույց, հեռախոսագիր, որոնք հարյուրավոր են, մի-մի կուժ արցախյան արքայութի ստանորակ ջուր են մեզ համար: Եվ այդ կենդանի կաթիլները փոխանցում են մեզ զորություն եւ հույս: Այդպիսի ժողովրդին չեն կարող ծնկի թեթել, կոտրել կամքը: Մենք այդ ժողովրդի մի մասնիկն ենք եւ մենք կզանք մինչեւ վերջ, պայքարը շարունակվում է:



Ա. Ղ. - Կրեմլի վերաբերմունքը դեռ նո՞ւյնն է եւ ոչ ուրիշ կերպ:

Ս. Բ. - Դա Միության երկաթբետոնե, հրամանատարական-բյուրոկրատական մեքենայի դժվար տատանվող արյունք է: Վերեւերի անդրադարձը ինձ հիշեցնում է մի ճանաչված երգի հետեյալ տողերը: Հիշո՞ւմ եք՝ «Բայց մեզ համար միեւնույնն է...»:

Վ. Գ. - Կրեմլը սուսցվա պես խուլ ու համբ է: Հերթական անգամ Գորբաչովը հերք չի հասցնում Ղարաբաղին: Նրան այժմ առաջին հերթին հետաքրքրում է իր համար լրագուցիչ լիստրություններ ստանալը: Երկիրը մեզ հիշեցնում է ուղղությունը կորցրած նավի:

Ս. Բ. - Կա եւ ուրախալի ներություն: Հացադուլավորներին պատգամավորները դիմել են երկրի նախագահին:

Ա. Ղ. - Ես հասկանում եմ, որ չնայած Դուք առույգ եք գգում Ձեզ, բայց եւ այնպես, այնքան էլ լավ չի կարող լինել Ձեր առողջությունը: Եվ գիտե՞մ նաեւ այն, որ այդ ծանր իրադրությունում մի բանի անգամ չէ, որ ձեզ այցելել է հուժուրդ: Դրա հետ միասին եկեք մի ակնյարբ անջատվենք լուրջ գործերից: Եթե ես ձեզ իմացող որեւէ մեկին ասեմ, որ Վաչագան Գրիգորյանը եւ Սեմյոն Բաբայանը ապրել են հյուրանոցի նույն համարում 11 օր եւ չեն խաղացել շախմատի ոչ մի արարտիստ, ինձ ոչ ոք չի հավատա: Եվ այսպես՝ ի՞նչ է հաշիվը:

Վ. Գ. - 12 : 8՝ հօգուտ ինձ (հեռվից ընկալուչի մեջ լավում է Ս. Բաբայանի բողոքի ձայնը - Ա. Ղ.):

Ս. Բ. - Դուք ավելի լավ է հարցներ, թե ինչպիսին է եղել երեկվա վիճակը: Նա ամբողջ օրը քայլել է անտրամադիր:

Ա.Ղ.- Ինչպե՞ս են Ջորի Բալայանը, Սոս Սարգսյանը, Վիկտոր Համբարձումյանը:

Վ. Գ. - Բոլորն էլ իրենց պահում են տղամարդավարի: Իհարկե, ուրիշներից ավելի դժվարը Ջորի Բալայանի համար է: Նա սովածությունը տանում է արդեն 16 օր: Բայց չէ՞ որ արցախցիները գիտեն նրա մարտական ուժին:

Ա.Ղ.- Հաղորդեցե՞ք բոլոր մերոնց մեր ամենավաղ ցանկությունները:

Վ. Գ. եւ Ս. Բ. - Շնորհակալություն: Արցախը մեր սրտում, մենք շատ բան կարող ենք անել: Թող ամեն ինչ Ձեզ մոտ լավ լինի»: [62]

Իսկ այն, ինչ պատահեց Ստեփանակերտում, Ստեփանակերտ մակվարժական ինստիտուտում, 1988թ. հոկտեմբերին՝ հացադուլի առումով, անսպասելի էր եւ արտառոց:

Հացադուլ էր հայտարարել ինստիտուտի դոցենտ, մանկավարժական գիտությունների թեկնածու Համլետ Վաղարշակի Գրիգորյանը:

Հացադուլի պատճառը լուրջ էր, դրական, հետեւանքները Ղարաբաղյան շարժման համար՝ ցանկալի:

ԼՂ մարզկոմի առաջին քարտուղար Հենրիխ Պողոսյանի հրամանն էր՝ փակել Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտը եւ երկու հազար ուսանողներին ու դասախոսական կազմին տեղափոխել Հայաստան (Կիրովական): Ըստ վերադասի, դրանից առաջ աղբրեջանցի ուսանողներին ինստիտուտից տեղափոխելու պատճառով դա տրվում էր, իբր, աղբրեջանցիների եւ հայերի հարցում հավասարությունը (պարիտետը) պահպանելու համար:

Մինչդեռ պարզ էր, որ աղբրեջանցիները եթե գնացին էլ, գնացին միայն Կարկառի այն ափը եւ ոչ թե տեղափոխվեցին Աղբրեջանից, իսկ Ղարաբաղից հայերի լքումը նպատակ ուներ կտրել ուսանողությանը Ղարաբաղյան շարժումից, ջլատել Շարժումը:

1988թ. նոյեմբերին Ստեփանակերտից ուսանողների եւ դասախոսների տեղափոխությունը իրական դարձավ, բայց դեռ չանցած մեկ ամիս, ահավոր երկրաշարժը, որը տեղափոխված ուսանողներին էլ վնասներ պատճառեց, «ժարկադրեց», որ հետ գան բոլորը: Այսպիսով, Համլետ Գրիգորյանի կամոք եւ կառավարության կամքին հակառակ, վերականգնվեց մանկավարժական ինստիտուտը Ստեփանակերտում, որի ուսանողները հետագայում հրաշքներ գործեցին Ղարաբաղի պաշտպանության դիրքերում: Խոսելով հացադուլի մասին, ասենք, որ հացադուլը դադարեցնելու խնդրանքով բոլոր դիմում-թախանձանքները Հ. Գրիգորյանը կտրականապես մերժում էր: Նա նույնիսկ մերժեց իր սիրելի ուսուցչուհի մոր աղաչանքները: Ի դեպ, Արցախյան շարժման այդ ղեկավար գոր-



ծիչը տատասկոտ ու փշոտ ճանապարհի շատ կտրեց, տառապանքներ շատ կրեց երկրի երեք քաղաքների բանտերում՝ Պյատիգորսկում, Սարատովում եւ Բարվում:

Նշենք, որ նա ամեն անգամ ձերբակալվում էր որեւէ առիթով, ասենք՝ առաջին անգամ հայոց եղեռնի 75-ամյակի օրը՝ 1990 թվականին, երկրորդ անգամ՝ Երեւանից Ստեփանակերտ հետդարձի ճանապարհին, ուր գնացել էր մասնակցելու ՀԳԽ նստաշրջանին՝ որպես պատգամավոր: Երրորդ անգամ ձերբակալվեց 1991թ. «Վոլցո» ռազմագործողության ժամանակ:

Սարատովում նա գտնվում էր բանտի վավիլովյան խցում, որը նույնիսկ պատվաբեր էր քաղբանտարկյալ Համլետ Գրիգորյանի համար:

Սարսափելի եւ սահմուկեցուցիչ էին հատկապես նրա՝ Բարվի բանտում եղած օրերը, որը տեւել էր 34 օր: Երրորդ անգամ բանտից հրաշքով ազատվեց դասախոս Համլետ Գրիգորյանը, որին ուսանողները կրկին տեսան լսարանում՝ ֆիզիկապես ընկճված, հոգով՝ արի:

Ի դեպ, Արցախի պետական համալսարանի 30-ամյակի առթիվ, որը լրացավ 1999թ. սեպտեմբերին, հունիսի 28-ին հրատարակվեց «Արցախի համալսարան» քերթը, որտեղ տպագրված էր համալսարանի դասախոս, դոցենտ, հոգեբանական գիտությունների թեկնածու տիկին Արզիկ Սխիթարյանի մեծածավալ հոդվածը, որում նա, կիսվելով ընթերցողների հետ, ականատեսի հավաստի հուշերով դրվատանքի խոսք է ասում դասախոսներ Համլետ Գրիգորյանի, Է. Գրիգորյանի, Լ. Գրիգորյանի, Ծ. Աբրահամյանի, Ռ. Բալայանի, Ս. Ղազարյանի, Հ. Խաչատրյանի, Ս. Սարգսյանի, Լ. Ղալայանի, Ս. Ղազանջյանի, Ս. Խանյանի, Կ. Արամյանի, Գ. Աֆանասյանի հասցեին, որոնք առաջինը կանգնեցին ազգային վարքոնքի ակունքներում:

Վերջինս՝ Գրիգորի Աֆանասյանը, դեռես 1989թ. մայիսի 21-ին Մոսկվայի Լուծնիկայում տեղի ունեցած մի հանրահավաքում, որին մասնակցում էր շուրջ 1 միլիոն մարդ, Բորիս Ելցինից եւ ակադեմիկոս Սախարովից հետո երրորդ ելույթ ունեցողն էր՝ որպես Արցախի ժողովրդի առաջամարտիկ, Ղարաբաղյան շարժման ակտիվիստ: Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի դասախոսն այն օրերին շրջում էր ԽՍՀՄ տարբեր տարածաշրջաններում՝ արցախյան դատը խորհրդային հասարակությանը ներկայացնելու պատվաբեր ու ծանր առաքելությամբ:

1988թ. փետրվարի 13-ին, երբ Շարժումը դեռ չէր մտել իր հունի մեջ, Ստեփանակերտի 5 հազարանոց առաջին հանրահավաքում Աֆանասյանը առաջին ելույթ ունեցողն էր եւ առաջինն էր պահանջել Բարվի դրածո Կետրկովի հրաժարականը: Իսկ երբ աղբրեջանական զավթիչները հարձակվեցին Արցախի վրա, գիտնականն ու դասախոսը գեներ ձեռքին մասնակցեց մարտական գործողություններին: Սակայն, ինչպես եւ Շարժման գրեթե բոլոր առաջին ակտիվիստներին, ԼՂՀ-ում տեղ-պետությանական թափփուկները քաղաքական-հասարակական կյանքից աստիճանաբար մեկուսացրին նաեւ Աֆանասյանին: Նա այժմ էլ նույն ինստիտուտի (այժմ՝ պետհամալսարանի) դասախոսներից է եւ փորձում է իր տնտեսագիտական գիտելիքներն օգտագործել ու կարգավորել ԼՂՀ-ում Երեւանի ոսկերչական գործարանի մասնաճյուղի գործունեությունը:





Նրանք ճաշակել են Մաֆոնովյան կտտանքները

«Լուսանկարից մեզ են նայում տասնմեկ կրակոտ հայացքներ, բախիժն ու ցատուժը խառնած՝ շանբահարող հայացքներ: Մինչ այդ լուսանկարը, նրանք էլ գիտեին ժպտալ, կատակել, խիճի թաժակ խփել: Բայց գիշատիչ աչքերով մի մարդատյաց՝ Մաֆոնով անունով, գողացել էր նրանց աչքերի ժպիտները, փոխարենը բախժի ու ցատման լույսներ կախել»- այդպես է գրել հոդվածագիր Էլմիրա Հովհաննիսյանը «Մարտիկ» թերթի էջերից մեկում:

Այս նկարի 2-րդ շարքում ծախից 3-րդը՝ Մարտունու շրջանի Չարդանաշեն գյուղացի է, Հալիձորի քաջ Տեր-Ավետիսի Պետրոս որդու բոռ՝ Անդրանիկ Գալստյանը, որը գոհվեց դեռ 35-ը չբոլորած եւ թաղվեց հենց իր ծննդյան օրը՝ մարտի 15-ին, 1993թ. ծննդավայրի գերեզմանոցում:

(Ծախից աջ)

Իսկ առաջին շարքի 2-րդ եւ 3-րդ նկարներից մեզ են ներկայանում ԱՊՀ-ի դասախոսներ Համլետ Գրիգորյանը եւ Արկաղյա Թովմասյանը:

Իսկ մի՞թե պակաս նշանակություն է ունեցել համալսարանի դասախոս-պատմաբաններ Ստեփան Դադայանի, Շահեն Աբրահամյանի եւ վաղամեռիկ Նիկոլայ Ավագումյանի գրիչը, որն արցախահայությանը ծանոթացրել է Արցախի պատմությանը՝ սկսած հին ժամանակներից մինչև այժմ՝ 1988 թվականը: Նրանց հաստատուն քայլերով է ընթացել նաև նորօրյա պատմաբան-դա-

սախոս Վահրամ Բալայանը, որը մեզ Զելքաջարի տեղ Վալկունիք է բերել:

Կամ, համալսարանի նախկին ռեկտոր Պավել Գետրոյանի ծառայությունները մի՞թե կմոռացվեն, որ հանդուգն քայլ ձեռնարկելով, մի անձրոջ ամիս մասնակցել է սուժգայիրյան ողբերգության ճիվաղ-հանցագործների դատին ու տղազրել ամբողջը, որը վերջերս հրատարակվեց Արցախյան շարժման 10-րդ տարեդարձին նվիրված «Խասարակական-քաղաքական լրատվության հիմնադրամի» մատենաշարով: Իսկ պրոֆեսոր Սոկրատ Խանյանը, որ 1990թ. ապրիլի 24-ին հայոց եղեռնին նվիրված շարտոնված հավաքում ելույթ ունենալու համար ենթարկվել էր կտտանքների, բոլորիս է հայտնի: Սոկրատ Խանյանի հետ ձերբակալվել էին նաև գրողներ Գուրգեն Գաբրիելյանը, Հրայրա Բեգլարյանը, Արկաղի Թովմասյանը եւ դասախոսներ Համլետ Գրիգորյանն ու Ռոնա Բալայանը:

Այդ առիվով հետագայում «Ազատ Արցախ» թերթի լրագրող Նվարդ Օհանջանյանի հետ ունեցած մի հարցազրույցի ժամանակ դոցենտ Ռոնա Բալայանը ասել է. «1990 թ. ապրիլի 24-ին՝ Մեծ եղեռնի 75-ամյա տարելիցի կապակցությամբ Ստեփանակերտի հուշահամալիրում ցույց կազմակերպելու մեջ էին մեզ մեղադրել, բայց հիմնական պատճառը ակտիվիստների հանդեպ հոգեբանական ճնշում գործադրելն ու այդկերպ Շարժումը կասեցնելն էր: Քանի որ արտակարգ դրության պայմաններում մայրաքաղաքի փողոցներում բազմափորում էր խաղաղ ու անխռով մրնոլորաբ, բվում էր, թե արցախցիները համակերպվել են իրավիճակին: Այս առումով ցույցի կազմակերպումը խիստ անհրաժեշտ էր:

Հուշահամալիրում հնչած ելույթները քաղաքական առումով հասուն էին: Մեզ՝ հուշահամալիրում ելույթ ունեցողներին, ապրիլի 24-ին կալանքի ենթարկելը չհաջողվեց, եւ անսա հաջորդ օրը բոլորիս պահանջեցին ներկայանալ պարետատուն, որտեղ մեզ հարցաքննեց քաղաքի պարետ Երշովը: Յույցի հետ կապված մեր բացատրությունները թե ինչ արձագանք գտան նրա մոտ՝ դժվար է ասել: Մեզ տարան Հասանաբաղ (ներկայիս Բերքի ձոր), մինչդեռ մենք ենթադրում էինք, թե Մաֆոնովի մոտ՝ հարցաքննության են տանում: Բոլորիս առաջնորդեցին մեկուսարան, որոնք նախկինում հավաքներ էին: Սոկրատ Խանյանը դիմելով բարձրաստիճան ռուս սպային, խնդրեց ազատել ինձ, կալանքից, ասելով՝ «Знаете, закон, одиноков для мужчин и женщин»:

Ինձ առանձին մեկուսարան տարան, ինքնաձիգով ուկրաինացի մի զինվորի վերահսկողության տակ էի: Մեկ ժամ անց Համլետ Գրիգորյանի հորդորանքով, ինձ արոտ առաջարկեցին: Մի խոսքով, անասելի նվաստացուցիչ պայմաններում էինք հայտնվել, բայց արժանապատվորեն կրում էինք մեր խաչը»:

Համալսարանի դասախոս, հոգեբանական գիտությունների թեկնածու Գրիգոր Դանիելյանի մի շարք հոդվածներ ԼՂ-թերթերում եւ ամսագրերում, որ նվիրված էին զինվորի կամքին կամ վախի բացասմանը, նախագահական ընտրությունների կարգուկանոնին եւ այլն, մեծ խորհուրդ ունեցավ՝ Դարաբաղ աշխարհում:

Մեր Շարժման առաջամարտիկի դերում գտնված եւ իր հուսադրող ելույթներով արցախցիների հուսու ճրագը դարձած-տիկին Մխիթարյանը համալսարանի բոլոր այդ դասախոսների դերը այնքան շոշափելի է համարում, որ դարաբաղցի-

ները նրանց դատում են Շարժման ռաիվիրաների շարքերը: Նա գրում է, որ «Շարժման առաջին օրերից հենց նրանք էին, որ օժտեցան հանրապետության ղեկի տակ միտինգներ էին անում եւ հանրահավաքներ ու մոսկովյան բողոք-ուղերձներ պատրաստում եւ նախապատրաստվում սպասվելիք զինված ընդհարմանը»:

Ի ուրախություն բոլորիս, վերջերս պրոֆեսորի պաշտոնակալ կոչմանը արժանացած նույն տիկին Մխիթարյանը մի առիթով ասել է, որ Շարժումը իր եւ իր սերնդակիցների համար սկսվել է դեռեւս 1965-ին, երբ ուսանող էր եւ ուսանողական գաղտնի կազմակերպության անդամ: Ասել է նաեւ այն մասին, որ իրենք՝ ուսանողները խորհրդային իշխանության պայմաններում հրապարակ են ելել եւ ի լուր առաջին անգամ ներկայացրել Մեծ եղեռնի իրենց ազգային պահանջատիրությունը:

«Վանկարկում էինք,- ասում է նա այդ ցույցի մասին,- «Ճեյ ու կես միլիոն գրեք», «Ղարաբաղ», «Նախօգնան», «Մասիս» եւ այդ քառերից յուրաքանչյուրը որպէս ողջ մի ողբերգություն ալեկոծում էր հրահեղուկի պէս հրապարակ ելած երեսնայիններին»:

1960-ականի այդ օրերին իր ամուսին Լավրենտ Ղալայանի հետ էր, որը եւ այդ կազմակերպության անդամ էր: Եվ նրանք Ղարաբաղ եկան արդեն որպէս ազգային հիմնախնդիրների լուծմանը հարաւաս մտավորականներ: 1980-ականներին, երբ մեր ժողովուրդն արդեն շնչահեղձ էր լինում Ադրբեջանի վարած հայահալած քաղաքականությունից, նրանք՝ մարդ ու կին, առաջինը երեսացին հանրահավաքների ու ցույցերի բոհուրբոհում: Մեր այդ երեսնայինները դարձան բանազնացներ, յոթ անգամ ենթարկվեցին տնային կալանքի ու վարչական պատասխանատվության: Այդ խիզախ մտավորականների բնակարանը դարձել էր զինված հակամարտությանը հակադրվելու եւ դիմակայելու հավաքատեղի, որ եւ հանրահայտ Արկադի Տեր-Թադեւոսյանի (Կոմանդոս) ղեկավարությամբ նախագծվեցին ու իրագործվեցին Կրկժանի, Շուշիի, քաղաքամերձ բնակավայրերի, Ստեփանակերտը հրթիռակոծող կրակակետերի վերացման պլանները: Նրանք պայքարել են վստահ հավատով՝ սատարելով ազգամկեր մեր նրիտասարդության անձնագրի գործունեությունը: Եվ նրանք էլ բոլոր պայքարողների պէս հասան իրենց նպատակին:

«Փառք բարձրալին,- ասում է տիկին պրոֆեսորը լրագրողին,- այսօր ունենք արդեն պետական ազգային կանոնավոր բանակ՝ մեր ամենամեծ ձեռքբերումն այս պայքարում: Ի վարման կռիվներ, դիմացանք սովին ու դժվարություններին, թանկ կորուստներին, աշխարհացունց երկրաշարժից, ավերված փլատակներից դուրս եկանք ու հարցրինք, «Լուծվե՞ց Արցախի հարցը», ցավից ու անարդարությունից տնքացինք, սակայն չկորցրինք հույսը, քանի որ արգարացի էինք»:

Իսկ համալսարանի մյուս կին դասախոսը՝ Լենա Գրիգորյանը, ինչպէս մի առիթով ինքն է ասել, ավելի վաղ է «կտցել խայծը»:

Այդ հինգ երեսներ կինը ընդառաջ գնալով իր ամուսնու՝ Ասկերանի շրջանային «Կարմիր դրոշ» (հետագայում՝ «Խաչեն») թերթի խմբագիր Կոմիտաս Դանիելյանի հորդորանքին, 1987թ. աշնանը նախաձեռնեց Արցախը մայր Հայաստանին վերամիավորելու մասին հռչակագրի տակ Արցախի մանկավարժա-

կան ինստիտուտի մեկ տասնյակից ավելի դասախոսների ստորագրությունները դնելուն՝ իհարկե, առաջինը ինքը ղեկավար ստորագրությունը: Ասում են՝ նրա այդ հանդուգն քայլին ի պատասխան, դասախոսներից Համլետ Գրիգորյանը եւ Համլետ Մովսիսյանը ողջունել են նրան եւ ասել. «Որ դու կին տեղովդ այդ վտանգավոր գործը քեզ վրա եւ վերցրել, մենք մեր տղամարդ տեղովը ինչու՞ պիտի վախենանք ստորագրելուց»: Բայց դրանով չպարզվեց Լենա Գրիգորյան-դասախոսի կատարածը Շարժման արշալույսին: Նա արցախցիների՝ Կրեմլին հասցեագրած առաջին զանգվածային նամակները Մոսկվա տանող դասախոսներից մեկն էր Համլետ Գրիգորյանի եւ հանգուցյալ Նիկոլայ Ավագումյանի հետ, երբ 1988թ. հունվարին դասախոսների մի սովոր խումբ (կային նաեւ ադրբեջանցիներ) Մոսկվա էր մեկնել Բարո-Մոսկվա-Վիլնյուս երթուղով: Եվ մի՞թե պատվավոր չէ նաեւ նրա ունեցած դերը Մոսկվա ուղարկվելիք առաջին հեռագրերի տնքատնքը ձեռակերպելու գործում, որ իրականացվում էր նրանց տանը՝ ինստիտուտի ռուսաց լեզվի ամիքոնի դասախոս, վաղամեռիկ Սեդա Ղազանչյանի, նույն Համլետ Գրիգորյանի, Համլետ Մովսիսյանի եւ ամուսնու՝ Կոմիտաս Դանիելյանի հետ:

Ավագումյան ավելացնենք, որ Արցախը Հայաստանին վերամիավորելու մասին արգելված թեմայով առաջին հողվածը «Սովետական Ղարաբաղ» թերթում հրատարակվել է նույն համարակներ Լենա Գրիգորյանի, Համլետ Գրիգորյանի եւ Արզիկ Մխիթարյանի ստորագրությամբ, 1988թ. մարտի 15-ին (իհարկե, թերթի խմբագիր Մարսիս Հովհաննիսյանի խնդախումով): Խոր մտահոգիչ է նաեւ հարգված մանկավարժի ուր տարվա տառապալից վիճակը ընտանյոք հանդերձ, որ գոյացել է համալսարանի ուսանող-զինվոր տղա Նարեկի ամիայտ ճակատագրի թերունով, որը տեղի է ունեցել 1992թ. օգոստոսի 6-ին, Մաղավուսի ճակատամարտում:

Իսկ այդ ծուռ մտավորականները ի՞նչ կանեն Վալերի Արաջանյանի մասին, որը, որպէս Ստեփանակերտի քաղկոմի առաջին քարտուղար, պաշտոնաթող արվելուց հետո նշանառու հրացանակիր էր դարձել ինքնապաշտպանության ջոկատներից մեկում՝ Մալիբեկուի ուղղությամբ: Նա ԼՂ Ազգային խորհրդի նախագահի տեղակալ էր: Իսկ այժմ՝ Ստեփանակերտի տպարանի տնօրենը:

Ամոթի քրտինք պետք է ծորա այն «քննադատների» ճակատից, որոնք կասկածանքի տակ են առնում մենիշխանության ժամանակի մեր նախկին մարզի նախկին ղեկավարների քաղաքական դիմագիծը: Իսկ նրանց հայտնի՞ է այդ գործիչներից Շմավոն Պետրոսյանի, Հենրիխ Գրիգորյանի, Արսիկ Ղահրամանյանի, Կոմիտաս Դանիելյանի, Փարավոն Աղամյանի, Արպատ Հովհաննիսյանի, Գեորգի Մարտիրոսյանի եւ շատ ուրիշների քաղաքական այժմյան դիմագիծը, որոնք զոհեցին իրենց ամենաբանկազիները՝ ողիներին եւ դեռ շարունակում են աշխատել ընդհանուր ճակատում:

Իմանալ է պետք, որ հանրապետության շատ կոլտնտեսությունների, խորհտնտեսությունների, հիմնարկ-ձեռնարկությունների ղեկավարներ իրենց զավակներով կանգնել են Արցախյան պատերազմի ճակատում եւ ոգետրել մյուսներին: Չէ՞ որ այդպէս, այդ ճանապարհին զոհվեցին Շուշի գյուղխորհրդի նախագահը, Նորշենի կոլտնտեսության նախագահը, Հաղորտու, Կոլխոզաշենի, Ղազանիի, Հաղորտի, Կիչանի դպրոցների տնօրենները, Ստեփանակերտի կոմերտքաղկո-

մի քարտուղարը: Պատերազմում իրենց աչքի լույսը կորցրին Հերիերի կողմնակցության նախագահ Սերգեյ Ստեփանյանը, Մուշկասպատի դպրոցի տնօրեն Կառն Գրիգորյանը և ուրիշ ղեկավար աշխատողներ:

Ահա եւ մեր ոչ շատ հեռու անցյալի փառապանծ մտավորականներ Եղիշ Սարգսյանը, Ալեքսանդր Հարությունյանը (մարզկոմի նախկին քարտուղարներ), Լեոն Սկրտչյանը, Կոմիտաս Դանիելյանը, Լեոն Աղսմյանը, Մաթաթեմ Հովհաննիսյանը, Հրաչյա Բեգլարյանը, Գուրգեն Գաբրիելյանը, Նվարդ Ավագյանը և ուրիշներ, որոնք «բրժժված լինելով կոմունիստական բուրժուազան», գրչով կովեյ են մեր սահմաններում, վերհանել մեր Շարժման արդարացիությունը, ավել հարավատների գոհեր ու վիրավորներ, իսկ բանաստեղծ Կոմիտաս Հակոբյանը, որը երկու գրքի հեղինակ էր, էլիջելով ֆրանսիացի պոետ Պոլ Էլյուարի խոսքը, թե «քանի ղեռ երկրի վրա կա սպանությունը, պոետը պետք է առաջինը գոհվի» և իր կյանքը շինալեց պատերազմում, գոհվեց խաղաղությունը վրա հասնելուց 10 օր առաջ:

«Արցախյան գոյամարտում իրենց գրիչը գեներով փոխարինեցին և բնամուղեն մարտնչեցին գրողներ Ռորերտ Եսայանը, Մելյուսն Բաճալյանը, Սենոր Հասրաբյանը, Գագիկ Բեգլարյանը, Լեոնիկ Հակոբյանը, Դավիթ Օպրինյանը, Արիս Գրիգորյանը, Սպարտակ Հակոբյանը և ուրիշներ, իսկ Կիմ Գաբրիելյանին, Նորմի Գասպարյանին հաճախ կարելի էր տեսնել գինվորական հագուստի մեջ, մարտի ամենաթեժ կետերում՝ հաղորդումների և գրքերի համար կենդանի փաստեր հավաքելիս»,- այդպես է գրել Հրաչյա Բեգլարյան գրողը «Արցախ» դաժան սեր» գրքի առաջաբանում:

Մի տեսանկյունով, թե ովքեր են աշխատել Մարտունու, Ասկերանի, Հալլուրի, Մարտակերտի և քաղաքամայր Ստեփանակերտի դիտակետերում, շտաբներում, կապի գծերում: Դրանք այն շրջանների շրջկոմների և շրջխորհուրդների,



միլիցիայի և դատախազության նախկին աշխատողներ են, որոնց ամեն մի գործողություն մեզ մոտեցնում էր մեր հաղթանակին: Իսկ նրանք՝ այդ «բննադատները», երբեք մտածե՞լ են, թե ովքեր էին ներկայացնում 1992թ. մարտի 4-ին ԼՂՀ Գերագույն խորհրդի կողմից ձևավորված ԼՂՀ պաշտպանության խորհրդի և ապա մարտի 26-ին՝ նորաստեղծ պաշտպանության կոմիտեն (որը հետագայում «ինքնապաշտպանություն» անունը կրեց): Նրանք մեծամասամբ կոմունիստական մեմիչլուսնության ժամանակի մտավորականներ էին, որոնցից են Արթուր Սկրտչյանը (նախագահ), Օլեկ Եսայանը, Սերժ Սարգսյանը, Ռորերտ Բոչարյանը, գինվորականներ Վիտալի Բալասանյանը, Արկադի Տեր-Ասրապետյանը և դաշնակ Ազո Կարապետյանը:

Մարտունու շրջանում եւ, ինչու չէ՞ նաեւ ողջ Կարաբաղում ու նրա սահմաններից դուրս՝ Հայաստանում, շատերը գիտեին Մարտունու շրջխորհրդի քարտուղար Մանֆրեդ Բախշյանին: Նա Հայաստանի Գերագույն խորհրդի պատգամավոր էր ղեռ խորհուրդների գոյության վերջին տարիներին: Մեր ազգային-ա-

զատագրական շարժման կազմակերպիչներից մեկը լինելով հանդերձ, Մանֆրեդը գաղտնի ճանապարհներով գեներ էր տեղափոխում եւ հանդերձավորում ֆինդայական ջոկատներին, հաճախակի լինում գյուղերում, ոգեւորում ժողովրդին:

Խորհրդային ներքին զորքերի հետապնդումներից խուսափելու համար նա հաճախ ցերեկները անց էր կացնում անտառներում եւ անդնդախոր ձորերում, իսկ գիշերները գաղտնի գործում՝ ինչպես պահանջվում էր այն օրերին: Այդ ամենը ծանր սնդրադարձավ նրա առողջությանը, եւ կյանքի 45-րդ տարում՝ 1993թ. հեռացավ մեզանից՝ ղեռ լրիվ չտեսնելով փափագած հաղթանակը: Ասում են՝ նրա աղջիկ Լուսինեն, որ աշխատում է Մարտունու վարչակազմի տնտեսագիտական բաժնում, ամեն օր հուշիկ բայելելով, բայց եւ հայարտությամբ է անցնում հոր նկարի մոտով, որ տեղադրված է շենքի 2-րդ հարկի միջանցքում: Չէ, չեղավ, գոմարյուն ու գգուշավորություն է պետք: Մի մոռացե՞ք, որ հին թե նոր կադապարների մարդիկ, այդ թվում եւ նախկին ղեկավարները, վերջ է վերջո, հայ են, ունեն հայի սիրտ ու արյուն:

Իսկ ավելի ճիշտ չէ՞ր լինի, որ մեր այդ քննադատները խոսեին ու գրեին վարչախումբայական ժամանակաշրջանի այն ջոջերի մասին, որոնք չորս-հինգ տասնյակ տարիներ սնվել են Կարաբաղով, ջերմացել ու մեծարվել Կարաբաղում, իսկ այսօր հեռացել: Այս ամենից հետեւում է, որ պարունները մոռանում են, որ այստեղ ամձերը չեն կարելուք եւ ոչ էլ վարչա-հրամայական համակարգի այն ժամանակվա պայմանները, որում մարդիկ աշխատում էին, այլ՝ նրանց այժմյան գործերը, թափած ջանքերը, հակադրությունները (հիշեցե՛ք նրանց ելույթները՝ սկսած 1988թ. փետրվարյան ցույցերից, մատաշրջանից մինչեւ Գերագույն խորհրդի նախագահության և խորհուրդների համագումարները, Ասկերան մտած խումբան թուրքերին դիմակայելը եւ այլն):

Հարց է՝ իսկ եթե վաղն այդպես վարվեն այսօրվա ղեկավարները գորահրամանատարների կատարածի նկատմամբ: Օ՛ր, բավ լիցի, այդպես իրար վարկաբեկելով, եղածը չեղածի տեղ դնելով ո՞ր կարելի է հասնել: Ավելի լավ չէ՞, թեկուզե՛ն գյուղորեն, ճշմարտության ծայրով խոսեք գոնե եղած սայթաքումների մասին, Պոլյանիչկոյի և Մաֆոնովի հետ շփումներ ունեցածների մասին, չնայած այսօր դրա ժամանակն էլ չէ (դա ապագայի գործ է), քան թե մեր նորոքյա ղեկավարներին ու երեւելիներին բարկոծելը սկզբունք դարձնեք: Դեռ սպանեք՝ հանձնաժողովներ կլինեն, քննիչներ ու հետապնդողներ կնշանակվեն, եւ ամեն ինչ իր տեղը կգա, ամենքը կստանան իրենց պատասխանը:

Երկրորդ՝ պարոն մտավորականներից ոմանք մեր ինչ-ինչ դժվարություններն ու անհաջողությունները ուզում են բացատրել ԼՂԽՀ Հատուկ կառավարման կոմիտեին մեր որոշ ղեկավարների հակադրվելով: Բայց ժամանակը դրա պատասխանն էլ կտա, եւ չարժեն այդ կոմիտեի անդամ հանդիսացած մեր որոշ տեղացիների բյուր բացատրություններով առաջնորդվել եւ մի գլուխ գովել այդ գորբաչոլյան ծննդին, որը նրա ցուցումներից դուրս չէր կարող գործել: Իսկ մենք հո գիտե՞նք Գորբաչովին ու նրա շրախմբին: Մեզ հաճախ ցուցանում են Հատուկ կոմիտեի տնտեսական որոշ ձեռնարկումները: Սենք դեմ չենք, որ այդպիսի բայլեր եղել են, բայց դրանք կատարվել են մեր աչքերին թուփ փչելու նպատակով, մեզ ինչ-որ բան ցուցանելու եւ ո՛չ թե Հայաստանի հետ միացման սկիզբը դնելու հա-



Պատասխան (Վոլսկի).

- Վախենալու բան չկա, ամեն ինչ լավ կլինի, Հայաստանի հետ սերտ կապեր կհաստատվեն:

Հարց.

- Ախր Գորբաչովի տված փողերով թուրքերը Կրկման, Խոջալու, Մալիբեկլու են կառուցում: Այդ հարցը նաև դրել ենք Հենրիխ Պողոսյանի առաջ, բայց ոչինչ չի ստացվել, թուրքերն ավելի են արագացրել շինարարությունը:

Պատասխանը չի հետետում, լուրջում եւ չեղ նայվածք:

- Այնուհետեւ,- պատմում է Ռ. Գաբրիելյանը,- Ազգային խորհրդի նախագահ Վաչագան Գրիգորյանը, տպարանի տնօրեն Յուրի Ներսիսյանը, մարզխորհրդի նախկին նախագահ Սեմյոն Բաբայանը առաջարկում են Վոլսկուն՝ համել Ադրբեջանի դրոշը ԼՂ մարզկոմի շենքի վրայից:

«Իսկ երբ ես եմ սկսում խոսել,- նկարագրում է Ռ. Գաբրիելյանը,- Վոլսկին ընդհատում է ինձ եւ ասում.

- Դու Ազգային խորհրդի անդամ ես:

- Ոչ,- ասում եմ ես:

- Իսկ ինչու՞, մի՞թե դու արժանի չես դրան:

- Ես չեմ ցանկացել:

Նորից սկսվում են հարցերը.

- Վեզիրովը մատների վրա խաղացնում է Գորբաչովին,- ասում եմ ես,- եւ ԽՄԿԿ անդամներին: Ցանկանում եմ իմանալ՝ նա մեր Արկադի Իվանովիչին է՞լ է խաղացնում, թե ոչ: Երբ ասում եմ՝ Վեզիրովը մատների վրա խաղացնում է Գորբաչովին եւ ԿԿ անդամներին, Վոլսկին մի շարժումով ցատկում է տեղից, հայիդում ու թե՛ «Ես ոչ մեկին չեմ ենթարկվում (մարդկային հպարտությունից ելած, ընդգծումը իմն է՝ Մ.Բ.):

Ես ասում էի՝ հարգարժան Արկադի Իվանովիչ, եթե, իրոք, Չեր ասածը ճիշտ է, ապա խնդրում եմ իջեցնել տալ Ադրբեջանի դրոշը:

Նա ծայրում է եւ մատը շարժում.

- Ա՛յ դու ժուլիկ,- ապա դառնում է Սեմյոն Բաբայանի կողմը.

«Գճա, հենց հիմա, ու Ադրբեջանի դրոշը իջեցնել տուր»:

Իջեցված դրոշը կոխարկրտում ենք՝ կարծելով, թե դրամով բոլոր հարցերը լուծվեցին:

Այս ամենից եզրակացվում է, թե Վոլսկին որքան դժվարությամբ էր կատարում հայերի այս կամ այն պահանջը:

Դժվար չէ հասկանալ Վարշավայի եւ Լոնդի ապստամբությունները 50-ական թվականներին ճնշողին:

Բայց որպեսզի լրացուցիչ որոշ փաստերով ապացուցված լինի Հատուկ կառավարման կոմիտեի հակադարաբաղյան գործելակերպը եւ Ղարաբաղի Ազգային խորհրդի անհրաժեշտությունը, բերենք թե ՀԿԿ եւ թե միաժամանակ Աև ամրան դարձած Վլադիմիր Թովմասյանի մի քանի դիտողությունները, որ նա արել է 1996թ. օգոստոսի 10-ին, «ԼՂ Հանրապետություն» թերթի լրագրող Մուսան Աթանեսյանի հետ ունեցած գրույցի ընթացքում:

Վլ. Թովմասյանը ուղղակի ասել է. «Հիշողության արժանի է այն փաստը, որ

Հատուկ կառավարման կոմիտեի ղեկավարությունը ուներ նաև ուրիշ հանձնարարություն. անել ամեն ինչ՝ ճեղքելու Շարժման ղեկավարների միասնությունը, վերածելով նրանց առանձին խճրավորումների եւ հակադրել մեկը մյուսին: Կան հիմքեր՝ պնդելու, որ այդ ծրագիրը եւս որոշ չափով իրականացվեց»։ [67]

Այստեղ հարկ է խորհել. «կոմիտեի ղեկավարությունը ուներ նաև ուրիշ հանձնարարություն» բառերի շուրջ՝ այն իմաստով, թե ում կողմից էր այն հանձնարարություններ ստանում, եթե ոչ Գորբաչովից ու նրա վերադաս մարմիններից: Ուրեմն, այստեղից մի ավելորդ անգամ եւս եզրակացվում է, որ Վոլսկին միայն կարող էր կատարել վերադասի կարգադրությունը, իսկ կարգադրությունը Ղարաբաղին լեցնելն էր, Շարժումը կանգնեցնելը եւ ուրիշ ոչինչ:

Շարունակենք նորից ունկնդրել պարոն Վլադիմիր Հայրապետիին՝ Ղարաբաղի Ազգային խորհրդի եւ ՀԿԿ հարաբերությունների, Աև նկատմամբ Վոլսկու եւ ԽՄԿԿ-ԿԿ վերաբերմունքի վերաբերյալ:

«Եթե տնտեսական ու ֆինանսական բոլոր լծակները գտնվում էին ՀԿԿ-ի ձեռքին, ապա մարզի ներքին կյանքի ղեկավարումը աստիճանաբար անցնում էր Ազգային խորհրդի ձեռքը, որ իր կազմավորման հաջորդ օրը կայացած նախագահության միատուն քննարկեց արցախցիների կողմից բազմիցս բարձրացված հարցերը եւ ընդունեց համապատասխան որոշումներ, այդ թվում՝ մարզի ամբողջ տարածքում Ադրբեջանական ԽՍՀ դրոշների հանումը: Այդ հանրապետության բոլոր հիմնարկ-ձեռնարկությունների լուծարումը, աշխատանքային ռիթմի վերականգնման (հիրավի, գործադրվեքը վերացնելը, որ տեսում էին 3 ամսից ավելի. (ընդգծումը իմն է - Մ.Գ.) մարզի պաշտպանության բարձրացման մասին»։ [68]

Շարունակելով, նա ասում է, որ որպես Ազգային խորհրդի նախագահի տեղակալ, Աև նախագահության հանձնարարությամբ Մտեֆանակերտում կայացած հերթական բազմամարդ հանրահավաքում ունեցած ելույթում ինքը հայտարարել է. «Այսուհետեւ մարզի տարածքում բոլոր տեսակի հարցերի լուծումը, այդ թվում՝ ղեկավար կադրերի ընտրությունը, գտնվում է Ազգային խորհրդի իրավասության տակ...»։ [69]

Բայց հանրահավաքի հաջորդ օրը Ա. Վոլսկին, յուրահատուկ զավաճուրյան բացակայության պայմաններում ունեցած գրույցի ընթացքում, իր հերթին ձգտելով չեզոքացնել Աև դերը, առաջարկեց ներկայացնել համապատասխան փաստաթղթեր՝ այն որպես հասարակական կազմակերպություն գրանցելու համար: Սակայն Աև-ի նախագահությունը, կռահելով այդպիսի «սրտառուչ ուշադրության» հետեւանքները, մերժեց նման «առաջարկությունը»:

Ուրեմն, առճակատումը արդեն առկա էր ՀԿԿ եւ Աև միջեւ: «Հաջորդ քայլը,- ասում է Վլ. Թովմասյանը,- որ կատարվեց Աև դեմ, ոչ առանց ՀԿԿ ղեկավարության միջամտության, ԼՂ ներքին գործերի վարչության շենքում ԽՄԿԿ-ԿԿ նախարարության նախարարի առաջին տեղակալի գրույցն էր Աև ղեկավարության հետ: Նա պահանջեց ստորագրել մի փաստաթուղթ, որով մենք զգուշացվում էինք անօրինական լինելու եւ նրա գործունեությունը դադարեցնելու մասին: Չմայած գեներալի կողմից արված սպառնալիքներին, նա ստացավ հատուկ պատասխան՝ Ազգային խորհուրդը ընտրված է ժողովրդի կողմից եւ կշարունակ-

կի իր գործունեությունը»:

Եվ այստեղից մի՞թե նկատելի չէ Վոլսկու կոմիտեի գործունեության էությունը, որ Ղարաբաղի ժողովրդի կողմից օրինավոր ընտրված խորհրդի հետ գնե՜րալի միջոցով է խոսում, որ Ղարաբաղի «բերանը փակելու» համար Մոսկվայից օգնական ուժեր է հրավիրել, իսկ մերոնցից ոմանք, որոնք չեն խորացել գործի էության մեջ եւ մի գլուխ գովում են Վոլսկուն ու նրա կոմիտեին, կասկածում են այդ գովողներից. ոմանց, քանի որ Ղարաբաղի այն ժամանակի տնտեսական քաղաքականությունից, հիրավի, դիվիդենդներ են ունեցել նրանք:

Պրն Վլադիմիր Թովմասյանը, իհարկե, չի ժխտում Հատուկ կոմիտեի բարեբար գործունեության մասին՝ մամանավանդ շրջափակման պայմաններում Ղարաբաղի տնտեսական վիճակի թեթևացման ուղղությամբ, բայց գլխավորը, թերևս, քաղաքական էր: Մեր վերջին միտքը, որ Վոլսկու առաքելությունը Ղարաբաղի հայության ազգային ինքնորոշմանը հասնելուն խանգարելն էր, կտրուկ պատասխան ունի նույն պրն Վլադիմիր Հայրամյետիին.

«Ան-ն, արտահայտելով ժողովրդի կամքը, Մոսկվային հասկացրեց, որ արցախահայության բարձրացրած հարցը ոչ թե տնտեսական է, այլ քաղաքական միտք ու պահանջ է պարունակում: Այլ գործոնների թվում դա պատճառ եղավ ՀԿԿ լուծարման, կիսատ թողնելով նրա առաքելությունը՝ խանգարել Արցախի հայության ազգային ինքնորոշմանը...»:

Կարծում են, նոր մեկնարկություններն այստեղ արդեն ավելորդ են:

Իսկ ինչո՞ւ չհիշել Արկադի Վոլսկու ելույթը ԽՍՀՄ Գերագույն խորհրդի 1-ին համագումարում՝ Արկադի Մանուչարովին կաշառակերության առումով ձեռքակալելու առթիվ: Նա՝ Վոլսկին, համագումարին ուզում էր բերել այն հետետուրյանը, թե մարտը Ադրբեջանը դուր չի գալիս Ղարաբաղի կաշառակերներին, թե իբր այդ կաշառակեր դարաբաղցիները ուզում են մի շարժումով, որպիսին Ղարաբաղյան շարժումն է, թարքվել ապագա մեղադրանքից: Սրանից ծանր էլ ի՞նչ եք ուզում, հարգելի վոլսկիականներ: Եվ այդ կոմիտեին որոշ առումով հաջողվել է իր խնդիրը կատարել: Նա մեր որոշ միասնիտ ղեկավարների գրգռել է իրար դեմ, թվացյալ թշնամիներ դարձրել նրանց, իսկ նրանց հետ միասին՝ նաեւ ժողովրդի մի մասին հակադրել մյուսին (տե՛ս վերելում Վլադիմիր Թովմասյանի տեսակետը): Այլ կերպ, ինչո՞վ բացատրել, որ ԽՍՀՄ մեր պատգամավորներից ոմանք խուսանվում էին, բորբ պատգամավորներին Մոսկվայում մոտենալու վտրձեր անում կամ էլ Ստեփանակերտում չէին մասնակցում Ազգային խորհրդի նիստերին: Եվ այդ բոլորը կոմիտեն անում էր, որ տապալվի մեր Ըարժումը, որ խաղաղ ճանապարհով Ղարաբաղը մարի իր պայքարի լույսերը: Բայց, բարեբախտաբար, մերոնց մեծ մասը ժամանակին խելքի եկան, արագ եւ ճիշտ կողմնորոշվեցին ու իրենց գործելակերպը զուգակցեցին իրար, չնայած անհամերաշխության խոցը դեռ լրիվ չէր վիրահատվել, եւ խորթացումը դեռ իրեն գզալ էր տալիս:

Երբորո՞ղ ըստ մեր որոշ պարոնների, եթե այդ «Կոուսկը» եւ Ազգային խորհուրդը անգործունյա դարձան, իսկ հացադուլները՝ անմիտ, ապա ինչո՞ւ մերքին նշանակության զորքերը եւ օժոմականները հետ քաշվեցին Մարտունու եւ Ասկերանի շրջկոմների շենքերի պատերի տակից, կամ մեր պայքարի այսօրվա որոշ նվաճումներ ունո՞վ բացատրել, ո՞ւմ պլատֆորմի ի կատարումն համարել: Մի՞թե

մեր հաղթանակները առանց արմատի են, օդում կախված, կամ ինչ-որ հրաշքով ձեռք բերված: Ջորի Բալայանի ջանքերը չգնահատելը, բարոնուհի Քոքսի կամ ռուս գրող Անդրեյ Նուկլինի ներդրումները քամուն տալը նրանց երկրպագուներին կվշտացնի:

Լսում ենք, որ հայի արյունոտ թշնամի, գեներալ Սաֆունովին սպանելու պատրվակով ստեփանակերտցի հերոս տղամեր Հակոբ եւ Սամվել Բաղմանյան եղբայրներին եւ էլի ոմանց Ռոստովում դատել են, Արմեն Ավանեսյանին Ռոստով-Բարու գնացքը պայթեցնելու մեջ կասկածել ու բռնել են եւ վերջերս Բարվի բանտում սպանել, Ադրբեջանի համար երկու հազար հատ «Երկիր-երկիր» հրթիռներ գնելու եւ ներկրելու նպատակով Լոնդոնում անգլիական իշխանությունների հետ գործարք կնքելու համար չեչեն Ուցիեւ եղբայրները սպանվել են հայ տղաներ Գագիկ Տեր-Հովհաննիսյանի եւ Սկրտիչ Մարտիրոսյանի կողմից, իրենց հայրենի Մարտունի գեներ բերելիս Աղղամի օդանավակայանում բռնվել եւ մեծ հանցանշանով Բաբու տեղափոխվել երեսնաքնակներ Վալերիկ եւ Արամ Ավետիսյան եղբայրները, որ դեռնու մեր Ըարժման սկզբին՝ մարտի 15-ին, Մարտունու շրջանի Սոս գյուղի բնակիչ Վալերի Դադասյան ուսուցիչը եւ մարտունաբնակ Առնո Մարգսյան տաքավարորդը Երեսնից գեներ ու զինամթերք ներկրելիս Կուբարլուում բռնվել են ու տաժանակիր օրեր անցկացրել Բարվի բանտում, կամ Ղարաբաղ աշխարհի փայլուն հրամանատարներից Մոզես Հակոբյանին նույնպես գեներ ներկրելիս բռնել են Ստեփանակերտի մատույցներում եւ մեծ փրկագնով ազատել եւ, վերջապես, մաճկալաչենցի Վարուժան Գետրգյանը 1991-ին Վրաստանից Արցախ գինամթերք տեղափոխելիս ձեռքակալվել է ու միայն բարձրաստիճան մարդկանց միջամտությամբ ազատվել, էլի շատ-շատերի համարձակ քայլերի մասին եւ հաշվում սովորական ու անարժեք երեսույթներ: Փա՞ռք ու պատիվ մեր քաջերին:

Հպարտության զգացումով պետք է խոսել եւ հիշել թշնամու դեմ գեներ ու զինամթերք պահեստավորելու, 18-րդ դարում Ղարաբաղի երեք Սղնախների (Շոշի, Զարագլխի եւ Գյուլիստանի) նման Խամաբաղում, Խերխամում, Տոդում, Մաճկալաչենում եւ այլ վայրերում ստեղծված նորօրյա ռազմական թաքստոց-պահեստների մասին, այն մասին նաեւ, թե մեր ռազմական ու քաղաքական գործիչները ինչպես են Ստեփանակերտի 366-րդ գնդի հրամանատարության հետ գեներ ու տեխնիկա գեներու համար կապեր հաստատել, որից շատ է շահել դատարկաձեռն պաշտպան ֆիդային: Իսկ մեր պայքարին ինչքա՞ն անհրաժեշտ են եղել գեներ ու զինամթերքը, որ հաճախ պատրաստել են մեր «տակի ձեռքերը» եւ «տակի գլուխները»: Նրանք շատ են եւ Ղարաբաղի ու Հայաստանի բոլոր ծագերում են: Նրանցից կուզենայի հիշատակել, թերևս, ձեզ բոլորիդ քաջամանոր, այդ ճանապարհին ծանր վիրավորված (մի աչքը, մի ոտքը, մի ձեռքը տանու տված) Վալերի Մեղրակի Քոչարյանին, Շեխեր գյուղի նահատակ-ուսուցիչ Գավրիլ Միրզոյանին՝ ինքնաշեն գրադի հեղինակին, մարտունեցի Էդիկին, ստեփանակերտցիներ Գրիշա Ժամհարյանին եւ Ռոբերտ Լուկունդարիձեին, մաճկալաչենցի Կարեն Ավետիսյանին, որի մասին մի այլ տեղ էլ են գրել, ասկերանցի Յուրա Պողոսյանին, որ Ղարաբաղում նաեւ առաջինն է նստել ՀՄՄ մարտական մեքենան, ստեփանակերտցի Գարիկ Գասպարյանին, (ի դեպ, Յուրան ար-

ժանացել է հազվագյուտ կոչման՝ «Ազգային հերոսի», որին շատ քչերն են արժանացել, Կիմ Աղաջանյանին, Ավետարանոցից՝ Ալեքսանդր Հայրապետյանին, գործիչիցի Վաղոյին, ասկերանցի Ֆելիքս Հակոբյանին, Ալբերտ Ավանեսյանին, աշանցի Արմեն Ավագյան հրամանատարին: Եվ ինչպե՞ս չհայարտանալ Հաղորդի շրջանի Ջրակուս գյուղի դպրոցի տնօրեն Մելիք Վարդանյանի արածով: Լինելով հնուտ գինագործ, այդ մասնավարժը բազմաթիվ ինքնաշեն հրամանների հեղինակ է, վերանորոգել է շատ ինքնաձիգներ: Չնայած իր պատկանելի տարիքին, Վարդանյանը գեներլ ձեռքին պաշտպանում էր հայրենի շրջանը և երբ գերի է ընկնում, 17 հազար ռուբլի է տալիս բուրքերին (ռուսական փողով), ազատվում ու շարունակում է իր գործը:

Այդ ինքնու վարպետները, որոնցից շատերը գոհվել են մարտադաշտում, կարծես թե 1826 թ. Շուշիի պաշտպան կանգնած (47 օր) ռուսական զնդի համար գեներ ու գինամթերք պատրաստած Բարուքի Պողոսի, Սաֆար և Ռուստամ Թարխանյանների մնանակներն են կամ էլ հայ գեներալ, գեների արտադրության գործարանի տնօրեն Յոլյանին են կրկնել, որն անձամբ մի շարք պայրուցիկ նյութերի և կաբելների ստեղծողներից էր ԽՍՀՄ Հայրենական պատերազմի տարիներին:

Այստեղ արժե հիշել գերմանացի փիլիսոփա Լյուդվիգ Ֆոյերբախին, որն ասել է, թե մարդու իսկական հատկանիշներն ի հայտ են գալիս միայն այն ժամանակ, երբ վրա է հասնում նրանց դրսևորելու, գործով ապացուցելու ժամանակը: Եվ, իրոք, մեր հերոս ու ինքնու հայրենակիցները ի հայտ բերեցին իրենց տաղանդը, երբ վրա հասավ ապացուցելու ժամանակը: Այս ամենով հանդերձ, պատգամախոսելով ասենք նաև, որ պետք է լիցքավորվել հին սերնդի լավագույն ավանդույթներով՝ որոշ առումով գերազանցելով նրան:

Հիշել գրողին. «Լավ է, որ մերժում եք անցյալի մոխիրները, բայց ինչո՞ւ եք մերժում անցյալի կրակները»:

Հին սերնդից կտրվելը, նրա մատուցածները մոռանալը դառնում է առանց հողի, առանց հենքի ու հիմքի ինչ-որ անհասկանալի մի բան: Հոգեւոր խզում չպետք է լինի մախորդ սերնդից, բայց և հին սերնդի գեներով չպետք է կռվել, պետք է գերազանցել նրան: Միշտ զգալ, որ մոտը մոտից է կայծ առնում, և որ մենք ավանդականից ենք ուժ առնում: Այս է պետք թե ղեկավարությանը, թե ազատագրվող ժողովրդին, որոնց կցանկանալիք տեսնել համերաշխ ու միաձույլ:

Ազատագրական պայքարի այս բախտորոշ փուլում գինվորականության հետ հաշտ չաշխատելը, ներքին պլան-բալանը չարգելելը, դեռ ավելին, հաճախ նպաստելը, իրենց իսկ վարքը դրականորեն չդրսևորելը, պաշտոնական արտոմաններով տարվելը, արժեքակոխիլը, քաղաքական ու գինվորական մեր որոշ կադրերի առանձին շարժառիթներով իրար հակադրվելը և այդ տեմչով հագեցնելը, որը հող հանդիսացավ քաղաքական ու գինվորական մեր որոշ կադրերի կորստին, մի ժամանակ մեր պայքարը հետ-հետ տարավ, առաջ եկավ դասալքություն, որը և ծնեց դարաբաղյան գաղթականություն, ինչպես դարեր առաջ, որ մելիքների դավերի հետեւանք էր:

Բայց հանրապետություն հռչակված Ղարաբաղի ղեկավարությունը գինվորականների միջոցով փրկեց դրությունը:

Ղարաբաղի սրաշտպանության պետական կոմիտեի ղեկավարության (Ռ. Քոչարյան, Ս. Սարգսյան) և գինվորական գործիչներ Մոմբեի, Արկաղի Տեր-Թադևոսյանի և մյուս փայլուն ռազմաճակատային հրամանատարներ Նորայր Դանիելյանի, Մովսես Հակոբյանի, Նելսոն Սողոմոնյանի, Արթուր Աղաբեկյանի, Արշավիր Դարամյանի, Վիտալի Բալասանյանի ջանքերի շնորհիվ վերացավ խուճապը, թշնամին մասամբ ջախջախվեց մեր մեջ՝ Ղարաբաղում և մեր սահմաններից դուրս: Ըմբռնումը մեր համերաշխության սկիզբը դարձավ, միասնությամբ փոքրն էլ աճեց, երկպառակությունը վերացավ, կրկին հավատարիմ դարձանք մեր դավանանքին:

Սակայն չպետք է գոռովաճալ հաջողություններից, հեռու լինել բարելոնյան խրախճանքներից: Խոսքը Բաբելոնի թագավորներից մեկի տղա Բալթագարի խրախճանքներին է վերաբերում, որը պատերազմներում թշնամու դեմ հաղթանակ ունեցած, բայց մահացած հորը փոխարինելով, սկսել է խրախճանքներում անցկացնել իր կյանքը, մոռացել է թշնամու ներկայությունը, աղքատության հասցրել երկիրը, հեռացել գոյուշավորությունից և պարտվել վերսկսված պատերազմում: Չգալ, որ այս պատերազմի ավարտը դեռ չի երևում: Հասկանալ, որ թշնամին նենգ է և դեռ չի ուզում ճանաչել մեր փաստացի անկախությունը: Այս է, և միայն այս է մեր այսօրվա պատգամը:

Փաստ է, որ մեր այսօրվա սերնդին դժվար ժամանակներ են բաժին ընկել: Բայց դե խորհենք՝ այդ ե՞րբ է հեշտ եղել, այդ ո՞ր սերնդին է Նեոայի պողոտա բաժին ընկել: Բայց այժմ, այժմ ավելի քան տատասկոտ է մեր ուղին, մաքառումների կարոտ: Աշխարհը խելացնոր վազքով սուրում է առաջ: Աշխարհում պատերազմներ են պայքած, մոտորների հոմոլյուն է երկրում ու երկնքում, գեներ են կռում, ժանիքներ սրում մարդու և խաղաղության դեմ, կեղտոտվում են մարդկային խղճերը: Այս ու այնտեղ դարսնում են մարդկանց, սպանում ու սպառնում, խեղդում են ոչ միայն ազատասեր ժողովուրդներին, այլև նույնիսկ ազատության գաղափարը:

Բայց այսօր մեզանում դեռ անամոթությունը հանգիստ ճանապարհ է հարթում, մոյի մարդկանց հարստության տեմչի կծիկը շատերիս է կծկում, հարազատության մեջ էլ սառույցը չի հալվում, վերավաճառքը սահման չի ճանաչում, Ղարաբաղը լողների թիվն ստվարանում է, լոխված ազատամարտիկների մայրերի ու այրիների կսկիծը թիչ է ամոքվում: Թող հավիտյան հիշվեն մեր գոհերը՝ ինչ իշխանություններ էլ փոխարինեն իրար, ինչ ամպեր էլ անցնեն մեր գլխով:

# ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ԻՐԱԴԱՐՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՈՒՐՋ

Տասնյակ հիշողությունների, պատմական տեղեկանքների, հայ մարդկանց հոգեմաշ գգացմունքներ արտահայտող հողվածների եւ բարակցությունների ասպարեզ հանդիսացավ ԼՂԻՄ պրոբլեմը: Մի բանի տասնյակ տարիներ մեր տերերը բարբաջում են, թե դա պրոբլեմ չէ, այլ ինչ-որ բանասերկություն, մտացածին բան, իսկ միջազգային հարցերի գծով աղբբեջանցի մի տեսաբանի կարծիքով՝ «չափազանցված պրոբլեմ»: Սակայն փաստերն այլ բան են ասում: Բավական է միայն հիշել, որ ԽՄԿԿ ԿԿ այն ժամանակվա վարիչ եւ ԼՂԻՄ Հատուկ կառավարման կոմիտեի ղեկավար Ա. Վոլսկին մեր մարզի վիճակը տառացիորեն համեմատել է քարե դարի հետ եւ գտնում էր, որ, իրոք, գոյություն ունի ԼՂԻՄ-ի պրոբլեմը, որի լուծման համար ընդունվեց ԽՍՀՄ Սինիստրների խորհրդի հայտնի, բայց չիրականացված որոշումը: Հատուկ համձնարարությունների «շալակով» Կենտրոնի մեկնաբանները (Չուբկով եւ մյուսներ) շխտացան հարցի քաղաքական պատճառների մեջ եւ շուտափույթ կերպով, ի յուր երկրի ու աշխարհի, առաջ քաշեցին տնտեսական վարկածը: Գործին տեղյակ մարդկանց ծիծաղը շարժեցին «Կոմսոմոլական պրավդայում» հրատարակված ոճն Սուրսալիեի հողվածի այն տողերը, որոնցում ազգամիջյան հարաբերությունների ներկա վիճակը երկրում եւ հատկապես ԼՂԻՄ-ում հանգեցվում էր օճառի եւ լվացքի փոշու ղեփիցիտին, եւ փորձ էր արվում ժողովրդական պատգամավոր Բորիս Դադամյանի մոտ տեսնել տրամաբանական սխալ: Թե ինչու է ծագել այդ պրոբլեմը, ինչու ԼՂԻՄ-ը պարբերաբար վերադասի առաջ է դրել Ադր. ԽՍՀ կազմից դուրս գալու մասին հարցը (շուրջ 9 անգամ), չհետաքրքրեց վերադասին՝ նույնիսկ որոշ արգարամիտ հրապարակախոսների եւ քաղաքական գործիչների կարծիքից հետո էլ: Սակայն այնտեղ, ի վերջո, հասկացան քաղաքական իմաստը, որը եւ մեզ հույս ներշնչեց: Հասկացան, իհարկե, եւ այդ հողի վրա էլ հենց ստեղծեցին Հատուկ կառավարման կոմիտեն՝ անհամարժեքի համարելով Ադրբեջանի հետագա կառավարումը ԼՂԻՄ-ում: Բայց տոտալիտար-քոյուրկուրառական շրախումբը շարունակեց ադրբեջանաճետ քաղաքականություն վարել, հավատարիմ մնալ Ստալին-Նարիմանով դաշինքին: Տողերիս նպատակը ոչ միայն արցախյան հարցի առումով մեր ժողովրդին հայտնի փաստերի սիմբոլումը եւ եզրակացությունների հանգեղն է, այլ նաեւ սեփական դատողությունների, լսածի ու տեսածի հիման վրա որոշ իրադարձությունների ոչ ավերորդ մեկնաբանումը:

Վերադասում մեր «կրքերը» շատ էին հողվում: Բայց նրանց հայտնի՞ է, շուրջոք, հույն մեծ փիլիսոփա Արիստոտելի խոսքն այն մասին, որ «կրքերին ճշխում է ոչ թե նա, ով բոլորովին խուսափում է դրանցից, այլ նա, ով դրանցից օգտվում է այնպես, ինչպես կառավարում են մավր կամ ձիուն, այսինքն՝ դրանք ուղղում է այնտեղ, ուր հարկավոր է»: Մենք ազատագրական շարժման «կրքերի

նավը» ուղղել էինք ԼՂԻՄ-ը Ադր. ԽՍՀ-ից դուրս բերելուն եւ Մայր Հայաստանին վերամիավորելուն: Ուրեմն՝ մեր կրքերը իրական են, առողջությամբ նպաստող, բերեա կազդուրիչ: Թող Ամար Ոգաներ եւ էլի ոճանք մեր անորդվելիության փաստի հետ համակերպվելու ուժ գտնեն իրենց մեջ եւ, երեք տարվա մեր ինքնուրույն կյանքը փաստ համարելով հանդերձ, չպտոկան՝ «Հինգ ամիս, հինգ օր, հինգ ժամ, հինգ բույե էլ չենք» հանդուրժի, որ ԼՂԻՄ-ը Կենտրոնին ենթարկվի»:

Մեզ ծայրահեղականներ են անվանում, բայց, արդյոք, համաշխարհային պատմության տառ ու բանին շատ թե քիչ ծանոթ այդ վերահասները գիտե՞ն, որ աշխարհում ոչ մի ազատագրական շարժում կամ կուսակցության հիմնադրում, երե դրանք, իրոք, արձատական են եղել, չեն շրջանցել ծայրահեղականությունը: Նույնիսկ միջնակարգ դպրոցի դասընթացն ուսումնասիրած ամեն մի շրջանավարտ գիտի Բոբյոֆի «Հավասարները» Ֆրանսիայում, «Դիպերները» Անգլիայում, «Թարորականները» Չեխիայում, որպես արդարության համար պայքարող մունետիկներ, որակավորվել են որպես ծայրահեղականներ եւ ոչ չափավորներ կամ համաձայնողականներ: Հենց Հնդկաստանի ազգային կուսակցության նախակարապետ Թիլակը իր կուսակցությունը ուղղակի անվանել է «ծայրահեղականների կուսակցություն»: Հետեւապես, չպետք է վիրավորվել այդ որակավորումից՝ իմանալով, որ «ԷԲՍ» վանկարմատը ԴՌԻԲՍ է նշանակում: Այո, մենք մեզ դուրս ենք համարում մեզ ճնշողների, շովինիստների իշխանությունից: Ուրիշ բան է, եթե մեզ անվանեն ԷԲՍՅԵՄՆԵՐ, այսինքն՝ ԴՌԻԲՍ ՊՐՄԱԾՆԵՐ: Սա վիրավորական է, որովհետեւ մեր պայքարը օրենքի սահմաններում է (ԽՍՀՄ սահմանադրության 70-րդ կետով) եւ ոչ թե նրանից դուրս: Այնպես որ, թող մեր Շարժումը որակավորողները մեզ վրա չտարածեն այժմ մողայիկ «ծայրահեղականը»:

Ավելորդ չեն համարում մի բանի իրադարձությունների մեկնաբանությունները, վերհիշումները, փաստերի նոր եզրահանգումները, երանգավորումները, որոնք կհանդիսանան ընդհանուր շղթայի մի օղակը: Այսպես, երբ խոսք է գնում մեր Շարժման նախադրյալների մասին, շատ-շատ պատճառների շղթայում հիշում են ԼՂ մարզային կուսակցության մի կոնֆերանս, որտեղ դատապարտվում էր մարզկոմի գաղափարախոսության գծով քարտուղար, պատմաբան Հայրո Մարկիսովը, որը համարձակվել էր առաջ քաշել մարզի սոցիալ-տնտեսական բարեփոխման (ոչ զարգացման) այն պլանը, որին հարկադրաբար, խուսանավելով ուզում են անդրադառնալ այժմ: Պատմաբանը նոր ժամանակի պայմաններում ամորալի էր համարում Շուշի քաղաքի ավերակների գոյությունը, որն ազգայնամոլության խորհրդանիշ է: Կոնֆերանսին ներկա գտնված, Բաքվից ժամանած սեւ ուժերը, մեր մերուժանների միջուկով «խաղաղ» էլով նրան ազատեցին Ասրաբաղում աշխատելուց: Նրա բախտին արժանացան մարզգործկոմի նախկին նախագահ Մուշեղ Օհանջանյանը, մարզկոմի քարտուղարներ Սարգիս Աբրահամյանը, Մեծիւմ Գասպարյանը, կետրկովչինսայի դեմ դիմումով հանդես եկած Հակոբ Օհանջանյանը եւ 60-70-ական թվականների ղեկավարների մի սովոր ջոկատ: Հիշողության մեջ դեռ վառ է մարզային կուսակցական այն կոնֆերանսը, որն անցկացվեց վիճարկական քաղաքիկում, խիստ հսկողության տակ, ուր մարզկոմը իբր թե «մարքեցին անհարազատ տարրերից»: Այս-



տեղ է, որ հարկ է հիշել Ա. Գերցենի «անտանելի ժամանակներ ենք ապրում մենք» բառերը:

Շատ է գրվել ու խոսվել «Ղարաբաղը ինտերնացիոնալիզմի գիրկը վերադարձնելու» պայմանով կայացած մարզկոմի մի պլենումի առթիվ, որին ուղղությամբ էր տրվել Բարձրից: Զանի որ Վ. Ախունդովի 1967 թ. հորդորանքները (Ղարաբաղը գյուղում կայացած՝ Մարտունու շրջանային ակտիվը), նրա կեղծ ճառը, խոստումները, նպատակին չհասնելու պատճառով դեռ շարունակվում էր ազգային զարթոնքը, ուստի, ըստ նրա նոր ղեկավարության, Բ. Կետրկովը նոր էր, անհրաժեշտ էր մի շեշտակի հարված հասցնել Ղարաբաղի հայությանը, որից մա ուշքի չգար: Պլանը գլոբալ էր, նպատակը՝ պարզ: Եվ ահա «բխվեց» մարզկոմի այդ ղարաբաղցիներից նացիոնալիզմի մեջ մեղադրող բանաձեռը, որը մարաթոնյան վազի արագությամբ հասավ մինչև իսկ ժայռամասային գյուղերը՝ ի հավանություն:

Չարմանալին բանաձեռի միտումը չէր, որում նույնիսկ հայերի 1915թ. եղեռնի կազմակերպիչներից մեկին՝ Թայեաթ փաշային շանսատակ արած եւ Բեռլինի դատարանի կողմից արդարացված Սողոմոն Թեխլերյանը որակավորվել էր որպես ազգայնասոց. այլ այն, որ ի բնե ինտերնացիոնալիզմի բնօրրան Ղարաբաղը դիտվել էր որպես նացիոնալիստական: Այստեղ մեկնաբանությունները ավելորդ համարելով հանդերձ, կա մի բան, որ մոռացության չի տրվի երբեք. դա այդ բանաձեռի քննարկումն էր շրջկոմների պլենումներում, սկզբնական կուսկազմակերպություններում: Երբ մենք տեղերում մեր անհամաձայնությունն էինք հայտնում այդ բանաձեռի առթիվ, կուսշրջկոմի ներկայացուցիչները մեզ սաստում էին, զգուշացնում հետեւանքների մասին:

Հիշողությանս մեջ մեխված է Մարտունու շրջկոմի այն պլենումը, որտեղ մեր անուն հանած, շրջանում որոշակի կշիռ ունեցող մի քանի ակտիվիստներ, ցուցաբերելով ուլտրաինտերնացիոնալիզմ, հարմար գտան Բ. Ուլուբաբյանին, Ա. Մանուչարովին, Բ. Ջանյանին, Ս. Շաբարյանին եւ էլի ոմանց համարել, սպորտի լեզվով ասած՝ «խաղից դուրս»: Իսկ մեկ ուրիշը, չհասկանալով բանաձեռի եւ մեր նպատակների տարբերությունները, հոխորտաց՝ «Այդ ուլուբաբյանները, Ջանյանները, Շաբարյանները չեն կարող ինձ բաժանել իմ քալայից, Իմ բալը՝ չից» (աղբբեջանցի ընկերներ): Ե՛, միամիտ մարդիկ, կարծում էիք, թե խոսքը ժողովուրդների բարեկամությունից հրաժարվելու, իսկ մարզկոմի բանաձեռը՝ այդ բարեկամությունը ամրապնդելու մասին է: Մեր Շաբարյանն առաջին շրջանում այդպես միամիտ էին եւ շատ բարվեցիներ, որոնցից ոմանք նույնիսկ մեզ «զարծի բերելու» համար հեռուստատեսությամբ ընկալույցների դեր էին ստանձնել: Հետեւաբար՝ մեր մեծ թերություններից մեկն էլ մոռացկոտությունն է, անցյալից դասեր չքաղելը: Անդրադառնալով շրջկոմի այն «պլենումի հերոսներին», ուզում են ասել՝ դուք, որ սովոր գրքեր եք թերթել, անբուն գիշերներ անցկացրել՝ պայթյուք ցեղերի ասպատակությունների եւ հայոց երկիրն ավերելու բազմաթիվ փաստերը ձեր ուղեղին հասցնելու համար, դեռ քաղաքական թմբիրի մեջ եք, իսկ ի՞նչ դիրք կարող են բռնել ոչ ուսյալները: Հիմա երեւի եւ դուք, եւ մենք, եւ բոլորս կզոջանք մեր ազգային կուրության համար, շատ անորոշ եւ անկողմնակալ դիրքի համար: Եվ ահա այդ անտարբերությունն է, որ առիթ է տվել մեր ազգը

վարկաբեկելու, մերը՝ մեր չհամարելու, մեր պատմական ուստանը իրենցը համարելու, մեր հայրենիքում մեզ հյուրեր անվանելու մոլուցքին: Մեր աչքի առաջ, մեր լուրջան պայմաններում մեզ անարգել են, քչել երեք հարյուր հազար բնակչությանը, իսպառ դատարկել մի հսկայական երկրամաս, այդժեղ հարյուրավոր եկեղեցիներ, հազարավոր խաչքարեր: Ելուզակները հայերից դատարկեցին հայերով շենացած քաղաքները: Հայագուրկ արին ժամանակակից քաղաք Մինգեչաուրը, որի ՀամԿ (ք) Կ կազմակերպիչն էր հին կոմունիստ Առստամ Առստամյանը: Նրա աղջիկը՝ քաղաքի դպրոցներից մեկի դիրեկտոր Սոնյա Առստամյանը, որոշ ժամանակ անկարելի էր համարում մման բան: Բացառված չէ, որ քաղաքակիրթ մարդիկ բարբարոսության դեմ միշտ էլ միամիտ են լինում: Եվ պատահական չէ, որ մինչև 20-ական թվականների վերջը իրենց ազգ, իսկ տեղի-տորիան՝ Աղբբեջան կոչվելու փաստը դեռ չհաստատված եւ Ստալինի ու պատմաբան, ակադեմիկոս Պանկրատովայի հորդորանքներով մի կերպ պատմություն ու պետության անուն ստացած անբոխավարները հանդգնում են ետ տանել ուրիշ ժողովուրդների պատմության ծալքերը, սողոսկել նրա մեջ ու որոշ ժամանակ անց իրենց համարել տեր ու տնօրեն, ասենք, պատմական Հայքին՝ Կասպից ծովից մինչև Սեւանա լճի ավազանը (Բունիաթով, Սամեդովա): Եթե նրանք գոնե նայեին նույնիսկ 8-րդ դասարանի պատմության ատլասի էջերը, որտեղ ղետեղված են Մոսկվայի կողմից հաստատված (իհարկե, պատմական փաստերի հիման վրա) դարաշրջանները, այն ժամանակ Աղբբեջանի պատմական տարածքի վրա գուցե խորհելու բան գտնեին եւ չսակարկեին անսակարկելիլի հետ: Իսկ չէ՞ որ այդ ատլասը ԽՍՀՄ ամեն մի 8-րդ դասարանցի էլ տեսնում է: Երեխան, քացառությամբ մեկ դեպքի, ուրիշ ոչ մի անվան «Աղբբեջան» անվանը չի հանդիպում (միակ գրությունը Իրանի մասին է), իսկ Հայաստանի սահմանները դարձնագույնով ծովից ծով են: Այսօրվա Աղբբեջանի պատմաշիտարարները, աղվանագիտության անվան տակ, որի Փարիզում կայացած միջազգային երեք կոնֆերանսներից խիստ դժգոհ են եւ ցանկանում են 4-րդը հրավիրել տալ Բարձրում, իրենք էլ չգիտեն իրենց պատկանելությունը: Նրանց պատմության գիծը լարախաղացություն է, որ չընկնեն: Եվարած պատմական փաստերի քառուղիներում, նրանք մերթ իրենց դատում են Սիդիական պետությանը (այդպես էր մինչև 50-ական թվականները), մերթ՝ մաններին, մերթ՝ ալբանականին եւ միշտ էլ հատուկ նշանակությամբ՝ օղուկ բուրբերին: Նրանք խոսում են ալբաներին պատկանելու եւ իրենց հանրապետության պատմության դասագրքում ալբանական 52 տառերը Մեսրոպ Մաշտոցի կողմից ստեղծվելու մասին («Աղբ ԽՍՀ պատմություն», (70) 1-ին մաս), ալբաններին դատում քրիստոնեական կրոնին, չեն էլ ասում, թե ո՞ր էին այդ տառերը, երբ սկզբում արաբերեն էին գրում, հետո՝ պարսկերեն, այնուհետեւ՝ միջին բուրբերենով, իսկ այժմ էլ՝ կիսախառն ռուսական այբուբենով: Նրանք չեն դատում, որ եթե իրենք ալբանացիներ լինեին եւ դասվեին հին ժողովուրդների շարքը, ապա կպահպանվեին իրենց գիրն ու լեզուն, եւ հայ բուլշեիկ Ալ. Մյասնիկյանը իր ամերիկացի ընկերոջը չէր խնդրի աղբբեջանցիների համար այբուբեն կազմել: Այնուհետեւ խորհուրդ կտայինք մանների եւ օղուկների ներկա սերնդին, որ արհեստականորեն պատմական հնությունների հետեւից չընկնեն, քանզի չեղածից իրեն հին ժողո-

վորդների շարքը դասելու փորձերը ժամանակավոր երեսույթ է:

Իսկ ի՞նչ կա որ, ինչո՞ւ եք անհանգստանում, որ հեռավոր գիր չունեք, իսկ ո՞վ է դա ձեր երեսույթը տալիս: Մենք՝ հայերս, հազար տարուց ավելի օտար տառերով ենք գրել (չունե՞րակամ, քաղղեակամ, հումարեն), մինչև ստեղծել ենք Դանիելյան, ապա ե՛լ՝ Մեսրոպյան գրերը: Տեսնո՞ւմ եք, մեր համեստությունը գրվանի տակ չի դնում վերոհիշյալ ցեղերին ու ժողովուրդներին, որոնց գրերով իր ժամանակին մեր նախնիները պատմական արձանագրություններ են կազմել: Ընդհակառակը, արժանին ենք հատուցում մրանց: Հասկացե՛ք, հարեա՛ններ, դատարկ հայրտությունը այլանդակ չենքի ճակատը չի գարդարի: Այդ դեռ լեզվի մասին, իսկ կրո՞նը, իսկ իրենց ալքան անվանե՞լը եւ դրա հետ կապված քրիստոնեության շարքը դասվե՞լը: Հեռու չե՞ք գնում, արդյոք, երբ Մինգեչաուրի կառուցման ժամանակ գտածո խաչնշանները պահելով Բաքվի պատմության թանգարանում, այցելուներին հրաճեցնում եք. «Մենք սերում ենք ալքաններից, իսկ այս նշխարները ալքանական են, հետեւաբար ե՛լ՝ մերը», իսկ մի ուրիշ դեպքում, որ ուղղակի իմ հարցի պատասխանն էր՝ «Մա ապացուցում է ռուս-ադրբեջանական ժողովուրդների բարեկամությունը»:

Չանալով բանականության եւ ողջամտության ձայնին, Ադրբեջանի ժամանակակից պատմաբաններից շատերը, առանց վաղվա օրվա բաժինը պահելու, առանց իսկ անցյալի լուրջ, դատող մտավորականների կարծիքը հիշելու, մի գլուխ սկսել են հայերին վարկաբեկելու իրենց դուզան ավելի ուժեղացնել: Նրանք հասել են նույնիսկ Ֆ. Էնգելսին, մրա «Ընտանիքի, մասնավոր սեփականության եւ պետության ծագումը» գրքի այն հոդերին, որ վերաբերում են բազմակնությունից միակնությանը անցնելու նկարագրությանը: Չհասկանալով Էնգելսի արտահայտության այն իմաստը, որ միակնությանը քաղաքակրթությունից անցնելու շրջանում Աֆրոդիտի եւ Անահիտի տաճարներում գերուհի ստրուկները սիրո հարցում մարմնավաճառությանը են վրադրել: Բայց նրանք նայա պիտի իմանան, որ դա ստրկության շրջանն էր, երկրորդ՝ հետերիզմից (քաղաքակրթությունից) ավելի բարձր աստիճան, այնուհետեւ՝ Անահիտի տաճարի ստրկուհիները հայ աղջիկները չէին միայն: Կարդանք Ֆ. Էնգելսի վերոհիշյալ գրքի 1957թ. հրատարակության 68-րդ էջը. «Առաջավոր Ասիայի ուրիշ ժողովուրդներ էլ իրենց աղջիկներին Անահիտի տաճար էին ուղարկում, որտեղ էլ նրանք իրավունք էին ձեռք բերում սեր վայելելու: Նույնպիսի սկզբունքների հանդիպում ենք գրեթե բոլոր ասիական ժողովուրդների մեջ, որոնք ապրում են Միջերկրական ծովի եւ Գանգեսի միջեւ»: Օղուվները կամ ալքանացիները այն ժամանակ որպես ժողովուրդ դեռ չէին ձեւավորվել (թերեւս, դա ամենաճիշտն է): Իսկ ահա վազիր մի փաստ եւս, որ փչում է Ֆիլիպուն Շուշինսկու «Շուշա» գրքի տողերից, որը մութնական ընթերցողների մեջ հայի նկատմամբ ատելություն սերմանելու նպատակով հրատարակեց 1968 թվականին՝ ռուսերեն լեզվով: Հայերին անվանելով քիչ ջրասեր, հեղինակն ուզում է ընթերցողին բերել այն համոզման, թե ինչու են ադրբեջանական բաղամասում ջրածորակները կրկնակի: Իսկ որքանո՞վ է մարդկային, երբ Ֆ. Շուշինսկին ջուր անցկացնող Թաղեուս Թամրոյանի (հայ) հարգանքը ադրբեջանցիների նկատմամբ օգտագործել է նրա ազգին անպատ-

վելու նպատակով: Այդպիսի ապերախտությունը բոլորովին էլ գարնանաչի չէ հայերիս համար եւ նույնիսկ չի ներվել ադրբեջանցի առաջավոր մտավորականների կողմից, որոնցից մեկի՝ «Նավթային քարեր» տեղամասի պրոպագանդիստի կողմից, Ադրբեջանի Կենտկոմի քարտուղարին բողոքելու փաստին ներկա եմ եղել: Գիրքն այնուհետեւ արգելվեց եւ ետ հավաքվեց, բայց վաճառվածներ կային:

Նրանք եթե ծանոթ լինեին Բախիու, Ն. Ադունցի, Մ. Բարխուդարյանի, Բ. Ուլուբաբյանի, Շ. Սկրաչյանի, Գ. Զովհաննիսյանի, Պոտտոյի, Ս. Ավագյանի եւ մյուսների՝ Ղարաբաղի վերաբերյալ ուսումնասիրություններին, չէին հավատա Բունիաթովին, Մամեդովային եւ այլոց ու Արցախի, պատմական Հայաստանի այդ հիմնավոր գավառի պատմությունը գլխավոր չէին դնի. կիմանային, որ Արցախի հինգ մեկրություններից ոչ մեկի տերը բուրք, պարսիկ կամ ադրբեջանցի չի եղել, հետեւաբար եւ, նրանց տարածքը ադրբեջանական ծագում ունեցող չէր կարող, որ հայոց Մեծուս Առաջին թագավորի ժամանակ պատմական Հայաստանի սահմանները հասնում էին Կասպից ծովին, որ 10-րդ դարի կեսերին Կիևյան Ռուսիայի իշխան Իգորը, հասնելով Բարդա, հանդիպել է հայերի միայն, որ ալքանական գրերի հեղինակ Մ. Մաշտոցը 4-րդ դարում կառուցված Ամարասի վանքում հայկական դպրոց է ունեցել: Եթե նրանք իրատես լինեին փաստերին, ապա կկարողանային ասել, թե երբ, քանի ամգամ եւ ում կողմից է վերանորոգվել Ամարասի վանքը: Իրենց ցեղային պատկանելության «փաստերը» ճշտելու համար նրանց հարկ էր ծանոթանալ դեռեւս 1909թ. հրատարակված Նիկողայոս Ադունցի «Հայաստանը Հուստինիանոսի թագավորության ժամանակ» գրքին, որտեղ հարեա՛նցիդրե՛ն շոշափվում են նաեւ ներկայիս Ադրբեջանի տարածքի ցեղերը:

Գանձասարի կամ նրա շրջակա վանքերի ու խաչքարերի պատմությունը, կառուցման ժամանակաշրջանը իմացող յուրաքանչյուր պատմաբան, ինչ ազգության ներկայացուցիչ էլ լինի, պիտի վերստին կանգնի դրանց՝ հային պատկանելու փաստի վրա: Եթե որեւէ ադրբեջանցի պատմաբան միայն կարողանա ռասկանալ Գանձասարի վանքի դուռը՝ շրջանակի շուրջ 100-ավոր տարբերանշանների իմաստը, որոնք, ի դեպ, Արաբաղի բոլոր գյուղերի նշաններ են, ապա, անկասկած, կսկսվի, բերանը ջուր կառնի: Եթե նրանք ծանոթ լինեին Լեռի պատմական փաստերին, ապա Թուփխանյանի տեղը չէին համարի Շոշ գյուղի բարձրավանդակը եւ «ուսկն գրքով» մեզ չէին ահաբեկի: Թուփխանյան իրենից պատմական արժեք եւ կանաչապատ գամգված ներկայացնելու մասին ոչինչ չենք գտնում նաեւ «Ադրբեջանի բնությունը» հաստատվալ ալբոմում, որը հրատարակվել է 1980 թվականի, ադրբեջաներեն, ռուսերեն, անգլերեն բացատրություններով:

Մարդ սարսուռն է, երբ ալքանաչեւ անվանված Ֆ. Մամեդովան, որի այդ բեմալով դոկտորական դիսերտացիան վերջերս շիաստատվեց Մոսկվայում (իր պատճառաբանությամբ՝ այնտեղի հայ հոշակավոր 2 պատմաբանների ճնշման տակ), պատմական արցախյան տարածքում ապրող հայերին խառնուրդ ցեղ է անվանում, իսկ Արցախի բոլոր լին հուշարձանների հեղինակ ալքանացիներին (այսինքն՝ իրենց), առանց հասկանալու, որ յուրաքանչյուր ինքնուրույն դիմա-

գիծ ունեցող ժողովուրդ, իրեն հարգող ազգ, վանքեր ու եկեղեցիներ եթե կառուցի էլ հարեւանի նման, ապա նրա վրա այդ հարեւանի այբուբենով արձանագրություններ չի փորագրի կամ դրանք չի կոչի հայկական անուններով՝ Ս. Աստվածածին, Եղիշե, Ս. Հակոբ, Ոսկեխաչ, Գ-տիչ եւ այլն:

Մի առանձին հետաքրքրություն է ներկայացնում մեզանից ոչ շատ հեռու տարեթիվը՝ 1986թ. դեկտեմբերը, երբ պատմության ուսուցիչների հանրապետական խորհրդակցությունում խոսք եղավ Հաղորդի շրջանի Ազոխ գյուղի քարանձավի մասին, որը Աղբրեջանի հնէաբանների կողմից հայտարարվել էր որպես Ֆիզուլու շրջանի տարածք: Սեմինար-խորհրդակցությունում Ազոխի միջնակարգ դպրոցի պատմության ուսուցիչ Սամվել Օհանյանը, ի լուր սեմինարի մասնակիցների, համոզիչ փաստերով հերքեց Ազոխի տարածքը Ֆիզուլու շրջանին վերագրելը: Նա պահանջեց, որ Ազո. ԽՍՀ աշխարհագրության գրքի հեղինակը, որը ներկա էր այնտեղ, պարզաբանի «Ազոխ» անվանումը: Չստանալով ոչ մի պատասխան, Օհանյանը պարսիկ պատմաբանի բացատրությանը ապացուցեց, որ Ազոխ անվանումը պարսկական է, որը նշանակում է «չխառած միրգ»: Իմիջայլոց, այդ սեմինար-խորհրդակցությունում ի հայտ եկան նաև շատ հարցեր՝ կապված Աղբրեջանի պատմությանը: Հենց աղբրեջանցի ուսուցիչները երկյուղեով ու անհարձար զգալով հայերի ներկայությունից, այնուամենայնիվ, բարձրացրին իրենց ազգի պատկանելության, լեզվի, գրերի մասին հարցերը: Խուսանավող մի պատասխանում բովանդակում էր այն միտքը, որ սեփական գրեր չունենալու մեղքը մոլլաներինն է, որոնք ցանկացել են խափարածության մեջ պահել մուսուլմաններին: Դա, իհարկե, հիմքից զուրկ պատասխան էր, քանի որ հենց այդ ուսուցիչները հերքեցին այն՝ արաբների ու պարսիկների այբուբեն ունենալու փաստով, որոնք նույնպես մահմեդական դավանանքի են պատկանում եւ ունեն մոլլաներ: [72] Այստեղ քիչ էր ճնում բացվեր վարագույրը, բայց հենց այդ հարցերի տարափի տակ էլ շրջահայաց միմիտորը, որը ղեկավարում էր խորհրդակցությունը, փակեց նիստը եւ ազատ շունչ քաշեց:

Խորհրդածելով մեր ազգի դերի, կոչման եւ արժանապատվության հարցի շուրջ, որին շատ էր սիրում անդրադառնալ մեծ բանաստեղծ Հ. Թումանյանը, մտքով վերհիշում ես այն ամեն արած-թողածը, այն հերոսապատումները, որոնց հեղինակը բարեկամներից ու թշնամիներից խաբված հայ ժողովուրդն է՝ իր լուսահոգի հեղափոխականներով, գորավարներով, գիտության մշակներով...

«Պատմաբան» Բուժխաթովը իրեն երբեմնից հարց տվե՞լ է, թե ինչպես ստացվեց, որ ազերբայջանցի ճակատայինները երեք անգամ քիչ էին, գոհվածները չորս անգամ ավելի քիչ: ԽՍՀՄ 106 հերոս՝ 43-ի դիմաց, 4 մարշալ՝ 0-ի դիմաց, 70 գեներալ՝ 5-ի, միակ կրկնակի հերոսը Անդրկովկասում՝ Նելսոն Ստեփանյանը, Թող շրջի պատմաբանն իր հանրապետության գյուղերում ու քաղաքներում մատուցի վրա հաշվի ընկածների հուշարձանները, ապա այն համեմատի Չարդախլու գյուղի տվյալների հետ (հիմա, մանավանդ, դա շատ հեշտ է, որովհետեւ այնտեղ այլևս «ձայրահեղականներ» չկան): Ապա հայկական 6 դիվիզիաները համեմատի 2 դիվիզիաների հետ, որոնցից ոչ մեկը Բեռլին չհասավ եւ ապակազմավորվեց, իսկ փոքրատարածք Ղարաբաղից տուն չդարձան շուրջ 25 հազարը: Եվ հենց պատերազմից հետո վերջնականապես հանգավ ամենայն

հայկականը Նախիջեւանում: Սա՛ է իրողությունը: Սակայն, գրչակից-ընկեր-պատմաբան, ցավով է, որ նույնիսկ Միության մասշտաբով ոճանք սկսել են շվաքի տակ դնել մեր հայարտության անդաստանը, մեր հնամենի ու քարակոփ պատմությունը: Աշխատում են ուրիշների չունեցածը եղյալի տեղ դնել, իսկ մերը՝ չեղյալի: Իսկ թե ով է դրա հեղինակը, կպատասխանեմ՝ ԽՍՀՄ պատմագրությանը զբաղվողներից շատերը, որոնք փորձում են Ուրարտու հայկական հնագույն պետության գոյությունը ժխտել, խաչ քաշել նրա վրա, համել այն պատմությունից՝ որպես թե չեղած «փաստ»: Բայց այս առումով չուշացավ պոռփեստը Ռեաֆայել Իշխանյանի «Մարտական ստա, որ սահման չունի» բնագրատական ուսումնասիրությունները, որտեղ նշվում է, որ եթե բուրքերը եւ աղբրեջանցիները ձգտում են աշխարհին ապացուցել, թե արարատյան-ուրարտական պետությունը գոյություն չի ունեցել, թե այդ տարածքները թուրքական «բնօրրան» են եղել, թե հայերը «եկվորներ» են, հասկանալի է: Բայց ի՞նչ ասել Մոսկվայում լույս տեսած «Մոլոդայա գվարդիա» երրորդ գրքի հեղինակ Շչերբակովին, գրքի խմբագիր Ա. Սիմոնովին, որոնք գրչի մի հարվածով պատմական ասպարեզից վերացրել են Ուրարտու-Արարատյան պատմությունը: Այստեղ ուշագրավ է հիշատակել վերջերս Արովյանի «Կոտայք» թերթում հրատարակված Պետրոս Մարտիրոսյանի զովեստի արժանի «Ստի ուղբերը կարճ են» հոդվածը, որում հեղինակը ռուսական հին պատմաբաններ Ա. Ն. Պոկրովսկու եւ Վ. Ի. Ավդիևի աշխատություններից բաղված փաստերով դիմակազերծ է անում վերոհիշյալ ռուս հեղինակներին ու հարցնում. «Վ. Լ. Շչերբակովին ի՞նչը չի բավարարել կամ էլ ի՞նչը չի դուր եկել, որ թողել է ռուսական լայնարձակ տարածությունները, ինչ-որ բնոգեանյա չեղած անցյուղիներով հասել Ուրարտու, հայտնվել Վանա լճի ափին ու «սիրացել» ամբողջ երկրին՝ Վան մայրաքաղաքով: Հարձակվել է հայ ժողովրդի պատմական արժանապատվության վրա»: [73]

Իհարկե, պատասխանը հասկանալի է, պատվեր է կատարել, պանթյուրքից մի պատվերը: Բայց չէ՞ որ դրանով Շչերբակովը փորձել է հերքել Ուրարտուում պեղումներ կատարած հնէաբան Պիետրովսկուն, որի ծառայությունները ճանաչված են երկրի մեծահամբավ գիտնականների կողմից:

ԽՍՀՄ պատմության դասագրքից, նուրբ ասած, բացառվեց Մարտիրոս Սարգսի մկարը: Տարիներ առաջ պատմաբանների համամիութենական գիտաժողովը որոշել էր Միքայել Նալբանդյանին դասել հեղափոխական-դեմոկրատների շարքը եւ մտցնել ԽՍՀՄ պատմության դասագրքը՝ Գերցեհի, Դորոյուրովի, Չերնիշևսկու կողքին, բայց, չգիտես ինչու, չկատարվեց: Վերջերս պատմության դասագրքից մտցվեց (8-րդ դասարան, ԽՍՀՄ պատմություն) այն միտքը, թե 5-րդ դարում հայերը, վրացիները եւ աղբրեջանցիները ստեղծեցին իրենց գրերը (պարիտետ՝ փաստերը կեղծելով):

Եվ դեռ այսքանից հետո զարմանալի չէ՞, արդյոք, որ հայ ժողովուրդը Ղարաբաղի հարցում զրական ապստեղիքներ էր ակնկալում: Բավական է ասել, որ խաղաղության պայմանագրության ԽՍՀՄ կոմիտեի նախագահ, տեսաբան Բորովիկի պատրաստած «ղիքըրոշումը», որը շատ թե քիչ ճշմարիտ հայամետ մի փոքր պատմություն էր, փուշ դարձավ Կեմտրոնի եւ Աղբրեջանի համար: Կամ Հատուկ կառավարման կոմիտեի անդամների բավականին օբյեկտիվ հոդված-

ները, ելույթները՝ թե վերակառուցումը եւ դեմոկրատիան եթե ռեաբիլիտացոնեց անմեղ անհատ մարդկանց, ապա պետք է այն վերաբերի նաեւ ազգերի ու ժողովուրդների ոտնահարված իրավունքների վերակենդանացմանը, այնպես էլ բարձրագույն ատյաններում շքնդուլվեց:

Չանձրույթ գգալով՝ խորանալու աղբբեջանամետ տարրերի գործողությունների մեջ, որոնց մենք գիտենք ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների համագումարներից եւ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի 1989թ. նոյեմբերի 28-ի որոշման շիւշպիոր կետերից, մեր շնորհակալական խոսքն ենք ուզում ուղղել այն պատգամավորներին (հայ թե այլազգի), որոնք մեր արդարացի պայքարի ջատագովներն են, իսկ պատգամավոր Անատոլի Սորչակի լեճինգրադյան ճառը (որն ունկնդրեցին նաեւ Ադրբեջանի ներկայացուցիչները) համարում ենք պահի հույժ կարեւոր դոզանջ, Բարվում հայերի կոտորածների հեղինակ ազերիներին մերկացնող դրվագ: Նրանք իրենց սկզբունքային դիրքորոշմամբ ավելի արժատականորեն դրեցին ԼՂԻՄ հարցը սահմանադրական կարգով, լեճինյան շնչով լուծելու համար: Ի դեպ, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի 1989թ. նոյեմբերի 28-ի որոշումը իր նախադեպը չունի եւ, թերեւ, խորհրդային ֆեդերացիայի կենտրոնական մարմինների վերջին տարիների ամենամեթեկի որոշումն է՝ կազմված մեր ժողովրդի թիկունքում եւ կապված նրա ճակատագրի հետ: Այն, իսկապես, շատ է հիշեցնում 1921թ. ամբողջի պայմանագրերի շղթան հայ ժողովրդի, այդ թվում եւ՝ Ղարաբաղի նկատմամբ: Սակայն մենք չենք մերժում ինքը՝ ֆեդերացիան եւ չենք խզի մեր 150 տարվա ստեղծած ու ամրապնդած տնտեսական, մշակութային, հոգեբանական կապերը Ռուսաստանի հետ. բոլոր դեպքերում, կարծում են, մեր դիրքորոշումը սա՛ պիտի լինի:

Յուրաքանչյուր ազգ իր ձեռով է նվաճում իր ազատությունը՝ ուժով, պառլամենտական ճանապարհով, երկխոսությամբ: Բայց առայժմ մերն այդ աստիճաններում խաթարվում է, քանի որ ոչ մեր «չերեփն է երկաթյա», ոչ լեզուն է դյուրիչ եւ ոչ էլ մեր բազմաթիվ երկխոսությունները կամ նույնիսկ հազարախոսությունները ճանապարհ հարթեցին մեզ համար:

Ներկա պահին, երբ գործում է մեր չգիտեմ որերորդ շնչառությունը, մեր պարտքն է բարձր օդ հաղորդել դարաբաղյան այդ շնչառությանը, լրջորեն եւ կանխամտածված գործել մեր Ծարժման հակառակորդների դեմ, դարձի բերել տատանվողներին (եթե դրանք կան), խուճապի չմատնվել, լինել զգուն եւ որ շատ կարեւոր է, օգտագործել բոլոր հնարավոր պայմանները, պահպանել իսկապատասխանությունը:

Ճիշտ է, հետնոյեմբերյան (1989թ.) մեր ապրած շրջանը լի է բազմաթիվ հակադարաբաղյան իրադարձություններով, որոնք արտահայտվել են ժողովրդի դեմ ազգայնամուլների եւ ներքին գործերի բիրտ գործողություններով՝ սպառնություններով, թալանով, ավերով ու առեւանգումներով, սակայն առկա են նաեւ մեր լուրջ հաղթանակները, որոնց փայլուն վկայություններն են շրջանների եւ շրջխորհուրդների շենքերի պաշտպանությունը բռնագրավումից, աշխատանքը հիմնարկ-ձեռնարկություններում շարունակելը, ուսմանը եւ շինարարությանը ընթացք տալը, մարզի հիմնարկներն իրենց ենթարկելուն ուղղված, այսպես կոչված՝ կազմկոմիտեի եւ ներքին գործերի ձեռնարկումները խափանելը եւ այլն:

*Ծանոթություն - Սույն հրապարակախոսությունը տպագրվել է «Արցախ» հանդեսի 1991թ. թիվ 2-ում՝ Արցախյան ազատագրական շարժման ծանր օրերին, երբ բուրբ օժանկանները խորհրդային բանակի հետ միասին հալածում էին դարաբաղիցի հայերին, երբ Պուլյանիչկոն եւ գեներալ Սաֆոնովը մեր հայրենակիցների արյունն էին ծծում: Տպագրվել է հանդեսի խմբագիր Կիմ Գաբրիելյանի եւ Արցախի գրողների միությանի նախագահ Վարդան Հակոբյանի խիզախումների ճանապարհով:*

## ԶԳՈՒՅՑ, ՏԱՏԱՍԿՈՏ Է ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՃԱՆԱՊԱՐՀԸ

Զգիտենք, ասում են՝ հանդես են եկել Ղարաբաղի ժողովրդի ներկայացուցիչներ, որոնք պատրաստակամություն են հայտնել բանակցությունների մեջ մտնել հակառակորդ կողմի հետ, նույնիսկ Բաքու են մեկնել: Դա խորհրդածելու առիթ է տալիս ամեն մի հայի. ինչպե՞ս, ի՞նչ պայմանով, ի՞նչ դրդապատճառներով, պատվիրակության ի՞նչ կազմով:

Աստված մի արասցե. որ դա հիշեցնի 20-ական թվականների սկզբի Շուշի քաղաքում բրնձի փլավը եւ քիշմիշը վայելած մեր նախնիների վարքն ու բուշելիկ Լեւոն Միրզոյանի գործունեությունը, որի հետեւանքներն այսօր անմարտելի դուրս եկան: Դա ոչ հեռու պատմություն է, տխուր վերուշ, որ կրքեր է շարժում:

Իսկ ա՞յժմ, այժմյա գործընթացը, այսօրվա համագործակցության փորձերը որքանո՞վ են հիմնավորված՝ այդ մասը պարզ չէ: Պարզ չէ, որովհետեւ դա կատարվել է հանկարծակի, առանց ժողովրդի վճռի, նրա, կարելի է ասել՝ թիկունքում:

Հարց է ծագում՝ համաձայնության մեր կոնցեպցիան որտե՞ղ է քննարկվել, ո՞ր ակտիվում, ո՞ր ժողովում: Գուցե ակնարկեն՝ մարզպետները: Մեր Ծարժման նախածերին մենք ունեինք մարզային խորհուրդ, եւ այն ընդունել էր հայտնի որոշումներ, բայց այսօր այն չունենք, եւ ըստ աղբբեջանական կառավարության, նա ու նրա գործկոնը օրենքից դուրս է: Կարելի է հասկանալ, որ նա օրենքից դուրս էր, երբ այն ղեկավարում էր աննկուն դարաբաղի Սեմյոն Բաբայանը, օրենքի ուժ ունի եւ կարող է նույնիսկ հաշտության ու հաշտարար պատվիրակություն առաջադրել, երբ նրա մախազահը ուրիշ է: Սա կոնյունկտուրա է, ոչ պակաս եւ ոչ ավել, իսկ մեր որոշ ընկերների վարձուները՝ միլերականություն:

Այո, «Ղարաբաղի ներկայացուցիչներ», «Ղարաբաղի ընտրյալներ» անվանումները, որ առիթը բաց չբողեց եւ ԽՍՀՄ կենտրոնական հեռուստատեսությունը, հանրային են հնչում, մեզ բողոքիս է ներկայացնում: Բայց իսկապե՞ս մենք համահունչ ենք, համամիտք, միանշանակ: Այս մասին պետք է խորհեին մինչեւ հաշտության քայլին դիմելը:

Դուք ինձ ճիշտ հասկացե՛ք՝ ես համագործակցությանը դեմ չեմ, բայց գործը նախաձեռնելը եւ այդ նախաձեռնությունը պետք է հասարակական մտքի արգասիք լինեն, չլինեն վարակույրներ, կուլիսներ, կազուալիս իրավիճակ, համկարծակիություն ժողովրդի համար:

Գիտենք, ամիսներ առաջ ԼՂԻՄ մտավորականներից ոմանք (դասախոսներ Շահեն Աբրահամյան, Նիկոլայ Ավագումյան եւ ուրիշներ) հակառակորդ կողմերի հաշտեցման գնալու եւ առձակատուճը բացառելու կոչեր էին հնչեցնում թերթերի միջոցով, բայց նրանց հողվածները կամ հարցազրույցները ուշադիր ուսումնասիրողները երեւի նկատել են նրանց զգուշավորությունը, վախի զգացու՞մը, դարաբաղցու հետագա կյանքի ապահովագրման եւ այլ խնդիրներ: Ես էլ, շատերն էլ, դատելով ամեն ինչից, դժվարանում եմք համոզվել, որ համագործակցության ճժարները հազիվ հավասար լինեն: Կարծում եմք, այդ երկխոսությանը շատ խնդիրներ պետք է հարթվեն, բորբոքված կրթերը հանդարտվեն, պետք է դեմ նետվեն լուտանքները: Մերոնք պետք է այնպիսի համաձայնությունների գնային, որ ողբերգական հետեւանքները բացառվեն: Չէ՞ որ բարեկամության կամրջի շինարարը ժողովուրդը պիտի լինի: Իսկ նրան չեն տրվել այս շինարարական նյութերը, նրան ոչինչ հայտնի չէ: Պետք է հիշել, որ այդ կարծեցյալ պայմանագրերը մեր կողմից լինեն կոլեկտիվ մտքի արգասիք: Այս առումով հարկավոր է «Խորհրդային Ղարաբաղում» հրապարակել այդ պայմանները եւ իմանալ ժողովրդի կարծիքը: Չէ՞ որ դա գաղտնիք չէ, չէ որ Ադրբեջանի ղեկավար Սուբախիբովը մի քանի նամակ-թուղթիկներով իր պայմաններն է թելադրել մեզ: Այդ ինչու՞ չի կարելի մերը հրապարակել, որ ժողովուրդը նույնիսկ բնմարկի եւ իր կարծիքը հայտնի դրանով իսկ ողջ պատասխանատվության ծանրությունը վերցնելով իր վրա: Դա, կարծում եմ, կթեթեացնի համագործակցող մարդկանց գործը եւ հետագա ճակատագրական պատասխանատվությունը: Եվ հենց նախապես ուզում եմ իմ զգուշավոր նկատառումները շոշափել եւ խորհուրդ տալ բանագնացներին հետեւյալ հանգամանքների առումով.

- ամեն մի շարժում որեւէ բան արժե, եթե իշխանություն ունենալու եւ այն պահպանելու երաշխիք ունի: Հետեւաբար, Ղարաբաղի իշխանության եւ տնտեսական ուրույն մարմինները սովորեցնության սահմանում պետք է լինեն:
- վերջին տարիներին Հայաստանի եւ Ղարաբաղի միջեւ ստեղծված մայրուղին չպետք է սասանվի՝ ելնելով երկրում գործող տնտեսական գործընթացի կանոններից, իսկ մշակույթի, առեստրի, առողջապահության, կրթության բոլոր օջախների աշխատանքն այդ առումով՝ չխաթարվի.
- ոչ միայն ապահովվի իրենց հարազատ բնակավայրերից գեներով դեպորտացված մարդկանց վերադարձը, եւ վճարվի նաեւ փոխհատուցում նրանց շարժական ու անշարժ գույքի դիմաց, ինչպես սովորաբար այդ արվում է շատ երկրներում ու տարածաշրջաններում.
- բանտերից ազատ արձակվեն բոլոր անօրեն բանտարկվածները.
- վճարվեն բոլոր խորհատեսություններին ու կոլտնտեսություններին հասցված վնասները:

Այդ եւ նման շատ պայմանների (ճանապարհների ազատ օգտագործում եւ այլն) հիմքում ընկած է կոմպրոմիս հասկացության լիարժեք իմաստը, որը մե-

րառում է ոչ թե միակողմանի, այլ երկկողմ պարտավորություններ՝ Մոսկվայի հաստատումով: Պետք է զգուշանալ քաղաքական ֆարսից, միակողմանիությունից, կապիտուլյացիայի ենթարկվելու մտայնությունից: Հասնել նրան, որ մորատորիում հաստատվի երկու կողմերի համար՝ կրակոցները դադարեցնելու, վնասներ պատճառելուց, ավարառությունից:

Հիշել, որ տարվ-գիջելով շատ չես շահի, դա ապացուցել է հայի վաղեմի պատմությունը: Գնալ այնպիսի փոխզիջման, այնպիսի կոմպրոմիսի, որ գոնե տանուլ տրվեն երկրորդայինները, եւ պահպանվեն առաջնայինները:

Վերստին իմանալ, թե ովքեր են մեր հաշտարարները (մի՞թե նրանց երեսից քիչ ենք տուժել), ինչպիսիս են լինելու նրանց առաքելության լիազորությունները: Գուցե այնպես, որ դեռ մերոնք հաշտության խարխիսը չձգած, Մոսկվան հայտարարում է Ադրբեջանում կայանայիք նախագահական ընտրություններին ղարաբաղցիների մասնակցության պատրաստակամության մասին: Հին երգեր նոր երանգներով, կրկին բարբաջանքներ, հասարակական մտքի ապակողմնորոշում:

Ի դեպ, պետք է ապավինել Հայաստանին, հետեւել նրա ծրագրերին ու խորհուրդներին: Մեր ժողովուրդը հաստատ պիտի իմանա, որ մեմք չպարտվեցինք: Երկխոսությունը եւ բանակցությունները հարցը պարզեցնելու, նպատակները ճշգրտելու եւ ժողովուրդների բարեկամությունը վերականգնելու քայլեր են, որին համամիտ է եւ Հայաստանի կառավարությունը: Այդպես են մտածում, երեւի, նաեւ ադրբեջանական կողմի առողջ դատողները: ԽՍՀՄ ներկա, դեռես վարչահրամայական կապանքներից ձերբազատված կարգերի պայմաններում դեմոկրատիա խաղացող որոշ ղեկավարների հակահայկական քաղաքականությունը մեր հիաքափությունը, կարծես թե, արդարացնում է, իսկ մեր որոշ ղեկավարների տեղատվությունը եւ մտավախությունը խորհելու առիթ է տալիս:

Չցանկանալով հիշեցնել 1918-20 թվականների Ղարաբաղի տխուր անցյալը եւ զուգահեռներ անցկացնելու փորձեր չանելով ցարական գեներալ Միլիկովի ու այժմյա խորհրդային գեներալների գործելակերպի, անգլիական գեներալներ Մակմագոնի ու Շատելվորթի եւ միջազգային ներկայիս անտարբեր պարոնների վերաբերմունքների միջեւ, որոնք միջազգային մասշտաբի չհասցրին մեր հարցը՝ բավարարվելով խրատաբանությամբ ու հպանցիկ որոշումներով, ուզում եմ մեր ժողովրդին հիշեցնել, որ այս կարեւոր պահին օգտագործեն հույն փիլիսոփա Դիոգենեսի ճրագը, որն օրը ցերեկով, վառած լապտերով որոնում էր իսկական մարդու եւ ոչ մարդատյացի:

Ժողովուրդ, մեր այս պայքարով մենք փոքր-ինչ ճանաչեցինք աշխարհը եւ մարդկանց, հարեւաններին ու բարեկամներին, որոնցից բազում անգամ խաբված ենք: Հիշենք, որ ստալինականության շունչը վերացված չէ, ապրելու ուժը հավատանքն է: Փշոտ է մեր ճանապարհը, կեռնաններով ու մանվածապատ, տատակոտ է բանակցությունների ուղին, բայց խելացի վարվելու դեպքում՝ շահեկան: Լինենք զգույշ, որ հային մատկինում հատուկ քաղաքական միամտությունը այս անգամ գոնե հանդես չգա, չկրկնվեն Ալեքսանդրապոլի ու Բաթումի, Տրապիզոնի ու Մոսկվայի խաբկանքները: Պետք է հոգալ՝ անվնաս դարձնելու ժողովրդի հետագա ճանապարհը:

Հարգելի ընթերցող, գուցե ասեք, թե նյութի հեղինակը երեւի չի տուժել, քանզի համերաշխավելու կոչերին է համամիտ, բայց ոչ, ես պակաս չեմ տուժել թե՛ անձնապես եւ թե՛ տոհմով: Հետո էլ՝ այստեղ սեփական կաշվի հարցը չէ միայն, բանը ավելի մեծ է, քան պատկերացնում ենք: Չէ՞ որ այս տարիներին տառա-ցիտրեն տուժել է ողջ հայ ժողովուրդը, եւ որ հենց նրա մասին էլ պետք է հոգալ՝ անվճառ դարձնելու ժողովրդի հետագա ճանապարհը:

(25-ին հուլիսի, 1991թ.: Տպագրված է «Խորհրդային Ղարաբաղ» թերթում):  
[74]

## ԲԱՅ ՆԱՍԱԿ ՂԱՐԱԲԱՂԸ ԼՔԱԾ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՏՆՕՐԵՆՆԵՐԻՆ

Ասում են՝ ճողոպրել եւ գտնվում եք Հայաստանի ինչ-որ շրջաններում, երեւան քաղաքում կամ էլ ներքին ու արտաքին սփյուռքի այլ վայրերում: Ցավում եմ դրա համար, այն բանի համար, թե այս օրերին, այս բոհուրդին, տնօրենները ի՞նչ են որոնում հանրապետությունից դուրս, «ո՞ր սեւ սարում, ո՞ր թփի տակ»: Գուցե որոնում եք թաքստոց, խաղաղ անկյուն, ապահով կյանք: Բայց մի՞թե դուք դրան եք արժանի, մի՞թե ձեր երիտասարդ ու առնական հասակը, որ պարգեւել են բնությունը եւ ձեր ծնողները, ձեր այսօրվա վարձուներին էին սպասում:

Իսկ կարո՞ղ է ձեզ իրենց տնօրեններ ընտրած ուսուցիչներն ու աշակերտնե-րը այդպիսի պատասխան ակնկալելին՝ հագիվ թե: Նրանք ձեզ շատ բան տվա-ծի՝ պատասխանին էին սպասում: Բայց դուք հուսախաբ արիք նրանց: Ստա-ծելի՞ք գոնե, թե ինչ է ձեր արածը այն հազարավոր աշակերտների, հարյուրավոր ուսուցիչների հանդեպ, որ կատարեցիք: Դուք պետք է հիշե՛իք ձեզվից առաջ տնօրեններին, որոնք Սեծ հայրենականի տարիներին օջախի համար, հայրե-նիքի համար են կռվել, եւ ողջ մնացած եւ այժմ գյուղերում ու քաղաքներում գտն-վող ձերացած տնօրենները ինչպես են թիկունքային աշխատանքներ կատա-րում: Կարծում եմ՝ այդ ամենը հիշելուց ամոքի քրտինք պետք է ծորա ձեր երե-սից: Հիշե՛իք գոնե նրանց, հիշե՛իք ձեր գործընկերներին, հանրապետության մի բանի տասնյակ դպրոցների՝ սարսուռ չզգացող եւ վախը բացառող ձեր կոլեգա-ներին, որոնք այս օրերին սահմանապահի դիրքերում պաշտպանում են ձեր հողն ու դուրը, մեր կուսակալ անտառները: Հաճախ եմ որոնում ձեր դավի պատ-ճառը, բայց ձեզ արդարացելու հանգրվան չեմ գտնում: Ասում եմ՝ գուցե ձեր մեջ ծածուկ եղել են այդ բացիկները, որ թաքուն տարածվել են ձեր ողջ օրգանիզմով ու առաջ բերել այդ սարկոմիկ ուռուցքը: Գո՛ւցե: Իսկ գուցե հետեւել եք ձեզանից առաջ ճողոպրածների՞ն: Հնարավոր է, բայց չէ որ դուք ուսուցչապետներ եք, ձեր դիրքով ու կոչումով շատ ու շատ բարձր՝ սովորական լքյալներից: Նախկին տնօրեններ, ձեր արածը նեղվել չի կարող ոչ միայն նրա համար, որ դուք ձեր են-

թակայության դպրոցները թողել եք ոչ ոքի, ձե՛ր իսկ առանձնատեսակները կրն-կի վրա բաց, սեղանները աջ ու ձախ շրջված, դպրոցի կնիքն ու դրոշը ինչ-որ տեղ ընկած, շրջանավարտների մեծ մասի ատեստատները չլրացված ու չհան-ձնված, դպրոցները ձեռույցմանը չնախապատրաստած, այլեւ, որ ամե-նամանրն է՝ լքել եք հայրենիքի պաշտպանների շարքերը: Տնօրեն վերագներ, արդյոք, դուք խորհե՞լ եք ձեր վարձուների մասին, գնահատել ու որակե՞լ եք այն: Դա պետք է արվեր ձեր կողմից՝ բեկուզ որպես մեր նախնիների սերունդներ: «Հայկ եւ Բեր», «Տիգրան եւ Աժդահակ», «Արա Գեղեցիկ եւ Ծամիրամ» առա-պելների, «Սասունցի Դավիթ» էպոսի, «Տիգրան Սեծ», «Արտավազ 2-րդ», «Վարդանանք», «Սամվել», «Դավիթ Բեկ», «Մխիթար Սպարապետ», «Անդրա-նիկ» եւ այլ պատմավեպերի էությունը իր ուղեղին հաղորդած եւ աշակերտներին հրամցրած մանկավարժը կասեր. պիտի գինվորագրվենք բոլորս՝ այր-մարդ-կին, ձեր ու երեխա, գյուղացի-բանվոր, մտավորական ու ղեկավար՝ ով կենդանի է, ով շնչում է: Իսկ դուք եւ ձեզ մտանները... Հասկացե՛ք, մեր տնօ-րեններ, բայց իսկն անօրեններ, ով-ով՝ ուսուցիչը դավաճանելու իրավունք չունի: Հիշեցե՛ք Հ. Թումանյանին, որն իր «ընտանեկան գունդն» էր տրամադրել Անդ-րանիկ գորավարին:

Դուք երբեւ մտածե՞լ եք, որ եթե դարաբաղյան տներից, քաղաքներից, գյու-ղերից դուրս գան բոլորը, հեռանան, ապա... Պապերի գերեզմանները, ամեն հիմ ու նոյ, նախնիների հուշերը, ամեն, ամեն բան, մի խոսքով, մեր ոգին, ապա ի՞նչ հայտարար կուզենա Ղարաբաղը: Թերեւ՝ ոչինչ:

Չէ, տնօրեններա, երեսում է՝ ձեր կյանքի վրա դողում եք, մորթապաշտություն եք անում՝ չիմանալով, որ վախից սարսափելի ոչինչ չկա: Խորհուրդս է՝ չպետք է բողոքել, որ վախը թեկադրի խելքին. ահն ու դողը վա՛տ խորհրդակցանքեր են: «Վախեցողը մեկ օրում հարյուր անգամ մեռնում է», - ասել է մեծ մտածողներից մեկը: Ձեր վախը փարատելու համար լսե՛ք, ահա թե ինչ եմ հիշեցնում ձանոթ «Վարդանանք»-ի հերոս Արտակ Մոկացու երկխոսությունից.

«Այնպե՛ս քաղցր է կյանքը, հավատում եմ կյանքին, դրա համար էլ պատ-րաստ եմ մեռնելու: Հոգով սիրում եմ կյանքը, մեր հայրենիքը, ժողովուրդը եւ ա-սում՝ բող նա մնա, միայն թե մնա, ապրի, հավիտյան ապրի՝ բող այդ լինի թեկուզ իմ կյանքի գնով: Դա կյանք է, այդպես մեռնելը, դա է կյանքը»:

Հենց այդ գաղափարով մեռան մեր տասնյակից ավելի դպրոցների տնօրեն-ները: Դուք գոնե վախեցե՛ք ձեր իսկ սեփական զավակների ապագա նախա-տիճից: Հիշո՞ւմ եք Վասակ Սյունու երկու տղաների՝ Բարիկի ու Ներսիկի ատե-լությունը՝ հայրենադավ հոր համդեպ: Զգու՛յշ, այնպես չլինի, որ ձեր զավակ-ներն էլ իրենց հոր հանդեպ նույնը կրկենն կամ դավաճան Արտակ Ռշտունու աղջիկ Օլիմպիայի մեծն չասեն. «Ինչպե՛ս կրեմ հոր նախատիճը՝ դավաճանի դուստր... ինչպե՛ս նայեմ մարդկանց երեսին»: Սա կարելուր հետևություն է, որ պիտի անեք, կարելուր դաս, որ պիտի առնեք: Նախկին տնօրեններ, ինձ ցավ է պատճառում հատկապես այն, թե դուք ինչպես ձեր ծնողներին, քույրերին, եղ-բայրներին ու մյուս հարազատներին թողեցիք բախտի քմահաճույքին, ձեր այստեղ մնացած ընկերների պաշտպանության տակ՝ կրկին ավելացնելով նրանց բեռը: Երեւի մոռացել եք ձերների դասն ու դատը. «Հարգիր ձերին, որ ծե-

րանաս, ծերիդ պատիվն իմանան»:

Այնուհետև, չգիտեմ՝ ձեզ հայտնի՞ են ձեր հետվախաստյան ժամանակաշրջանում Ղարաբաղում կատարված նորությունները: Չգիտեմ՝ ձեզ հայտնի՞ է ռազմաճակատի տարբեր հատվածներում մեր ազատամարտիկների քաջագործությունների, մեր հաջող գործողությունների մասին:

Բայց մտածե՞լ եք, որ դուք նրանում ներդրում չունեք, իսկ դա մի՞թե անորակի չէ ձեզ համար:

Ե՛, տնօրեն տղաներ, ինչ էլ որ լինի՝ հաղթանակ, թե, Աստված մի արասցե... ինչպես 200 տարի առաջ է Ղարաբաղյիների գնահատականը տրվել, այնպես էլ այժմ, մեր եւ ձեր բոլորիդ գնահատականը տրվելու է ի սկզբանե եւ ի վերջո:

Նամակս երկարեց, այդ ես զգում եմ, բայց չեմ ուզում մտքարալի լինել եւ անհանգիստ ծնողի պես հարցնում եմ՝ մեղված հո չե՞ք, փոշմա՞ն չեք եղել, ձեզ վերագտնելու փորձեր չե՞ք արել, ձեր կանանց ազդեցությունից դեռ չե՞ք փարստվել ու վերադարձի մասին լքջորեն չե՞ք խորհել: Ամիսներ անցան, ի՞նչ եք մտածում: Գուցե հիշեք Հ. Շիրազի «Ես էլի կգամ» բանաստեղծության տողերը.

*Իմ բայիկներ, ես էլի կգամ,  
Ճիվաղ բշմամուն կառնեմ ոտքի տակ:*

Բայց Շիրազը դա ասել է գոհվածների անունից, որ նրանք վեր կհանեն ու նորից մարտի կենտվեն՝ հանուն երեխաների, կանանց ու ձերևրի: Իսկ չե՞ որ դուք ողջ եք, դուք ավելին կարող եք անել նրանց համար:

Եսել եմ՝ ձեր նյութականը խարխուլ է, իսկ այստեղից տարած գրոշները՝ սպառված: Գիտեմ՝ տարբեր արհեստներ եք սովորում, առևտրով զբաղվում, ձեզ համար շատ անծանոթ ու անսպասելի աշխատանքներ կատարում, մի խոսքով, գլուխ պահում, միայն թե...

Ինչեփեցե, ավարտում եմ նամակս եւ առանց գոջումի ասում, որ ձեզ եւ ձեզ մտաններին ոչ ավել-ոչ պակաս պատժել է արդար, որովհետև դուք ձեր բաժին հայրենի վիշտն ու լուծը դրել եք ձեր ընկերների վզին:

Բայց հիշեցեք՝ «Ով ընկերոջը վշտի մեջ թողնի, վշտի բռնով տուն կդառնա»: Իմացե՛ք, դա փորձված օրենք է, բունբերանգի գործելակերպ, որ կանգրադաճում է ձեզ: Այո, ձեր մտաններին արդարացում չկա, եւ երե դուք չեք զգում ձեր կոշտը եւ հայրենադարձ չեք լինում, գոնե չե՞ք մտածում, թե ում եք բողբել դպրոցը, աշակերտներին: Եվ իրոք, ո՞ւմ եք բողբել: Ջինվոր-ուսանողների՞ն, որոնք ուսումը գույակցելով մանկավարժական աշխատանքին, օրընդմեջ հերթափոխում են սահմաններ՝ դիրքերում: Գիտե՞ք, որ նրանց ու նրանց սաների համար դասաժամերի կանգեքը դողանջում են հեռահար հրետանու ներքո: Սակայն նորատի ուսուցիչները, դոկտրով իրենց սաների մատուղ կյանքերի համար, շարունակում են դասը:

Դեպերող տնօրեններ, դարձի՛ եկեք, բռնե՛ք տունդարձի ճանապարհը եւ օգնեցե՛ք՝ հանգցնելու ազգին պատահած հրդեհը:

15 փետրվար, 1993թ.

*Թե հանդերն այս շնաշխարհիկ  
Ու լեռները թողնեմ անտեր  
Ամպրոպադուռ մեր Զիրս սարի  
Կայծակները ինձ կշանթեն:  
Թե որ դառնամ ես տարագիր  
Ու ոտքիս տակ հող չունենամ,  
Ղարաբաղս կաղաղակի,  
- Զեզ պես որդին բող չունենամ:*

Վազգեն ՕՎՅԱՆ

## ՈՐՆ Է ԱՌԱՋՆԱՅԻՆԸ՝ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԱՍԲՈՂՋԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ԹԵ՞ ԻՆԵՆՈՐՈՇՄԱՆ ԻՐԱՎՈՒՆԸ

Մեր ընդդիմախոսները, մեր Ղարաբաղյան շարժման հսկասակորդները հաճախ են դաճոկյան սուր պարզում մեր գլխավորելը, իսկ լավագույն դեպքում՝ հորդորում մեզ՝ հպատակվել Հելսինկյան 1975թ. խորհրդածողովի որոշումներին՝ մատնացուցելով պետությունների «տերիտորիալ ամբողջականությունը»: Բարձր մակարդակի այդ պարոնները դրանով իսկ ցուցաբերում են տհասություն ժողովրդի ինքնորոշման իրավունքի եւ պետության տարածքային ամբողջականության սկզբունքների տարբերությունները հասկանալու մեջ: Թե այստեղ որն է գլխավորը, առաջնայինը եւ որը՝ երկրորդայինը՝ հարցերի հարց է դարձել, խճճել ու առաջ բերել Ղարաբաղյան բնջուրը: Նրանք այն աստիճան եւ այնքան անգամ են Հելսինկիով մեզ աստել ու մեր բշմամիների բերանը սովել «տերիտորիալ ամբողջականություն» այդ ծանոնը, որ մեզնից շատերը, նույնիսկ ուսյալ մարդիկ, սկսել են այդ խաբկանքի մեջ վախվորել, մեր անկախության միջազգային ճանաչմանը բերահավատորեն նայել, Ղարաբաղի անկախությունը անիրավորելի մի բան համարել, իսկ մեր հաղթանակները՝ գրվանի տակ առնել:

Բայց դասական պատմություն իմացող ամեն մի մարդ, ժողովրդի ինքնորոշման իրավունքի եւ պետության տարածքային ամբողջականության սկզբունքի հարաբերության մանրամասները հասկացողները կարողանում են պատասխանել մեզ «դարձի բերեք» ցանկացող պատգամախոսներին: Իսկ եթե քիչ-քիչ խուսմանը պատմության անցյալի եւ ներկայի հորաճանոտները, բերթենք խուսացած կամ դեռ բարձր էջերը, կտեսնենք, որ բոլոր ժամանակներում էլ գլխավորը, առաջնայինը ժողովրդի ինքնորոշման իրավունքն է եւ ոչ թե տարածքային ամբողջականությունը: Բայց թե ովքեր են առաջ քաշել վերջինիս գաղափարը.

առաջնություն տվել դրան, հասկանալի է՝ կապիտալիստական աշխարհի մետրոպոլիտ երկրները, որոնք հավերժացրել են գաղութատիրությունը: Դարերի վաղեմություն ունեն «Ալժիրը՝ դա Ֆրանսիան է», «Գոան՝ դա Պորտուգալիան է» արտահայտությունները: «Միասնական ու անբաժան» տիրույթների իմպերիալիստական ձեռնարկումները, որ առաջ են քաշվում պետության տարածքային ամբողջականության պատրվակով, իրականում ծառայում էին բռնակցման և ազգային ստրկացման քաղաքականության արդարացմանը: Իմպերիալիզմի տարբեր մակարդակի նմանատիպ ռեյիդիվներ տեղի ունեն նաև մեր ժամանակներում: Դրանք կային նույնիսկ սոցիալիստական աշխարհում, ուր չովի-նիզմն ու նացիոնալիզմը, դժբախտաբար, վերացած երևույթներ չէին:

Այսօր էլ գաղութային նույնություններին ավելացավ նոր, այս անգամ՝ «հայրենական» տարբերակը, Ալիեի հռչակած «Ղարաբաղը Ադրբեջանի անբաժանելի մասն է» ձեռնարկման տեսքով: Դա ոչինչ չունի սոցիալիզմի և ինտերնացիոնալիստական գաղափարախոսության հետ և ուղղակի հետեւանք է սոցիալիզմի ազգային քաղաքականության ձեռնախնդումների, որն սկսվել է Ստալինի բռնապետությամբ:

Բոլորս էլ գիտենք, որ Ղարաբաղյան շարժումը խորհրդային պետության վերակառուցման, դեմոկրատացման, ժողովրդական իշխանության նոր մտածողության, իրավական պետության վերածնունդի գաղափարների իրականացման ժամանակաշրջանի արդյունք է:

Մինչ այդ ԽՍՀՄ քաղաքական ու պետական գործիչները, ելնելով նախադեպ չստեղծելու ցանկությունից, ձեռնպահ էին մնում ԽՍՀՄ մերսում ազգային-վարչական սահմանազատումներում հասունացած փոփոխություններ մտցնելուց: Գոյություն ունեցող սահմանների հավերժացման այդ միտումի կողքին ոչինչ չի ասված բրեժնևեյան 1977թ. սահմանադրության մեջ, և չի շարադրված ինքնորոշման իրավունքը, որից այսօր օգտվում են լեհիստան սկզբունքի հակառակորդները: Բայց դա կեղծիք է, չէ որ մենք ականատես ենք եղել, որ խրուշչովյան համարձակությամբ ԽՍՀՄ տարածքում մի ամբողջ շարք փոփոխություններ են կատարվել: ՌՍՖՍՀ-ն Ուկրաինային հանձնեց Ղրիմի մարզը 1964թ., «բնակչության խնդրանքով», ՌՍՖՍՀ Սնոլենսկի մարզի մի քանի բնակավայրերի տարածքի (որ ԼՂԽՄ-ից ավելի տարածք ունեին) հանձնումը ԲՍՀ Մոզդելի մարզին՝ ԽՍՀՄ սահմանադրության 14-րդ հոդվածի «ե» կետի հիման վրա, փոփոխությունների ենթարկվեցին Ուլբեկստանի և Ղազախստանի միջև տարածքային սահմանազատման հարցում: Ղազախստանի ԽՍՀ կողմից 1969թ. Ուլբեկստանին հանձնվեցին մարզի մեկ միլիոն հարյուր հազար հեկտար հողերը: Կամ՝ Կիրգիզիան Տաջիկստանին հանձնեց մի մեծ հողատարածք, որ տաջիկական աժխային հնոցարանի շարունակությունն է: Իսկ Բելոռուսիան իր տարածքից Լիտվային հանձնեց 2 հազար քառ. կմ (կիս Ղարաբաղ): Եվ կարելու էր այն է, որ այդ բոլոր տեղի են ունեցել առանց հիստերիայի, առանց կոտորածների, առանց սպառնալիքների, այլ բարեկամության և փոխըմբռնման ոգով:

Եվ հարց է ծագում, թե ինչպես 70 և 78-րդ հոդվածները այստեղ խաչաձեռնեցին, խոսքը մեկ արին և այդ փոփոխությունները հնարավոր դարձրին, իսկ երբ

Ղարաբաղի հիմնահարցը լուծեցին, նրանց օգնության չեկան այդ հողվածները և ընդհակառակը՝ հակադրվեցին:

«Բայց այդ ինչպե՞ս եղավ, ո՞ր մոգական գավազանն է, որ դեր խաղաց, իսկ մեզ համար՝ կոտրվեց ու ծնեց Սուսլայիթի մախճիրը, ՀՀ-ն և ԼՂ-ի շրջափակումը, արտաքին աշխարհից նրանց կտրվելը, հայերի և ադրբեջանցիների կանգվածային կոտորածները տարածաշրջանում, Հատուկ կոմիտեն, Կազմկոմիտեն և Պատերազմը:

Գոնե ինչո՞ւ չկիրառվեցին համաշխարհային պրակտիկայում փորձված ու կիրառված մեթոդները՝ ինչպես, ասենք, որոշ երկրներում, երբ այդպիսի տարածքներն ասենք (ինչպես Ղարաբաղը), կառավարում է միութենական պետության գլուխը, որը մեզ մոտ սխալմամբ զուգորդվեց, այսպես կոչված, պրեզիդենտական կառավարման վարչակարգի հետ: Կամ ինչո՞ւ մեզ չտվեցին միութենական (ֆեդերալ) տարածքի կարգավիճակը: Չէ որ նման դեպքերում միութենական տարածքի կարգավիճակ է նախատեսված մի շարք ֆեդերալ պետությունների սահմանադրություններով: Ֆեդերացիայի անդամների համաձայնությամբ միութենական պետությունը իրականացնում է անդամների համաձայնությամբ միութենական պետության նմանատիպ օրինակներ են Կոռավարումն անմիջականորեն: Կառավարման նմանատիպ օրինակներ են Կոլումբիա օկրուգը ԱՄՆ-ում, Հնդկաստանում 9 տարածքներ, Նիգերիայում՝ Աբաջան: [75]

Հասկանալի է, որ նման պարագաներում պահանջվում է, որ տվյալ տարածքների բնակչությունը տա իր համաձայնությունը, որը Ղարաբաղի առումով կողոնկվոր մեր բնակչության կողմից: Օրինակ, երբ ձայն կար, թե Ղարաբաղն ուզում են դնել Մոսկվայի ենթակայության տակ՝ որպես ինքնավար միավորում, ժողովուրդը ցնծության մեջ էր և ողջունելի էր համարում նման քայլը:

Իսկ ո՞վ պիտի օրինականություն տար դրան, եթե ոչ Մ. Ս. Գորբաչովը և նրա շքախումբը: Խոսքով դեմոկրատիա խաղալով, նա հենց ասում էր, թե սահմանները վերածեցը նշանակում է ողջ-ողջ մորթել, բայց չէր ասում, թե ինչ սահմանների մասին է խոսքը:

«Բայց նա իրեն հաշի՞վ է տվել, որ եթե ժողովրդի մարմինը ողջ-ողջ մորթել են, եթե մի ժողովրդի գլուխը, ձեռքերն ու ոտքերը կցել են մյուսի մարմնին, ինչ է, այդպես էլ բողմենք մեկն առանց գլխի, ձեռքի կամ ոտքի, իսկ մյուսը՝ երկգլխանի, եռոտանի ու չորսձեռանի»: Նույնիսկ եթե դրանք անհամատեղելի են և վտախտով են սպառնում օտար վերջավորությունների «երջանիկ տիրո՞ջը»: [76]

Վերակառուցման շահերին, իհարկե, չի համապատասխանում սահմանների վերածնունդը, բայց մի՞թե նրա շահերին համապատասխանում են գոյություն ունեցող խոտորումները: Այս տեսակետից հիշենք պատմաբան Սոկոլովի «Դեմոկրատիան և սահմանները» գրքի (1989) այս տողերը. «Պետությունը վերակառուցման այնքան կարիք ունի, որ երբ մեզ ուզում ենք պահպանել նրա արտաքին սահմանները, ստիպված ենք ինչ-որ բան անել ներքին սահմանների հետ. դա արդեն ակներև է շատերի համար»: [77]

Երեւի թե պատմաբանը ի նկատի ունի Ղարաբաղի, Օսեթի, Գազաուզների և մյուսների գարիոնը: Միջազգային քաղաքագետներից ոմանք, ցուցաբերե-



լով իրավաբանական անգրագիտություն, խճճում են միջազգային սահմանադրական օրենքները: Նրանք միանշանակ ունենում են տարածքային ամբողջականության շուրջ եւ այն համարում միակ ճշմարիտը պետությունների եւ ազգերի մեջ: Բայց եւ մոռանում են, որ բնակչության կամրով պետական սահմանների որոշումը ինքնորոշման հարմար ձեւ է: Իսկ բռնակցումը, համաձայն ՄԱԿ-ի գլխավոր սասանքետայի 1974 թվականի որոշման «Հանցագործություն է, իսկ ձեռք բերած տերիտորիան՝ անօրինական»: Այս հարցում նոր կազմակերպված ԵԱՀԿ (Եվրոպայի անվտանգության եւ համագործակցության կազմակերպություն) նույնպես իր եզրափակիչ ակտում գրել է, որ, ելնելով իրենց բախտը տնօրինելու սկզբունքներից, «բոլոր ժողովուրդները միշտ իրավունք ունեն» ազատության պայմաններում երբ եւ ինչպես կցանկանան որոշել իրենց ներքին ու արտաքին քաղաքական կարգավիճակը, առանց դրսի միջամտության, եւ իրենց քաղաքական, տնտեսական, սոցիալական ու կուլտուրական զարգացումը»: [78]

Ասել է թե՛ ժողովուրդն ինքը ազատորեն պետք է սահմանի իր քաղաքական կարգավիճակը: Այդ բառերը առավել քան Ղարաբաղին են վերաբերում, նրա այսօրվա ճակատագրի բերումով: Այստեղից հետեւում է, որ Ղարաբաղի հայությունը հենց ինքը կարող է որոշել, թե «ում հետ ապրի»: Խորհրդային իշխանության արշալույսին Լեւինը չզլացավ խոսել ազգերի իրավունքների եւ ինքնորոշման հարցերի շուրջ:

«Եթե մենք ուզում ենք հասկանալ ազգերի ինքնորոշման նշանակությունը, ազգային շարժումների պատճառները, գրել է նա, - ապա մենք պետք է հասկանանք նրանց պետական անջատումն օտարազգի կողելտիվներից եւ նրանց ինքնուրույն ազգային պետության գոյացումը»: [79]

Սոցիալիզմի շինարարության հիմքերը դնող մարդը ասում էր, թե «բոլոր ժողովուրդները ինքնորոշման իրավունք ունեն եւ նրանք ազատորեն սահմանում են իրենց քաղաքական կարգավիճակը»: Ինչքա՞ն բարձրագույն են եւ այժմեական այս բառերը, որը բեւավորում է մեզ եւ մեզպեսներին: Բայց ո՞ր է թե...

Այս ամեն ասածը լսող կամ կարդացող մասկին ԽՍՀՄ իրավաբաններ Բ. Լազարը եւ Ի. Մարսիմովը բերանները ջուր պետք է առնեն, երբ գրում էին «ԼՂ շուրջը, սահմանների մասին օրենքը եւ օրենքի սահմանները» հոդվածը, որտեղ ամբողջովին լուրջան են մատնել ինքնորոշման մասին Ղարաբաղի ժողովրդի պահանջը: Նրանք «մոռացել են» հարցի միջազգային իրավական կողմը, բնակչության կամքի դրսեւորումը՝ հանրապետի եւ ժխտել սահմանների ճշտման հնարավորությունները: Նրանք եւ նրանց նմանները չեն հասկանում Ղարաբաղի պատմական անցյալը իր ժողովրդի հետ միավորելու ճանապարհով ինքնորոշման հարցի դրվածքի եւ լուծման անհրաժեշտությունը: Արդեն հանրահայտ է, որ Ադրբեջանը եւ նրա տեսակին պատկանող պետությունները ժողովրդի ինքնորոշման հարցը նենգափոխելով տարածքային վեճով, ձգտում են թույլ շտալ իրականացնելու ինքնորոշման պահանջը: Ղեկավարվելով նման կարգի նկատառումներով, բռնակցում կատարած Ադրբեջանը փորձում է խուսափել ինքնորոշման հարցի դրվածքից՝ ամեն ինչ փոխադրելով տարածքային վեճի ոլորտը: Միջազգային նորմերում հատուկ գրված է, որ ինքնորոշումը կարող է դրսեւորվել

բազմաթիվ ձեւերով՝ ազգային պետության ստեղծման (որ Ղարաբաղը ստեղծել է ինքնուրույն), իր ժողովրդի անկախ մասի հետ միանալով կամ վերամիավորվելով (դա մենք ցանկացել ենք 1989թ. դեկտեմբերի 1-ին՝ Շահումյանի ենթաշրջանի հետ միասին միանալ Հայաստանին):

Ղարաբաղի ժողովուրդը, առաջնորդվելով նման կարգախոսներով եւ դեն շարտելով տարածքային ամբողջականության հնոտի բանաձեւը, դժնդակ պայքարով ձեռք է բերել իր ազգային տարածքի ամբողջության անբախտելի իրավունքը՝ հասկանալով, որ իր քայլը համատեղելի է ՄԱԿ-ի կանոնադրության սկզբունքների հետ: Հենց այդ է պատճառը, որ մեզ շատ չեն ծեծում, մեզ վրա առայժմ միջազգային ուժ չեն օգտագործում, Անվտանգության խորհրդի հապշտապ որոշումը մեզ վրա չեն տարածում, ու մեր տարածքային փոքր ընդլայնումը շատ չի դատափետվում: Ուրեմն, մենք վախենալու թիչ քան ունենք, քանի որ մեր բիկունքում միջազգային օրենքներն են՝ մարդու եւ քաղաքացու իրավունքների եւ ազգերի ինքնորոշման պաշտպանության առումով: Մենք այնքան ենք իրավասու եւ արդարամիտ, որ խոսքը վերաբերում է ոչ թե երկու պետությունների տարածքային վեճերին (մեր եւ Ադրբեջանի), այլ բռնակցված եւ բռնությամբ պահված մարզի ինքնորոշման իրավունքին, որը ոչ մի տերիտորիալ ամբողջականություն չի խախտել:

Այժմ բանակցություններ են գնում Ղարաբաղյան պրոբլեմի շուրջ, միջնորդում է 9-յակը Միսկի խումբը: Զենարկվում են «մեզ զսպելու», «գրավյալ» հողերը վերադարձնելու, Ղարաբաղի կարգավիճակը որոշելու, ԼՂՀ անվտանգությունը ապահովելու, Շուշիի եւ Լաչինի հարցը եւ այլն: Դ-ա, պարզորոշ ասած, փոխափոխման քայլեր են հարկադրական խաղաղության պայմաններում: Բայց մի՞թե փոխափոխումը չի ուշացել, մի՞թե դա վստահելի փոխափոխում կլինի: Բայց չէ՞ որ մեր ինքնավարության եւ ոչ անկախության պայմաններում անմիտ դուրս կզան շատ հարցերի շուրջ փոխափոխումները: Հարց է ծագում, ի՞նչ ունենք, որ վիջենք, չէ՞ որ չունեցածից տալ չի լինի, մենք դեռ ուզում ենք ունենալ, մեզ պետք է տան, քայց մեզանից պահանջում են: Այս մանվածապատ բանակցությունները, որ վերջ չունեն եւ թուրքերի պահանջներն էլ հետը, իրաւես լինել չեն կարող, որովհետեւ Ղարաբաղի մի պարզունակ պահանջը՝ անկախությունը ճանաչելը, չի իրականացում, քանզի մարդկանց ինքնորոշման իրավունքը թողած, աշխարհը մտահոգված է տերիտորիալ ամբողջականությամբ:

Հարկ է աշխարհի գործաները իմանան, որ Ղարաբաղյան ներկա պայքարը շարունակությունն է ազատագրական այն պայքարի, որի առաջամարտիկն էր Իսրայել Օրին դեռես 18-րդ դարավերջին, որ ծրագրում էր Արեւելյան Հայաստանն ազատագրել պարսկական տիրապետությունից եւ վերականգնել պետականությունը: Դ-ա մի արեւելահայություն էր, որի սահմանապարտիչը Բաբուն էր, եւ որը պարսկական կառավարության կողմից բաժանված էր 7 վարչատարածքային միավորների՝ Բաքվի, Շամախու, Նուխու, Գանձակի, Ղարաբաղի, Նախիջեւանի եւ Երեւանի: Եվ ազգային ու ազատագրական պայքարի մեր գործիչները, սկսած Իսրայել Օրուց, այս Արեւելահայաստանի համար էին պայքարում, ու պատահական չէ եւ ոչ էլ զարմանալի, որ դեռես 1722-30 թվականներին Արցախի ազատագրական պայքարին օժանդակելու համար Շիրվանի հայկական

բնակավայրերից Արցախ տեղափոխվեցին ռազմական գործի հմուտ կազմակերպիչներ Ավան, Թարխան հարյուրապետները իրենց համախոհներով, ինչպես կասեն՝ Շիրվան-Շամախու տղաները, իսկ Ջանգեզուրիցը՝ Վրաստանից եկած Դավիթ-Քելը իր խմբով՝ Վրաստանի տղաները:

«Աղբբեջան» կեղծանվամբ հանդես եկող Արեւելյան Անդրկովկասի հայկական այդ մարզերը եւս հայ ժողովրդի բնօրրանի մասն են եղել հեռավոր այն ժամանակներից, երբ վերջինս առանձնացել է հնդեվրոպական հանրությունից ու ձեւավորվել որպէս ինքնուրույն էրնոս: Այդ մարզերը հայոց պետության մեջ են եղել մ.թ.ա. 8-րդ դարի վերջերից մինչեւ մ.թ. 4-րդ դարի վերջը: [80]

Դեռ Ալեքսանդր Մակեդոնացուց սկսած, այդ երկրատարածքը ինչպիսի նվաճումների էլ ենթարկվել է, եւ նվաճողներն էլ ինչպիսի վարչատարածքային քաժամումներ էլ կատարել են, էրնիկական առումով մնացել է հայի հայրենիք: Համաձայն այն ժամանակների հաշվարկների, հիշյալ տարածքի բնակչության 87 տոկոսը հայեր են եղել, 13-ը՝ մահմեդականներ:

Էրնոսի տարաբնակեցման առումով դրությունը փոխվել է 18-րդ դարի առաջին քառորդից՝ հայ-վրացական ազատագրական պայքարի եւ Ռուսաստանի հարավ շարժվելու հետ, որից ժառու եղավ մահմեդական աշխարհը: Հենց դրանից ծնվեցին բուրք-պարսկական պատերազմները Անդրկովկասին տիրելու, Հայաստանը երկու անգամ միջեւ կիսելու (1555-1639), հայ տարրին ոչնչացնելու, երկիրը մահմեդականացնելու եւ Ռուսաստանի դեմ պատերեշ դարձնելու խնդիրները՝ սկիզբ դնելով երեքհարյուրամյա շարունակվող ցեղասպանությանը Արեւելյան Անդրկովկասում:

Բազմաթիվ փաստերով ապացուցված է, որ միայն Նուխու իւսնությունում (Մակար Բարխուդարյանի տվյալներով) բռնի ոչնչացվել է 15480 ժուխ ազգաբնակչություն, որը 1916թ. ցարական վիճակագրության համաձայն, 188 հազար բնակիչ էր նշանակում:

Դա կատարեց Թուրքիան՝ 1724 թվականին, իսկ շահական «Պարսկաստանը, որը դեռ Հազկերտի ժամանակից հային դավանափոխելու խնդիր ուներ, Նադիր շահի ձեռքով Թիֆլիսից մինչեւ Կասպից ծովն ընկած տարածքից գերի տարավ 700000 բնակիչների: Միայն Շամախի քաղաքը, որն ուներ 7 ժխական համայնք եւ մի կանյով կարող էր դուրս բերել 10000 հայ գինձորի, հիմնովին կործանվեց շահի հրամանով, եւ բնակիչները քշվեցին Պարսկաստան, արդյունքում՝ մահմեդականացվեցին: Սա մախկինում կատարված շահ Աբբասի ձեռնարկն էր, որ ունեցավ Նադիրը: Փոխարենը շահը Պարսկաստանի խորքերից Անդրկովկաս տեղափոխեց բուրքախոս քոչվոր ցեղերի գանգվածներ՝ հիմք դնելով երկրատարածքի էրնիկական նվաճմանը: Եվ ափսոսանքով պետք է ասել, որ եետագայում այդ քաղաքականությունը որդեգրեց ցարիզմը եւ քոչվորական վերնախավի համար ստեղծեց արտոնյալ պայմաններ, որպէսզի ապրուստի լավ միջոցներով միշտ պատրաստ լինի իր համար: Այդ ամենը դրսևտրվեց 1905-1907 Քթ. հայ-բուրքական ընդհարումների եւ 1918թ. բուրքական արշավանքի ժամանակ, որին գոհ գնացին 50000 հայեր: Յարիզմի քաղաքականությունը շարունակեցին քոչվելիները, որոնք հայկական մարզերը դնելով նորաբոխ աղբբեջանական իշխանությունների տրամադրության տակ, 70 տարի շարունակ սեփականաց-

րին հայերի թե հողը, թե պատմությունը, թե մշակույթը, բայց դրանով չվերջացավ, քանզի ԽՍՀՄ վերջին գահակալը՝ Գորբաչովը, իր բուրքամետ քաղաքականությամբ վերջնականապես դատարկեց այդ տարածքները հայերից՝ փախտականությամբ ճանապարհով: Բայց ավա՞ղ, փոխանակ վերը բերված պատմական անցքերի բերումով հարեւան երկու ժողովուրդների համար ընդհանուր տան վերածված մեր հայրենիքից մեր արդարացի բաժինը պահանջելու, փոխանակ փոխադարձ վիշտմների սեղանին մեր երեքհազարամյա Բաբվի, Շամախու, Նուխու, Գանձակի, Նախիջեւանի հարցերը դնելու, այսօր սակարկում ենք «գրավյալ» տարածքների շուրջ:

Թող հասկանան հարցով վրադվող պարոնները, որ ձեթամտող յուղից բանկ չէ, տերիտորիալ ամբողջականությունը իրավունքից բարձր չէ, ամօրեն ստացված «ոստանը» ինքնորոշումից բանկ չէ:

20.11.2001թ.

## ԲԱՆԱԿՑԵԼ՝ ՀԻՇԵԼՈՎ ԱՆՑՅԱԼԸ [81]

Ղարաբաղի մշտական բնակիչը, որ ճաշակել է ծանր ու դժվար տարիների դառնությունը, գիտի, թե քաղաքական ու ռազմական ինչ փոթորիկներ են անցել Ղարաբաղով: Եվ այդ ամենը ինչքա՞ն ծանր է նստել ժողովրդի վրա, յուրաքանչյուրիս առանձին-առանձին:

Հիշենք Գորբաչովի կառավարության բուրքամետ որոշումները, ՊԱԵ-ի արցանը, Հատուկ կոմիտեն, Կազմկոմիտեն, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի եւ նրա համագումարների հապշտապ հակահայկական որոշումները, ի վերջո, արիեստական շրջափակումները, արտաքին աշխարհից ու սեփական ազգից մեր կտրվելը:

Բայց ո՞ր է թե դրանով վերջանար: Արտաքին դրության եւ պարետային ժամի, անձնագրային ռեժիմի եւ այլ կանոնակարգերի ճիրաններին գոհեցինք հարյուրավոր հայրենակիցների, բալանվեցինք ներսում ու դրսում: Իսկ ոմքակոծությունները, օմօնի եւ ներքին զորքերի համատեղ հարձակումները մեր գյուղերի ու քաղաքների վրա, Գետաշենի ենթաշրջանի, Շահումյանի, Հաղբուրի եւ Շուշիի հայաբափո՞ւմը: Մոսկուումով հիշենք Բաբվի մեմախցերում, Շուշիի, Շահբուլաղի, Ֆիզուլու, Աղզամի եւ մյուս քաղաքների բանտերում կատարված հաշվեհարդարը հայրենասեր արցախցիների հետ: Մեզ առաջնորդող մարդկանց հարկադրական հացադուլները Ստեփանակերտում, Երեւանում եւ Մոսկվայում, որ հաճախ ավարտվում էին հիվանդությամբ կամ մահով: Իսկ երկարատեւ պատերա՞զը, որի կրակներում գոհվեցին մեր հազարավոր երիտասարդ գինձորներ, խաղաղ բնակիչներ: Այդ ամենը հիշել է պետք:

Այժմ, անցյալը չնոռանալով հանդերձ, զգում ենք մեկ տարվա խաղաղության շաճչը: Ապրում ենք ճի փուլում, երբ առանձնակի կարեւորվում է մեր ան-

կախության ու քաղաքական դիմագծի պահպանումը: Այսօր ամեն մի դարա-  
բաղու միտքն այդ ուղղությամբ է պատվում, բոլորի հոգսը դա է:

Հայի մտքաբեկերը այդ տեսակետից հեռու են ձգվում եւ հիշեցնում են Քեռլի-  
մի, Մուդրոսի, Տրապիզոնի, Բարուսի, Սեւրի, Ալեքսանդրապոլի, Մոսկվայի եւ  
Լուզանի պայմանագրերը:

Հայը հիշում է թշնամիներից զատ նաեւ «բարեկամներից» խարվելու բազ-  
մաթիվ դեպքերը, իր օտարահաճ-օտարահարճ, բոլորասեր լինելը, այլախոհու-  
թյանը ընտելանալու դառնությունը: Հիշում է, որ երբեմն ցուցաբերել է անհեռա-  
տես կոտորություն, որից շահել են մյուսները, իսկ ինքը՝ բանկ վճարել: Հիշում է, որ  
հարավային հարեւաններից խարված հայը պակաս շխարվեց արեւմտականնե-  
րի կողմից:

Պետք է իմանալ, որ այսօր էլ չի փոխվել աշխարհը, չի փոխվել եւ մեծ պե-  
տությունների քաղաքականությունը, որը, դժբախտաբար, մեր ազգային շար-  
ժումն սկսելիս հաշվի չառանք ու պատշաճ կերպով չնախապատրաստվեցինք:  
Ցուցահեռներ չանցկացնենք անցյալի եւ ներկայի միջեւ, միայն ասենք՝ առ այ-  
սօր Ղարաբաղի ղեկավարների քաղաքական գիծն ու կեցվածքը շեշտակի է,  
անխաբուսիկ ու չվարանող:

Նրանք չկրկնեցին 1919-1920թթ. Ազգային խորհրդի կայացրած որոշումը, ո-  
րով Ղարաբաղը ժամանակավորապես համարվում էր Ադրբեջանի մի մասը:  
Դրա փոխարեն հանրաքվեի ճանապարհով հռչակեցինք Լեռնային Ղարաբա-  
ղի անկախ հանրապետությունը: Ղարաբաղի հայերն ու նրանց ղեկավարները,  
դեռ ավելին, 1919-20 թվականներին Մակ-Մահոնի, Հասկելի, Շատելվորտի,  
Մուկլեհիչի, Հեկկեռի եւ նրանց հետագա նմանակների՝ Սաֆոնովի, Գրոմովի,  
Պոլյանիչկոյի, Կատուսեւի առաջ շխոմարիվեցին: Նախկինի պես միայն աղեր-  
սագրեր չուղարկեցին աշխարհի ծայրերն ու անգնե չպահեցին ժողովրդին, այլ  
փնեցին նրան ժամանակակից զենքերով ու ապահովեցին հաղթանակը: Եվ  
վերջապես, սեպ չխրեցին իրար միջեւ, այլ դարձան մի բռունցք ու մի մարմին:

Դա լավ է, դա խոսում է մեր ազգային կեցվածքի մասին: Իսկ ինչպիսի՞ն ենք  
տեսնում մեր ապագան, դեպի ո՞ր է տանում միջազգային կազմակերպություն-  
ների միջնորդությամբ բանակցությունների գործընթացը:

Մեր դիվանագետները միշտ պետք է հիշեն, որ Ղարաբաղի հայ հատվածը  
միայն ինքնուրույնության ձգտումով պետք է գոյատևել: Բանակցությունների  
սեղանի շուրջ նստելիս Ղարաբաղյան պատվիրակությունը միշտ կարողացել է  
մարդու իրավունքները հակադրել «ուսրաձքային ամբողջականության» ծամ-  
ծմված դրույթին: ՄԱԿ-ն իր հերթին անվտանգության խորհրդի բանաձեւերով  
ձգտում է «դարձի բերել» Ղարաբաղյաներին, բայց նրան չի հաջողվում:

Այն, որ ամերիկյան սենատը որոշում ունի Ադրբեջանին տնտեսական օգնու-  
թյուն ցույց չտալու վերաբերյալ, միայն հայկական դիվանագիտության միա-  
նուն է: Երբ Բիշկեկում խոսք էր գնում հայերի կողմից Ադրբեջանի հողերի  
«գրավալը» թե «զավթված» անվանելու շուրջ, դա եւս հաղթանակ է հայ պատվի-  
րակների կողմից: Իսկ երկար ժամանակ Ղարաբաղը կոմիտե կամ հակամարտող  
կողմ չճանաչելու ադրբեջանական պահանջը, որն այսօր դեռ բարբառում է,  
հոդս ցնդեց հայ քաղաքագետների սկզբունքային դիրքի պատճառով: Երբ խոսք

էր լինում խաղաղապահ ուժերի տեղադրման մասին, Ադրբեջանը համառո-  
րեն պահանջում էր այդ ուժերը տեղադրել Հայաստանի եւ Ադրբեջանի սահ-  
մաններում, բայց նրանց այդ վարկածն էլ անընդունելի դարձավ: Այժմ խոսք է  
մանենքում, բայց նրանց այդ վարկածն էլ անընդունելի դարձավ: Այժմ խոսք է  
գնում Ղարաբաղի եւ Ադրբեջանի սահմաններում խաղաղապահ ուժեր տեղա-  
դրելու մասին: Այս բոլորը հաջողակ անցյալ է դառնում: Այսօր մենք պիտի  
մտածենք ապագայի մասին: Ու երբեք չնոռանանք, որ թշնամին խարդախ է,  
ԱՄՆ-ին, Անգլիային, Ֆրանսիային նավթով սիրաշահելու փորձեր է անում, թե-  
կա եւ ձգում դեպի Ռուսաստան (Ադրբեջանում ռուսական ռազմական գործըն-  
տեղարարվելու համաձայնություն է ակնկալում):

Պետք է գիտակցել, որ դիվանագիտությունը անցյալի փորձից է ելնում նորի  
հաշվառումով, որ լավ շախմատ խաղացողի պես պետք է վարել արտաքին քա-  
ղաքականությունը եւ միշտ պոպոզ, որպեսզի մեզ օգնողների թիվն օրեօր ավե-  
լանա: Հակառակորդի հետ պետք է խոսել հաղթողի անունից, եւ ինչպես 19-րդ  
լանս: Հակառակորդի հետ պետք է խոսել հաղթողի անունից, եւ ինչպես 19-րդ  
դարի վերջին գերմանացի Կառլեյեր Բիսմարկն էր ասում, Բեռլինի վեհաժողովին  
ներկայացած հայ պատվիրակներին՝ սրի վրա կոթնած, այլ ոչ թե աղերսանքով:  
Ներկայացած հայ պատվիրակները մեր ուժի ծնունդն է, լեթադիական բնով  
Իմանանք, որ այսօրվա մեր իրավունքը մեր ուժի ծնունդն է, լեթադիական բնով  
չանցնենք, դափնիների վրա չճնջենք, բանակցենք թշնամու հետ՝ հիշելով ան-  
ցյալը:

Հիշենք Դյուգակի Մեյիք Արովի դիվանագիտությունը, որը ձգտում էր հավա-  
սարակչի վիճակում պահել Ղարաբաղի հարաբերություններն Արեւելի եւ  
Հյուսիսի հետ: Ցանկացած քաղաքական իրավիճակ մա միշտ զգաստ էր ընդու-  
նում: Նրա այն մտքերը, թե «ցամաքել է սերը աշխարհի տերերի միջից, ուժգնա-  
ցել է անգլոբությունը, որից եւ ազգերն են դառնահամ լինում», մեր օրերում մեծ  
խորհուրդ ունի:

Սակայն մեր դիվանագետներն ինչքան էլ խելացի լինեն, հաջողությունը  
չառ բանով կախված է մեր միասնությունից ու միաձայնությունից: Կրկին հա-  
մախմբվենք եւ բռունցք դառնանք:

Եթե Ղարաբաղի անկախությունն առայժմ չի ճանաչված, այստեղ էլ աշ-  
խարհի շատ նոր անկախ պետությունների պատմությունը մեր օգտին է խոսում:  
Այրենք ու թերեւս կտեսնենք այդ բաղձալի օրը:

(Տպագրված է «Լ.Ղ. Հանրապետություն» թերթի 1995թ. հունիսի 5-ի համա-  
րում):

## ՄՏԻ ՈՏՔԵՐԸ ԿԱՐԸ ԵՆ

Բաց նամակ «Ադրբեջանի ծայն» ռադիոկայանի հայկական  
հաղորդումների խմբագրությանը

Նախ ասեմ, որ մենք՝ հայերս, գոհ ենք, որ դուք մեր լեզվով խոսում ու հաղոր-  
դում եք, որ մեկ տասնյակից ավելի լեզուներով ձեր հաղորդումների շղթայի մի օ-

դակն էլ մեզ եք հաշվում եւ մեզ չեք մոռանում: Բայց գարձանում ենք, քանի որ խորհրդային իշխանության օրոք, այն «մեծ աշխարհում», Ադրբեջանում կես միլիոնից ավելի հայերի առկայության պարագայում, դուք հայերեն հաղորդումներին հատկացնում էիք 10 րոպե եւ դեռ հաղորդավար Յուրի Պողոսյանը միտքը չվերջացրած, կտրում էիք ու շարունակում ձեր «աման-աման, բալա-բալա» խաղը: Իսկ այժմ, որ մեզ հետ, ձեր երկրում հայեր չեն ապրում, շաբաթական չորս օր, 20-ական րոպեից հայերեն հաղորդումներ եք երբ արձակում: Հիշո՞ւմ եք, որ դուք այդ հաղորդումներն սկսեցիք դարաբաշխական ուսուցանակատում ձեր կրած պարառություններից հետո, քանզի-դրանից առաջ ձեր ռազմական քարոզչության եւ լրատվության պետ Լեյլա Յունուսովան լեիտանյան ահագու հաղորդումներ էր անում: Բայց հարցն այն է, թե ինչ եք հաղորդում եւ ինչ եք ասում ձեր այդ հաղորդումների ժամանակ:

Նախ՝ միշտ շուտասելուկի պես կրկնում եք նույնը, քանի որ հայի մասին վատն ասելու նյութը, թերեւս, քիչ է թե՛ երեւիկական, թե՛ տնտեսական եւ թե՛ քաղաքական տեսակետից: -

Սակայն ցավալի է, որ ձեր ասածների մեջ ճշմարտության դոզան շատ է պակաս, եւ ամոքալի է, որ իրերն ու երեւոյթները չափազանցներույ չեք հրաժարվում: Ձեր ազգին հատուկ օրինաչափությամբ դուք կեղծում եք, խորշում ճշմարտությունից, վարպետությամբ կոծկում ձեր վատը, կեղծում ու կեղծավորում:

Այսպես դուք անիծում եք Գյուլիստանը, Գյուլիստանի պայմանագիրը, դժգոհ եք, որ այդ պայմանագրով Ադրբեջանը բաժանվել է երկու մասի՝ հարավայինի եւ հյուսիսայինի, ինչպես դուք եք ասում՝ դուզե եւ գյուլե: Բայց չէ՞ որ դուք 1813թ. հոկտեմբերի 12-ին այդ պայմանագիրը մի ժամանակ, խորհրդային օրոք, երկինք բարձրացնելու չափ գովում էիք եւ միշտ ակնարկում ռուս ժողովրդի հետ ձեր ձուլվելու վաղեմությունը: Դա առանձնապես ցայտուն երեւաց 1963 թվականին, երբ Կոնուս էիք ռուս ժողովրդի հետ ձեր միավորվելու 150-ամյակը: Իսկ այժմ ասում եք: «Հայեր, այդ սոխերը (իմա՝ սոխերը նրանք ատում են ինչ հայերի ասելով) մեզ հակադրեցին իրար, ձեր եւ մեր տները բանդեցին» եւ այլն, եւ այլն: Դուք դժգոհ եք նաեւ 1828թ. փետրվարի 10-ի Թուրքմենչայի պայմանագրից, եւսմածայն որի է, իբր, հայը տերիտորիայի եւ պետության տեր դարձել, որ իբր թե Ղարաբաղի բնակչությունը հենց այդ ժամանակ է Իրանից տեղափոխվել եւ «հյուրընկալվել ադրբեջանցիների Ղարաբաղում»:

Բայց դուք երբեւէ մտածե՞լ եք, որ հենց ձեր պատմաբան Դ. Գուլիմի հեղինակությամբ հրատարակված «Ադրբեջանի պատմության» 7-րդ դասարանի դասագրքում են հիշատակված Արցախը եւ նրանում ապրող քրիստոնյա հայերը դեռեւս մեր թվարկությունից առաջ: Դե, իհարկե, հիմա լինե՞ր նա, այդպես չէր գրի: Դուք մեզ կշտամբում եք, թե մեր բառապաշարում կան շատ ադրբեջանական բառեր՝ «քյոմազ», «փեշակ» եւ հիշեցնում Ղազարոս Աղայանի «Անահիտ» պատմավեպում հիշատակվող «փեշակը ոսկի ա» բառերը: Իսկ ձե՞րը, ձեր մասին ի՞նչ կասեք, որ ձեր բառերի մի մասը կիսապարսկական է, կիսաթուրքական եւ կիսառուսական: Դուք ձեր բազմաթիվ հաղորդումներում շատ եք ակնարկում հայերի պետություն չունենալը եւ ամոթից զրկված ասում, թե՛ «Այժմյան Հայաստանի Հանրապետություն կոչված պետությունը ստեղծվել է նախկին ադրբեջա-

նական հողերի վրա, որ ճարպակալելով ու բրդակալելով 1905-07թթ., 1918-21թթ., 1948թ. եւ վերջապես 1988թ. հայերը սարքել են ադրբեջանցիների ցեղասպանությունը Հայաստանում, Ղարաբաղում, Բարվում, Նուխիում եւ այլուր»: Հետո էլ մի ուրիշ հաղորդման մեջ, որ եղել է այս տարվա (2000) փետրվարի 26-ին՝ Խոջալուի ազատագրման կապակցությամբ (ձեր ասելով՝ եղեռնի), վշտի բեռով արտասանում եք՝ «Ադրբեջանցիների ցեղասպանությունը պատմության չբացահայտված էջերից է»: Օրինակ, ինչի՞ է պետք ձեր այդ հիմքից գուրկ բարբաջանքը, երբ ձեր էքս նախագահ Մուրախրովն է բնութագրել Խոջալուի դեպքերը՝ անվանելով այն ձեր ժողճակատի ձեռքի գործը, ինչպես որ այն եղել է 1991թ. նոյեմբերի 20-ին, ձեր ուղղաթիռի վթարի ժամանակ:

Դուք Խոջալուի «կոտորած-ցեղասպանությունը» հայերի գործը համարելու համար վկայակոչում եք Միգել Ալիեւայի, Թոֆիկ Ալիմանեղովի, Մուշիկի, Ա. համար վկայակոչում եք Միգել Ալիեւայի, Թոֆիկ Ալիմանեղովի, Մուշիկի, Ա. թիֆ Հաջիեւի, Ջալիլ Մամեդովի վկայությունները եւ Չինգիլ Մուսաֆաեւի ակարահանումները, բայց դժվար չէ հասկանալ մեզ եւ ձեր բանասիրություններն այդ հողի վրա: Այստեղ էլ կրկին ձեր վաղեմի հորջորջն է իշխում, վայնասունն ու գոռում-գոչումները, «Գերեցին, գերեզման տարան եւ մատաղեցին, խոշտանգեցին, դանակով հանեցին աչքերը, տանկերի տակ տվեցին, այրեցին, ողջակի-գեցին»:

Խոջալուն առիթ դարձավ, որ հավասարության նշան դնեք սումգայիթի հետ եւ աշխարհին մերկայացնեք ձեր «բշտությունը», որ հայերը լռեն:

Դուք վանկարկում ու պահանջում եք, որ միջազգային դատ կազմակերպեն Խոջալուի առթիվ, բայց մոռանում եք, որ դուք արդեն վաղուց մի թեթեւ դատվել եք սումգայիթի համար: Պետք է հիշեք, որ ձեր ողջինքն Իսմայիլով՝ Իլիամը եւ Ահմեդով Ահմեդը խորհրդային դատարանի կողմից ստացել են ամենաբարձրագույն պատիժը՝ զնդակահարություն:

Բայց դուք սումգայիթով չբավականացար եւ 1990թ. հունվարին ժողճակատի եւ Ադրբեջանի կառավարող իշխանությունների միասնական բռունցքով Բարվում իրականացրեք մի նոր ցեղասպանություն, որը դարձավ Ադրբեջանում ցեղասպանությունը ավարտին մոտեցնելու ամենավճռական փուլը: Ցեղասպանության հետեւանքով իր, թվով այս 4-րդ մեծ բռնագաղթի ընթացքում Բարվից արտաքսվեցին 215 հազար հայեր:

Միտքս քիչ երկարելով, մեջբերեմ մի ցկարագրություն, որտեղ համոզիպում ենք այդ օրերի մի գարհուրելի պատկերի.

«Արյունարբու գազանի նման հիմակ կազմած հրոսակախմբերը յոթ օր անընդհատ անցնելով թաղից-թաղ, հրկիպում էին հայերի տները, զենքի բոլոր տեսակների գործադրությամբ սպանում էին, կրակի բոցերի մեջ խորովում երեխաներին ու կանանց, խոշտանգում առանց տարիքը հաշվի առնելու, գազանաբար բռնաբարում ու հավածվածների աչքի առջեւ բաժան-բաժան անում նրանց ունեցվածքն իրենց իսկ «բարեհուգի» հարեւանների ու խուժանների միջեւ:

Մերոնցից ում բախտ վիճակվեց հրաշքով հրի ճարակ չդառնալ, դանակահարված կամ զնդակով խոցված, շանթահար ու զլխապատառ, չոր գլուխը հազիվ փրկելու բնագրով, որը կիսամերկ, որը միայն տնային շապիկով ու շրջագվեստով, որը ուտարթիկ ճողոպրում էր այդ դժոխային կոտորածից: Ոչ որի այ-

լեւ չէր հետաքրքրում արդար քրտինքով վաստակած տուն ու տեղ, ապրուստ, կայք, հանդերձանք: Մթնոլորտը թունավորված էր, օդը՝ հեղձուցիչ ու ապականված: Գարշահոտության ու անբարոյականության միջավայրը դառնում է անտանցի:

Աղբբեջանցի հորից սերված զավակը հրաժարվում է մորից, գնդակով խոցում նրան՝ հայ լինելու համար:

Այդպես են նրան ներարկել կրոնի սարսավորն ու մտավորականը»: [82]

Բայց հայերը միակը չէին, որ ձեռն ազգայնամուլների գոհը դարձան: Հայերի ջարդից մեկ շաբաթ անց Բաքվում համանման ձեռնարկումներ կատարվեցին ռուսալեզու ընտանիքների նկատմամբ: Հայերի պես այդ օրերին Բաքվից արտաքսվեցին հազարավոր ռուս եւ հրեա ընտանիքներ:

Ի դեպ, այդքան դաժանաբար, այդքան ստորաբար Բաքվից քշված հայերը, որ, ինչպես ասացինք, 215 հազարի էին հասնում, ոչ մի դիմադրություն չցուցաբերեցին, ոչ մի «դավաճանական» քայլի չդիմեցին «իրենց հայրենի քաղաքի» դեմ, Աղբբեջանի կառավարողների գազանային քաղաքականության դեմ, ինչպես դա արեցին ՀՀ Արարատի տարածքում ապրած աղբբեջանցիները կարի ֆարրիկայում: Նրանք թունավորեցին գործվածքները եւ պատրաստի արտադրանքը այն դեպքում, երբ հայերը ոչ մի անմարդկային արարք չէին ձեռնարկել նրանց հանդեպ: Բժշկությանն անհայտ թունավոր նյութով թունավորեցին «Գարուն» կարի արտադրության 51 բանվորներին:

Բայց հայերն էլ կարող էին դա անել, չէ՞ որ նրանք աշխատում էին Աղբբեջանի համար մեծ վտանգ ներկայացնող աշխատատեղում (գազի, նավթի, էլեկտրակայանների եւ այլն): Հայը դա չէր անի, քանի որ արյան մեջ չկա տմարդի բացիլ, եւ ցավում է ընդհանուր սեփականության համար, իր երեկվա աղբբեջանցի հարեւանի, ընկերոջ ու բարեկամի համար: Դա նրա բնույթին անհարիր, խորք ու անսազական է:

Համարյա ձեր ամեն մի հաղորդման ժամանակ «կարմիր թելի պես» անց եք կացնում «ծովից-ծով Հայաստան» ստեղծելու՝ հայերի մտադրության թեման, բայց չեք ասում, որ նմանը, իրոք, եղել է, իսկ թե, ըստ ձեզ, հայերը այն հիմա են ստեղծելու նպատակ դրել՝ դա հերիջուրանք է, քանզի մենք Ղարաբաղի թեմայից ենք խոսում, Ղարաբաղի անկախության համար ենք պայքարում, պայքարում ենք այն բռնակցման դեմ, որ հայտնի է՝ «1921 թիվ, հուլիսի 5-ի որոշում»:

Մենք ասում ենք, թե խորհրդային Ռուսաստանը ինչու չի առաջնորդվել ազգային եւ էթնիկական սկզբունքով, երբ Անդրկովկասը երեք մասի էր բաժանում, այլ առաջնորդվեցին ռուսական ցարիզմի նախկին նահանգների տարածքային սահմաններով, չնայած «ձեր Նախիջեւանը» այդպես չարեցին, նրան որպես Երեւանի մարզի մեջ մտնող (նախկինում), Հայաստանին չտվեցին: Հասկանալ է պետք այսքանը, որ գուր տեղը փոթորիկ չբարձրացներ:

Դուք գովում եք 1921 թ. մարտի 16-ի ռուս-թուրքական պայմանագիրը, որում Նախիջեւանը Թուրքիայի ճնշմամբ ձեռք է նվիրվել: Իսկ մենք ասում ենք խորհրդային Ռուսաստանի այդ ստոր քաղաքականությունը ոչ միայն Նախիջեւանի համար, այլև նրա, որ հայկական պայպեմական հողերը, որ պատմության թերթում ստացել էին Արեւմտյան Հայաստան անունը, տրվել են Թուրքիային եւ

հրաժարվել ռուսական ժառանգությունից:

Մի քանի հաղորդումներում ակնարկում եք ԽՍՀՄ Միեմիստրների խորհրդի 1948թ. դեկտեմբերի 23-ի որոշումը՝ Հայաստանից աղբբեջանցիներին դեպորտացնելու եւ հազարավոր աղբբեջանցիների հուր եւ Արաքս գետերի արանքում տեղավորելու մասին, որն, իբր թե, հայերի նախաձեռնությունն է, նրանց «սեւ գործը», բայց ո՞վ կարող է ձեզ հավատալ, քանզի ձեր ապուլապա ցեղակիցներն էլ գիտեին Ստալինի եւ Բազիլովի այն ժամանակվա ջերմ հարաբերությունների մասին, գիտեին, որ հենց այդ քաղաքականությունը ձեր Միո Ջաֆար Բազիլովի խնդրանքով է եղել, որ աշխատուժ ձեռք բերի եւ աղբբեջանցիներին էլ տեղավորի «հայրենիք», իսկ զարգացող Հայաստանին գրկի աշխատուժից:

Այլ բան է, եթե, ասենք, թե այդ տեղահանված աղբբեջանցիները Աղբբեջանում չմնացին թեկուզ մեկ տարի եւ հետ գնացին Հայաստան՝ կարոտած լինելով իրենց ապրելատեղին ու դրկից հայրենին:

Քանզի տալով պատմական ոչ հեռավոր որոշ հնություններ, հատկապես 1918թ. հայկական կոտորածները Աղբբեջանում, դուք փոխանակ ամոթից շիկնելու, աչքից ու լեզվից հեռու պահելու 30 000 հայերի կոտորածի փաստը, այն վերագրում եք ձեր ազգին եւ ասում, թե՝ «սաղբիչ հայերը կոտորեցին հազարավոր աղբբեջանցիների», քանզիցին Բաքվի շենքերը: Բայց որ քանզիցին, ինչպե՞ս մնացին այն հարյուրավոր լավագույն շենքերը, որ զարդարում էին Բաքվի ճակատը:

Եիշտ չէ՞ր լինի, սակայն, որ ազգամիջյան այդ պատերազմը վերագրեիք ձեր մուսավաթներին, որոնք Բաքվում եղած մեծաքանակ բանակը հեռացրին Բաքվից, նույնը եւ անգլիացիներին, եւ նրանց տեղ հրավիրված թուրքական ենթիշերի միջոցով կազմակերպեցիք այդ կոտորածը հայերի հանդեպ:

Մի՞թե ձեր հաղորդումներում հսկասական չեք համարում այն, որ «հազարամյա հարեւաններ, մի հողի ու ջրի մարդիկ» եք անվանում հայերին ու աղբբեջանցիներին, բարոզում նրանց՝ հաշտ ու խաղաղ ապրել, բայց մյուս կողմից շամփրում՝ թե հայ ժողովուրդը որպես ժողովուրդ ընդհանրապես հնում չի եղել, թե նա ինչ-որ ազգերի խառնուրդ է, նրանք հայրենիք չեն ունեցել եւ այլն, եւ այլն:

Ինչպե՞ս հասկանալ ձեզ, խմբագրության պարոն աշխատողներ: Գիտե՞նք, որ դուք պատահական մարդիկ չեք այդտեղ, այլ գրագիտության անհրաժեշտ պաշար ունեցողներ, գուցե դեռ հումանիտար առարկաներից գիտական կոչումների տեր, որը, ի դեպ, երեսում է ձեր գրագետ կազմած հայերեն տեքստերից, բայց այդ դեպքում ինչու՞ դուք չեք հիշում, որ ձեր հայրենիքի անունը չափազանց մոր է՝ 20-ական թվականների սկզբից, երբ թուրք վորավար Նուրի փաշան է կնքել այդ ամունը ձեզ վրա, իսկ Ստալինն ու պատմաբան Պանկրատովան էլ հաստատել են եւ գործառության մեջ դրել, որ Իրանն էլ դեմ չէր դրան՝ իմանալով, որ վաղ թե ուշ՝ այդ տարածքը իրենը կլինի, քանի որ նա Հարավային Աղբբեջանի (իսկական Աղբբեջանի) անբաժանելի մասն է:

Ասում եք՝ հայերը փոխում են գյուղերի եւ քաղաքների անունները: Բա ինչ անեն, իրենց վրա կրե՞ն թուրքերի ու պարսիկների կողմից դաջված ու հորջորջված նոր անունները, որ տասնյակ ու հարյուրավոր տարիներ անոթով կրել են ի-



նից հրդեհվել է Ստեփանակերտը:

Դուք նույնիսկ քննադատում եք ոչ պետական նշանակության Ռուսաստանի մտավորականների «Ղարաբաղ» կոմիտեին, որ իբր նրա ղեկավար Անդրեյ Նույկինը նույնիսկ մախոթոք գիտեր Խոջարուին սպառվելիքը:

Ասում եք՝ Ադրբեջանը «գրադ» կայանքներ չի ունեցել, իբր այն նախապես հայերին է եղել, նույնը՝ «օդ-հող», «հող-հող» կայանքները: Բայց մի՞թե ծիծաղելի չէ, մի՞թե արգահատելի չէ նման պոռոտախոսությունը:

Ասում եք՝ Ադրբեջանը երես է թեքում ԱԳՀ կողմնակից անվտանգություն պայմանագրից, նույնը եւ Միդոլան, Ուզբեկստանը, Վրաստանը: Մենք դա վաղուց գիտենք, գիտենք նաեւ, որ ձեր Ալիեւը հիվանդության պատրվակով Թուրքիա է մեկնել եւ այնտեղ Դեմիրելի հետ օրեր տեսած Գլուխաբեկ պալատի բանակցությունները դրան էին նպատակադրված: Եվ չուշացավ հետեւանքը, արդեն ընտրում եք ռազմական բազաների աշխարհագրության ուղիվածները Ադրբեջանում: Դուք ուզում եք միանալ ՆԱՏՕ-ին՝ միացեք, բայց մենք էլ դեմ չենք ՆԱՏՕ-ին հայերի միանալուն:

Բարեկամի, դաշնակցի թիկունքից ձեր փախչելը նոր չէ, որ մենք գարմանանք: Դա ձեր վաղեմի գիծն է, որ նույնիսկ «Լենին Բարայի» թիկունքից էլ փախաք 1922թ. ապրիլին՝ Ճեմովայի միջազգային կոնֆերանսում, երբ ձեր «Ժողովոստրիի նախագահ Խանբուրադովը (որ մինչեւ Ն. Նարինանովը Ադրբեջանի ժողովոստրիի նախագահն էր) Վրաստանի ժողովոստրիի նախագահ Միդիվանիի հետ միասին, գիշերը գաղտնի բանակցությունների մեջ են մտել Անգլիայի ներկայացուցչի հետ՝ Ադրբեջանում եւ Վրաստանում անգլիական զորքեր տեղադրելու եւ առանց Ռուսաստանի նրանց հետ միակողմանի առետուր կատարելու պայմանով»: [83]

Այսօր էլ նույնն է, ձեր եւ Վրաստանի ղեկավարները մտել են Թուրքիայի թեւի տակ եւ 170 տարվա վաղեմություն ունեցող բարեկամությունը Ռուսաստանի հետ դեմ շարտել:

Ռուս ժողովրդի նկատմամբ ձեր երկերեսանիությունը այսօր էլ է երևում, երբ դուք գովաբանելով մեր մեծ գրող Խաչատուր Աբովյանին, նրան անվանում եք հայ եւ ադրբեջանական ժողովուրդների բարեկամության եգիշ, բայց մեկ էլ անմիջապես նույն հաղորդման մեջ նրա «Օրինվի են սհաբը, որ ռուսը ոտք դրեց» ասածը սարկազմի ենթարկում:

Հասնելով մինչեւ անգամ «Ազատություն» ռադիոկայանի հայկական խմբագրության հաղորդավար Արմեն Դուլյանին եւ գովելով նրա հումորն ու երգիծանքը՝ Հայաստանի իշխանավորներին լավ քննադատելու համար, դուք միաժամանակ խիստ ղժգոհում եք նրանից՝ թե իր հաղորդումներից մեկում ընդգծել է ռուս պատգամավոր Բաբուրիի այն խոսքը դումայում, թե ինչու Ռուսաստանը, Մուշն ու Վանը, Ղարսն ու Մարիդամիշը հանձնել է թուրքերին:

Դուք դրա մեջ նկատում եք ռուս-հայկական համատեղ պատերազմի հրահրում Թուրքիայի դեմ եւ անմիջապես ավելացնում. «Իսկ եթե սկսվի այդ պատերազմը, որտե՞ղ են թաքնվելու զորիներն ու արմենները: Ինչո՞ւ ձեր ազգի մասին, ձեր բազմաչարչար ժողովրդի մասին չեք մտածում»:

Բայց հարց է, այդ ե՞րբ են փախել մեր զորիները, մեր արմենները, ինչպես

ձեր մտավորականները (Ռ. Գուլիեւը, Մուսայիբովը, Ս. Հյուսեյնովը եւ ուրիշներ):

Եվ ծիծաղելիս այն է, որ ձեր Սառա Հյուսեյնիին իր հաղորդման մեջ 24 անգամ Արմեն է կանչում եւ ամեն անգամ էլ գոչում «Ախր, Արմեն, այդպես չէ, այսպես է, ախր, Արմեն, ախր, Արմեն»:

Վերջում ազդարարում եք. «Ախր ի՞նչ է տվել Բոթրաչյոյի կողմից հրահրված պատերազմը, թե ինչ տա Թուրքիայի հետ ձեր պատերազմը: Ինչո՞ւ հաշտություն ու խաղաղություն չեք տարածում, չէ՞ որ Ադրբեջանի Ծամխորի եւ Հայաստանի Կարմիրի շրջանների համաձայն Գետաշեն գյուղերի բնակիչներն ուզում են գնալ իրենց տեղերը, հավաքել իրենց սպորն ու խնձորը, նուսն ու ընկույզը»:

Լավ խոյուրդ է, ոչինչ չունենք հակառակելու: Իսկ ի՞նչ էր մտածում Ադրբեջանի նորընծա կառավարությունը, երբ հարձակուճը հարձակման հետեւից էր նախաձեռնում, իր յոթ միլիոնի գլխով հազարավոր վարձկաններ բերում Ալիզանտամից, Ռուսաստանից, Ուկրաինայից, տանկեր, ինքնաթիռներ, գրահատիխնիկա եւ ավտոմատներ ու բնդանոթներ գնում Թուրքիայից, Ռուսաստանից եւ նույնիսկ՝ հեռավոր Չինաստանից ու Ղարաբաղի դեմ պատերազմում:

Բայց երբ Ղարաբաղի պաշտպանական բանակը զգալի հաջողություններով լեցրել է իր շուրջը գտնվող կրակակետերը եւ հասել Արաքս գետին՝ արեւելքում եւ Բարդային, ձեր էլչիբեյի ասած, գրավել «պատմական Տիգրանակերտը» (որ դուք Շահբուլաղ եք կոչում), բացել հույսի կանաչ ճանապարհը դեպի մայր Հայաստան, այն ժամանակ գոռում-գոչում էիք. «ՄԱԿ-ը մեռած է, ԵԱՀԿ-ն անգործունյա մի բան է, ռուսն օգնեց հայերին» եւ այլն:

Չխոսելով ձեր նախահարձակ լինելու մասին, հատուկ շեշտադրությամբ նշում եք հայերի հարձակումների, նրանց կողմից «ձեր հողերի» 20 տոկոսը «զավթելու» մասին, բայց չեք իմանում ազատագրական պատերազմի օրենքները, որին, հարկավ, դիմել են հայերը: Ասենք, որ հայերի հարձակվելու պատճառների մասին ավելի լավ է լսենք Յան Պետրանեկին՝ չեխ բարաբազետին, որն ասել է. «Նյու-Յորքի ՄԱԿ-ի գրասենյակից տարածվում էին հանդիմանություններ Երեւանի եւ Ստեփանակերտի հասցեին, որ շատ է նման ռուսացի կողմից կավարար աշակերտին տրվող խրատներին: Դրա հետ չի կարելի համաձայնվել երեք պատճառներով: Առաջին՝ որ Ադրբեջանը Ղարաբաղը ոչնչացնելու նպատակով չորս տարի բացարձակ կռիվ է սարքել եւ ամեն անգամ էլ Ղարաբաղը հայտարարել իր բաղկացուցիչ մասը: Երկրորդ՝ հայերի կողմից կատարվող գործողություններն ունեն բոլորովին այլ մոտիվներ. հարձակումները կատարվում են ոչ թե նրա համար, որ կոտորեն խաղաղ բնակչությանը: Երրորդ՝ Հայաստանի, Ղարաբաղի եւ Ադրբեջանի միջեւ կայացող ռազմավարական նպատակի հիմքում պետք է դրվի ոչ թե ԽՍՀՄ ազգային հարցերի գծով Ստալին-Էքսպերտի ստեղծածը, այլ էթնիկական եւ տնտեսական ընդհանուր պայմանները: Բացի դրանից, հարձակման համար հայերն ունեն նաեւ ավելի լուրջ պատճառ: Գործը նրանում է, որ Ադրբեջանը շատ արագ վերադառնում է մեծիշխանությանը, դեմոկրատներ ամյտեղ համարյա չկան: Բարձրում նորից բազավորում են ամպագոռոտ բուլչեիկները, իշխանության գլուխ է նախիջեւանցի մի ֆեոդալ, որը Բրեժնեւի շատ տարիների կոլեգան է քաղբյուրոյի գծով...»:

Արժե մի փոքր էլ, ուղղակի ձեզ պատասխանելու կարգով, նշել այն շատ «ջուր ծեծված» հողերի մասին, «ձեր Ձանգեզուրի» մասին, որ հայերը «գրավել» են»: Վրաստանի եւ Ադրբեջանի հողերը «գրաված» եւ այժմ էլ «գրավել» ցանկացող» հայերի ուսնձգությունների մասին, այն մասին, թե ինչպես է, որ «Ադրբեջանի 116 հազ. քառ. կմ տարածքը դարձել է 86,6 հազ. քառ. կմ»: Եկեք այստեղ պայմանավորվենք եւ ասենք միշտը, ասենք, որ Ադրբեջանը գրավել է Վրաստանի հողերը եւ կազմել Կախիի շրջանը, իսկ Հայաստանից՝ Նախիջեւանը եւ Ղարաբաղը, թե ինչպես Հայաստանը 1980-ական թվականներին մի կերպ Ադրբեջանից հետ է վերցրել Ղազախ-Շամշադինի հատվածում 17 հազար հեկտարի հասնող հայկական հողերը: Իսկ այն, որ «ձեր Ձանգեզուրը» անցել է Հայաստանին, դրանում մի կասկածեք Խորհրդային Ռուսաստանի՝ ձեզ դավաճանելու մեջ, բանգի դա մեր հերոս գեներալ Նոդենի բազկի գործն էր, որ կարողացավ Լեոնահայաստանը պահել Հայաստանի գրկում՝ ջախջախելով ձեր մուսավորական, ապա՝ խորհրդային բանակի զորամասերին: Հետո էլ, հողեր գավթելը եւ ուրիշին հավածելը չէ՞ որ շատ է տիպական բուրբի բնույթին: Ահավասիկ, ձեր օղու բուրբերի մախահայրերը, որոնք քրիստոնյաներից գրաված հողերն անգամ անվանում էին «ուսկե խնձոր»: «Մենք մորից կհամդիպենք ուսկե խնձորի երկրում» արտահայտությունը չէր իջնում բուրբ սուլթանների լայրժում շուրթերից, եւ շարունակում էին նվաճել քրիստոնյաների հողերը:

Այստեղ ասենք՝ բավ է, հարեաններ, հիվանդի գլխարկը ողջի գլխին մի դրեք: Ասենք, որ երբ դուք մույնիսկ մեր հաշտ ժամանակներում գողանում էիք հայի ինչքը, գիշերը «տանում» հայի անասունները, մույնիսկ ընդգծում էիք հայի հանգիստ լինելը, ձեր ասելով՝ «գյուն քաթուղ, էրմանի յաթուղ», այսինքն՝ «գոր մթնեց, հայը քնեց», իսկ բուրբը, հասկանալի է՝ պետք է որ արթուն գողություն անի: Ասենք, որ երբ ձեր երեխան գողություն է անում եւ բռնվում, դուք խնդրում եք, որ մերվի այդ գողությունը՝ ասելով, «Ուշաղմ սիմբասի քյոռ էլամա», այսինքն՝ «երեխայի առաջին գողությունը մի կուրացնի, մի փչացնի»: Հարց է, իսկ հայը կանի՞ դա:

Այժմ մեր Շարժման գաղափարական առաջնորդներին ձեր կողմից վարկաբեկելու մասին: Բայց ավելի լավ չէ՞ր, որ դուք ձերոնց տմարդի վարքը մեկնաբանեք ու ասեք՝ մի՞թե չբավականացար մեր Շարժման ղեկավարներից Համլետ Գրիգորյանին, Ռուբեն Աղաջանյանին, Արկադի Դուկասյանին, Ռազմիկ Պետրոսյանին, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի պատգամավոր Բորիս Դաղամյանին, Շահումյանի շրջկոմի առաջին քարտուղար Վլադիմիր Աղաջանյանին եւ նրա ընկերներին առեւտրային, ԽՍՀՄ նույն առյուծի պատգամավոր եւ Արցախի՝ Ազգային խորհրդի նախագահ Վաչագան Գրիգորյանին հեռակա կարգով կուսակցությունից հանելուց, անում համաձ շատ մտավորականների, կոլտնտեսությունների եւ գյուղական ու քաղաքային խորհուրդների ղեկավար աշխատողների բանտեր մետելուց, որ այս անգամ էլ «եկաք հասար» Չորի Բալայանին ու սկսեցիք հարվածի քիթախ դարձնել մեր պաշտելիին: Հա, դեռ հեռվից գալով ասենք, որ երբ Չորի Բալայանը Կամչատկայից նոր էր եկել եւ ճանապարհին մտնելով Մոսկվա ու «Դուրձբա նարդով» ամսագրում տպագրել տվել «Տատի տան վիճակի մասին» նյութը, ձեր Ալինը ծառս է եղել: Այսօր էլ արդեն, որ Ալին

ի շնչով եք շնչում, մեկ համար ոչինչ վարձանալի չէ: Եվ ինչեր ասես, որ չեք բափում նրա գլխին:

Ո՞վ է Չորի Բալայանը՝ հարցնում եք դուք եւ անմիջապես շարադրում ձեր հորինվածքը: «Նա՛ Չորին, ավանտյուրիստ է, մոյի ազգայնամուլ, քաղքենի է եւ Էգոիստ, համբավի ծարավ, գոռոզ ու սնապարձ, պաշտոնի գերի,- ասում եք դուք եւ կրկին շարունակում,- Ղարաբաղը նրա համար քիզնես է ՊԱԿ-ի հին գործակալ, մերձ կապի մեջ դաշնակների եւ ափյուրքի հայության հետ»: Չեմ ավարտում եւ շարունակում եմ ձեր ասածը նրա մասին. «Նրա ծնողները անհարազատ էին եւ վտանգավոր ԽՍՀՄ համար. հայրը արքայազամ էր, պապը՝ հակասոցիալիստ: Բժիշկ էր Սիբիրում, բայց տեսավ, որ իրենից բժիշկ դուրս չի գա, թողեց մասնագիտությունը եւ դարձավ «Иркутская газета»-ի սեփական թղթակիցը, ապրել է արջերի շրջապատում: Այժմ նա ունեւոր հայ է, եկրափակում եք դուք»:

Դուք ասում եք՝ Չ. Բալայանը 1995թ. գրել է «Դժոխք եւ դրախտ» գիրքը, որից, իբր, ազգայնամուլության հոտ է փչում:

Ասում եք, գիտեք այդ գրքի բովանդակությունը, որ «գիրքը եկել է Բարոս» եւ այն վերլուծել է հայ Ռոբերտ Առաքելովը, որը, ձեր ասելով, այս Շարժման վերաբերյալ մի քանի գիրք է գրել: Թող գրի այդ մտքապաշտը, մենք վաղուց գիտենք այդ քստմենլիին, մենք նրան գիտենք դեռ Կազմկոմիտեի օրվանից ուղիղ եթեր դուրս եկած եւ յուրայիններին քարոզ կարդացող Առաքելովին: Գիտենք, որ Կազմկոմիտեի փախչելուն պես Ղարաբաղից իր պոչը քաշեց նաեւ նա: Հա, ասեմ, որ Էդպիսի մեկն էլ Շուշիի դպրոցներից մեկի պատմության ուսուցիչ Էսենատ Մնացականյանն էր, որը հայերի եւ ազերիների միջեւ մանկլավիկի դեր էր ստանձնել:

Դուք մեղադրում եք Չորի Բալայանին, որ «հայ-հարայ, վայ-հարայ» է կանչել աշխարհով մեկ, թե հայերին շրջապատել են, կոտորում են: Չեր ասելով Չորին պետք է դատվի միջազգային դատարանի կողմից, բայց հակառակի պես նա է դիմել ՄԱԿ-ին՝ Ադրբեջանին դատելու համար եւ այլն, եւ այլն: Չիլ ծայնով ծորում եք, որ Չ. Բալայանի հրամանով գրավվեց Ադրբեջանի տարածքի 20 տոկոսը եւ այժմ էլ ստեղծելով «Նախիջեւանի հայրենակցական միությունը», հայերին մղում է գրավել Նախիջեւանը:

Դե հիմա հատելով համբերությունս, ոչ միայն իմ, ոչ միայն իմ ժողովրդի բերանով, այլ այն ժամանակվա մեր գլխի տեր Գորբաչովի ասածներով եմ ուզում ձեզ ասել, թե ով է Չորի Բալայանը: «Տաղանդավոր դեմք, 33 գրքի հեղինակ, շատ հայտնի հայերի մոտ, նրա ուղեղը շատ արագ է աշխատում»: [84]

Եթե դուք Բալայանի ապուպայերի հակախորհրդային լինելն եք ակնկալում՝ ցույց տալով նրա անհարազատ լինելը, հոր արքայազամությունը սովետների կողմից, ապա ինչո՞ւ չգիտեք, որ այսօր նրանց նման միլիոնավորների գաղափարներն արդարացված են, իսկ իրենք՝ վերակենդանացած, ինչպես մեր Չարենցը, ձեր Մյուշիֆոզ եւ այլոք:

Դաշնակների եւ մյուս հայկական ազգային կուսակցությունների հետ Բալայանի կապեր ունենալը, Լիբանան կամ մյուս հայկական համայնքներ նրա այցելելը ՊԱԿ-ի անվան տակ, նրա տակտիկական քայլերն էին՝ ի օգուտ իր ազ-



գի, որ այսօր արդարացված է:

«Աղբբեջանի ձայն» ռադիոկայանի աշխատող պարոմներ եւ տիկնայք, դուր  
մեր հաղթանակների գրավականը համարում եք Բալայանի քարոզչության հե-  
տեանք, բայց չեք դատում. որ եթե միայն քարոզներով, լուրերով ու կոչերով  
հաղթանակ ձեռք բերվեր, ապա ձեր Անար Ռ-գետի, Սամեղ օդու, Բախտիար  
Վահարգաղեի, Բունիարով Ջիայի, Է. Ախունդովայի, պետական ու քաղաքա-  
կան գործիչներ է. Կախարովայի, Վեգիտովի, Էլչիբեյի, Մուրադիովի, Ալիեի եւ  
մյուսների հորդորանքները եւ կոչերը ձեզ վաղուց կբերեին մեծ հաղթանակներ:

Այ, ուրիշ բան է, որ ասելիք, թե պատմաբան Ջիա Բունիարովը եւ նրա գրչա-  
կից մյուս պատմաշինարարներն ինչպես են սկսել կեղծել պատմական փաս-  
տերը եւ գրգռել երկու ժողովուրդներին:

Եվ, իսկապես, ի՞նչ ասել այնպիսի «Նոր Աղբբեջան» կուսակցության հա-  
մանախազահին, այդ հայատյացին, որ թուրքական լեռնային աղ-գոյունը եւ  
կարա-գոյունը ցեղերի պատմությանը հնություն տալու համար գրեց

«Աղբբեջանը 7-9-րդ դարերում» գիրքը, որտեղ գիտակցաբար կեղծելով եռվ-  
կասի, Ալբանիայի ժողովուրդների պատմությունը, գրչի մի հարվածով անտեսել  
է Արեւելյան Անդրկովկասում հնուց ապրող պարսիկներին, հայերին, ավարներ-  
ին, լեզգիներին, բաբերին, տաբասարներին, բալխներին եւ մյուս ժողովուրդ-  
ներին ու ցեղերին: Միայն հիմնական բնակիչներ է համարում ազերի թուրքերին:  
Իսկ չէ՞ որ պատմությանը հայտնի է, որ այդ թուրքական ցեղերը ներ են խցկվել  
այնտեղ՝ 15-17-րդ դարերում միայն:

Եվ եթե չլինեք Բունիարովի այդ հակապետական տեսությունը, չէին լինի  
նաեւ արյունահեղությունները Սումգայիթում, Գյանջալում, Բաքվում, Լեռնա-  
յին Ղարաբաղում:

Բայց վարձանալին այն է, որ այդ կեղծարար պատմաբանի տեսությունը ձե-  
լավորվում է նաեւ Աղբբեջանի բարձրակարգ ղեկավարների մակարդակով: Եվ  
ցավալի է, որ այդ հակահայկական հիստորիան ապրում է նաեւ այժմ, թեկուզե  
ձեր նմանների հաղորդումների միջոցով: Դրա փայլուն վկայությունն է 1997թ.  
«Աղբբեջան» հրատարակչության կողմից Բաքվում հրատարակված «Թուրքերը  
եւ հայերը...» գիրքը, որի հրատարակչության պատասխանատուն է. Ալիեի պե-  
տական խորհրդատու, հայտնի պանրուրք Հիդայաթ Օրուջեւն է: Մի մարդ, որը  
1968 թվականին, 24 տարեկան հասակում, որպես սկսնակ բանաստեղծ ավար-  
տել է Բաքվի պետական համալսարանը (հեռակա), եղել է Հայաստանի աղբբե-  
ջանական բատրոնի տնօրենը, 1970 թ. հրատարակել իր առաջին գիրքը, իսկ  
1984 թ. տեղափոխվել Բաքու: Այս գիրքը շատ է նման Գերմանիայում իր ժամա-  
նակին հրատարակված հակահրեական քարոզչությանը նպաստած գրակա-  
նությանը:

«Այդ հակահայկական կեղտոտ գրքի էջերից փչում է այն միտքը, թե հայերի  
հին պատմությունը ոչ ոքի հայտնի չէ, թե հայերը խառնուրդ են՝ անհայտ ցեղե-  
րի արմատներով, թե ոչ մի դեպքում նրանք որոշակի հայրենիք չեն ունեցել, թե  
միշտ կոմպլիկտներ են ստեղծել ուրիշ ժողովուրդների հետ, լրտեսություն են ա-  
րել այն երկրների դեմ, որտեղ ապրել են»: [85]

Բայց եթե, իրոք, թուրք ազերիներն ուզում են լավ իմանալ հայերի մասին,

թող կարդան օտար հեղինակների ստեղծագործությունները, որոնցից հատկան-  
շական է գերմանական պատմաբան Մագդալի «Армяне» գիրքը եւ ոչ թե թուր-  
քամետների խզրգանքները: Այո, այդ գերմանուհի Մագդա Նեյմանը, որի գիրքը  
հրատարակվել է 1991թ., Սամկո Պետերբուրգում, ձեզ կասի, թե ովքեր են հա-  
յերը: Կարդացեք, չեք փոշմանի:

Միայն կեղտոտ կեղծիք կարելի է անվանել այլեւ-օրուջեյան այն լուտանը-  
ները, թե հենց հայերն իրենք են սպանել իրենց ցեղակիցներին (խոսքը Սումգա-  
յիթի մասին է): Այստեղից անմիջապես պարզ է, որ Օրուջեի բանդան լավ է կա-  
տարում Ալիեի հրահանգները, իսկ նույն Ալիեը փետրվարի 26-ը հիամանով  
սգո օր հայտարարեց, չնայած դիտել է. «Խուղօղլու 1992թ. փետրվարի 28-ի  
Ոկարները: Կամ ձեր մի ուրիշ «ուսայլ»... մար Ռ-գետի մասին, որին մենք ձեռք  
չենք տվել, չնայած երբ Վարաբաղի հարցը վերենկերում լուծելիս գտնում էին, որ  
կարելի է Ղարաբաղը մի հինգ տարով դնել Մոսկվայի իշխանության տակ, նա  
պողոթկաց. «Հինգ ամիս, հինգ օր, հինգ ժամ, հինգ րոպե էլ չենք համոզվածի, որ  
ԼՂԻՄ-ը կենտրոնին ենթարկվի»: Իսկ Սամեղ օդին, որ առաջներում իր հոր  
նման ամեն տարի արձակուրդը Հայաստանի բնության գրկում էր անցկացնում,  
իր ժողովրդին սատարում էր. «Մի՛ վախեցեք, չուտով, շատ չուտով հայ ազգը  
աշխարհի երեսից ջնջվելու է»: Այսքանը միջանկյալ կարգով եւ նորից Ջորիի  
մասին: Ասենք, որ Ջորի Բալայանը մեր գաղափարախոսն է, մեր ազգի արժա-  
նի գավակը, մեր Զարման մունեակներից, որի համար էլ մի նսխանձեք, որ  
Վազգեն Առաջին կաթողիկոսը ասել է, թե՝ «Հայերի համար կատարածի համար  
ուզում են համբուրել Բալայանի ճակատը» (մեջբերումը ձերն է): Ասում եք՝  
«Իժոխք եւ դրախտ» գրքի համար Մոսկվայում լավ շնորհանդես են արել, ասում  
եք, որ այդ գրքի տիտղոսաթերթի վրա գրված է Վազգեն Առաջինի վերոհիշյալ  
ասույթը եւ Մ. Ս. Գորբաչովի բառերը՝ «մոլի ազգայնամոր»: Ինչ կա որ, մենք  
Գորբաչովի ասածից չենք վարմանում ու չենք խոչընդոտ եւ ընդունում ենք այն-  
պես, ինչպես «ծայրահեղական» պիտակը, որ կպցրել է հայերին նույն օրերին:  
Բայց չէ՞ որ նույն Գորբաչովը, խոսելով հայերի գանգատների մասին, նույն  
այն օրերի՝ ՄԱԿ քաղբյուրոյի 1989թ. փետրվարի 29-ի նիստում, մեջբերել է  
մարշալ Յազովի տեղեկանքը Նախիջեւանի կառավարողների կողմից հայերի  
հետություններն ու գերեզմանները ավերելու եւ պղծելու մասին:

«Ամբողջ Նախիջեւանը, - նշված է մեջբերված տեղեկանքում, - մտցվել է  
սահմանային գոտու մեջ, արգելվել է ազատ մուտքն այնտեղ, բայց չէ՞ որ այն-  
տեղ բաղված են ցեղասպանության զոհերը, այնտեղ են գտնվում նրանց (հայե-  
րի) բոլոր գերեզմանները: Այնտեղ հայկական մշակույթի 90 հուշարձաններ են  
եղել, որոնցից մեկն է մնացել... Այնտեղ տանող ճանապարհը 70 տարի չի նորոգ-  
վում»: [86]

Դուք լավ լսեցեք Ջորի Բալայանին, որ ասում է, թե իր մեղքը կայանում է  
նրանում, որ հայրենիքը շատ է սիրում, որ նա ոչ հարուստ եւ ոչ էլ պաշտոնաճուղ  
է, դա բոլորն են տեսնում եւ պոմ: Բայց ոչ, մեղա, նա հարուստ է միայն հոգով  
ու գաղափարով: Հենց այդ գաղափարն է, որ ձեզ հանգիստ չի տալիս: Գիտենք,  
թե ինչու եք նրա դեմ դուք թե՛ պայքար մղում, թանգի նա ամենասուր կերպով է  
բացահայտում պանթյուրիզմի եւ պանիսլամիզմի արմատները, մերկացնում

Այս աշխարհաքաղաքական ստոր նպատակները տարածաշրջանում:

Կրկին ու կրկին դուք ասում եք՝ Ջորջի Բալայանը արդեն հեռացել է քաղաքական ասպարեզից, հեղինակությունը չի վայելում. նրան ոչ ոք չի լսում, բայց մեկ էլ հանկարծ ձեզ ուղղելով ավելացնում. «Նա նորից է բարձրացել քաղաքական ասպարեզ»: Բայց ի՞նչպե՞ս? Ուր ասպարեզ է ստեղծել եւ մնում է ասպարեզում ու միշտ էլ կմնա, եւ որ դեռ նա իր «Դժոխք ու դրախտ»-ով ձեզ դժոխք կուղարկի: Դուք ձեր հաղորդումներով հասել եք մինչեւ իսկ մեռածներին. ասե՛նք, Գալինա Ստարավոյտովային՝ ասելով, թե «Աստված սպանեց նրան, որովհետեւ նա երկու հաշտ ու համերաշխ ազգերին՝ հայերին ու աղբյուրեանցիներին հրահրեց իրար դեմ, որ նա առաջինն է ողջունել ԼՂ մարզային խորհրդի 1988թ. փետրվարի 20-ի նստաշրջանի որոշումը, նա հպարտանում էր հայերի հաղթանակներով, նա սեւ գործ է սարքել Արխազիայում, Բոսնիայում եւ ամենուր»:

Դուք այնուհետեւ եզրակացնում եք. «Համի դեռ կամ մարդկային հասարակության այդ մուխտտերը, սպա երկրի վրա չի լինի ոչ խաղաղություն, ոչ էլ ազատություն»:

Եղծից ու պատվից գուրկ այդ հաղորդավարները նույնիսկ հասնում են անգրչիրմյան աշխարհն ու կասկածում Գալինայի վրա՝ «այնտեղ հայերին ու աղբյուրեանցիներին իրար դեմ լարելու» համար:

Դուք նույնիսկ հայկական առածով եք վերջացնում Գալինայի մահվան պատճառը՝ ասելով. «Ինչ որ խրթես, այն էլ կբրդես»: Այդ առումով ձեզ կարելի էր հարցնել՝ իսկ Ալլա՞նը սպանեց Բոսնիայում, որը նույն ձեռքով է կյանքից հեռացել, թե՞ Ալլահի հրամանով վաղաժամ մեռավ Էլմիրա Կաֆարովան: Ամոք է մեռածին ձեռք չեն տա, մեռածի հետեւից չեն վատախոսի, հողն անգամ նրան լուր կտասի: Իսկ այն, որ մեր ապրուստի մակարդակից եք խոսում, ցուցանում էք մեր վատ ապրելը, մեր գործարանների անգործությունը, գործազրկությունը, բերում թվեր ու փաստեր մեր վիճակագրությունից, մշում մեր ցածր ծնունդը, հարե՛նք լրջը քաճների քանակը, դրսի օգնության մի կերպ ապրելը, դրսից ստացած գոլարների հաշվին աշխարհում 87-րդ տեղում մեր, իսկ ձեր՝ 109-րդ տեղում գտնվելը, բայց չեք ասում ձեր մասին, որ նույնիսկ ծնողներն են բողոքում, թե զինվոր տղաների համար պետք է հագուստի եւ ոտնամանների փող տան, որ հացի փող անգամ չունեն մարդիկ: Խոսք եք բացում մեր իշխանավորների կաշտակերության մասին, իսկ չեք ասում, թե ձեզ մոտ, ձեր Հասան Հասանովը, Գուլիելը եւ շատ-շատերը ինչպե՞ս են միլիոններ շորթել, հյուրանոցներ կառուցել եւ հանվել աշխատանքից, իսկ վերջերս էլ աշխատանքից հանվեց ձեր ֆինանսների նախարարը, եւ կասկածի տակ է պաշտպանության նախարարը, որ բանում են ֆինանսական միջոցները:

Քիչ խոսքեր հայկական հողերը ձերը համարելու մասին: Չեզ դժվար է հասկանալը. մերք ասում եք՝ հայկական հողերը Թուրքիայում են, երբ Աղբյուրեանի շահից եք խոսում, բայց երբ Թուրքիան է խոսում իր շահերից, մեկ է վերագրում Էրեւելյան Հայաստանի հողերը: Դուք այդ քանելեռությունը, վեճե՛տիկի քրտնցքի պես օրական մի քանի անգամ ձեր գույմը փոխելով՝ դուք եք գնում: Դուք ձեզ խոհեմ ու համբերատար եք անվանում, խոսք չունենք, այդպես է ձեր տերերի առաջ գլուխ խոնարհելու, նրանց ասածը հալած յուղի տեղ ընդունելու

տեսակետից եւ ոչ թե ուրիշների նկատմամբ, ձեր հարեւան ազգերի նկատմամբ, որոնց մի օրինավոր պահանջը, թե ուզում են բաժանվել ձեզանից, ավիճնե՛տով դիմավորեցիք, մտաք նրանց բնակավայրերն ու թալանեցիք եւ առաջ բերիք իշխանե՛ծ պատերազմը:

Շարունակե՛մ ասել, որ դուք ժողովուրդների բարեկամությունը խարխուլու. նրանց վաղեմի, խաղաղ կյանքը խաթարելու լավ վարպետ եք: Դուք ոչ միայն ձգտում եք սեպ խրել հայ եւ ռուս ժողովուրդների միջեւ, այլեւ փորձում եք նույնը անել նաեւ դրկից վրաց ժողովրդի նկատմամբ: Բողոքովին նորերս՝ 1999թ. Էռլենբերի 8-ին, դուք ձեր հերթական մի տեսա հաղորդում նվիրելով հայ գրողների ու գիտնականների վարքին, ասում եք, թե իբր հայ գրող Գեորգ Էմինը Ծորվա գետը համարում է հայկական, որ իբր հայերը ջնջում են վրացական փաների վրացերեն գրությունները եւ դարձնում հայերեն, իբր թե հայ գիտնական Գալանովը հատուկ գիրք է գրել վրացիների դեմ, որ հայերը վրացիներին եսասեր են անվանում, որ ակադեմիկոս Սառը պաշտպանելով հայերին, ասել է, թե վրացական լեզվի մեջ հայերեն բառեր շատ կան:

Դուք նույնիսկ ստից մեջբերումներ եք անում 19-րդ դարի վրացական հայտնի դեմոկրատ գրող Էլյա Ծավճավաճեից, որն, իբր, ասել է, թե «հայերը ուզում են վրացիներին վերացնել աշխարհի երեսից», որ նա խորհուրդ է տվել, որ «հայերը հավաքվեն այնտեղ, որտեղից հեռացել են» եւ այլ բարբառաբաններ:

Դե այժմ, խնդրում եմ, ուժ հավաքեք, այն հաղորդավարներ եւ լսեք, թե ինչ կասե՛մ ձեզ՝ ձեր այդ շինծու բառերի դիմաց: Չգիտե՛մ, դուք գիտե՞ք, որ կրկ 1987 թվականին Վրաստանում տոնվում էր Էլյա Ծավճավաճեի ծննդյան 150-ամյակը (ծնվել է 1887թ. եւ մահացել 1907թ.), վրացական ուղղափառ եկեղեցու սինոդը որոշել էր նրան դասել սրբերի կարգը: Այստեղ ներկա էր նաեւ հայկական ներկայացուցչությունը, որը ողջունեց այդ որոշումը: Խնդրում եմ նախ հասկանա՞նք, որ հայ ժողովրդին խարազանող եւ նրան դատապետող մարդու տարկիցին չէր ներկայանա հայոց գրական պատվիրակությունը, հետո էլ դուք կրե՛ի անտեղյակ եք, թե Ի. Ծավճավաճեն ինչ հիացնումըով է խոսել իր ժամանակին հայերի մասին: Նա իր ազգին խորհուրդ է տվել. «Լինել արգասավոր, ինչպես հարեւան հայերը»: Կամ ասել է. «Մենք լավ գիտենք, որ վաղեմի Վրաստանի թուլացումը սկսվեց այն դժբախտ օրվանից, երբ Հայաստանը՝ մեր երբեմնի պատվարը հարավից, անկում ապրեց... Հայաստանի անկախությունը գրավական է Վրաստանի նույնպիսի գոյության»: Այնպես որ, խնդրում ենք սեւ քի՛ժ ջրաշեք այդ երկու վաղեմի բարեկամ ժողովուրդների բարեկամության վրա. քանզի նրանք ունեցել են նույն ճակատագրերը՝ իրենց համանման ուրախություններով ու ողբերգություններով:

Չէ, հարեւան ազգերի ուսղիյի հաղորդավարներ, երեսում է՝ ձեր պարկր ստից է պատրաստված, եւ սուտը ձեր աշխատանքի ուղեցույցն է: Այդ տեսակետից ուզում եմ, որ միասին վերիշենք հայոց մեծ բանաստեղծ Հովհաննես Թումանյանի «Սուտասանը» հեքիաթը, որտեղ մեկն ասում է, որ իր հայրը մի դավաճակ ունեւր, որ էստեղից մեկնում էր, երկնքում աստղերը խառնում: «Ի՞նչ պասլն է մի չլրուկ ուներ,- ասում է թագավորը,- մի ծերը բերանին էր դնում. Լյուս ձերք մե՛կնում, արեգակից վառում»:

Հա, Սառա խանում, հիշում եմ, որ 1999-ի հուլիսի 5-ի ձեր հաղորդման ժամանակ մի տխուր պատմություն ներկայացրիք Ժիառմիր քաղաքի բնակիչ, աղբեջանցի Արագ-Ռաշիդ օղլու տղա Թոֆիկի՝ ակամից կուրանալու, Օդեսայում նրա բուժվելու և բուժման ընթացքում Օդեսայի մի խումբ աշակերտների արտապավ վերաբերմունքի մասին: Եկարագրում էք, որ այդ դպրոցականներն ակնաբուժարանի բաժանմունքի վայրից, հայր բժշկուհի Ելենա Արկադևնա Պետրոսյանցի միջոցով դիմել են ակադեմիկոս-բժիշկ Ֆիլստովին, որ երեխաներն ուզում են իրենց աչքերը պատվաստեն Թոֆիկին, որ նա բուժվի և տեսողությունը վերականգնի: Եվ ասում եք, որ, իրոք, Վալերի անունով տղայի «նվիրված» աչքով Թոֆիկն արդեն տեսնում էր: Ասում եք, որ այդ մասին նույնիսկ երեսնամյակ մի աղբեջանուհի աղջիկ երգ է գրել՝ «Թոֆր, աղավմի» վերտառությամբ, որը տպագրվել է 1982թ. «Սովետական Հայաստան» ամսագրում: Չե՞ր ասելով երգը գրել է աղբեջանցի աղջիկ Խարիթան և տվել իր ուսուցիչ Էլհամին: Յոթ րոպե պատմելով այդ պատմությունը, դուք հիշեցնում եք Ժողովուրդների բարեկամության մասին, ռուս երեխաների հոգատարության, հայ բժշկուհու և այլնի մասին: Բայց դուք մոռանում եք, որ ձերոնք, գուցե հարկադրված եւ մերոնք, և գործընկերների կաթսայում եփած նախաճաշից արմատահան է արել այդ երբեմնի բարեկամությունը: Ուրեմն, այդ երգերը վաղուց են երգված, հիմա ճանապարհներ են շրջափակում (ինչպես դուք եք շրջափակել Հայաստանն ու Ղարաբաղը), բռնադատում իրար (ինչպես 1989-ին, 90-ին, 91-ին, 92-ին դուք եք վերաբերվել Աղբեջանում ապրած հայերի նկատմամբ): Հիմա ասում եմ. «Սա իմն է, սա էլ է իմը, նա էլ է իմը, իմ դրկից ազգն է, իմ հողն է», բայց ամարգում ու ռմբակոծում այդ ազգին ու նրա տարածքը: Չէ, մոռացե՛ք այդ երգերը, դրանք այժմ ձուլված են բնդանոթի որոտին ու վնդակների սուլույին:

Վերջերս, բոլորովին վերջերս, այսինքն՝ 1999 թ. հունիսի 24-ին, Ղարաբաղում կատարված իշխանավորության մասին խոսելիս դուք հաղորդում էիք Ղարաբաղցիներին. «Ներ Ղարաբաղցի հարազատներ, դուք վարչապետներ փոխելով չեք կարող բավարարել և բարելավել ձեր վիճակը, չեք կարող նախկին դրությամբ հասնել, երբ Աղբեջանի կազմի մեջ էիք» և այլն, և այլն:

Բայց դուք մոռանում եք արաբական բռնակալության դեմ Ատրպատականի ժողովրդի գավառ Բաբեկի ասածն այն մասին, թե՛ «ավելի լավ է ապրել մեկ օր ազատ ու անկախ, քան 40 տարի՝ ստրուկ»: Իսկ գիտե՞ք, որ համաճան մի գնահատական է տվել ստրուկի վիճակի մասին և վրաց բանաստեղծ Վաժա՝

*Ելի՛ր անվախ և մի դողա,  
Եղբայր, ինչո՞ւ ես վարանում,  
Լավ է մեռնել, քան թե սողալ,  
Ստրուկ ապրել այս աշխարհում:*

Գիտե՞ք, որ մենք էլ հենց այդ ստրուկի վիճակում էինք, երբ ձեզ հետ էինք: Փաստե՞ր եք ուզում, խնդրեմ. ԼՂԻՄ աղբեջանական բնակչությունը 1970-79թթ. աճել է 36,3 տոկոսով, իսկ հայ բնակչությունը՝ 1,7 տոկոսով. կամ Ղարա-

բաղում ծնված 10 հայ բնակիչից 9-ը հեռացել են երկրի այլ շրջաններ, այդ այն դեպքում, երբ 1926 թ. հայերն իրենց թվաքանակով 10 անգամ գերազանցում էին աղբեջանցի բնակիչներին:

Տնտեսական տեսակետից փաստերն առավել ասիմոկեուցիչ են: Հայ բնակչության շահերը ոտնահարող խտրականության քաղաքականությունն իր արտահայտությունն է գտել սոցիալական, տնտեսական, քաղաքական կյանքի բոլոր ասպարեզներում ու մակարդակներում: Այդ բոլոր ասպարեզում էլ ԼՂԻՄ-ը ծնկաչոքի էր եկած թե՛ գյուղերում և թե՛ քաղաքներում: Մեծ հարկերը, որ դրվում էին Բաքվից, բզկտում էին բնակչությանը, անմխիթար ճանապարհները հոգեհան էին անում մարզի մարդկանց, իսկ տեղում ալրաղաց, համակցված կերերի արտադրություններ չունենալը՝ ժողովրդին դնում թշվառի ու խնդրողի վիճակում: Մարզում դանդաղ էր կատարվում շինարարությունը, քիչ գումարներ էին հատկացվում կապիտալ վերանորոգումներին, հարյուրավոր անգործ մեխանիկատորներ կային: Մարզում, բարձիրող վիճակում էին ոռոգման և մելիորացման աշխատանքները: Նախիջեւանի համեմատությամբ մարզը 3000 տոննա հաց ավելի էր տալիս պետությանը: Չնայած 5 տարում նախատեսված էր մսի արտադրությունը հանրապետությունում ավելացնել 2,7 տոկոսով, իսկ մարզում՝ 12-13 տոկոսով: Թույլ էր բնակչիմարարությունը, և զգացվում էր բնակարանի սուր պրոբլեմ: «Վիճակն ավելի սարսափելի էր կրթության, մշակույթի և առողջապահության ոլորտներում: Հենց այստեղ է, որ անավել ուժեղ են ոտնահարվել բնակչության շահերը: Այսպես օրինակ, 1983-87թթ. չորս տարիներին մարզի 7749 շրջանավարտներից բուհեր և ուսումնարաններ են ընդունվել միայն 2014-ը:

Ծննդի նվազումը որոշակի ներգործություն է ունեցել լուսավորության վրա: 1970թ. համեմատությամբ 1988թ. դպրոցականների թիվը նվազել է 13 հազարով: Դպրոցներից երեխաների արտահոսքի պատճառը նաև նորմալ պայմանների բացակայությունն է:

Վերջին 50 տարիներին մարզի հայկական շրջաններում պետական բյուջեի հաշվին չի կառուցվել ոչ մի դպրոցական շենք, ակումբ, կուլտուրայի տուն, սպորտային օբյեկտ: Միայն Ստեփանակերտում 1988թ. 3000 աշակերտական տեղերի հույժ կարիք էր զգացվում, քաղաքում դպրոցականների տեղերի քանակը 5810, իսկ աշակերտները 9118 էր: Ինչ դպրոցներ էլ որ կառուցվել են, կառուցվել են այս կամ այն մախարարության տարեվերջի մնացորդային փողերի հաշվին (գյուղատնտեսության, թեթև արդյունաբերության և այլն): Սակայն մարզի համարյա բոլոր աղբեջանական գյուղերում կառուցվել են տիպային դպրոցական շենքեր:

«Չափազանց մտահույզ է մարզի առողջապահության, մասնավորապես մանկաբուժության ոլորտը: Այսպես, Ասկերանը, որ մարզի խոշոր շրջկենտրոններից մեկն է, չունի շրջանային հիվանդանոց: Հիվանդանոցային մահճակալների թիվը մարզում 18 տոկոսով ավելացնելու պայմաններում անգամ բնակչության 10 000 շնչի հաշվով բոլոր մասնագիտությունների գծով՝ թե՛ բժիշկների և թե՛ հիվանդանոցային մահճակալների թիվը ավելի քիչ է, քան Աղբեջանի Հանրապետությունում (Ղարաբաղում՝ 28,7, իսկ Աղբեջանական ԽՍՀ-ում՝ 38,4



սպանողը: Դուք չեք մոռանում ձեր հեռավոր արյան կանչը Թուրքիայի հետ, որ այս օրերին բողոքը բողոքի հետեւից եք հասցնում աշխարհին՝ հայերի պահանջատիրության եւ Հայ Դատի առնչությամբ՝ ի պաշտպանություն Թուրքիայի: Դուք վերջերս նույնիսկ Թուրքիայի հետ միանալու փորձեր եք անում՝ ոտնակոխ ամելով ձեր այնքան փայփայած անկախությունը եւ որի համար ապրել եք 1990թ. հունվարյան նախճիրը: Բայց դուք գիտե՞ք, որ եվրոպական հագուստ հագնել ցանկացող այժմյա Թուրքիայում որոշ մտավորականներ արդեն հեղաշրջվել են դեպի արդարությունը: Նրանք ցանկանում են, որ Թուրքիայի նոր կառավարողները ոչ միայն ընդունեն հայերի ցեղասպանությունը, այլեւ հայերին հատուցեն հասցված վնասները եւ դրանով մոռանան անցյալն ու համերաշխության կամուրջ գցեն թուրք եւ հայ ժողովուրդների միջեւ: Այդպիսի թուրք մտավորականները 2000թ. հունիսի կեսերին մասնակցեցին Փարիզում կայացած այն գիտաժողովին, որ քննարկում էր հայոց ցեղասպանության հարցը: Նրանցից մեկը՝ Ռաֆիֆ Չարաթոլին, պահանջեց թուրքական կառավարությունից՝ ճանաչել հայոց եղեռնի փաստը: Դե, քավականամանք, նամակս ու խոսքս շատ երկարեց, խնդրում եմ ներող լինեք: Չէ, չէ, այս ի՞նչ եմ ասում, դեռ դուք պետք է ներեք, քանի որ շարժառիթը ձերն է, դուք եք առաջ բերել այս պատասխանները: Ասեմ նաեւ, որ ձեր պատճառով իմ՝ ի բնեւ եւ ի պաշտոնե մանկավարժիս խոսելու ժամանակ էլ կոշտ ստացվեց:

Դե, ինչ ասեմ, դուք մեղադրում եք հայերին՝ Ասկերանում 19 եւ 21 տարեկան երկու աղբրեջանցիների սպանելու մեջ, բայց չեք ասում, թե ձեր խաժամով ամբողջ օրը կեսօրին ի՞նչ էր որոնում Ասկերանում, եւ ինչ է, ծաղկեփնջերով էին դիմավորելու նրանց: Խոսում եք խղճի ու քարոյական կերպարի մասին եւ այդ հողի վրա քարոզ եք կարդում հայերի գլխին, բայց չեք հիշում կամ ավելի շուտ մոռացության եք տալիս տարածաշրջան եկած ԽՍՀՄՆԳՆ քանի՜-քանի՜ գինավորների ու սպանների սպանությունը ձեր կողմից: Դուք նույնիսկ դատական բժիշկ Ռոբերտ Գրիգորյանին եւ նրա օգնականին եք սպանել Սիրքաշիրում, որ եկել էին Ստեփանակերտից: կասկածելի սպանության փաստը հաստատելու կամ մերժելու հարցով:

Իսկ այն, ինչ ձերոնք կատարել են Մարտունու շրջանի Խնուշնակ գյուղում, երբ գյուղի ծայրամասի մի տան բնակիչներին գիշերը կոտորել են, իսկ երկու փոքրիկների մերկ ու բոքիկ քշել անհայտ ուղղությամբ, միայն սաղիստական վարք կարելի է անվանել: Գիտեմ, ձեր բարբառաբանները դեռ շարունակվելու են ձեր հետագա բազում հաղորդումների ժամանակ, բայց խորհուրդ կտայի, որ ընդօրինակեք ձեր լեզվով Երեւանից եւ Ստեփանակերտից երբեք հեռարձակվող հաղորդումներին, նրանց հաղորդավարների պես գուռապ ու պարկեշտ եղեք, մի քիչ շրջափառեք ու մի քիչ էլ խոհեմ՝ ձեր մեկնաբանություններում: Բա, չէ՞ որ նրանց հաղորդումները ներքին ու միջազգային կյանքին վերաբերող փաստերի շարադրանք են, միայն, այն տարբերությամբ, որ աղբրեջանական լեզվով են խոսում ու փաստում:

Կրկին խորհուրդս է՝ այնպես կազմեցեք ձեր հաղորդումների տեքստերը, որ հայն ստիպված չլինի ասել՝ ամպերը որոտալու տեղ, թփերն են որոտում:

Հետո էլ, կեղծիքն էլ չափ ունի, այդքան կեղծելով պատմության փաստերը,

ո՞ր եք գնում: Այդ տեսակետից խորհուրդ կտայի հիշել իսպանական գրող Սերվանտեսի ասածը. «Պատմությունը կեղծողներին պետք է դատել այնպես, ինչպես դատում են դրան հատողներին»:

Իսկ ինչ վերաբերում է նրան, որ մեր ու ձեր միջեւ այլևս պատերազմ չլինի, կցանկանայի ձեզ հիշեցնել դարաբաղցի վաղամեռիկ բանաստեղծ Վազգեն Օվյանի ներքոհիշյալ տողերը.

*Սակայն այնպես դուք ապրեցեք այս աշխարհում,  
Որ այլևս ձեր դաշտերի ագռավները մեր լեռներում չկոնչան,  
Ձեր սանձակոծ նժույգները մեր դաշտերում չխրխնջան,  
Մեր լեռների ջինջ գետերը չպղտորվեն ձեր հանդերում,  
Ձեր աշխարհի սեւ հողները չգալարվեն մեր արտերում,  
Ձեր կովատենջ գինվորները մեր լեռներում չհառաչեն,  
Մեր լեռների կայծակները ձեր աշխարհում չշառաչեն:*

## ՎԵՐՋԱԲԱՆ

Ընթերցող բարեկամ, նախապես ձեր համբերությունը հայցելով, ցանկանում եմ, որ այս գրքի վերջաբան դարձվի մեր գրած պատմության լրացումը՝ մի քանի մկատառումներով հանդերձ: Առաջինն այն մասին, թե ինչու մեր համազգային շարժումը մի երկար ժամանակով, ասենք, 1921-87թթ., նահանջ ապրեց կամ, ինչպես ասում են՝ սառեցվեց:

Նախ, ասենք, որ Ծարժումը լրիվ չի սառեցվել, չէ՞ որ դեռեւս 1928թ. ԼՂ մարզկոմի այն ժամանակվա քարտուղար Արտավազդ Սահակյանը մարզային կուսակցական մի հերթական կոնֆերանսում իր դժգոհությունն է հայտնել Աղբրեջանի կառավարության վարած ազգային քաղաքականության վերաբերյալ: Եվ ինչ, կարծում եք նա մնա՞ց իր տեղում: Օ՛, քալ լիցի, Սահակյանը մի քանի օրից այլևս չկար: Բայց, այնուամենայնիվ, հարցի սառեցումը մկատելի էր, որի պատճառները լուրջ էին եւ կայանում էին հետեւյալում.

Որ ԽՍՀՄ-ում, այդ թվում եւ Ղարաբաղում, այն տարիներին այնքան արագ էին կատարվում դժգույն փոփոխությունները, որ դարաբաղցի հայր դրամից դժվար էր ուշքի գալիս, ռազմական կոմունիզմ, քաղաքացիական պատերազմ, ՆԷՊ, կոլեկտիվացում, ինդուստրացում, ՊԱԿ-ի «անվերայ» գործունեություն, «անհարազատներից երկրի մաքրում» կուակաթափություն, Հայրենական պատերազմ եւ բնակչության մի զգալի կորուստ, տնտեսության հետպատերազմյան վերականգնում, նորից ՊԱԿ-ի անզուսպ գործունեություն 1949 թվականին, պետական խաղաղ հեղաշրջումներ հետստալինյան ժամանակաշրջանում՝ խրուշչովյան, բրեժնեւյան, անդրոպովյան, չեռնոմկոյան եւ վերջապես ամենավատթարագույնը՝ գորբաչովյանը, որոնցից ամեն մեկը մի-մի աստակ էր ժողովրդին:

Այս ամենը դարաբաղցու ուշադրությունը շեղում էր ազգային հարցից, չնայած փոքր-իսկ «ընդմիջումները» լավ օգտագործվեցին 1945թ. 2-րդ աշխարհա-



խանի, Խորայեղի, Ռուստամի եւ անցյալի մեր մյուս դավաճանների գնահատականին կարծանանա: Թող արժանանա, ով արժանի է դրան՝ հավերժ անարգանքի սյունին գամվելով:

Բայց այժմ, այս գիրքը ավարտելու պահին, երբ արդեն վերջաբանի վրա էի աշխատում, Ղարաբաղում կատարված նոր՝ 4-րդ իշխանության օրերին, մեր ոչ հեռու անցյալին վերաբերող շատ տխուր փաստեր էր բացահայտվել, որոնք կապված են զինվորական եւ քաղաքացիական գործիչների սպանությունների, դրամաշորթության, անառակ որոշ փաստերի, բռնագրոսիկ վարվելակերպի, սեփական ընչաքաղցությունը բավարարելու համար հարստություն դիզելու, պաշտոնեական դիրքի շարաշահումների, ահաբեկչության դեպքերի, որ ընդհուպ հասան ԼՂՀ նախագահի նկատմամբ մահափորձ կատարելուն եւ շատ ու շատ այլ անմարդկային արարքների հետ, որ ավելի դարաքաղցու ատելությունն է շարժում:

Այժմ բան երբեք, անամոթների անամոթության կծիկը սկսել է ավելի արագ կծկվել: Թող կծկվի որքան կարող է եւ որքան պետք է նրանց համար, բայց միեւնույն է՝ դատաստանը միշտ սպասվում է:

Բայց այդպես էլ դեռ 80-ական թվականների վերջերին՝ 1989-90թթ. չինացանք, թե ինչու Լեռնային Ղարաբաղում կոլտնտեսությունների ապախոչորացում տեղի ունեցավ. չէ՞ որ մասսայական այդ ապախոչորացումը շատ բացասաբար ազդեց մեր ժողովրդի միասնությանը: Դա, մեր պարզունակ գնահատմամբ, միամիտ ու անմիտ քայլ էր, որ ծանր հարված հասցրեց մեր ընդհանուր գործին՝ Ղարաբաղի անկախության համար մղվող պայքարին: Դա այն ժամանակներում թշնամու համար եւ առանձնապես Մոսկվայի դրածո Հատուկ կառավարման կոմիտեի համար հող նախապատրաստեց՝ «հաստատելու» մեր «անբարիշտությունը» եւ, ընդհանրապես, «անջատվողի կերպարի» հաստատումը:

Այդ ապախոչորացումը փոքր գյուղերի ժողովրդին կրկին ու կրկին անգամ գրկեց մեծ գյուղի հետ չգիտես որեքորդ անգամ ստեղծված հարստությունից՝ համատեղ կառուցած մեծ արտադրանքից, մեծ ջրամբարներից, տիպային քաղաքի մեծ շենքերից, արտեզյաններից, թթայգիներից, չնայած սեփականաշնորհման մերկա վիճակում դրանք էլ քիչ նշանակություն ունեցան, բայց որպես հաստատուն կապիտալ ունեցած՝ իհարկե՛ն:

Ի դեպ, ամենավտանգավորը այդ ապախոչորացման մեջ ժողովուրդների խորթացումն էր, իրար հակադրվելը, սահմանային աղբյուրների, ճանապարհների, անտառների, հողահանդակների օգտագործման պարագաներում:

Մարտունու շրջանի Հաղորտի գյուղի ուսուցիչ, գրող Նորայր Ավետիսյանի «Երկու ճակատով» պատմվածքի վկայությամբ բանը հասել էր նրան, որ երբ այդ գյուղի հասարակական ժողովում քննարկվում էր հարեւան աղբյուրաբանական Ղարաղաղլու գյուղից եկող վտանգի դեմն առնելու հարցը, ժողովականներից մեկը՝ Գրիշա անունով, իր ելույթում հարեւան Մուշկապատ գյուղը, որից նոր էին բաժանվել, անվանեց համար 1-ին թշնամի, իսկ Ղարաղաղլուն՝ համար 2-րդ:

«Այսուհետեւ մենք պետք է կռվենք երկու ճակատով. առում է նա. մի ճակատով թուրք ազերիների դեմ, մյուսով՝ մուշկապատցիների, Մուշկապատը

վտանգավոր է»: [92]

Ծանր ու թեթեւ վիրավորներին բուժելը, անդամալույծ դարձած ազատամարտիկներին հոգատարությամբ շրջապատելը, գոհվածների ընտանիքների հոգացողությունը, ինչ աղբյուրից էլ որ ելնելու լինի (միջազգային թե ներքին), բեռնացված հարցեր են մեր փոքր երկրի համար: Մարդ սպանիչ ազդեցության տակ է գգում իրեն, երբ տեսնում է պրոթեզավորված ոտքեր ու ձեռքեր, սայլակներին գամվածների, կուրացած աչքերով, խեղված մարմնով նախկին զինվորների, բուժման ենթակա, բայց նյութական պակասից դրդված բուժվել չկարողացողների կամ էլ վիրավորների, որոնք ինչ-ինչ պատճառներով բոլորակապ են չեն:

Ակամայից մտածում ես, այս ինչպես թե, այս ինչպես է, որ ... ու հանկարծ հիշում առաջին աշխարհամարտի տարիներին կայացած մի գրույց, երբ աղքատ մի մարդ, որ ամբողջ ընտանիքով ապրել է պատերազմի սարսափը, ասում է, թե «սարսափելի բան է այս պատերազմը», իսկ նրան հակառակվող կապիտալիստը հոխորտում է՝ «... սարսափելի շահավետ բան է պատերազմը»:

Կարծում եմ՝ մեկնաբանությունն այստեղ ավելորդ է, իսկ առկա հարցերը՝ հասկանալի:

Ցավի եւ մորմոքի մի պատմություն է նաեւ պատերազմի բովոյ անցած հերոս տղաների ու աղջիկների այսօրվա կյանքը:

Մի՞թե պատկերացնելու բան է, որ այսօր, համեմատաբար այս խաղաղ պայմաններում, երիտասարդ տղան կամ աղջիկը, որ սրտատրոփ սպասել էր պատերազմի ավարտին, որ հնարավոր համարվի ամուսնական կապի մեջ մտնել, դեմ է առել տնտեսական մի անհաղորդ պատի, մի ընչազուրկ վիճակի, երբ ի չիք են դարձել նրա երազները:

Այդպես՝ մեկը, տաքը, հարյուրը, հազարը, որոնք այդ հողի վրա հուսախար են դարձել, ապարդյուն է դարձել նրանց որոնումները, իսկ արտագնա աշխատանքի մեկնածների արդյունքներն ավելի սահմոկեցուցիչ են, քանզի նրանց վերջը լինում է կամ խաբված ու դատարկ ձեռքերով տուն վերադառնալը, կամ էլ դազադի բաժին դառնալը:

- Հայրենիք, Աշխատանք եւ կրկին Աշխատանք, ահա հարստության եւ ամուսնության աղբյուրը, վշտերի ավարտի դելտան, որին հասնելը դեռ չի հաջողվում:

Սա ազգովի եւ մեծանց գործ է, թե ուզում ենք ազգի «վերարտադրությունը» պահել իր տեղը եւ փրկված տեսնել նրան՝ հնարավոր ամեն մի վտանգից:

Առայժմ մեր գիտակցության մեջ չի գետնեղվում ոչ հաղթանակի վիթխարիությունը եւ ոչ էլ գոհերի անհամարությունը: Հոգիներս սովոր չեն ոչ ուրախանալու եւ ոչ էլ մորմոքվելու: Առաջինը չափազանց շլացնում է, երկրորդը՝ ամեն մի քայլափոխի մահվան տեսքով ու հոտով վիատեցնում:

Երբ մենք հաղթող ենք, եւ վաղվա օրվա կասկածով կանգնել ենք սահմանազրկին, գալիս է ողջերի՝ ննջեցյալներին հրաժեշտ տալու պահը:

Ողջերն ասում են.

- Արդյոք լսո՞ւմ եք դուք, եղբայրներ:

Չարմանահրաշ երկիրը մեզ շնորհված է որպես նվեր. այն գարդարված է բլուրներով, լեռներով ու հովիտներով, կտրտված է գետերի ջրերով ու գորգուր-

ված է հողմի շիբերով, եւ դուք այդ ամենը ոռոգեցիք ձեր տաք արյունով ու առհասկա պատկեցիք նրա զով ծոցում:

Մեր մեղքը չէ, այլ մեր դժբախտությունն է, որ մեր երկրամասին նախանձեց օտար ցեղը, անօթեւան ցեղը: Արդոք մեր մեղքով է, որ մենք կրեցինք անօթեմի լուծը, վաչկատուների կեղեքումը: Բայց դուք կոտորեցիք բշմամու լուծը, եւ դա չի՞ մոռանա Արցախի հողը:

Մնաց բարո՞վ, եղբայրներ:

Չեր հիշատակը չի խամբի:

Եվ դուք, արդոք, լսո՞ւմ եք այնտեղ, ամենուրեք, ողջ աշխարհում... մենք կլինենք: Ուզում են քե չեն ուզում՝ մենք կապրենք, կկառուցենք քարակերտ հրաշքներ, կղենք նորանոր խաչքարեր, կծննդաբերենք երեխաներ ու հացահատիկ կցանենք բարերար ակոսներում, գինի կբամենք ու ձեր հիշատակի կենացը կխմենք: Մենք կլինենք, քանի դեռ երկինքը շուռ չի եկել, որպես ընթերցված փաթեթաձեւ ձեռագիր: Իսկ մինչ այդ մեր աղբյուրները չեն ցամաքի, մեր նորաստեղծ գանգերը չեն լռի: Մենք դեռ աշխարհին կասենք սիրո խոսքը, եւ դա կլինի մեր ոչ վերջին խոսքը:

Մենք կզորանանք՝ ի հեճուկս մեր ոսոխների, մենք դեռ կիրավիրենք ողջ աշխարհից բարի հյուրեր, եւ ոչ ոք հայկական խնջույքից բաղլած չի մնա:

## ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հրանտ Արրահամյան, Հայկ խաչատրյան, «Արցախ, գրպանի օրացույց, 1996թ.», Երևան, 1995թ., էջ 66-67:
- «Այն մասին, քե ինչու Ամանորը մեկ օրով ուշ մտավ Արցախ» վերտառությամբ տեղեկաբրում հեղինակները գրում են, որ ամեն նոր տարվա առաջին օրը Արցախի եկեղեցիների դռանցներին համահունչ պետք է աշխատեին նաեւ նրա 600 ջրաղացները: Բայց մի անգամ, նոր տարվա նախօրեին, բշմամին եկավ ու չորեք արցախական գետերի ակունքների մոտ, նոր տարվա նախօրեին, բշմամին եկավ ու չորեք արցախական գետերի ակունքների մոտ, քարոզանկ արեց գետերի հունը, եւ շատ ջրաղացներ գաղարեցին գործելուց: Հրաման եղավ չինչեցնել Ամանորի գանգերը՝ մինչեւ բշմամին չվճռվի հայրենի հողից, մինչեւ չկուլավեն հայոց ջրերը:
- ... Եվ նոր տարվա առաջին օրը արցախցիք գնացին, հաղթեցին ու քչեցին բշմամուն: Գետերը սկսեցին իրենց հունով: Եվ լավեցին նաեւ արցախական թողո ջրաղացների շախախտների շխշխկոցները: Սեա այդ ժամանակ էր, որ եկեղեցիների գանգերը հնչեցին հաջորդ օրը, եւ Ամանորը մի օրով ուշ մտավ Արցախ:
2. Բաֆֆի (Մեիք -Հակոբ Հակոբյան), 10-րդ հատոր, Հայպետհրատ, 1959թ., էջ 192):
3. Բաֆֆի, նույն տեղը, էջ 282:
4. Մերո Խանգաղյան, Շուշի, Երևան, «Նաիրի», 1991թ., էջ 46:
5. Մերո Խանգաղյան, նույն տեղը, էջ 47:
6. Մերո Խանգաղյան, նույն տեղը, էջ 115:
7. Մերո Խանգաղյան, նույն տեղը, էջ 319:
8. Բաֆֆի, 10-րդ հատոր, Հայպետհրատ, 1959թ., էջ 294:
9. Բաֆֆի, նույն տեղը, էջ 222:
10. Բաֆֆի, նույն տեղը, էջ 214:
11. Բաֆֆի, նույն տեղը, էջ 215:
12. Васильев Пётр "Доброжелатели Карабаха". изд. Москва. 1993 г., стр. 47.
13. Վահան Հարությունյան, «Արցախի հիմնախնդրի ակունքները», էջ 66:
14. Վ. Հարությունյան, նույն տեղը, էջ 23:
15. Վ. Հարությունյան, նույն տեղը, էջ 70:
16. Հայաստանի արխիվների բանբեր, հ.1. 1989թ.:
17. Հայաստանի արխիվների բանբեր, նույն տեղը:
18. «Խորհրդային Ղարաբաղ» բերթ, 1991թ., 25 ապրիլի:
19. Բակուր Կարապետյան, «Եվ նրա շուրջ ... կղզիացող երկիր», գիրք առաջին, էջեր 16, 17, 18, 19, 52, 62, 63, 64, 66:
20. Անահիտ Ավագյան, «Ստեփանակերտ» բերթ, 24 ապրիլի, 2001թ.:
21. «Խորհրդային Ղարաբաղ» բերթ, թիվ 187, 19 օգոստոսի, 1989թ.:
22. Նույն տեղը:



23. Կոմիտաս Դանիելյան «Արցախը չսանձած ծի», 2001թ. հրատ., Երևան, «Ամարաս», էջ 40-46:
24. «Խորհրդային Ղարաբաղ» բերք, թիվ 277, 19 օգոստոսի:
25. Նույն տեղը: 26. Սերգեյ Մելքոնյան, «ԼՂՀ աշխարհագրություն», դասագիրք, 7-8-րդ դաս., «Լույս» հրատ., 1998թ., էջ 28-29:
27. Ս. Մելքոնյան, Նույն տեղը, էջ 29:
28. Վ. Բ. Հարությունյան, «Արցախ. հիմնահարցի ակունքները», Ստեփանակերտ, «Սոնա» հրատարակչություն, 1998թ., էջ 107:
29. Հեղինակի անձնական արխիվ:
30. Հրանտ Աբրահամյան, «Երբ հայրենիքը վտանգի մեջ է», Երևան, 1997թ., էջ 52:
31. Հեղինակի անձնական արխիվ:
32. Էոնեստ Եսայան, «Քույլ նահատակաց», Երևան, «Ամարաս», 1996թ. հրատ., էջ 100:
33. Ռոմեյա Դարսայան, «Ազդակամը 13», Ստեփանակերտ, 1995թ.:
34. Գալյա Առստամյան, «Իմ սերը ձեզ հետ է, ողջեր եւ նահատակներ», Երևան, 1998թ., էջ 282:
35. Գուրգեն Գարրիելյան, «Մոսա լեռան երկու որդին», Ստեփանակերտ, 1995թ., էջ 47:
36. Հեղինակի անձնական արխիվ:
37. Արսեն Գետրոյան, «Մարտիկ» բերք, 1997թ., թիվ 37:
38. «Ազատ Արցախ», 1998թ., փետրվարի 19:
39. Вспомогательное "Лосеронолыа Карабах", изд. "Москва", 1993 г.
40. «Խորհրդային Ղարաբաղ» բերք, 4 հոկտեմբերի, 1990թ., թիվ 208:
41. Բահատուր Դավթյան, Նիկոլայ Բաղդասարյան, «Դաս հայրենյաց», Երևան, «Նաիր», 1997թ., էջ 9:
42. Հեղինակի անձնական արխիվ:
43. Հեղինակի անձնական արխիվ:
44. Վարդգես Բաղդյան, «Ֆենոմեն», Ստեփանակերտ, «Սոնա» հրատ., 1998թ., էջ 152:
45. Կոմիտաս Հակոբյան, «Նվիրում», Երևան, 1997թ., էջ 67:
46. Վարդգես Բաղդյան, «Ֆենոմեն», Ստեփանակերտ, «Սոնա», 1998թ., էջ 133:
47. Էոնեստ Եսայան, «Ձորավար Ավո», Երևան, 1993թ., էջ 24:
48. Հեղինակի անձնական արխիվ:
49. Հեղինակի անձնական արխիվ:
50. Հեղինակի անձնական արխիվ:
51. «Խորհրդային Ղարաբաղ», 25 սեպտեմբերի, թիվ 201, 1990թ.:
52. «Արվի տեղը չփոխեք» արտահայտությունը վերցված է Ֆրանսուա Մարի Վոլտերի «Քիրք» պատմվածքի մի հերոսուհու երգանք խոսքերից, որը ամուսնու մահից հետո նրա դաժակի առաջ խոսք էր տվել՝ չամուսնանալ այնքան ժամանակ, քանի դեռ իրենց տան մոտով անցնող առու է փոխի իր տեղը (հունը): Տվյալ դեպքում մեր աղջիկ-նշանած՝ Նուրենն ես, նմանօրինակ երգում է ավել իր նահատակված գինվոր-նշանած Կոմիտասի դիակի առաջ՝ իր կտրած մազաժամբ նրա դագաղի մեջ դնելով:
53. Խոսքը հեղինակի 1998թ. հրատարակած «Իմ սերնդի ճակատագիրը» գրքի մասին է, որ նվիրված է Բերրի միջնակարգ դպրոցի գոհված ուսուցիչներ Սաշիկ Հայրապետյանի եւ Կոմիտաս Հակոբյանի հիշատակին:

54. Հեղինակի անձնական արխիվ:
55. Դերենիկ Դեմիրճյան, երկեր, հատոր 12, 1985թ. հրատ., էջ 181:
56. Գալյա Առստամյան, «Իմ սերը ձեզ հետ է, ողջեր եւ նահատակներ», Երևան, 1998թ., էջ 123:
57. «Արցախ» ամսագիր, թիվ 1-2, 1993թ., էջ 48:
58. Գալյա Առստամյան, «Իմ սերը ձեզ հետ է, ողջեր եւ նահատակներ», Երևան, 1998թ., էջ 130:
59. Հայկ Խաչատրյան, «Վաչագան», Երևան, 1998թ., էջ 71:
60. Նույն տեղը, էջ 72:
61. Նույն տեղը, էջ 73:
62. «Սովետական Ղարաբաղ», 25-ին սեպտեմբերի, 1990թ., թիվ 201:
63. «Խորհրդային Ղարաբաղ», 5 մայիսի, 1989թ., թիվ 104:
64. Նույն տեղը:
65. Նույն տեղը:
66. Հեղինակի անձնական արխիվ:
67. «ԼՂ Հանրապետություն», 10 օգոստոսի, 1996թ.:
68. Նույն տեղը:
69. Նույն տեղը:
70. «Աղբ. ԽՍՀ պատմություն», մաս առաջին, էջ 34:
71. Խոսքը վերաբերում է Բախոն «Սամասի մեղիությունները»: Ն. Աղոնցի «Հայաստանը Հուստինիանոսի թագավորության ժամանակ», Մակար Բարխուդարյանցի «Արցախ», 1898թ., Շահեն Ակրոսյանի «Ղարաբաղի պատմաերկրագիտական հուշարձանները», Բագրատ Ուլտաբյանի «Ձրուցարան», 1, 2, 3 հատորներ, Վ. Պոտտոյի «Ղարաբաղի կամավորները» եւ այլ գրքերին:
72. Խոսքը 1986թ. դեկտեմբերի 29-30-ին Աղբ. ԽՍՀ լուսավորության նախարարության կողմից Բաքվում կայացած պատմության ուսուցիչների հանրապետական խորհրդակցության մասին է, որին ներկա է եղել նաեւ սույն գրքի հեղինակը:
73. Այստեղ խոսքը հայ որոշ պատմաբանների այն քննադատական հոդվածների մասին է, որ նպատակ էին դրել դեմ շարունակելու մի քանի վայ պատմաբանների սեւ ակնուցերը:
74. Հեղինակի «Ջգույշ, տատակալու է քանակությունների ճանապարհը» հոդվածը տպագրվել է «Խորհրդային Ղարաբաղ»-ում, 1991թ. հուլիսի 25-ի համարում:
75. Յու. Գ. Բարսեղով, «Ինքնորոշման իրավունքը ավգամիջյան պրոքլեմների դեմոկրատական լուծման հիմքն է», 1990թ., Հայաստան, էջ 69:
76. Նույն տեղը, էջ 71:
77. Նույն տեղը, էջ 34:
78. Նույն տեղը, էջ 27:
79. Վ. Ի. Լեւին, ԵԼԺ, հատ. 25, էջ 311:
80. Արտաշես Հակոբջանյան, ԼՂՀ Մարտունու շրջանի «Ամարաս» բերք, թիվ 14, 2000թ.:
81. Հեղինակի «Բանակցել՝ հիշելով անցյալը» հոդվածը տպագրվել է «ԼՂ Հանրապետություն» բերքի 1995թ. հուլիսի 5-ի համարում:
82. Վլադիմիր Խոջաբեկյան, «Արցախը փորձության ժամին», Երևան, «Հայաստան», 1991թ., էջ 130:

83. Книга "Рассказы о партии", том 2, стр. 216, издательство "Москва", 1977 г.
84. ԽՍՀՄ ԿԿ 1988թ. փետրվարի 29-ի բյուրոյի ղեկավարի միտում Մ. Ս. Գորբաչովի արտապատճառման մտքերից:
85. Կարմիր Հարությունյան, «Իրադարձությունները Լեռնային Ղարաբաղում», հատ. 6, էջ 290-291:
86. Հեղինակի անձնական արխիվ:
87. «Կորիորդային Ղարաբաղ», 1988թ. մայիսի 25-ի թերթից:
88. "Народное хозяйство к 70-летию Великого октября Аз. ССР, стр. 271."
89. "Кавказский календарь на 1917 г. Тбилиси, стр. 193.
90. Воронский "Сочинские", том 3, М., 1993 г., стр. 106-107.
91. Фонд обществено-политической информации. "Нагорный Карабах. Аннексия и депортация", Степанакерт. 1998 г., стр. 20.
92. Նորայր Ավետիսյան, «Սիրոս անհանգիստ է», Ստեփանակերտ, «Սոցիալ» իրատ., 1998թ., էջ 78:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Մուշաբանի փոխարեն .....	3
Հերոսական անցյալ .....	5
Որոգայթներ եւ դավաճանություններ .....	12
Չուգահեռներ էին եւ նոր օրերի .....	24
Վերածնված հերոսություններ .....	48
Ամարասի հովտում .....	101
Հայացքներ եւ իրողություններ .....	117
Խորհրդածություններ Ղարաբաղի իրադարձությունների շուրջ .....	138
Զգույշ, տատասկոտ է բանակցությունների ճանապարհը .....	147
Բաց նամակ Ղարաբաղը լքած դարոցների տնօրեններին .....	150
Որն է առաջնայինը՝ տարածքային ամբողջականությունը, թե՞ ինքնորոշման իրավունքը .....	153
Բանակցել՝ հիշելով անցյալը .....	159
Ստի ուղերը կարճ են (բաց նամակ «Աղբյուրների ձայն» ռադիոկայանի հայկական հաղորդումների խմբագրությանը) .....	161
Վերջաբան .....	181
Ծանոթագրություններ .....	187

ՄԻՔԱՅԵԼ ԳՐԻԳՈՐԻԻ ԲԵԳԼԱՐՅԱՆ  
ՂԱՐԱԲԱՂԸ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՉՈՒԳԱՎԵՌՆԵՐՈՒՄ

МИКАЕЛ БЕГЛАРЯН

КАРАБАХ В ПАРАЛЛЕЛАХ ИСТОРИИ

Թարգմանիչ՝  
Կեղ. Խմբագիր՝  
Խրագրիչ՝  
Նամակարգ,  
շարվածքը՝

Մ. ԱԶԻԶՅԱՆ  
Ա. ՍԱՐՈՒՄՅԱՆ  
Օ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ  
Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆԻ

Հանձնված է շարվածքի՝ 11.08.2002 թ.: Ստորագրված է տպագրության՝ 24.09.2002 թ.: Ֆորմատ 42x60<sup>1</sup>/<sub>16</sub>: Տառատեսակը՝ Times Armenian: Թուղթ՝ օֆսեթ: Տպագրված է 12 մամուլ: Տպագրությունը՝ օֆսեթ: Գինը՝ պայմանագրային: Տպագրվել է «Գառ Արցախ» թերթի հրատարակչության տպարանում:

# ՆԿԱՏՎԱԾ ՎՐԻՊԱԿՆԵՐ

Էջ	Տողագրված է	Պեսք է լինի
3	«Գայլերի ու բորենիների	«Գայլերի ու բորենիների»
3	դարանափոսերով	դարափոսերով
10	լինեն ռազմիկներ, թե...	լինեն ռամիկներ, թե...
10-11	խաբուհ	խաբուհու
21	Արփ-Ասլան	Ալփ-Ասլան
42	Բաղաբալան հասունու-	Բաղաբալան հասունու-
	թյուն ունեցող	թյուն չունեցող
65	(դարադաղցիներ)	(դարաբուլաղցիներ)
73	Մկրչյան	Մկրսոնյան
84	(Քոզիչ...)	(Քոչիչ...)
89	Դ-ա մայիսի 8-ի՝ լույս	Դ-ա մայիսի 8-ի, լույս
	գիշերն էր	9-ի գիշերն էր
103	Կերասախսակների	Կերասաեսակների
125	կալանից, ասելով՝	կալանից, բայց զինվորը
		մեծեց, ասելով՝...
149	ձերբազատված	չձերբազատված
151	դուռը	դուռնը
171	ակնկալում	ակնարկում
173	1989 թ. 29/II...	1988թ. 29/II...

